յոհաննու կերսոնի , որ ասէ , առաւել ազահով
և անկասկած իմն է թէ թէ և ապաշխարութի , որ
յոժարութի ընդունեալ լինի , և համարի կատա
րիլ՝ զխոտովանեալս ամէլ ՚ի քաւարան՝ քան
ճանրագոյն ապաշխարութի , որ ոչն կատարի ,
առաքել ՚ի դժոխս , արդարև բազում անարանք
ասեն , թէ խոտովանահայրն երբեմն կարէ ՚ի
տեղի ապաշխարութե դնել զդործս ինչ՝ զորս
լստ ինքեան պարտաւորին կատարել ևս ըստ
հրամանի , ուր լսել զպատարաց յառուրս կիրա
կէից , և ասնից մինչև ցամ մի , կամ զբոլոր քա
ռասնորդական պահս , պարտաւորիլ ՚ի պահել
և այլն . և ևս նկատե սքն թօմաս , և այլ անա
բանք ընդ նմա , թէ ևս երբեմն խոտովանա
հայրն նկատմամբ ՚ի մեծագոյն զընունն , ՚ի տկա
րութի մարմնոյ , ՚ի մոռորոգութի անձինն , ՚ի յորե
կտանն . ՚ի ժամանակս ներողութե և այլն , կարէ
թէ թէ և ապուսոցնել զխոտութի ապաշխարանաց
ն . Կէ ապա ասի , թէ ապաշխարութին պար
տի լինիլ պատկանեաւոր կացութե , թէ ու թէն ,
դեղի , և այլն , այսինքն , զի մի ինչ յայնցանէ
խոտովան հայրն յապաշխարողէն պահանջու
ցէ , որ չիցէ ըստ խոհեմութեն կանոնի , ուր
զընտանին պարտաւորել տալ զողորմութի , կմ
մշակացն , և տկարացն բեռնաւորել զպահս , կա
նանց դնալ ՚ի յուխտ , զբաղելոցն յոյժ՝ զբա
ղում աղօթս . այլ մեծաւ խոհեմութի պարտի
զդուշանալ խոտովանահայրն , և ուր ուսուցանե
սքն անասն , զի մի զայնպիսի ապաշխարանս զի
ցէ , յորոց այլք ուր սրն , ազդականքն , ընտա
նիքն ,

նկքն , 'ի կարծիս մեղացն , որ 'ի խոստովանուել
 յայանեալ է , կարօացն լինիլ կամ յօրոց ծա-
 նկցն , թէ սպաշխարոյն զմեծագոյն ինչ յան-
 ցանս դործեալ է , և մեծագոյն խոհեմութիւն
 սակ հոօմ , մաշտոցն , թէ մի երբէք մն դապա-
 նի մեղացն . որքան ևս իցէ ծանր , լիցի զնել
 յայանի սպաշխարանաց :

Պ Ր Ա Կ . Լ Ե

Յարագս պարտաւորութեն սպաշխարողն
 առ 'ի ընդունիլ և կատարել զս-
 պաշխարանս :

Ա շմարիտ է , զի սպաշխարոյն պար-
 տաւորի առ 'ի ընդունիլ և կատարել
 զսպաշխարանս , զորս դնէ նմա խոստովանա-
 հայցն ըստ օրինի , և ոչ կարէ մերժել զայն՝ և
 պահել զինքն 'ի քաւարանի քաւորարել . ուղ
 աւսուցանէ սքն թօմաս , և այլք ընդ նմա . և
 պատճառն է , զի ամբողջութիւն խորհրդոյս պա-
 հանջէ զկատարումն այսորիկ յաղաշխարողն ,
 նաև զի իշխանութիւն կապելոյ , զոր ունին քա-
 հանայք 'ի քսէ մէ մերմէ , մանաւանդ 'ի յայն
 կայանայ ըստ Տող . թրխտ . զի քահանայն դա-
 առական իշխանութիւն , զոր ունի՝ այնոցիկ ,
 զորս արձակէ զսպաշխարանս , վասն մեղաց
 գիցէ . արդարև ոչ կարէք կապել զնո՞ , և թէ
 'ի կատարումն սպաշխարանացն ոչ կարէք պար-
 տաւորել :

Բ . Ուստի մեղանչէ նա , որ ոչ կամի ընդունիլ
 զսպաշխարանս , որ ըստ օրինաց եղեալ է նմա ,
 կամ զընդունեալն ոչ հոգսց կատարել . արդ մե-
 ղանչէ մահուչափ . և թէ սպաշխարանքն այն է
 ծանր . և ներելարար , և թէ է թեթև , ուղ ու-
 սուցանէ վաղենախնոս . սակ սուարեղ , թէ զանց
 առումն իւրաքանչիւր սպաշխարանացն , որ


եղևալ է վասն ներքեի մեղաց՝ և թէ լինի աւանց արհամարհանաց՝ է միայն մեղք ներքեի, իսկ և թէ խոստովանահայրն զխառաշոյն և ըզդժժուարին ապաշխարանս գնէ, կարէ ապաշխարողն խնդրել ՚ի նմանէ, զի փոփոխեացէ, կամ թէ թեւացուցէ զայն, և խոստովանահայրն պարտի զեջանիլ որքան ըստ օրինաց կարէ. ոչ սակ նախարոս, զի մի լուծն խոստովանութեւ և ապաշխարութեւ լցի ծանր և դժժուար ՚ի ամենիլ իսկ և թէ խոստովանահայրն ոչ կամեցի փոփոխել և թէ թեւացուցանել կարէ ապաշխարողն խոստովան զարձակիլ իւր խնդրեալ զթողութի գիտել աւ այլ բահանաց, և կրկին խոստովանիլ զամ մեղս իւր նմա. և ՚ի նմանէ զչափաւոր ապաշխարանս, և զգիւրինս ՚ի կատարել ընդունիլ, մանաւանդ և թէ զապաշխարանս, զորս ընկալաւ՝ կատարել ոչ կարէ աւանց մեծի դժժուարութեւ, կարէ խոստովանահայրն որ զայն ետ, կամ այլ սք ստորնադոյն բան զնա՝ կրկին լուեալ զխոստովանութեւ մեղաց փոփոխել զապաշխարութիւն զայն վն արգար և օրինաւոր պատճառի, ոչ սակ սուարեղ և այլք ընդ նմա, և ևս հաւանական և ՚ի կիրառութեւ ապահով իսկ է բան նց, որք սակն, թէ այլ խոստովանահայր վն արգար ինչ պատճառի կարէ փոփոխել զապաշխարանս, աւանց ընելոյ ՚ի խոստովանութեւ զմեղսն, որոց վն և գեալ է:

Երդ վճիռս այս պարտի սահմանիլ այսութեւ և թեւամբ, զի խոստովանահայրն այն, յորմէ խնդրէ ապաշխարողն փոփոխել զապաշխարանս իւր՝ աբասցէ ՚ի յատենի խոստովանութեւ, կամ ՚ի խորհրդական գործն, որ պատկառի աւ այն ատեան, և պատճառն է, զի գնեղն զխորհրդական ապաշխարանս ոչ զամբողջաբար մասն պատկանի ՚ի վճիռն խորհրդական ատենի, վն որոյ ոչ նախ գնիլ, և ոչ զինի փոփո

ժամիկ կարէ , եթէ ոչ 'ի նոյն տուննի , կամ 'ի գործ ինչ , որ պատկանի առ այնն :

Դ. Խնդրեացես , թէ յորում ժամանակի պարտէ կատարիլ ապաշխարանայն , որ եղեալ է 'ի խոստովանահօրէն : պատասխանեմ բաժանմամբ . կամ ժամանակն կատարելոյ զապաշխարանս 'ի խոստովանահօրէն բացորոշեալ է , կմ ոչ որքան առ առաջինն . եթէ զյատուկ օր պահելոյ սահմանեալ է 'ի խոստովանահօրէն , 'ի նոյնում առաջ պարտ է խոստովանորդւոյն պահել . իսկ որքան առ երկրորդն ապաշխարոն որքան վաղվաղակի կարէ , յանդարտութիւն պարտի կատարել զապաշխարանս , սոյ ասէ սաւրբեղ . որ և յաւել , թէ մահուչափ մեղանչէ նա , որ զժամերագոյն ապաշխարանս առանց օրինաւոր պատճառի զբազում առաջս անհողութիւն և ծուլութիւն յապաղէ :

Եւ գիտե՛լի է սատ , զի երբեմն դատապարտեցաւ 'ի հինդերորդ սրտասէ ծայրագոյն քահանայապետէ յամի ամն 1478 . վճիռն պետոսի օտմայ , որ ասէր , թէ միայն զկնի կատարելոյ զապաշխարանս պարտ է տալ զարձակումն , և զկարծիս զոյս սուտ , գայթակղեցուցիլ . և սք հարցն վճառոյ , և առաքելական սահմանադրուէցն հակառակ . և հե բեռնկոսական վըճառեաց :



Յ Ը Ի Ե Լ Ո Ի Մ Կ

Յ աղադս ներողութեց, և բաւարանի:



Ան զի ասացաք 'ի վերոյ, թէ
խտատեմանահայրն կարէ թէ
թեւացուցանել զխտութեանն
եղման աղալսարանաց 'ի տաա
ճառս ներողութեանց, և թէ
ժամանակաւոր պատիժքն, որք
պարտաւորին մեղացն՝ որք որ
քան առ բիծս թողեալք են, որոց 'ի կեանս
յոյս սչ երբէք վճարեցաք, զկնի կենացս 'ի բա
ւարանի քաւելի են. և զի երկայքանչիւրքն բար
ւորք և սուղագոյն և ս իմացին. զյաւելումս
յաղադս ներողութեց. և բաւարանի եղաք. յո
րում զոյն՝ զոր վն երկայքանչիւրոցն ըստ ուղղա
փառ հաւատոյ իմանալ պարտիմք, կարճ 'ի կար
ճոյ պարզաբանեցուք:

Յ Ա Տ Ո Ի Ա Տ. Խ.

Թէ զի՛նչ և սրբան է ներողութին:

Խ. Անձամբ ներողութե ըստ հասարակ և
ընդունելի եկեղեցւոյ սովորութե ի
մացեալ լինի թողութի ժամանակաւոր պատ
ժոյց առ սրս պարտաւորիմք վն թողել մեղացն,
որ լինի յեկեղեցւոյ ըստ արդար, և որինաւոր
պատճառի 'ի ձեռն ընդ սրճակման արդեանցն
քն ան մերոյ. և զի բարւորք և ս իմացուք՝ զէք
կուս

Կուս պատիմք զխաւէլ սաս :

Աստիճանն է , զի է 'ի յեկեղեցւոցն զանձ
 ինչ , ուստի կարեն բաշխիլ հաւատացելոցն նե
 բողոքօթիք . և զանձս այս է նախ յարդեանցն
 քի մն մերոյ . սրբոյ զօրութիւն մինչ է անհաւն
 (ուր յասացելոցս յաւաճին հաւարն 'ի հինգե
 բորոյ ընձեռնուածն երեի) սրբա . և ս ընդ ար
 ձակեացի . զանձն այն ոչ երբէք կարէ ուսայնա
 նալ : է և ս յառատութեց սրդեանցն սրբոյ .
 յսրոյ սմանք արդարեւ զբաղում շարձարանս կը
 բեցին առաւել քան զմեզս իւրեանց . (ուր ոչ սք
 կարէ ընդդիմանալ վս ամենամբ անձանի մս
 բիւսմու և վս սքյե յոհաննու միտօքն , և այլոց
 բաղմաց) և 'ի շարձարանս յայնտակ , զորս կանա
 և կատարեալ սիրով յանձն առին , էր զօրութ
 ինչ . ոչ միայն արդիւնարար . զսրոյ զպատուն
 'ի յերկինս ունին . այլ և ս վճարողական . սր
 թէ պէտ ոչ երբէք նյ հարկաւոյ . ուր համա
 մարխը . սակայն այլոցն յոյժ սպտակար . և մի
 կարար ծանեաւ եկեղեցին միշտ . ուր 'ի հարս
 դութի սքցն , զոր 'ի հանգանական խոստովա
 նիմք . և 'ի յայլ վկայութեց անձաւանց զսրոյ հաս
 տաակ իզանպէս թուս , և կամարխեսս , սրք 'ի բա
 դում առարկութեց հասարակ անձարանից զու
 զաննն . թէ արդարն 'ի կեանս յայս . ոչ միայն
 վս իւրոցն , այլ և վս այլոցն մեզաց 'ի պատ
 ճասս միութե սրբոյ կարէ վճարել նյ :

Բ . Գարձեալ զվճարումնս զայս վճարման քի
 մն մերոյ միտարէ եկեղեցին . ոչ զի զպակասա
 թիս նր ընացու , մինչ է կատարելայոցն . և ոչ
 զի անհաւն զբողոքեց նր զմն յակելուցու . այլ
 կամ զի զօրութին նոյնոյ քի 'ի սքս իւր յար
 դեացի , կամ զի զկատարեալ միութի նր ընդ
 քն զլնայն , և զհարսդութին անդամոց նոյ
 նոյ զլնայն 'ի զինտարեալ և 'ի պակեալ եկե
 ղեցին զուպէ :

Դ . Երկրորդն է , թէ մատակարարումն վե
 րոյ

րոյ ասացեալ դանձուն ՚ի բէ՛ննէ մերմ, հաւտ
 ասցեալ է եկեղեցւոյ . ուն ասի ՚ի ժող. թրիա-
 ւ հաստատի նախ ՚ի բանիցն ըն նն մերոյ, մատ-
 10. և զոր արձակեացես յերկրի, եղիցի արձա-
 կեալ յերկինս . սրովք շնորհէ զընդհանուր,
 և զքացարձակ իշխանութի, սմ կապուես ար-
 ձակելոյ, որք խաճանեն զհերկութի մարդոյ,
 Հաստատի և ևս ՚ի ընդհանուր և ՚ի մշտատե-
 կիրառութե՛ կեկեղեցւոյ, զոր շառաքելոցն ան-
 ասի ժամանակաց մինչև ցայժմ պահպանեաց և
 կեղեցին . զի սքն պողոս շնորհեաց զներումն
 աղպապիզ ի արնթաղոյն, որ աղաջխարեաց,
 ըստ խնդրոյ այլոց հաւատացելոց . որք վն նք
 բարեխտակին . ուն ուսուցանէ սքն թօմաս, և
 թէպ որեդոս ՚ի մեկնութե՛ 2. դլ՛ 2. Արնթ.
 յոյնդէս և ներումն ըստ հայցումսն զմարտիրո-
 սաց, որք վասն հաւատոյն ըն արկեալ էին ՚ի
 բանդ, աղաջխարեղեացն շնորհեցաւ, ուն երևի
 ՚ի զանազան վկայութեց թերթու լամնասի . սքն
 կիպրիանասի, և այլոց . Եւ ապա զկիրառուէ
 ներողութեցն այնոցիկ յիշեցաւ ՚ի ժողովն նի-
 կիոյ, յերկրորդ կանոնն . Անկիրանու ՚ի հինգե-
 րորդ կանոնն . ՚ի բաւականեաց յերկարդ կա-
 նոնն . և ՚ի յայլ մինչև ՚ի մեծն գրեդ. որ . ՚ի ժա-
 մանակս որոյ կիրառութին ներողութեց առա-
 շել յաճախ ծանուցաւ ՚ի ընդհանուր եկեղե-
 ցի, ուն ցուցանէ պերարմնաս . արդ յայտոցիկ
 երևի, թէ որքան սուա և յանդուգն են հերե-
 տիկոսք ժամանակին . որք սրանան զշնորհիլե
 յեկեղեցւոյ ներողութեց, որոց զաղանդան վն այն
 միայն ՚ի բաց հերբել պարտիմք, զի զայլ ըս-
 տաղովս ոչ ունին, և թէ ոչ զվարանենանան, որք
 եղեն առաջին հակառակք ներողութեց . ուն ցու-
 ցանէ պերարմնաս՝ ՚ի զիրս որոյ կարեմք տեսա
 նել զմոլորութին հերետիկոսաց ՚ի բաց հեր-
 բեալ և զճնտորասութի հաւատոյս մերոյ հաս-
 տատեալ :

Դ. Խնդրեացեալ , թէ զինչ է զորութի ներքոյ
 զութեց , և կամ յորոց պատժոց ներքոյ թիբ
 ազատիմք : Պատասխանեմ , ներքոյ թիբ ոչ
 երբէք ազատիմք ՚ի բնական պատժոց զորս ստա
 նայ սկզբնական մեղքն . և ոչ ևս ՚ի պատժոցն
 վն յանցանացն ՚ի շարտարին ատենի , այսինքն ,
 ՚ի յեկեղեղական և յաշխարհական դատաստա
 նի , այլ միայն ՚ի ժամանակաւոր պատժոցն յոյ
 նոցիկ , որոց վն զինի մկրտութե գործեալ և
 որքան առ յանցանս թողեալ մեղացն պարտաւ
 ընիմք ՚ի ներքին ատենի դատաստանին այ , կամ
 ուր ատեն սնտարանք , ՚ի յատենի հողոց . և զոր
 քաւել պարտիմք կամ աստ , և կամ ՚ի հանդեր
 ձեալն ՚ի քաւարանի , և թէ մեռանիմք յառաջ
 քան զվնարելն , և այսպէս ՚ի ձեռն ներքոյ
 թեց ՚ի պարտաւորութե պատժոցն այնոցիկ ա
 զատիմք . ոչ միայն առաջի եկեղեցւոյ , ոչ կար
 ծէին ամանք , զոր ՚ի բաց հերքեաց սքն թօմաս ,
 այլ և ստուգիւ առաջի այ , ուր ատէ նոյնն :

Ե. Արդ քաղում են և զանազան ներքոյ իրն
 վն զանազան և բազմակերպ շնորհմանց , և վն
 կամացն շնորհողաց , քանզի երբեմն շնորհին նե
 րքոյ թիբ զաւուրս ինչ , կամ զամ մի , կամ ըզ
 քառանորդական մի , և երբեմն շորորդ , ՚ի կամ
 երբորդ , կամ մի մասն պատժոց ներքոյ թիբ
 շնորհեալ լինին , և երբեմն լիակատար կամ ա
 մենակատար ներքոյ թիբ ըստ կերպի յորելենի .
 և յորժամ շնորհեալ լինի ներքոյ թիբն վն ա
 ուրց ինչ կամ ամաց , կմ քառանորդականաց
 իմանալ պարտիմք , թէ ներքոյ թիբն այնու թօ
 ղեալ լինին այնքան ժամանակաւոր պատժքն ,
 որոց պարտաւորեաք վն գործեալ և սպաւոր
 ճակեալ մեղացն առ ՚ի քաւել ՚ի կեանս յայս .
 կամ ՚ի հանդերձեալն , որքան պարտեաք քա
 ւել աղաշխարութի աւուրցն այնոցիկ , կմ ա
 մացն , կամ քառանորդականաց ըստ հին կա
 նանացն եկեղեցւոյ , որ սովոր էր զնիւ նոյնպէս
 յԻ՛

յորժամ ներողութիւն չնորհի երկրորդ , կամ չոր
 րորդ մասն մեզաց՝ ոչ այլ ինչ նշանակի , եթէ
 ոչ , զի չնորհին մեզ երրորդ կամ չորսորդ մասն
 ժամանակաւ որ պատժոցն այնոցիկ , զորս քա
 շել պարս կար զն մեզաց . իսկ իսկապար նե
 րողութիւն է , որ ջնջէ զամ ժամանակաւ որ պա
 տիժան , նոյնպէս ևս այն . որ ասի անձնակա
 ւար ըստ յոբելեանի , և որ ոչ զանազանի ի իսկա
 ւարէն , եթէ ոչ այնու՝ զի ընդ ներողութեն
 չնորհի և իշխանութի ինչ , առ ի ընտրել ին
 քեան զնոստովանահայր , որ յամ պատահմանց ,
 և ի նդովից արձակեացէ , և անօրինեացէ վասն
 ուխտիցն և անկանոնութեյն , ուն սովոր է ի
 նիլ ի յոբելեանս . ուն ցուցանէ դէլարմեոս ,
 որ խրատէ ևս , թէ ներողութիւն հապարից ա
 մայ՝ և առաւել քան զհաղար ամս ըստ անօրա
 նիցն ոչ է ընդունելի , որովհետեւ քահանայա
 պետքն սովոր են տալ զներողութիւն այնքան ա
 մաց , որքան սովոր էին տալ զապաշխարանս զն
 մեզաց , որ ոչ լինէր աւելի քան զեօթն , կամ ըզ
 աանն , կամ զքանն ամս . կամ ի բոլոր կեանս ,
 որ ոչ անցանէ անդր քան զհարիւր ամս .
 բայց ասէ թողութեւ կարէ չնորհի ներողու
 թիւն այնքան երկար ժամանակաց , եթէ նորո
 իմացել լինի . թէ այնք պատիժք թողել լինին ,
 զորքան մեղաւորն պարս էր քաւել ապաշխա
 րութիւն և թէ ունէր զկեանս այնքան ամաց ,
 և ոչ է դժուարին , զի անկցի ոչ յայնպիսի պար
 տաւորութիւն , որոց զն պարս իցէ նմա սպաշ
 խարել զայնքան երկար ժամանակաւ , որովհետե
 ւն , որք ընդեն զանօրինութիւն իբրև զնոր :

Հ Ա Տ Ո Ւ Ա Տ . Բ .

Թէ ո՛ր կարէ շնորհել զներողութիւն , և ո՛րպէս
սի պատճառ առ այս խնդրի :

iii. **Ա**րդ՝ ներողութիւնն նկատմամբ առ կեն-
դանիս ըստ պեղարմինոսի , և այլոց ,
լինի ըստ կերպի արձակման , որ ընդ իւր ունի
զհատուցումն ՚ի դանձուցն եկեղեցւոյ , ոպ ի
բնի ՚ի զանազան նամակացն քահանայապետից .
ասացաք նկատմամբ առ կենդանիս , զի եթէ
բանն մեր լինէր զնեջեցելոցն ՚ի քաւարանի . ներո
ղութիւն ոչ շնորհեալ լինէր նոյ ըստ կերպի ար
ձակման , մինչ եկեղեցին ոչ ունի իրաւունս ՚ի
նո , այլ միայն ըստ կերպի հատուցման , և օժան
դակութե , ոպ զի դերի վարեալն ՚ի ձեռս ան
հաւասար ոչ կարէ թաղաւոր ոմն զօրութե իչ
խանութեն , որպէս յիւրում թաղաւորութե .
այլ հատուցմամբ , և զնելով թափել զնա .
Արդ՝ ՚ի շնորհողն ներողութեց . Թէ ըստ կեր
պի արձակման . որ պարունակէ և զհատու
ցումն , և Թէ ըստ կերպի պարզ հատուցման .
խնդրի ի խանութի ՚ի յարտաքին ատենի եկե
ղեցւոյ : զի առանց այնորիկ , ոչ զարձակումն
կարէ շնորհել . և ոչ զհասարակ բարիս եկեղեց
ւոյ , և որք ՚ի դանձս նր եղեալ են . ըստ օրինաց
կարէ մատակարարել :

Առեմ նախ , Թէ քահանայապետն անայնի ի
բաւամբ ունի զլիակատար ի խանութի առ ՚ի շ
նորհել զամենակերպ ներողութիւն ամենեցուն
և իւրաքանչիւր հաւատացելոց . և որ հաստա
սի նախ յանկր և յընդհանուր ի խանութեն ,
զոր քն անմեր դրոխն . ՚ի միջ այլոց առաքե
լոց սքնն պետրոսի ետ , որում փոխանորդէ հո
մեական քահանայապետն . մատթ . 16 . և տաց
քեզ փականս արքայութե երկնից . և զոր միան
դամ

դամ կապեացես յերկրի . եզիցի կապեալ յերկինս . և այն . երկրորդ այնու զի առ'ի շնորհել զներողութիս 'ի կողմանէ շնորհովն խնդրի կրկին ի շնուխօսցս է . նախառ այնսսիկառ որս շնորհէ . երկրորդ առ դանձան եկեղեցւոյ , յորմէ բաշխին . Եւ երկաքանչիւրն ի խանութի 'ի հոօմէական քհնյապետն կատարեալայ դասնի . ունի երեւի առ ամ' ուղղութիս . և ևս բարւոք երեւեցի անուուստ , զորս 'ի ներքոյ 'ի յերկրորդ մասն . յերրորդ գլուխն յաղագս օրինաց ասացաւք :

Յաւելու թողութոս , թէ ընդ հանրական ժողովն ունի զմման ի շնանութիս առ'ի շնորհել զերաքանչիւր ներողութիս . ևս զխահատարս . ունի 'ի ժող լսութեանու 'ի դործ ածաւ :

Բ. Ասեմ երկրորդ , եպիսկոպոսն ևս ունի զիշխանութիս աալոյ զներողութիս ինչ . ունի հաստատի 'ի սովորութէ եկեղեցւոյ . զի եպիսկոպոսքն կարեն տալ զներողութիս միոյ տարւոյ 'ի անադրուէ եկեղեցւոյ , և քառանորդական աւուրոյ 'ի տարեկնոյ անադրուէն , և զայս յեախն ներողութիս կարեն ըստ հաճոյնց խրեանց երբ և կամեացին վն օրինաւոր ինչ պատճառի տալ :

Խնդիր է 'ի մէջ անարանից , մի' թէ եպիսկոպոսք զիշխանութին զայն առ 'ի շնորհել զներսողութիս ունին միայն 'ի մարդկային իրաւանց . կամ 'ի շնորհմանէ քահանայապետին , թէ յիմային իրաւանց : և եթէ յիմային իրաւանց , ապա , ընդ էր այնքան նեղ , և եզերեալ է . 'ի բայ թողեալ մեր զբազմազան պատասխանիս վարդապետաց , ասեմք թէ հաւանական ևս է բան նոյն , որք ասեն թէ եպիսկոպոսքն զիշխանութիս զայս ունին յիմային իրաւանց . որովհետեւ ըստ առաքելոյն են մատակարարք խորհրդոյն այ . և 'ի հոգւոյն սբյ եզան անուշք եկեղեցւոյն հօտին հովուէլ զժողովուրդ ան : Վ. Գ. Ծ. 20. քայց զի պակսելութիս զայս , և զմատակարարութիս

բու թի՛ն զայն դերազանցէ ընդ հանրական տեա-
 չութի՛ն և մատակարարութի՛ն զոր ունի քահա-
 նայապետն առ ընդ հանուր եկեղեցի . զի՛ սրբ
 յիշխանութե նր՛ է . զայնպիսի իշխանութիւն և
 պիտկուպսաց զի՛ օրինաւոր և արդար ինչ պատ-
 ճառ լայնել և անձկացուցանել . ուր՛ սակ ի-
 զամպէ թոս , և այլք . որ և յաւել . թէ կար-
 փնալքն ևս կարեն շնորհել զներողութիւն հա-
 բիւր աւարց . և այս ոչ է այնքան յիշխանուեց
 նի , որքան ՚ի սովորութե՛ . և ՚ի շնորհմանէ քա-
 հանայապետին :

Դ . Իսկ որ պատկանի առ արքայս , առ հոգւո
 բարձուս , և այնն՛ սակ պերարթնաս , թէ ոչ զք
 կղերիկոս . կմ՛ քահնի՛ց որ ստօրին է քան զեպիսեան
 ըստ իբաւանց կարէ շնորհել զներողութիւն . այլ
 միայն ընս յանձնորուէ քհնյպետին . կմ՛ եմարին
 ուր ևս յաւելու ըստ սրբոյն թօմայի . թէ ոչ զք ՚ի
 յեկեղեցւոջն յատկապէս խօսելովէ , կամ կարէ
 սակ նախադահ՛ , և թէ ոչ միայն եպիսկոպոս
 սունքն , որովհետեւ են ուղեիլք ամբողջ հօտին
 աւրաք . և իբր ՚ի յեկեղեցական թաղաւորուե
 ինչ նախադահին մմ՛ մարդկանց ցեղից . հասա
 կոց , կարգաց և թէութեց :

Իսկ արքայքն և հոգւոբարձուքն իբրու են միայն
 տանու աւարք ոմանց ընտանեաց . կմ՛ տան միոյ .
 սւստի մինչ շնորհելն զներողութիւն միայն առ
 նախադահս եկեղեցւոյ պատկանի , հետեւի թէ
 միայն եպիսկոպոսին է յատուկ և ոչ այլոցն . որք
 են ընդ եպիսկոպոսոջն ՚ի մէջ եկեղեցւոյ :

Դ . Ասեմ երբորդ , թէ ոչ միայն օրինաւոր
 իշխանութի . այլ և արդար ինչ և բանաւոր պատ-
 ճառ խնդրի առ ՚ի սակ զներողութիւն իսկապէս
 և ըստ օրինաց , ուր՛ սակ սքն թօմեա՛ և այլք .
 և հաստատի այնու ևս , զի կլէ՛մս վեցերորդ
 պատն՛ սակ , թէ քս՛ մրն մեր յանձնեաց զքանձս
 եկեղեցւոյ իւրոյ փոխանորդաց իւրոց մատակա-
 րարել զայն հաւատացելոց կենսաւոր բանաւոր
 ՚ի

և արդար պատճառաւ , եւս 'ի ժող' կասանալի
 նեւոյ , ուր ասի զհերեւելոսաց , թէ հարցանել
 պարտիմք նոյն արդեօք հաւանան թէ քննյապեան
 կարէ շնորհել զներողութիւն վս քան որ պնճախ
 և . խնդրեսցես , թէ ուղի պոճան արդար և բա
 նաւ որ կարէ համբիւ առ 'ի շնորհել զներողութիւն
 Պատասխանեմ ըստ հաւանական բանիցն վարդա
 պետաց , թէ խնդրի առ այս ոչ միայն զի պնճան
 այն լիցի բարի և ընդունելի այնպէս զի անիցի
 զհաճեմատութիւնն ընդ ներողութե . ուղ ասէ օրն
 պօճալեն թուրայ , աս թոս , և այլ ք ք զվճ . խոյ առ
 հաճեմատութիւն այս մանաւանդ երկու ինչ խնդ
 րին , Առաջինն է , զի շնորհեացի ներողութիւն
 վս բարի ինչ վախճանի , և կարու մն որոյ լիցի
 առաւել 'ի պատիւն այն , և յօդու ա եկեղեցոյ ,
 քան զապաշխարակն վճարումն , որ ներողութե
 շնորհի : Երկրորդն է , զի առ 'ի ընդունել զներո
 ղութիւն զայն սահմանեացի գործ ինչ առ 'ի սո
 նել , և որ իցէ յարմար և օգու ա առ 'ի ստանալ
 զայսպի վախճան , զոր օրինակ , յարժամ քննյա
 պետն շնորհէ զներողութիւն այնոցիկ , որք ճշմար
 տիւ զղջացելք և խանգանակելք և ևս հազարդելք
 զաղօթն և զայլ բարեգործութիւն 'ի բարձումն
 հերեւելոսութե , 'ի խաղաղութիւն քրիստոնէից
 և'' մատուցանեն այն , վախճանն զոր յառաջա
 դրէ քննյապետն , այսինքն բարձումն հերեւելո
 սուեց և խաղաղութիւն քրիստոնէից , առանդ կար
 ծեացէ յառաւել պատիւն այն և յօդու ա եկեղեց
 ւոյ . խոյ գործքն առ 'ի ստանալ զնոյն վախճանն
 եզեալ , եւն յոյժ յարմար առ այս , ուղ ըստ ին
 քեան երեւի , և այսպի յարմար հաճեմատութի
 գտանիւ Արդ և որք շնորհենն զներողութիւն պար
 տին բարեօք քննել զպնճառան և զհաճեմատութի
 նոյն ընդ ներողութեցն , ուղ ասէ պէտար'' և ոչ է օ
 բէն ստորադրելոցն յանդգնութե քննել զորտ
 ճառս զայս , մանաւանդ ուղ ասէ ի պատկեր'' ,
 որոգայթաւ որ խոյէ զի բարեանչութիւն շնորհեալ
 նէ

ներողութիւն վն իւրաքանչիւր պաճառի սակաւ ինչ
համարել . ուստի ներողութիւն այնպիսի օրհնել
թողնոցն վարդարանի , Յերմեռանդ պատկերաց ,
և այլոց նմանեաց , որք թէպէտ վարդարանի ինչ երևին ,
սակայն վն արդար և բանաւոր պաճառառի ի քա
ռանայապետիցն երբեմն կարեն շնորհիլ :

Եւ թէպէտ բանաւոր և արդար պաճառ . դաս
նի երբեմն ի շնորհումն ինչ ներողութեց և ս լիակա
տարից , սակայն կարէ լինիլ , զի մի ամբն ամբող
ջաբար ստացին , սող եթէ ամանք ի նոցանէ պար
տաւորք առ ի կրել զմեծադոյն ժամանակաւոր
պատիժս վն դործեալ մեղացն՝ ծաւաթ զեղեալ
դործան կատարեացեն . զի թէպէտ պաճառան
ներողութե ըստ ինքեան է արդար , սկ յն նկատ
մամբ առ սննոսիկ , պակասի ի լիջ թէ ք թէ վն
անկատար պարտատու թեմ , սպասէ սքն պննա
վնոյ ուրոյ , թէ միջի առաւել կամ նուազ մասն
ակցին ներողութեց ըստ առաւել կամ նուազ
մատչելոյ նյ ի վախճան նր :

Հ Ա Տ Ո Ւ Ա Տ . 7 :

Թէ նրայիսի թէ ու թիւ խնդրին ի նմա , որ
զխտէ ընդունիլ զպատուս ներողութեց :

iii. **Լ** աւցին թէ ու թիւ է , զի իցեմարդ մկրտել ,
սող ուսուցանէ սուարեզ ընդ հասկի
վրդնոց , զի միայն հաւատացելոցն բաշխի իսկա
պէս դանձն եկեղեցւոյ , և ոչ որ կարէ արձակիլ
լեկեղեցւոյ , որ ոչ է ընդ իշխանութե նր . իսկ
նազարտս . և այլք ասեն , թէ հաւանեթ ի մն է շք
նորհիլն ներողութեց ըստ կերպի սժանդակուե
կերպացիցն կենդանեաց , և մեռելոց :

Երկր թէ ու թիւ է , զի նա՝ որ ընդունի զնե
րողութիւն , լիցի հպատակ այնմ , որ զայնոսիկ
շնորհէ . զի միայն հպատակայն շնորհի ներողութի :

Երր թէ ու թիւ է , զի մի լիցի մեծադոյն բանա

զբուծի՛ն հասկեաց, զի սա արդեյու զմի՛ն ՚իմաս
նակցուէ հասարակ հողևոր բարեացն. նոյ ա-
սասցուք ՚ի ներքոյ ՚ի անդիս խբ.:

Չի՞դ թէ ու թի՛ւ է, զի իցի ՚ի սրբաբար շնորհո
յայնժամ յորժամ ընդունի զպտուղ ներսողուէդ,
զի թողութի՛ն մեղաց՝ կանխել պարտի թողութե՛ն
ժամանակաւոր պատժոցն, նոյ ասէ սքն թօմաս
ըստ հասարակ վարդաստեւութե՛ն:

Է: Ի՛նչ շուրջ զայսու չի՞ թէ ու թի՛ւ խնդրի
՚ի միջ վարդաստեւաց, մի թէ կացութի՛ն շնոր-
հաց խնդրիցի ՚ի ընդունումն ներսողութեց՝ ոչ
միայն յորժամ զպտուղ նք ընդունի սքայլ ևս
յորժամ կատարէ զգործսն, առ այս վախճան
եղեալս: ոմանք ասեն, թէ բաւական է, թէ
նա, որ ստանայ զներսողութի՛ս՝ լիցի ՚ի շնորհս
յայնժամ յորժամ զպտուղ նք ընդունի. իսկ ասժոս
ընդ պէլարմինսսի և այլոց ասէ, թէ խնդրի լինել
՚ի շնորհս ևս յայնժամ, յորժամ կատարի պարտա-
ւորեալ գործն, և զվճիւսս զայս հաւանականու
դոցն ևս համարէ պէլարմինոս, և ՚ի պատահ-
մանս ինչ ճշմարտացոյն, այսինքն. մինչ սահ-
մանադրի, զի գործքն այնքիկ կատարեացի՛ն ՚ի
՚ի շնորհս, և որ բազմիցս ՚ի նամակս բահանայս
պետացն սահմանադրի, զի ներսողութի՛քն շնոր-
հեացին այնոցիկ, որք ճշմարտի՛ն զընացեալք և
խոսովանեալք յայց ելանիցեն եկեղեցոյ ու-
մէք, և անդ աղօթեացեն վսխաղաղուէ և այն-
մանաւանդ ասէ պէլարմինոս, զայս միշտ պար-
տխը իմանալ, թէ և ոչ պարզարանեցի անդ.
միայն թէ պարտաւորեալ գործն լիցի այնոյի. զի
մի էրբէք հասցի ՚ի վախճան խբ՝ որոյ վս ներս-
ողութի՛ն շնորհի, և թէ ոչ լիցի ՚ի շնորհս. զոր օշի
նակ առ ՚ի զիջուցանել զանձ, առ ՚ի խնդրել զխա-
ղաղութի. քանզի ան ոչ երբէք լսէ մեղաւորաց,
և մեռելի գործովքն արդարութի նք ոչ զիջանի.
և ոչ ասյ զողորմութի. վոյ բարեդոյն ևս է. զի
յորժամ՝ ք խնդրէ ասնուլ զողորմութի՛ս նախ ըն-
մեղս

մեղքիւք , կամ խորհրդիս սուշխարսք , կամ գոնե մի
կերակուղ զղջմամբ քաւեացի . և կերակուղ զղջումն
այս վնամ մահացու և ներքին մեղաց պարս է լինել
նիւղ . զի ներողութիւն քաւեացին պատիժքն , առ
որս պարտաւորիմք :

Գ . Հինգրորդ թէ՛ ախի է , զինա՛ որ զներողութիւն
կամի աւանուղ , կատարեացի զամ . որ եղևալ է
առի ստանալ զնայնն . առտին թէ՛ տգիտութիւն
կամ մտաւորմամբ , կամ ևս արդար ինչ արդեւրմամբ .
զմասն ինչ պործոցն այնոցիկ , ևս անմեղաբար
թողցի . զգորութիւն ներողութեալ ստանալ , սոյ
սակ սքն թօմաս և այլք ընդ նմա . զի բան հա
սարակ նծարգանիցն է , թէ ներողութիւնն այն
բան զորնն , որքան հնչեն :

Ինչպեացն , մի թէ , յորժամ ՚ի նամակս քա
հանայ նպեմիցն է , թէ ներողութիւն շնորհի ճշ
մարտիւ զժացեալ և խոստովանեալ ապաշխարո
ղացն , խորհրդի խոստովանութիւն հարկաւոր իցի
առի ստանալ զայն . պատասխանեմ ըստ հաւաս
նական և աներկբայ վճարցն , թէ այնմ , որ ըստ
դասանելի զինքն մահացու մեղք ինչքի ներդոր
ժական խոստովանուի , յորժամ յատկապէս յիշ
ի նամակս քահանայապետիցն . և ոչ է բաւանի
զղջումն միայն , թէ և իցի կատարել և ճշմարիտ
սոյ սակ սքն անանխոս , և այլք . իսկ այնմ , որ
ոչ ստգասանելի զինքն մահացու մեղք՝ ոչ է հարկա
ւոր ներդորժական խոստովանութիւն , սոյ ոչ
սուցանել նայն սքն անանխոս . և որ պատկանի
առ ներողութիւն , որ ընդարձակի հաւատա
ցեալ ննջեցելոցն , որ ՚ի քաւարանի , արդարեւ
յեկեզեզու խոկապէս և պտղաւէա կարել լինիլ ,
որովհետև հաւատացել ննջեցեալքն ընդ հաւա
տացելի կենդանիս այնպէս միացեալ են , մինչ զի
զմի և զնոյն եկեզեցի ընդ նս կացուցանեն . վնայ
եթէ մասնաւոր օժանդակութիւն և աղօթիւք կեն
դանեացն օգտիլ կարեն , ևս առաւել կարացին
ի ձեռն ընդարձակման արդեանցն քի , և սքն

օգտիլ, և վարդապետութիւն այս է սքշն թօնայի
 և այլոց վրդպոց . որ ևս երևի ՚ի հասարակ կի
 բառութէ եկեղեցւոյ , զի առաջին փակախոս
 պատն , որ յառաջքան զեօթն հարիւր ամս նրս
 տէր յառաջելական աթոս , և այլ բաղում քս
 հանայապետք շնորհեցին զներողութիւնս . ՚ի ընդ
 արձակել ննջեցելոցն :

դ. Խնդրեն ոմանք , մի թէ ներողութիւն , որք
 շնորհին ննջեցելոցն ստուգիւ և անսխալբար
 օգտեն նյ : Ստժոս , նախարոս , և այլք ասեն ,
 թէ այս . և թէպէտ վճիռն սոցա հաւանական
 է , սակայն հակառակն , որ է սքշն պօնավեն
 թուրացի , թէ զորութիւն ներողութեցս այսոցիկ
 վս ննջեցելոց՝ կախի յազատ կամացն ընդունս
 զին այ , հաւանական ևս երևի , որավհետև ոչ
 ՚ի սք գրոց , և ոչ յառանդութեցն երևի , թէ
 ան խտտացեալ է ընդունիլ զհատուցմանս
 զայնտօսիկ , որք յեկեղեցւոյ դանձուցն մատու
 գանին նմա յազատումն ննջեցելոց . մանա
 լանդ , զի եկեղեցին զներողութիւնսն զայնս
 սիկ վասն ննջեցելոցն ոչ ըստ կերպի արձակ
 ման , այլ ըստ կերպի օժանդակութեան ,
 իբրու զսնճ աղաչէ , զի զայսպիսի հատու
 ցումս կամ զվճարումս ՚ի յօգուտ ննջեցե
 լոցն՝ ողորմութեամբ ընկալցի . և այս երևի
 ևս ՚ի նայն կիրառութենէ եկեղեցւոյ , որ ըզ
 կնի ընդ արձակելոյ զփակատար ներողութիւն վս
 միոյ ննջեցելոյ ՚ի մասնաորի զոր օրինակ , ՚ի
 ձեռն ամենասք պատարագի ՚ի յասկացեալ խո
 բանի մատուցանելով վս միոյ . սակայն այսու
 ամիւ սղօթել և պատարագել վս այնորիկ ոչ
 դադարի , որով ցուցանէ , թէ ներողութիւն
 պէտ են կենսատառք , սակայն ոչ ունին միշտ
 զզօրութիւն իւրեանց անսխալբար առ ննջեցելն
 յայնսիկ , այլ կախին յողորմուէն ս , սակայն
 և այս ոչ պարտի դադարել զկենդանի հաւա
 տացեալն , այլ մանաւանդ շարժել ՚ի յօժանդա
 կ ՚ի

կաթի՛ննց , և զի մեծաւ ըզձին և սիրով 'ի ձեռն աղօթից և պատարագաց՝ կամ ընդարձակման ներողութեց , կամ այլաց բարեգործութեց շարժեցոյն օգնել հաւատացեալ ննջլցելոյն այնոցիկ :

Հ Ա Տ Ո Ւ Ա Տ . Դ .

Թէ զինչ պարտիմք իմանալ վասն քաւարանի :

Ա ըզգտիաա ճշմարտութիւն , առանց որոյ անհնար է կեալ , ուսուցանել . թէ է քաւարան , այս է , սեղի ինչ , յորում իբր 'ի բանախ ըզկնի կենացս մինչև 'ի սահմանեջ և յեղերեալ ժամանկ ինչ արդէլէ՛ք քաւին հողիք հւնցելոցն , որք թէ պէտ 'ի շարհս , սկսն սանց լն ամի քաւելոյ ըզմեղս իւրնց 'ի մարմնոյ աստի ելին , ուր աղօթիւք և օժանդակուք կենդանի հաւնցելոցն , և մանաւանդ ամենամք պարտօքն կարեն փրկել : Եւ ճշմարտութեա այսմիկ երբեմն հակառակ դտան վարտենեանք , Ազգիկենեանք , Առաքելեանք , և այլ բազում թշնամիք ուղղտիաա հաւատոյս և որոց հեռակցան հերետիկոսք ժամանակիս , ըթերեանքն , և դալվինեանքն , որք ամենեքեան հակառակին , թէ ոչ դոյ տեղի քաւարանի զկնի կենացս , այլ թէ հողիք , զկնի բաժանելոյ 'ի մարմնոյ խկոյն կամ 'ի յերկինս համբառնան , կամ 'ի դժօխս իջանեն :

'ի բաց հերքեմք զազանդս նոցա , և զճըշմարտութիւն հաւատոյն մերոյ հաստատեմք նախ յածաչունչ դրոց , 2 . մակբ . 12 . ուր ասի . Արութեամբ՝ քաջութիւք վասն մեռելոցն զմտաւ ածէր այց լինիլ մեղացն թողութեան . զի քանքս այսօրիկ ոչ զերանելոցն , և ոչ զդա

Ճատարակելոցն կարե խնայեալ լինիլ, ուրևնն
 ճարտարիմք խնանալ վասն այլոց սևուից մարդ-
 կանց. որք ունիցին տակաւին զկապանս ինչ,
 յորոց զկնի մահուան արձակիլ կարասցեն. և
 վասն որոց զեղելոցն է բանս ՚ի քաւարանի.

Եւ թէ զիրք մակարայեցւոցն կանոնական է,
 որում ևս կե՛ն հակառակին հերեւակաւք, և
 բնի ՚ի ժողովոյն թրխակնթիւոյ, ևս յերրոյ
 ժողովոյն կարթագիմեաց, ուր էր և սուրբն
 օգոստինոս, եւս ՚ի սրբոյն առաջներորդ ինչ
 նովիւնախանութ, և յառաջինն կելտախութ,
 և ՚ի ժողով եօթանասանից եպիսկոպոսաց:

Հաստատի ևս յեսացեաց. 4. զի ընացե-
 աւեր զաղանն ուստերացն սիւնի, և զարխանն
 ՚ի բաց սրբեացէ ՚ի միջոյ նոցա, հոգւով դա-
 տաստանաց, և հոգւով այրման: զոր բան
 մարդարեւն սուրբն օգոստինոս մեկնէ վասն
 պատժոցն քաւարանի, գարձեալ ՚ի մատթէ.
 12. ուր սակ մրն մէր, թէ են մեղք, որք ոչ
 աստ, և ոչ ՚ի հանգերձելումն թողեալ լի-
 նիս. վասն որոց սակն սուրբ հարք, թէ են
 մեղք, որք թողեալ լինին ՚ի հանգերձելումն,
 այսինքն. զկնի կենացս այսորիկ աղօթիւք,
 և օժանդակութիւնք եկեղեցւոյ. որպէս սքն
 օգոստինոս ՚ի քաղաքին մյ. սքն գրիգոր, և
 սքն բեռնարատս ՚ի մեկնութիւն երդոյ երդոյն
 սողաննի:

Բ, Հաստատեմք երկրորդ ՚ի զանազան ժո-
 ղովոց, ուր ասացաւ, թէ մատուցին ա-
 ղօթիք և օժանդակութիւք վասն հաւատացեալ
 ննջեցելոց, որպէս յերրորդ ժողովոյն կարթա-
 գիմեաց յառաջինն ժողովոյն պրակարկեմեաց. և յեր-
 կրորդ ժողովոյն ալիբեխանու. վասնորոց հեռեւի,
 թէ ոմանք ՚ի հաւատացեալ ննջեցելոցն են
 յայնպիսի տեղւոյ, ուստի աղօթիւք և օ-
 ժանդակութիւնք կենդանեաց կարեն ազատիլ, և
 ապա

ապա թէ կն'ի քաւարանի :

Հաստատեմք երրոյդ 'ի սուրբ հարց , որք յայտնապէս խոստովանին զքաւարանն . որպէս օքն գրիգոր նազիանզեանն , որ 'ի քանս ննծեցելոցն . խօսելով զարդարէն , որ 'ի կենացս չա՛նեաց' ասէ , թէ ոչ կարէ մասնակից լինիլ անթեանն ելեալ 'ի մարմնոյ , եւ թէ ոչ բարձցէ լրիծն հոգւոյ հուրն քաւարանի . և սուրբն օգոստինոս խօսելով զարդարոցն' որք հանպէան թեթեաղոյն մեղօք ասէ , այնպիսիքն յառաջքան զօր դատաւանին 'ի ձեռն ժամանակաւոր պատժոց' զորս կրեն հոգիք նոցա մաքրեալ յախտենական տանջանացն ոչ մասնին : և ևս յայլոց սք հարց , որք վասն հաւատացեալ ննծեցելոցն ասացին , թէ պարտ է մտաւոյանել զաղօթս և զսուրբ պատարադս , որպէս սքն կիւրեղ երուսաղէմացին , որ վս' ամենեցուն' ասէ , աղօթեմք , որ ընդ մեզ էին հաւատացեալ , թէ է օգուտ մեծ հոգւոյ նոցա , և սուրբն գրիգոր յոյժ ասէ , օգուտ հոգւոյն ևս զկնի մահուան նսէկրն ամենասուրբ և զիկարար պատարագիւ այնպէս զի միշտ հոգիքն ննծեցելոց ցանկան այնմ :

Գ. Դարձեալ մինչ միայն արդար հաւատացելոց հոգիքն են 'ի քաւարանի , որք ազաժ յամենայն յանցանաց մահացու մեղաց 'ի կենդադոյս ելին հեռեի , թէ վասն երկուց պատճառաց միայն անդ մաքրիլ պարտ իցեն . այսինքն , կամ վասն ներեի մեղաց , որովք զև ևս ազատեալք որքան առ յանցանս' 'ի մարմնոյ ելին , կամ վասն ժամանակաւոր պատժոցն , որոց պարտաւորին վասն մահացու կամ ներեի մեղացն , որքան առ յանցանս թէպէտ արձակեալ են , և սակայն որոց վասն բոլորովին ոչ ապաշխարեցին : արդ հոգիքս այսոքիկ

դուով 'ի քաւարանի 'ի քաւութի մեղացն այնոցիկ մեծապէս շարչարին առանց կարծեաց, մոյ ասեն սք հարքն, թէ պատժքն այնորիկ քաւարանի են յոյժ ծանրադոյն ջան դամենայն և զի քաքանչիւր պատժս կենցաղոյս, որպէս սքն օրոտախոս, սքն գրիգօր, և այլք քաղաւոր և թէպէտ ոմանք վարդապետք համարին թէ ծանրութիւն պատժոց հոգւոցն այնոցիկ կայանայ յայնմիկ, զի ոչ ոմնին զտուգութի 'ի բրկութեմ իւրեանց, այլ իբրու յերկրոյ ութիս և 'ի կարծիս դաղանի անօրինութիւն դատաստանին այ ըմբռնեալ են, սակայն հասարակ անարանից վարդապետութիւն է, թէ հոգիքն հաւատացելոց 'ի քաւարանի' գիտեն և ճանաչեն սուղիւ, և աներկբայաբար զիբրկութիս իւրեանց, որպէս ուսուցանէ սուրբն Թօմաս, նախ զի անարանական յոյսն մնայ 'ի նոսա, վասն որոյ ևս և հաւատն, որով ըստուղիւ կարեն գիտել, թէ հոգիքն, որք են 'ի քաւարանի' փրկին, և ևս ճանաչեն զինքեանս թէ են 'ի քաւարանի, և ոչ 'ի դժօխս, Երկրորդ յազգմանէ խղճի մասոյ կարեն ճանաչել զինքեանս, թէ են 'ի քաւարանի. քան զի ճանաչեն զինքեանս, թէ սիրեն զանձ 'ի վեր քան զամենայն ինչ, և ոչ իւրք կերպիւտանն զնա և ոչ տեսանեն զայլն որք են ընդ նս 'ի քաւարանի' հայհոյել զնա: սոյ առնեն դատաստարանալքն 'ի դժօխս, այլ մանաւանդ օրհնութիւն նորա հանապաղ 'ի բերան նոցա. և զայստսիկ ամենեւեան լայնատարած մեկնեալ հաստատէ կամեխոս. և պերտօմեոս, որ ևս յաւերա 'ի պետաց քահանայէ, և յայլոց հաստատ հեղինակաց, թէ բարմազան են ստախճանք պատժոցն 'ի քաւարանի, և անհամեմատ հոգւոցն կոցութիւք, զի ոմանք սակաւադոյն քան զայլն տանջին, մանաւանդ, զի ոմանք 'ի

Ի նոցանէ ոչ ունին զայլ պատիժս եթէ ոչ զի են տակաւին զուրիք յերանութեց :

Դ խնդրեացես նախ , թէ ուր իցէ տեղին քաւարանի . պատասխանեմ , թէ հասարակ տեղին քաւարանի՝ է ՚ի ծոց երկրի , որպէս ուսուցանէ սքն թօմաս : ասացաք հասարակ , զի երբևմն ըստ անային անօրինմանն մարբին հողիքն յայլ ինչ տեղիս , կամ զի անդ մեղան , կամ յուր զութի և ՚ի սարսափումն կենդանեաց , որպէս տանն սքն գրիգոր , սքն թօմաս , և այլք :

Խնդրեացես երրորդ , թէ մինչև ցորքան ժամանակս մասն հողիքն ՚ի քաւարանի , պատասխանեմ : թէ զայս նա միայն գիտէ , ուր որդար դատասանան իւրով էարկ . սակայն ճիշմարտաւ է այս , զի ամանք ՚ի նոցանէ զբազումսն , մանաւանդ ևս ՚ի բազում դարս մասն անդ , մինչ եկեղեցին ընդունի զսովորութիւն զայն պատարաւերց վասն ննջեցելոցն ՚ի բազումսն , ևս եթէ ուր ննջեցեալք իցեն շուրջ զհարիւր . կամ զերկու հարիւր ամբ : և զայս ոչ երբէք ընդունէր , եթէ անդ մինչև ցայն ժամ մնալ նոցա , ոչ կարծէր :

Խնդրեացես երրորդ , մի թէ հողիքն ելեալք երբևմն ՚ի քաւարանէ կարացեն երեւիլ մարդկանց , պատասխանեմ , թէ ոչ միայն ՚ի քաւարանէ , այլ և ՚ի դժոխոց , մանաւանդ ևս յերկնից կամօքն այ կարեն ելանել հողիքն , որպէս խկ երբևմն ելեալ երեւեցան կենդանեաց , որպէս ուսուցանէ սքն օդատինս . և զայնս զանազան օրինակք , և պատմութիւնք ըստ վիպութեանն անունի վարդապետաց ցուցանէ պելարմնոս :

Ե. Խնդրեացես չորրորդ , թէ զի արդ կարեմք օքնել և օժանդակել հողայն ՚ի քաւարանի . պատասխանեմ . թէ հաղորդութիւնն , զոր հողիքն այնքիկ ընդ զինսօրեալ եկեղեց

կեցելոյ ունին , ՚ի ձեռն նորհաց և սիրոյ՝ ու
 բով ննջեցին . ՚ի պատճառս որոյ ՚ի մէջ կեն
 դախի անգամոց խորհրդական մարմնոցն , ու
 բոյ գլուխն է քրիստոս՝ համարին , առնէ ըլ
 նասա ընդ անախ մատնակցութեան բարեգոր
 ծութեցն նոյնոյ եկեղեցւոյ և ընդունելոյ ըզ
 դանազան և զհրկարար միջիթարութիւս . այս
 ինքն , յորժամ բարեգործութիւնքն այն
 քիչ , ըստ որում են բաւարարականք՝ հոգ
 ւոցն այնոցիկ ընդարձակին , և այսու զի
 սուսորութեամբն աստուծոյ մատուցանին . յոր
 մէ յայտնապէս երևի , թէ հոգիքն բաւա
 րանի ՚ի մէջ՝ օգտիկ և օժանդակիկ կարեն ա
 ղօթիք օրհօք , սղորմութեամբք , և ևս ա
 սուել օժնասուրք պատարագօք , որ է բա
 ւութիւն , որոչէս ստէ ժողովն թրիակննթի
 նոյ , ոչ միայն կենդանեաց՝ այլ ևս ննջեցե
 լոց ըն ևս բոլորովն մարկելոց , և զայ
 ձեալ . թէ հոգիքն ՚ի բաւարանի օժանդա
 կութեամբն հաւաստցելոց , և ևս ամենքն
 դունակ պատարագան օգտին . ուստի և սքն
 օգոստինոս զկնի խրատելոց , թէ զարդարելն
 և ողննէն զերեզմանաց և դամբարանոց մանտ
 էանոյ ՚ի միջիթարութիւն և ՚ի սխախանս կեն
 դանեացն է , ըան յօգնութիւն ննջեցելոց , ա
 սէ , արբարե կարգարբութեամբն եկեղեց
 ւոյ սրբոյ , և ամենասուրք պատարագօք , և
 սղորմութեամբք , որք մասն հոգւոց նոցա ի
 նին առանց կարծեաց յոյժ օգտին . զի ընդ
 նոսա սղորմութեամբք ևս ժարկայի մե . ըան
 զոր մեղքն նոյ սրդիւնաւորեցան : և զհարցն ա
 լանդութիւնս ընդհանուր եկեղեցին պահպա
 նէ , զի նոցա . որք հաղորդութեամբք մարտ
 նոյ և արեանն քի ննջեցին , մինչ ՚ի տեղ ոջ ի
 բում յիշեն ՚ի նոյն սուրք պատարագն , նոյն
 սուրք պատարագն ևս վասն նոցա մատու

յանի . արդ՛ մինչ պատճառ յանձնառողացն
 դու՛ժ տղորմութեան հաշակի . ո՛ր արդեօք կրկ
 բայել կարասցէ զօրտութեանց նոցա : որոյ
 վասն աղօթքն պաղատանք առ աստ
 ոհամ ոչ ընդ ունայն մատու
 յանին :



1 ՎԵՐՋԻՆ ՕԾՄԱՆՆ ԽՈՐՀՈՒՐԴ,
ԿԱՏԱՐ Ի 2 ԿԵՆԱՅ.

Օ Ր Ի Ն Ա Կ. Թ.

Մըճամն 'ի ճառադայթից արեդա,
կան կարծրացեալ:

Ը. Գ. Ն. Գ. Գ. Գ. Գ. Գ.

2 'Ի տեսանել զիս զօրանայ.

Այլաբանօրէն.

3 Կոչեացէ զերկցունս : Գ. Գ. 5. 14.

Օ Ր Ի Ն Ա Կ. Բ.

Քնարին հնչեցեալ.

Ը. Գ. Ն. Գ. Գ. Գ. Գ. Գ.

4 Ըջախմամբ հողևորի.

Այլաբանօրէն.

5 Չեռս զիցեն և բժշկեցին. Գ. Գ. 16. 18.

Օ Ր Ի Ն Ա Ե. Ժ.

Խնկոյն ծխեալ.

Ը. Գ. Ն. Գ. Գ. Գ. Գ. Գ.


6 Քաղցրահամ բուրի.

Ա

- 7 Արասցեն 'ի վր' նք աղօթս. յա՛յ. 5. 14.
- 8 Մահ ոչ ևս գոյ. և ոչ ցաւ: յա՛յ. 21. 4.
- 9 Ուր է մահ յաղթութի՛ քո. ան. ի՛րն. 15. 55.
- 10 Կայ մնայ մարդկան միանդամ մեռանիլ .
- 11 Աս սքն Մարկոս ուսուցեալ.
- 12 'Ի սքն յակն Տրապարակեալ թրի՛. նատ՛
14. գլ. 10.
- 13 Օծանէին իւղով զբազում հիւանդս. և
բժշկէին զնս: Տա՛ր. 6. 13.
- 14 * Ելութն հեռաւոր, իւզն ձիթենեաց յե-
պիսկոպոսէ. կամ հրամանաւ քահանայա
պետին 'ի պարզ քահանայէ օրհնեալ .
Մերձաւորն՝ օծումն հինգ զգայութեց :
Չեն 'ի հարկաւորուէ խորհրդոյն, է պա
ղատական. Ենթակայն՝ մկրտեալ ոք, 'ի
մահիւնս հողեւիար ունելով և զներդոր-
ծական մեղս. Պաշտօնեայն՝ միայն քա
հանայ : Հովիւն պարտաւորի որդայ-
թիւ կենաց իւրոց պաշտել զխորհրդս :







Գ Լ Ո Ի Խ Օ

Յաղագս խորհրդոյ վերջին օճման .

Պ Ր Ա Կ . ան

Մի թէ վերջին օճումն իցէ խորհուրդ . և
 թէ ո՞րէ պաշտօնեայ սորա .



Երբին օճման անշամբ խա-
 նանք զօճումն օրհնեալ իւզոյն .
 սրով օճէ քահնցն զհիւսնեայն ,
 որք մերձ են ՚ի մահ , առկով
 զաղօթս ինչ . Եւ այսմ դոյ ճը
 մարխո , և յառաւել նորոյ օրի-
 նաչս խորհուրդ ՚ի բէ ննէ մը
 մ . կացուցեալ հակառակ դասն երբեմն մօտու
 նեանք . և աղբիկե՛նեանք . և այժմ լօթ երեանք ,
 և դայվինեանք , իսկ մշմարխո և ուղղախա-
 եկեղեցին , իբր յօղս՛ւամ հաւատոյ յառաժար-
 ը , և զճմարտութի խորհրդոյս՝ ՚ի բայ հե՛ր-
 քեալ զաղանդս հակառակացն և յաղթահարեալ
 դասութի նց , ցուցանէ .

Նախ բանիք սրբոյն յսիրոյ . հիւանդայ
 յէ որ ՚ի ձե՛նջ առ . կոչեոցի վերիցունս եկե-
 ղեցոյ , և արասցեն ՚ի վր նր աղօթս . օճցեն
 իւզով յանուն նն , և աղօթքն հաւատովք փր-
 կեացնն զաշխատեայն . և յարուոցի զնս նր ,
 և եթէ մնոս ինչ իցի դորձեալ՝ Թողջի նմա .
 սրովք բանիք երեխն ամենեքեան , որք խնդ-
 րին ՚ի բան խորհրդոյ . այսինճն . արասցին ո-
 բա

բարոյութիւն . որ է՝ օժուան իւղոյ : ապա խոս-
տունն շնորհոց օժմանն միացեալ . ըստ որում
արարողութիւն այնուհիւ թողեալ լինին մեղք .
և հետեւապէս կացուցեալ է յայն . զի առաքեալն
ոչ երբէք հաստատութեամբ և բացարձականց
խոստանայր զնորհն զայն , եթէ քսմանն մեր
զայս շնորհ կացուցեալ . և առնել հրամայեալ :
Երկրորդ 'ի ժողովոյն կապիւնեաց , որ եղև
'ի ժամանակս մեծին կառօլտի , ուր ասի հի-
ւանդքն ըստ բանի սրբոյն յակոբոյ յեպիստի-
պոսէ՝ օրհնեալ իւղովն օժցին 'ի քահանայոց . և
ասկառ ինչ զկնի յիշէ՝ զբանն սրբոյն յակոբոյ ,
և յաւելլա՝ ոչ պարտիմք փոքր ինչ համարել
զայսպիսի դեղս , որ զհոգւոյն և զմարմնոյն բու-
ժէ զխօթութիւն : նաև 'ի ժողովոյն Ֆլորէնտ-
և թրիա . ուր ասի , խորհուրդս այս կացու-
ցեալ 'ի քսմէ նմն՝ մերմէ առ մարկոսիւ ուսու-
ցաւ , և 'ի ձեռն սրբոյն յակոբոյ առաքելոյն
և եղբոր նն՝ քրիստոսնէ իցն հաւատացեալ և հը
բապարակեալ եղև :

Երրորդ 'ի սքեց հարց' որք ասեն , թէ սրբա-
ղան օժուանս այս ունի զզօրութի սրբացուցանե-
լոյ , և 'ի մեղաց փրկելոյ , որպէս սքն յօհանս սո-
կեքերան , որ ասէ . թէ քահանայքն ոչ միայն
'ի վերստին ծնանիլն , այլ և յօժանելն իւղով ըզ
հիւանդս՝ թողուն զմեղս . և զոր հաստատե-
քանիւք սքն յակոբոյ . և սքն օգոստոն՝ 'ի զալ
հիւանդուեց ասէ . պարտին հիւանդքն ընդ ունիլ
զմարմին քսմի նն մերոյ , և ապա օժանիլ պար-
տին յատուկ մարմինք նց՝ զի կատարեացի 'ի նս
բան առաքելոյն՝ որ ասէ , հիւանդանայցէ՝ ոչ
'ի ձէնջ և այլն , և յաւել , թէ սովառ մարմնոյ
առողջութիւն և մեղացն թողութիւն ստացեալ լինի :

Ը . Ասք պաշտօնեաց խորհրդոյս՝ է միայն քա-
հանայն ըստ օրինաց ձեռնադրեալ , որ միայն
կարէ իսկապէս մատակարարել զխորհուրդս ,
ոպ ասէ սքն թօմաս , և այլք 'ի հաւարակի . և

է ըստ հաւատոյ . և հաստատի նախ 'ի վերոյ
աստիակալ բանիցն սքշն յակորայ : Թէ կոչեացէ
զերիցունս եկեղեցւոյ . երկրորդ 'ի ժող. Թրի-
որ մեկնելով զբանսն սրբոյն յակորայ՝ ասէ . յա
տուկ պաշտօնեայք խորհրդոյս են երիցունք
եկեղեցւոյ . և աստ զերիցունսն ոչ զճերսն հա
թակաւ . և ոչ զսուածինսն 'ի ժողովրդեան իմա
նանք . այլ կամ զեպիսկոպոսունս , կմ զքահա-
նայս ըստ օրինաց ձեռնադրեալս :

Եւ Թէպէտ իւրաքանչիւրք քահանայ՝ կարէ
զխորհուրդս ըստ օրինաց մատակարարել մինչ
մատակարարումն սորս , որ լինի ըստ կերպի ա-
ղօթից . ոնչ 'ի ներքոյ ասացելոցս երևեսցի , ոչ
է յատուկ դարձ իրաւանց . ոնչ 'ի հասարակ վար
զպատեացն ուսուցանէ իզամպերթոս , սակայն
ոչ որ քահանայ ըստ օրինաց կարէ մատակարա
րել , եթէ չիցէ յատուկ քահանայ նր . որում
տայ զխորհուրդս , կամ 'ի նմանէ ունի զիշխա-
նութի . ուստի 'ի կղէմէսական սահմանադրու
թե մճռեալ լինին կրօնաւոր քահանայքն իսկոյն
անկանիլ 'ի պապին պահեալ բանադրանս , եթէ
զխորհուրդս մատակարարեն աշխարհականաց ,
կամ կղերիկոսաց առանց հրամանի յատուկ քա
հանային :

Սակայն ոչ այսպէս 'ի հարկաւ որութե , եթէ
ոչ կարէ մատակարարել խորհուրդս 'ի յատուկ
քահանայէն , ոնչ եթէ իցէ հեռի , կամ ոչ կա-
րացէ այլ որ 'ի նմանէ առնուլ զշրաման , զի
յայնժամ իւրաքանչիւրք քահանայ ևս կրօնա-
ւոր՝ կարէ իսկապէս և ըստ օրինաց մատակա-
րարել զխորհուրդս հողեվարին , և ոչ անկանի
'ի բանադրանս , ոնչ ուսուցանէ սքն անտոնխոս :

Դ . Խնդրեն ոմանք 'ի պատճառս բանիցն սքշն
յակորայ , կոչեսցէ զերիցունս եկեղեցւոյ , մի
Թէ պաշտօնեայ խորհրդոյս պարտ է լինիլ մի
որ , Թէ բողոմք : պատասխանեմ նախ , Թէ
մինն բաւական է , ոնչ յայտ է յատուկ սովո-
րս

բուժէ եկեղեցւոյ , որ զմի ոք միայն քահանայ
կացուցանէ 'ի մատակարարել զխորհուրդս :
Պատասխանեմ երկրորդ , թէ կարեն ևս քա-
ղում քահանայք մատակարարել զխորհուրդս ,
կամ հետևաբար , ուր յորժամ զկնի օժանելոյ
միոյ քահանային զմի կամ զերկուս անդամն ար-
տաբերմամբ ձևոյն , այլ ոք քահանայ զմնացել
օժմունս արտաբերմամբ ձևոյն կատարէ : և կմ
'ի միասին , ուր յօժանել քահանային զմի անդամն
արտաբերմամբ ձևոյն , այլ քահանայք 'ի նոյն
ժամանակի օժանելով զայլ անդամն՝ արտա-
բերեն զձև բանիցն . և թէ պէտ կերոյ մատա-
կարարութեա սյսորիկէ միշտ խհապէս , սա-
կայն ոչ ըստ օրինաց , եթէ ոչ միայն յերկուս
պատահմունս : նախ զի , եթէ քահանայն զկնի
օժանելոյ զոմանս անդամս հիւանդին մեռանի-
ցի , կամ 'ի նոյն հիւանդութի ըմբռնեսցի , զի
զմնացեալսն ոչ կարացէ օժանել , քանզի յայն
ժամայլ քահանայ՝ կարէ զպակասութիս նորա
լցուցանել ոչ կրկնելով զօժումն անդամոցն ,
որք օժեալ են , այլ լցուցանելով զպակասութիս
Երկրորդ յորժամ երկնիմք 'ի մահուանէ հի-
ւանդին , զի մի յառաջքան զօժումն ամ անդա-
մոցն մեռանիցի . յայնժամ , եթէ են տեղ այլ
քահանայք՝ կարեն 'ի միասին , մինն զաչսն , միւսն
զականջսն , և այլն , օժանել և արտաբերել իւր
աքանչիւրոք զձև բանին անդամոյն , զոր օժա-
նէ , ուր ստեն սուարէղ , իղամբերդոս , և այլք
'ի հասարակի :

Պ Ր Ա Կ . Ի .

Յաղագս նիւթոյ և տեսակի խորհրդոյս :

ա. **Լ** սեմ նախ , թէ հեռաւոր նիւթ վեր-
ջին օժման է , յեպիսկոպոսէ օրհնեալ
ձէթն ձիթենեաց , և նախ հաստատի 'ի սահմա-
նս

նազրուէ եւ կեննիոս պապին . ուր յայտնապէս
ասի , թէ նիւթ խնդոյս է ձէթն ձիթենեաց :
երկէր 'ի հռոմէ . ուսու . որ ասէ , թէ անուամբ
ձիթոյ իմանամբ ոչ զամ պարարտ և դէր հեղե
ղուկ , այլ միայն զձէթն հեղեալ արհեստիւ 'ի
պաղոյ ձիթենեաց , և ձէթս այս ևս առ 'ի լինիլ
ընդունակ և բաւական նիւթ խորհոյս ' պարտի
օրհնիլ յեմքսէ , ուն ուսուցանէ սքն թօմաս , և
երևի 'ի սահմանադրուէ եւ կեննիոս պապին . և
'ի թղ . թրի' . և ևս 'ի կիրառուէ եկեղեցւոյ , որ
սովոր է միայն յեմքսէ օրհնեալ ձիթովքն 'ի մա
տակարարել զխնդս' վարիլ :

Խնդրեցես , մի' թէ 'ի պակասիլ օրհնեալ ձի
թոյ կարէ որ 'ի հարկաւորուէ 'ի մատակարարել
զխնդս 'ի կիրարկանել զպարզ ձէթն ոչ օրհնեալ
կամ փոխանակնր 'ի գործարկանել զմեռոնն սք .
Պատխնմ' նախ , օրհնեալ ձէթն է 'ի հարկաւո
րուէ խնդոյս , ուն ուսուցանէ սքն թօմաս , սքն
պճնավենթուրայ և այլք , և վն) ոչ ըստ օրինաց
և ոչ իսկապէս մատակարարիլ կարէ խնդս պարզ
ձիթով , որ չիցէ օրհնեալ . բայց եթէ օրհնեալ
ձէթն չբաւեցիր կարէ սակաւաչափ պարզ ձէթ
ըստ օրինաց խառնիլ 'ի նմա : Պատխնմ' եկդ .
թէ խնդիր է 'ի մէջ ամբանից , մի' թէ խնդս
այս կարէ մատակարարիլ ձիթովս պալասամի ,
կամ մեռոնաւ . վն) ոմանք ասեն թէ այն . իսկ
այլք թէ ոչ . զորս տեսցես 'ի դիրս լայիմանի .
որ եզրակացուցանէ , թէ երկաքանժւրոցն բան ,
տակաւին ոչէ բացորսչեալ յեկեղեցւոյ . իսկ ըստ
սովորութե'նր ոչ է օրէն քահանային 'ի պաշտել
զխնդս վարիլ մեռոնաւ . վն) այն զի գտնեա սո
վորութե'ն և կիրառութե'ն եկեղեցւոյ ընդ դիմանայ .
որ 'ի կիրարկանէ միայն զպարզ ձէթն յեմքսէ
օրհնեալ յօժուն հիւանդաց : Որ և յաւել թէ
թէ պէտ ըստ սովորութե'ն եկեղեցւոյ ձէթս այս
հիւանդաց յամ' ամի պարտի նորոգիլ . և 'ի դալ
նորոյ , հնոյն այրիլ , սակայն եթէ հոգաբարձուն

ընկալեալ զնորն յեմքսէ օրհնեալ հարկաւս
բեացի, կարէ ըստ օրինաց պաշտել հետիւն :

Բ. Ասեմ եկդ թէ մերձաւոր ելութ խորհոյս
է օծումն, որ լինի 'ի կերպ խաչի ըստ հռոմէ'
մաշտոցի 'ի յաշան, յահանջան, յըռնդունան. 'ի
չրթունան, 'ի ձեռան, յուսան, և յերկամանան,
բայց զերկամանցն 'ի կանայս զօծումն զանց առ
նաւեք վա պարկեշտութե. և փոխանակ նր օծա
նեմք զկուրծան. ըստ փարիզեցւոցն մաշտոցի,
և այլոց և իսկ օծումն 'ի յանդաման. որք զուր
են, կրկին պարտի լինիլ. զոր օրինակ : մինն 'ի
վր անոյ, և միւսն 'ի վր ձախոյ աչացն. միով
արտաբերմամբ ձեռոյն. այնպէս զի արտաբերու
թի ձեռոյն դռնեակատարեացի յօծանիլ երկդին.
նոյ ասի 'ի նոյն մաշտոցի. ուր ևս ասի, եթէ
մինն յանդամանցն դասացեալ իցէ՝ օծումն պարտի
լինիլ 'ի մերձադոյն անդամն արտաբերմամբ
ձեռոյն. դարձեալ օծումնս այս ոչ պարտի լինիլ
'ի ձեռն դործեաց և այլ բեմամբ քննին, որ
պաշտէ զխորհոյս. զի ձեռն քննին կենդանի դոր
ծիք է մեծային ի շխանուեն և շնորհաց, յա
տակ օծմամբ սա խորհական պաշտամունս 'ի
նոյն ձեռնադրութե անադրեալ :

Արդ, որովհետև այսոցիկ երևին 'ի կիրա
ռութե եկեղեցւոյ, խնդրի, մի թէ օծումն ամ
անդամոցն այնոցիկ իցէ յեռն խորհոյս, այնպէս,
զի իսկապէս ոչ կարասցէ լինիլ առանց օծման ամ
անդամոցն : Պատասխանեմ նաև ըստ հասարակ
մեծաբանից, թէ առ իսկութե խորհոյս ոչ խնդրի
օծումն 'ի կերպ խաչի, կամ զի օճցին սաքն, բուն
դունքն, կամ կուրծն, և կամ զուր անդամոցն
երկոքին. և թէ պէտ այսոցիկ ըստ հրամանի եկե
ղեցւոյ պարտին լինիլ և պատիլ. և ապա առանց
հարկաւորութե ոչ կարեն զանց առնիլ առանց
մեղաց. սակայն ոչ են յեռն խորհոյս. և ոչ ին
զրին սա. իսկութե նր, ուր ասեն ստե՛ս և այլք :

Գ. Պատխանեմ եկդ, խնդրի 'ի մ. Չ մեծաբա
նից :

նից, մի՛ թէ առ խկուծի խնդոյս հարկաւոր իցի՝
 օժուին հնգից զգայարնացն մարմնոյն կամ թէ բա-
 ւական է միայն 'ի նոցանէ . Չի ոմանք վնդպտք ընդ-
 իզամսլ՝ ասեն , թէ բաւկն է օժուին միոյ զգայա-
 ըանացն առ խկուծի խնդոյս , խկ այլք հակա-
 դարձաբար ասեն , թէ օժուին հնգից անդամոցն
 առ խկուծի խնդոյս խնդրի . այսոյ սքն թօմաս :
 սքն պօնավ՝ և այլ բնութք և որոց բանն հաւանա-
 կան ևս երևի 'ի պատճառս վկայութեն սքնն թօ-
 մայի . և վնյ 'ի կիրարականելի :

Ասեմ երբ՝ թէ ձև խնդոյս է այս . Այսու սք
 օժմամբս՝ և ամենագուծ ողորմութեն իւրով ,
 թողցէ քեզ աք , զոր տեսանելեօքդ յանցեալ և՛ .
 Սոյնպէն և զայլ անդամոցն իմանալի է , որպէս
 սահմանեցաւ 'ի Ժող՝ թրի՛ . և յայտնանդս երևի
 'ի հռօմէ՛՛ մաշտոցի , Եւ գիտելի է նախ , զի ձև
 խնդոյս պարտի ինկի ըստ կերպի աղաչանաց . ու
 ասէ սքն թօմաս , և սքն պօնավեն թուբա և այլք
 'ի հասարակի . Եւ հաստատի 'ի բանից սքնն յա-
 կորայ . Ազօթս արասցեն 'ի վր նր . և ազօթքն
 հաւատով զրկեցեն զաշխատեալն , նաև 'ի յընդ-
 հանուր կիրառութե՛ Էկեղեցւոյ , որ յամուրեք
 'ի պաշտել զնոյս 'ի ձև աղաչանաց վարի :

Դ. Երկր՝ զի թէպէտ ամ բառքն՝ որք 'ի ձև
 խնդոյս հասարկբար արտաբերին առ խկուծին
 ոչ պատկանին , այլ միայն այսոցիկ հարկաւորայն :
 այսու սք օժմամբս թողցէ քեզ աք զոր ինչ մե-
 զար , սոյ ասէ իզամսլերթոս . սկնն քհնյն պարտի
 զամ բառսն ձևոյ խնդոյս , որ յեկեղեցւոյ եդեսլն
 է , սոյ գտանի 'ի հռօմէ՛՛ մաշտոցի , կամ ըստ
 սովորութե իւրաքանչիւր վիճակի , բացորաչա-
 բար արտաբերել . և ոչ կարէ առանց մեղաց
 զմինն 'ի նոցանէ թողուլ , կմ փոփոխել :

Երբ հաւանելի ևս է , զոր ասեն ոմանք վար
 դասեաք , թէ հնգեկի արտաբերութեն ձևոյ
 խնդոյս , ոչ է յեռէ նր . այլ բաւական է մի ոն
 գամ արտաբերումն , այսինքն , եթէ հիւանդն

Տանրասցի, և մեռանելոցն իցե, կարե քհնյն զմերձագոյն մասունս հնդից զգայրնցն օժանել. ուր զմի ակն, զականճն, զքիթն, զուրթն. և զայլ ինչ մասն մարմնոյ վն շոշափելեացն, որ ՚ի պատ բաստի է. այսինքն պայտն, և. և զայս վաղ վաղակի. և ս առանց նշանի խափ ՚ի միասին և. միանգամ արտաբերմամբ ձևոյ. որ է. Այսու սք օժմամբս՝ թողցե քեզ ար, զոր յանցեար. (կամ զոր մեղար) տեսանելեօք, լսելեօք, հաստ տեղեօք, ձաշակելեօք, և շոշափելեօք :

Պ Ր Ա Կ. Դ :

Յաղագս զօրութե խորհրդոյս :

Օրութի վերջին օժմանն կրկին է, զի ոմանք հոգւոյն, և ոմանք մարմնոյն պատկանինս և որք առ հոգին պատկանին, են հինդ մանաւանդական զօրութե. զորս հոգւոյն մայ խորհրդս :

Առաջին զօրութին հասարակ ընդ այլոց խորհրդ է սրբարար շնորհն ուր ասի ՚ի ժղ՝ թրի՝. և թէ որք ասասցե, սրբազան օժումն հիւանդաց ոչ մայ զնորհս, և՛, նզովեալ եղիցի :

Եկոն է յատուկ օգնութի շնորհաց, առ ՚ի յաղթել փորձութեցն՝ որք ՚ի կէտ մահու բանս նան. և առ ՚ի դիւրաւ և հաստատութե յուսալ և ապաւինիլ առ աճ. և ս առ ՚ի զտառապանս և զվիշտս հիւանդութե և մահու համբերութե կրել. որ յայանանք մեկնեցաւ ՚ի ժղ՝ թրի՝. ուր ասի, թէ խորհրդ զօրացուցանե զհոգի հիւանդին. և հաստատե. զարթուցանե ՚ի նմա զամենամեծ ապաւինութի առ անձային ողորմութին, որով զովացեալ հիւանդին տառապանացն հիւանդութե և աշխատանաց նր դիւրաւ տանի, և և ս փորձութեցն զիւաց, որք զարշապարաց նր սպասեն զիւրութե յաղթահարե :

Դ. Երդ, զօրութին է թաղութի մահու լափ մեղաց,

մեղաց , զորս ստուգիչ մտացեալ իցէ հիւանդին . քանզի թէպէտ ըստ կամտխէոսի խհիւսացս ըստ առաջին կացուցմանն բի զէքկիպական շնորհս միայն . այսինքն . դաճումն սրբարար շնորհաց տաց , և պահանջէ լինիլ մաքուր ՚ի մահու շարի մեղաց ՚ի ձեռն խհիւսական ազաշխարուէ . կմ կատարեալ զջման , սակայն , ընդ երկգին ևս և զառաջինն երբեմն տայ զշնորհս . և զմահացու մեղս ջնջէ . և թէ խհիւսին խստութեանն ոչինչ և անխկանց իցէ լեալ , և հիւանդն բարի հաստատով կարծեսցէ զինքն անյողթաբար ոչ լինիլ ՚ի մահացու մեղս , և որոց վտան դոնեա սեռօրէն զջմացի , սոյ ուսուցանեն սուարեզ և այլբ : Եւ այս երևի ՚ի բանից սքչն յակորայ . և եթէ մեղս ինչ իցէ դործեալ թողցի նմա . նաև ՚ի ժզ՝ թրի տենթինոյ որ սակ , քաւեսցին յանցանքն և թէ տակաւին չիցեն քաւեալ , և ևս ՚ի ձեոյ բանիցն , Թողցէ բեզտր՝ զոր մեղար և՛ . և զի այս ստբիկ բանքս առաքելոյն , և ժողովոյն սոյ և այլոց . մինչ անբացորոչ բեն , և աւանց սահմանի , կարեն խնացեալ լինիլ զիւրաքանչիւր մեղաց ևս զմահու շարից :

Չորս զօրութիւն է թողութի ներքեի մեղաց . սոյ երևի ՚ի բանից առաքելոյն , և ՚ի ժզ՝ թրի՛ . և ևս ՚ի ձեոյ խհիւսոյս :

Հինգ երդն է ջնջումն մնացորդացն մեղաց , սոյ յայտնաբար ուսուցանէ ժզ՝ թրի՛ . և անսամբ մնացորդացն մեղաց սուրբն թօմաս և այլ բիմ անաբանք իմանան զմեղկութիւն , զթուրութիւն , զախրութիւն , զտրամութիւն , զզգուումն , զանձկութիւն , և զայլ նման վատթար իղձս հոգւոյն . որք զի բազմիցս յանցեալ մեղացն , և ՚ի մտածմանց նց ծնանին . զբիւ՛ հոգևոր անյան զորրութիս պատճառեն . կամ ևս ՚ի վերջին յուսահատութի զմիքն արկանեն .

Դ . Իսկ զօրութի խհիւսոյ , որ սա մարմինն պատկանի է մի . այս է առողջութի մարմնոյ

հիւանդին . և երևի 'ի նոյն բա՛րիցն առաքելոյն ,
 Եւաղոթքն հաւատով փրկեացն զաշխատեալն :
 ող և ս զսոյն իսկ իմանայ նքն Թօմաս , և այլք .
 և և ս ժղ 'Թրի' . ստեղծեալսն Թէ ու թ պարտեալք
 իմանալ զբանս առաքելոյն , այսինքն , և Թէ օգ
 տակար իցէ հոգւոյն , առողջութիւն մարմնոյն :

Խնդրեացես , Թէ զինչ իցէ զլեւաւոր զօրութի
 խհոյս . կամ վն ոյր մանաւանդ խհոյս կացու
 ցաւ : Պտխնմ ըստ սքին Թօմայի , և այլոց , Թէ
 խհոյս նախ կացուցեալ է առ 'ի տալ հիւանդին
 զներդարձական օգնութիւն ինչ շնորհաց , որով
 զօրացեալ քաջացի ընդ դէմ փորձութեցն և
 հակառակութեցն , որք ընդ յառաջ երանեն 'ի
 վերջն կենաց , զի մի' որովք զբաղեալ ոչ կա
 բացէ հոգալ զփրկուէ իւրմէ : իսկ երկդարար'
 առ 'ի տալ զառողջութի մարմնոյ . և Թէ հոգւոյն
 փրկութե օգտէ , կամ և ս առ 'ի ունիլ զայլ զօ
 րութիւն , զորս 'ի վերոյ ասացարք :

Պ Ր Ա Կ . Գ :

Յաղագրս Թէ ս արդեօք կարէ ընդունիլ զխհոյս ,
 և սրնի տրամադրութի խնդրի առ
 'ի ընդունիլ :

Թ . Ա սեմ նախ , Թէ ընդունակ խհոյս է ամ ոք
 մկրտեալ . որ և զկիրառութիւն բա
 նականութե լցեալ հիւանդութի մարմնոյ յեր
 կուղ մահու անկեալ իցէ . որպէս ասեն վոյնք 'ի
 հասարակի :

Խնդրի նախ , զի իցէ մկրտեալ . զի մկրտու
 Թիւն է դուռն հոգեւոր կենաց , և առանց սորա
 ոչ կարեն իսկապէս ընդունիլ այլ խհոյք :

Եւ ինչ' զի կիրառութիւն բանականութե լցեալ
 իցէ . զի մինչ զօրութի խհոյս է Թողութի ներ
 դարձական մեղաց , և արիութի ընդ դէմ փոր
 ձութեցն : ոչ կարեն մանկունքն լինիլ զօրութե
 խհոյս

խնայ ընդունակ , յառաջ քան զկիրառումն քա
նականութե , ուր ըստ ինքեան երեւի . և վնջ ևս
ոչ կարեն ընդունել զխնայ . Ուստի բարութ ևս
ուսուցանեն սուարեղ , և այլ բնիմ անարար ,
Թէ խնայն վերջին օժման խնայող կարէ տրիլ , և
մանաւանդ ոչ է խնայելի մանկանցն՝ որք առայն
հասեալ են հասակ , և բանականութեն կիրա
ռութի , որով խնայ ապաշխարութեն են ընդու
նակ , Թէ և զսնն հաղորդութիւն չեւ ևս իցեն ըն
կալեալք . և կամ պարտական երեւեալք առ ՚ի
հաղորդիլ . որպէս ասէ մաշտոցն փարիզէցւոց .
Ասացի , Թէ խնդրի , զի նա՝ որ ընդունի զխնայն՝
լցեալ իցէ զկիրառութիւն բանականութե : և
զոր կամ ունիցի , և կմ կորուսեալ իցէ խնայա
րութեն յօթութիւն , և Թէ պէտ առնեալայ
ելուչ իմն է , և զոր ջանալ պարտիմք որքան կա
րիլն է , զի հիւանդն յընդունիլ զխնայն առողջ
մտօք , և զպարտանօք լիցի . սակայն ոչ է պարտ
զրկել զայն , որ կորուսեալ է զնա : Եթէ նախ
քան զկորուսանելն խնդրեաց , կամ դանկ մեկ
նողաբար ցանկացաւ այսմ : այս է , Եթէ քրիս
տոնեաբար եկաց , և զփրկութէ իւրմէ հոգաց ,
և զոր համարել պարտիմք , Եթէ ներհակն այս
ցիկ չիցէ երեւեալ ի նմա . ուր ուսուցանեն անա
բանք , ևս և հոօմէ՝՝ մաշտոցն . որ յաւել ՚Թէ
ոչ է օրէն ամենեկին տալ զխնայն այնոցիկ՝ որք
անզիջքն են , և որք ՚ի յայանի մահացու մեղս
մեռանին . և որք բանադրեալ են :

Երբ , զի միայն հիւանդացն , յերկիւղ մահու
անկելոցն պարտ է տալ զխնայն . որպէս ասէ աբն
թօմաս , և այլք ՚ի հասարակի . և հաստատի ՚ի
ժող ՚Թրի՝ , ուստի ոչ կարեմք մտտակարարել
զխնայն դատապարտելոցն ՚ի մահ , պատերազմե
լոցն ՚ի բանակս , կամ այլ սոցին նման մահաւամք
մեռանելոցն . ուր ասի ՚ի հոօմէ՝՝ մաշտոցի :

Ք . Ուսուցանէ աբն թօմաս , և այլք ՚ի հասա
րակի , Թէ վերջին օժումն ոչ կարէ կրկնիլ չեբ
կարիլ

կարիւղ որոգայթի նոյնոյ հիւանդութեւ . բայց
եթէ յերկարիւղ հիւանդութեւ . կրկին անկցի հիւ
ւանդն յորոգայթ մահու . կարէ կրկնիւ խոհոս .
նոյ եթէ զկնի օժմանն սկսեացի ՚ի լուարոյնս
ընթանալ և զերժանիւ յորոգայթէ մահու , և
ասպս փոփոխմամբ բնուեն , կրկին անկցի ՚ի նոյն
որոգայթ :

Ասեմ եկեղ . զի հիւանդն առողջ մտօք պար
տի ընդունիլ զխոհոսն ասպախարութեւ , և հաղոր
դութեւ յառաջ քան զօժանիլն վերջին օժմամբ .
եթէ ժամանակն , որպիսութիւն , կամ արամադրու
թիւն հիւանդին զայս թոյլատրէ . նոյ ասէ իզամ
պեր'' , զոր ևս աւետանեմք ՚ի հո օմէ'' մաշտոցի ,
և առաջարանի , ուր սովորութիս այս կոչի
մշտնջենկն . և պահպանելի իսկ եթէ զկնի ՚ի մա
հացու մեղս անկցի , կամ յիշեացէ զմահացու ինչ
մեղս իւր , զոր ոչ է խստմեակ , պարտ է յառաջ
քան զընդունիլ խոհոսն խստմեակ կամ եթէ ըմբ
նել ՚ի վերջին բուռէ հիւանդութեն ոչ կարասցէ
խստմեակ , պարտի զներդործութիւն կատարեալ
կամ պարզ զղջման բղխել . զի զօրութիւն խոհոս
ընկալցի զթողութի մեղացն :

Գ. Խնդրեացես , մի՛ թէ պարտաւորիմք ընդ ու
նել զխոհոսն վերջին օժման : Պատիւնք սքին թա
մայի , թէ ոչ երբէք պարտաւորիմք ընդ մահու
Արդ աստուածս երևի ըստ սքնն թօմայի , թէ բարութն կամ չարութն մարդկային գործոց մանաւանդ յայտոյնի երկոց կախեալ կայ . այս է , յառարկայէն , ի պարագայեց . և ի վախճանէ : սակայն այսու տարբերութիւն , զի ի համարիչ չար գործոց ինչ , բաւական է իւրաքանչիւր բարոյս կան պակասութի : Թէ ի կողմանէ առարկային , և թէ ի կողմանէ վախճանի , կամ պարագայի ուրուք : Իսկ զի լիցի բարի , խնդրի առարկայ բարոյականաբար բարի , վախճան բարի . և պարկեշտ , և ևս զի այսպիսի գործն , մի ինչքազան զի պարագայիւք պատեսցի : զի բարին (սոյ ասե սքնն Դիոնէսիոս , ի գիրս անձային անունաց , զլուս 2 .) կախի յամբողջ պատճառէ . իսկ չարն յիւրաքանչիւր պակասութի :

Ասացել ոք , թէ ի զուր և ընդունայն է անկն , թէ մարդկային գործն զբարութի կամ ըզչարութի իւր առնու ի վախճանէն , մինչ ևս վախճանն ի մեծ պարագայեց համարի :

Պատասխանեմ , թէ վն այն յասկապէս նկատի բարութն կամ չարութիւն , որ ի վախճանէն առ

Գործն մարդկային հասանի , զի վախճանն 'ի մեջ այլոց պարագայից , զայս ունի յատուկ , զի ոչ միայն պարագայի զմարդկային գործովք , այլ ևս յատուկ ինչ կերպիւն հեղանի 'ի նա , և ունի զբան ոչ միայն պարագայի , այլև զբան բարոյական պատճառի :

Խնդրեսցես , թէ որպիսի առնչուի միջկային գործոց 'ի վախճաննէ : հարկաւոր , զի 'ի վախճաննէն , յայնմանէ առնուցու զբարութի կմ զչարութի :

Պատասխանեմ , թէ առնչուին այն պարտի ինիլ կամ ներգործական , կամ գոնեա զօրութենական , այսինքն , հարկաւոր է , զի գործօղն ածցէ ներգործապէս , կամ գոնէ ածեալ իցէ նախապէս զգործն իւր 'ի վախճանն յայն , այն պէս , զի զօրութի այնորիկ առնչուեք գործն 'ի նմանէ 'ի կիր արկցի , զի հակաւոր է վախճանին 'ի գործն հեղանիլ , իսկ հեղանիլ ոչ կարէ , եթէ միտն այսոցիկ երկուց կերպից ոչ շարժեսցէ զգործօղն 'ի գործել : Եւ 'ի դիւրին իմացումն , գիտելի է , որ և 'ի վեր անդր ասացաւ , զի վախճանաց ոմն է գործոյն , և ոմն գործողին , վախճան գործոյն է ներքիննոյնոյ գործոյն , և վնյ տայ նմա զբարոյկն էալի կմ զոքսակ , զոր օրի նակ , ոմն օք 'ի պիտանս ողորմածուե տացի զողորմութի , ոչ է գործն այն իւրիք առնչուեք բացայայտեալ առ այննի վախճանն : զի բաւական է , ճանաչելն այնորիկ , որ տայ զողորմութի , թէ գործէ զգործինչ ողորմածութե . և զայն կամի ազատաբար գործել : Եւ ոմն է վախճան գործողին , որ և արտաքին անուանի . զոր գործօղն իշխանութե իւրով կացուցանէ ինքեան . որ գոն , տալ զողորմութի վն բաւարարելոյ մեղաց : բայց առայս , զի այսպիսի վախճանս , զբարութի իւր հաղորդեսցէ գործոյն . պարտի 'ի նոյնն հեղանիլ , և որ ոչ կարէ հեղանիլ . մինչև գործօղն ներգործապէս , կամ գոնէ զօրութենաբար ըզգործն իւր առ այն ածցի :

Պ Ր Ա Կ Չ Ո Ր Ո Ր Գ :

Մի թէ է գործ ինչ անզանազան . այս է որ ոչ չար , և ոչ բարի լինի :

Թ. Արկին կարէ յառաջադրեալ խնդրոյս լինիլ իմացումն . Նախ , մի թէ է գործ ինչ մարդկային անզանազան ըստ տեսակին , կամ որ 'ի կողմանէ առարկային խորոյ , ոչ զբարոյ ական բարութի , և ոչ զչարութի ունիցի : Երկրորդ մի' թէ է ևս այնպիսի գործ անզանազան ըստ անհատին , այսինքն , որ ըստ որում 'ի մէնջ աստ և այժմ զգուշութեամբ բանականին աղատարար 'ի կիր արկանի , յոչինչ կողմանէ իցէ բարոյականաբար բարի կամ չար : 'ի մեկնութի որոյ .

Ասեմ նախ , թէ կարէ լինիլ գործ ինչ մարդկային , որ ասիցի անզանազան ըստ տեսակին , ուղ ասէ սքն թօմաս , և ընդ նմա այլք անճարանք 'ի հասարակի : Եւ զայս յայտնապէս ևս ուսուցանէ սքն օգոստինոս . 'ի մեկնել զբան մն , || Մի դատեք , զի մի' դատիցիք , և բաղդատեալ ընդ այլ բանսքի մն մերոյ , թէ || 'ի պաղոյ անտի նց ծաներութեան , ասէ , զչեւտինս զայս բան իմանալ պարտիմք վն յայտնի գործոց , որք ոչ կարեն բարի դիտաւորութի լինիլ , որպիսի են : հայհոյութի , գողութի , և'' . իսկ զառաջինն վն անզանազան գործոց , որպիսի է սուտելն և'' : վնյ ասէ , || Արդ' են ոմանք միջակ գործք , զորս ոչ դիտեմք , որով հողւով լինին . զի բարի և չար դիտաւորութեամբ կարեն լինիլ . զորոց դատել յանդգնութի է , մանաւանդ առ 'ի դատապարտել զք :

Ասեմ երկրորդ , թէ պէտ հաւանական է , ոչ լինիլ ըստ անհատին անզանազան գործ մարդկային , վն վկայութեց բաղում յոյժ վարդապետաց , և մանաւանդ սքն թօմայի . որք ասեն

ոչ իննիլ այսպիսի դործ ըստ անհատին , սակայն
 ևս հաւանական երևիլի է : այսպիսի դործ ըստ
 անհատին , որ ոչ բարի և ոչ չար իցէ բարոյակա
 նարար , ունի ասէ սբն Պանափենդուբայ , և
 սյլ բազումք , և հաստատի ՚ի վկայութե՛ն սբն
 Հերոնիմասի , որ ասէ , || ՚ի մէջ երկաքանչիւրացն
 (այս է բարւոյն և չարի) անզանազան է , չբն
 դայիլն , զաւելարդ խոնաւուքն զվնոյ յընդացն
 անախարտաքսելն : և'' . զի այսքիկ ոչ բարի և
 ոչ չար են , զի եթէ արասցես կամ ոչ արասցես
 զայնոսիկ , ոչ զարդարուի , և ոչ զանիրաւուի
 ինչ դործես : դարձեալ սբն գրիգոր խօսելով
 վս սիրոյ ընկերին , որ յառաջագայի , ոչ ՚ի
 պարզ սիրոյ , սյլ ՚ի յըզճիոյ ազգականուէ . և
 մարմնոյ , ՚ի միոյ կողմանէ ոչ ընդուէի զլինիլն
 դործ առաքինուէ այսպիսի սիրոյ , իսկ ՚ի միւսոյ
 կողմանէ ասէ , թէ ոչ է չար , և ոչ սբ գիրք
 այսմ հակառակին . ուստի հետեւի թէ է անզա
 նազան . որովհետև ոչ բարի , և ոչ չար է :

Հաստատում և ևս , զի փափաքն բնական հան
 դատուէ և փախուստ անհանդատուէ նր ոչ է
 չար յառարկայէն . ունի երևի ըստ ինքեան , և ոչ
 ևս բարի , մինչ ոչ պատկանի առ բարոյական
 առաքինուի ինչ : վնյ յորժամ որ պարզարար փա
 փաքի բնական ինչ հանդատութե՛ն , կամ փախչի
 յանհանդատութե՛ն նր . դո՛ճն նր ոչ բարի , և ոչ
 չար է , և ապա անզանազան :

Բ. Ասասցես երկրորդ , թէ փափաքն այն է
 չար , վս զի ոչ ածի ՚ի վախճան ինչ բարի և պար
 կեշտ , որով հետև պարտական է մարդն վշտ
 զգործս իւր ուղղել ՚ի բարի և ՚ի պարկեշտ վախ
 ճան ինչ :

Պատասխանեմ նախ , բացասելով , թէ պար
 տական է մարդն ուղղել զգործս իւր ՚ի բարի
 և ՚ի պարկեշտ վախճան , զի իցեն բարի և
 պարկեշտ բարոյականաբար : զոր ևս ոչ բնդու
 նին սբն Պանափենդուբայ , և սյլ բազումք . զորս
 Ը Ը 1

Ի՛

Յաղագս մարդկային գործոց
 'ի վկայ կոչէ իզամպերգոս , և ասեն . թէ 'ի լի
 նիլ բարի մարդկային գործոց , բաւական է , զի
 առարկայ նր' , առ որ կամքն ազատաբար ասի .
 լիցի բարոյականաբար բարի , և պարկեշտ : և
 ոչ խնդրի առաւել քան զայս , զի 'ի գործողէն
 'ի բարի վախճան ինչ ուղղեսցի :

Պատասխանեմ երկրորդ , թէ և սասասցի , թէ
 պարտական է մարդն ուղղել զգործս իւր 'ի վախ
 ճան ինչ բարի և պարկեշտ , զի իցեն բարի և
 պարկեշտ բարոյականաբար : սակայն աստուստ
 ոչ հետեւի , զի 'ի սակաասիլ սյսպիսի առ ընչուե՞
 դործքն այնորիկ իցեն չար , այլ թէ միայն ոչ են
 բարի , և պարկեշտ . (զոր և ստատովանիմք ,)
 և ապա են անզանազան :

Ասացես և ևս գործքն այնորիկ լինին դա
 տարի , և ապա չար :

Պատասխանեմ , ոչ ընդունելով , թէ գործքն'
 որք ոչ ուղղին 'ի բարոյականաբար բարի վախ
 ճան են դատարի : վս զի ոմ ասէ սքն պոնավին
 դուրայ , կարեն լինիլ հարկաւոր նոյնոյ իսկ
 բնուե , կամ՝ օղտակար , որ և բաւական է . զի
 մի իւրք համարեսցի դատարի :

Ազդ' թէ պէտ վարդապետութիս այս , թէ կա
 րէ լինիլ գործ ինչ ըստ անհատին անզանազան ,
 հաւանական է , և աղահոյ , ևս 'ի կիր արկա
 նիլ կարէ առ 'ի վերջանիլ 'ի բազում մեղաց ,
 որք ըստ հակառակ իմացմանն յաճախութի գոր
 ծիլ կարեն , սակայն այս ոչ պարտի ներհակիլ ,
 զի մի' իւրաքանչիւրք ջանասցի յատկապէս զամ
 և զիւրաքանչիւր գործս իւր 'ի բարեդոյն և 'ի
 հաճոյական ւոյ ուղղել 'ի վախճան . ըստ խորհր
 դոյ բանի առաքելոյն , մ . կրթ . 10 . || Ե թէ ու
 տիցէք , եթէ ըմպիցէք , եթէ զինչ և առնիցէք ,
 զամ ինչ 'ի փառս ւոյ արասմիք : Զոր բան մեկ
 նեւով սքն բարսեղ 'ի ճառս առ սքն յուրիդա
 մարտիրոսն || 'ի նստիլ քո ասէ 'ի սեղանն , ա
 ղ՛ թս արա , 'ի ճաշակելքո զհաց , գոհասմիր
 զպար

զպարդևողէն զայ . ըմպեն սասէ զգինի , յիշեալ
զնա . որ ետքեզ զայն յուրախուի և 'ի թեթևա
ցումն տկարութե քո , զդեննու զզնասոս ,
գոհասովր զբարերարէն այ , որ պարդևեացն
զայն քեզ . հայիս յերկինս և տեսանես զգեղեց
կուի լուսաւորացն , անկեալ առաջի այ երկրպա
շեա նմա , որ զմին իմաստուք արար . և'' :

Պ Ր Ա Կ Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ :

Մի թէ առ 'ի բարեոք գործել սերուք
պարտական է հետևիլ ազգմանն խղ
ճի մտայ :

ԼՆ զի 'ի յուղիղ իմացմանէ յառաջագրեալ
խնդրոյս իբրև 'ի յսկզբէ ինչ կախի մեկ
նութիւն բազում գծուարուեց բարոյական ան
բնուե . վայ ասկաւ ինչ լայնատարած ընձեռեա
ցուք , և զայն 'ի մեծագոյն դիւրութի հատուածս
հատուածս բաժանեացուք :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Ա Ռ Ա Զ Ի Ն :

Թէ զինչ է խիղճ մտաց' և 'ի քանիս բաժանի :

Թ. Պախտելի է ըստ վարդապետուէ սքնն թե
մայի , զի այս է տարբերուին 'ի մեջ
խղճի մտաց , և ազգման մտաց , զի ազգուին
մտաց է ունակուի բնականաբար ընդաբոյս մեզ
գործածելի սկզբանց . իսկ գործածելի սկզբունքն
են ք հանուր կանոնք ինչ ըստ ինքեանց յայտնիք
չուրջ զկանոնաւորմամբ մարդկային գործոց ,
և իբր լոյս ինչ առաքինութեց , ոպ սասէ սքն
օգոստինոս , ոպի են այսոքիկ . Պարտ է կեալար
գարուք , Հատուցանել իւր քնչիւր զիւրն , և'' :

Իսկ խիղճ մտացն է գործ նոյնոյ ազգման
մտաց , որով 'ի գործ ածելիք զձանաչուան զայն

ընդհանուր առ մասնաւոր գործ ինչ, և գա-
տեմք, թէ այժմ ևստա զայս ինչ իբրև զբարի
գործել պարտինք կամ խոր չիլ ՚ի նմանէ իբրև
՚ի չարէ: զոր օրինակ, այնու ընդհանուր սկզ-
բամք՝ թէ յամ չարէ և ՚ի մեղաց խոր չիլ պար-
տինք: խիղճ մտացն զայս ինչ համահաւարէ .
ապա ՚ի գողութեայսմանն, որ է չար և մեղք
խոր չիլ պարտինք. վնջ սքն ՚ի արսեղ ՚ի ներքո
շեանսն սկզբանն առակաց ॥ ՚ի մեղասէ է բնա
կան դատաստան ինչ, որով զբարիս ՚ի չարէ գի-
րու տարբերունք:

Բ. Արդ խիղճն այս մտաց դատէ նախ զան-
ցեալ գործս. զորս կամ յանդիմանէ իբրև ըզ-
չարս, կամ գովէ իբրև զուղիղս. լն այնմ առաքե-
լայն հոգով. 2. ॥ Որք ցուցանեն ՚ի գործս օրինաց
դրեալ ՚ի սիրտս իւրեանց. վկայու թք մտաց
իւրեանց, և յանդիմանեն զմիմանս ՚ի խորհր
դոց իւրեանց, կամ թէ պատասխանի իսկ տալ .
և ապա զապառնի գործս, այսինքն, ցուցանէ
լով զայնտիկ, զորս առնել պարտինք իբրև ըզ-
բարի. կամ յորոց դար չիլ պարտինք իբրև ՚ի չա-
րէ. վնջ նայն ինքն սքն ՚ի արսեղ ՚ի վերոյ ॥ ՚ի մէջ
դառննեաց սրտին առէ, է առեան ինչ, յորում
ամ գործք իբրև ՚ի կշեռս եղեալ կշռին:

Եւ զի ոմ գատողուն այն գործնակն բազում
կերպիւ կարէ պատահիլ շուրջ զմասնաւոր գոր-
ծամք՝ այսոմ ևս յամարանից ՚ի բազումս բա-
ժանի, զի ոմն է խիղճ մտաց ուղիղ, ոմն մտար,
ոմն խղճահար, և ոմն երկբայ:

Խիղճ մտացն ուղիղ ասի, յորժամ գործնական
դատողուն իմացականուէ է ճշմարիտ և համա-
ձայն ուղիղ բանիս Ասի մտար, յորժամ է սուտ.
Ասի խղճահար, յորժամ ունայն և փոքր ինչ
պատճառի կասկածի և տարակուսի, թէ այս
ինչ չար և մեղք է, ուր ճշմարտիւ ոչ է: Իսկ
ասի երկբայ, յորժամ առ ոչ ինչ կողմն զբացորոշ
հաւանութի իւր հակէ. այլ ՚ի մէջ երկոցունցն
տա

տատանի : Եւ զհերաքանչիւրոցն կարճ ՚ի կար
ճոյ սասացուք առ ՚ի ցուցանել , թէ զս էր ոք
պարտաւորի յամ պատահման հետեւիլ աղգման
խղճի մտաց :

Հ Ա Տ Ո Ւ Ա Տ Ե Ր Կ Ր Ո Ր Դ :

Թէ զինչ է պարտաւորութիւն ուղիղ խղճի մտաց

ւ. **Ա** մացուած խնդրոյս է , մի թէ միշտ ոք
պարտաւորի հետեւիլ աղգման խղճի
մտաց , որ զինն ուղղութիւն հրամայէ , կամ արդե
լու : կամ որ դատէ , թէ այժմ և ստատ պար
տաւորի ոք առ ՚ի առնել զայս ինչ , կամ զանց
առնել զնովաւ , ՚ի մեկնութի այսորիկ :

Ասեմ , դատողութիւն և աղգումն այն ուղիղ
խղճի մտաց այնպէս պարտաւորէ զմարդն , մինչ
զի յանցանէ և մեղանչէ , եթէ այնմ ՚ի գործելն
ոչ հետեւի . և պատճառն է , զի խիղճ մտացն ,
կամ դատողութիւն այն գործնական իմացականու
թե՛ն , որ ուղղութիւն հրամայէ զինն , է մերձակայ
կանոն կամաց , որ գործէ և շարժէ զայլ կար
ողութիւն առ ՚ի գործել , ուր ուսուցանէ սքն թօ
մաս . և այնու դատողութիւն ծանօթանայ կամացն ,
և իբր յառաջագործի բարոյական բարութի կամ չա
րութի առարկային , պարադայիցն , և վախճանի :
ուստի հետեւի , թէ կամքն ՚ի կանոնացն իւրոց
չեղի , և ապա մեղանչէ , եթէ խղճի մտացն ,
որ ուղղութիւն հրամայէ ՚ի գործելն ոչ հետեւի :

Բ. Ասացաք , թէ խիղճ մտացն , կամ դատ
ողութիւն բանականուէ՛ է մերձաւոր կանոն մարդ
կային կամաց , և գործոց նր , զի այլ է հեռա
ւոր կանոնն , որ սակայն է սկիզբն և գլխաւոր ,
այս է , յաւիտենական , և անձային օրէնք : կամ
դատողութիւն այն անձուար , որով անձ ՚ի յաւիտե
նից ետես և սահմանեաց , թէ զինչ ՚ի մարդկայ
ինս գործ է բարի կամ չար , արդար և անի

բաւ , և կամ զինչ յիւրաքանչիւր մտանաւ որ պա
տահման առնել պարտ է , կամ ոչ . և նոյնին
դատողութիս այս իւրաքանչիւր մարդկան ծանօ
թանայ 'ի ձեռն լուսոյ այնորիկ բանականութե ,
որ 'ի նմանէ ուր զճառագայթ ինչ ծագի , ըստ
սաղմոսերգոյն . 4 . || Նշանեցաւ առ մեզ լոյս երե
սացքոց , ար : և ապա այսորիկ դատողութես՝
մարդկային դատողութիւն , կամ ազգումն խղճի
մտաց՝ պարտի համաձայնիլ առ 'ի լինիլ ուղիղ :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ճ Ե Ր Ր Ո Ր Դ :

Թէ զինչ է պարտաւորութիւն մոլորական
խղճի մտաց :

Եւ զկրկին է տգիտութիւն , յորմէ մոլորու
թիւն խղճի մտաց յառաջագայի : զի
ուն է յաղթելի տգիտութի , և ոմն անյաղթելի :
Անյաղթելի տգիտութիւն է այն , որ ոչ իւրեք բա
րոյական զգուշութիւն յաղթիլ կամ տկարանալ կե
րէ , կամ զի ոչ երբեք դայ 'ի միտս երկբայիլ ,
զոր տգիտանայ . կամ թէ և դայ 'ի միտս , սա
կայն մեծաւ զգուշութե քննեալ , տգիտութիւն այն ,
ոչ երբեք կարէ տկարանալ , և ապա ոչ երբեք
պարտաւորի , մինչ առ անկարելին ոչ ոք պարա
ւանդի : Իսկ յաղթելի տգիտութիւն է , որ 'ի կիր
արկեալ զգուշութեց կարէ յաղթիլ . և տկարա
նալ . և ապա պարտաւորի 'ի քննել : Գիտա
ցեալ մեր զբաժանումնս զայս :

Ասեմ նախ , թէ մոլորական խղճն մտաց ,
որ յանյաղթելի տգիտութե՝ պարտաւորէ զկաման ,
մինչ զի մեղանչէ , եթէ ազգմանն նր 'ի գործելն
ոչ հետևի , ուր ասէ սքն թօմաս . և հաստատի
յառաքելոյն հօտմ . 14 . 14 . || Չայս գիտեմ և հառ
տատեալ եմ 'ի քսյս , զի ոչ ինչ է պիղծ նովալ .
բայց այնմ , որ համարիցի ոք ինչ պիղծ , նմա է
պիղծ , որովք առաքեալն ցուցանէ , թէ 'ի ձեռն
չնոր .

չնորհաց քի մն , հաւատացեալ քն ոչ ինչ կերակր
բօլք իբր անմաքրութիւն , եթէ ոչ որ համա
բի , թէ կերակուր ինչ , այսինքն , խողենի , և ս
այժմ պիղծ և դարչեղի է , զի յայնժամ այս
պիսի կերակուրս նմա լինի ապօրինաւոր վասն
մուրական խղճի մտաց : ուստի յաւել || Բայց
որ խղճէն (այսինքն , համարելով , թէ կերակուր
ինչ լծօրինացն մօզսէսի , արդեւեալ է) թէ պէտ
և ուսիցէ գատապարտեալ է , զի ոչ ըստ հաւա
տոց . (այս է զի ոչ առնէ լծ յորդորման և աղդման
խղճի մտաց) զի մմինչ , որ ոչ ՚ի հաւատոց է (այս
է , ուր մեկնէ սքն թօմաս , որ լինի ընդ դէմ յոր
դորման և աղդման խղճի մտաց) մեղքեն :

Եւ պատճառ վարդապետուէս ըստ սքնն թօ
մայի է , զի մինչ առաջկայն կամաց լինի բարի կմ
չար բարոյականաբար՝ լծորում զայն դործողն
դատէ , վայ եթէ անյաղթելի տղիտութիւն դատէ ,
թէ այս ինչ է չար , որ իրաւի ոչ է չար , և կամքն
եթէ ընդունիցի զայն , հաւանի ՚ի չարն , և ա
պա ՚ի մեղս : և հակդրձաբար , եթէ այնու տղի
տութիւն դատեսցէ զինն բարի , որ իրաւի է չար ,
կամացն ընդունելով զայն ոչ մեղանչէ : այլ մա
նաւանդ կարէ գբարիս գործել :

Բ. Ասեմ երկրորդ , եթէ մուրու թին խղճի
մտաց՝ յաւաճասցի ՚ի յաղթելի տղիտութիւն , յայն
ժամ կմքն ոչ առ ՚ի գործել և ոչ առ ՚ի ոչ գործել
պրտութի , մանաւանդ պրւանդի ՚ի բաց մերժել
զմուրուին զայն . ուր ասեն սքնն թօմաս , և սքնն
Պօնալենդուրայ : Եւ նախ , թէ ոչ առ ՚ի դոր
ծել , և ոչ առ ՚ի ոչ գործել պարտաւորի , երևի
անտուտ , զի երկրքումք մեղանչէ , առ որ՝ ոչ ոք
պարտաւորի : ՚ի դործելն ըստ աղդման խղճի
մտաց , որ առ չարն յորդորէ , ոչ կարէ զեր
ժանիլ տղիտութի , զի է յաղթելի , և ապա է կա
մաւոր . իսկ ՚ի ոչ գործելն մեղանչէ , քանզի եթէ
զխիղճն զայն մեղց ոչ ՚ի բաց մերժէ , դրձէ ըդ եմ
նք , որ զի արդ և իցէ է միշտ մերձաւոր կանոն
կա

Յողադս ճարդ կային գործոց
 կամայն գործողին . ըդէմ որոյ՝ ոչ ինչքէ օրէն
 գործել . վնջ սակ առաքեալն դղաց՝ 5 . || Ակայ
 եմամ մարդոյ՝ որ թ լխատիցի թէ պարտական է
 դամ օրէնան կատարել , այսինքն , ըստորում հա
 մարի ՚ի յողթեկի մուրաական խղճէ մտաց , թէ
 է նարկաւոր պահել զօրէնան մովսէսի : || Էս
 տի հեռակ զի առ ՚ի զերժանիլ ՚ի մեղաց՝ պիտոյ է
 ՚ի բաց մերժել զմուրաական խիղճն մտաց , որով
 հեռե . ուղ համարիմք կարե լինիլ այս , կամ ՚ի
 կիր արկանելով զմացախանուն առ ՚ի խորհիլ
 դայն մեծաւ զգուշութ . յորում կասկածի սխա
 լիլ , կամ ընդունելով զխորհուրդս բարեպաշտօն
 և խոհեմ առն ուրուք , և զյատուկ գատողու
 թին իւր , որ ինչք կերպիւ երեւի իւրեան երկ
 բայելի , ՚ի խրատուց նր ներքոյ արկանելով :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ճ Զ Ո Ր Ո Ր Դ :

Թէ զինչ խմանալ պարտիմք վն խղճահար
 խղճի մտացն :

Իմ . **Խ**ղճահար խիղճն մտաց է , անկատար դա
 տողուի ինչ ճնեալ ՚ի սնտաի , և յունայն
 պատճառէ , որով սք կասկածի կամ երկնչի անդ
 լինիլ մեղաց՝ ուր իրաւի ոչ է . յորմէ երեւի , թէ
 գատողութն այն է սուտ , և այսպէս խղճահար
 խիղճն մտաց է , իբր տեսակ ինչ մուրաական
 խղճի մտաց , և հեռեաւպէս վն խղճահար խղճի
 մտաց՝ զնոյնն ասել պարտիմք , զոր և ասացաք
 վն յողթեկի մուրաական խղճի մտաց , այսինքն ,
 թէ պարտ է զնոյնն ՚ի բաց մերժել . ապա թէ
 ոչ՝ կալ երեւի յորոգայթ մեղանչելոյ , եթէ որ
 առանց ՚ի բաց մերժելոյ գործեացէ կամ ոչ գոր
 ծեացէ ըստաղգման նր : Արդ առ ՚ի բաց մեր
 ժել զխղճահար խիղճն մտաց՝ պարտի իւրաքան
 վարք քննել զմանաւանդական և զհասարակ
 պատճառն խղճահարուէ , որ սովոր է ՚ի հոյի
 իւր

իւր յառաջադայիլ : զի 'ի յոմանս խղճահարուին
 ծնանի 'ի աղխուուէ : 'ի յոմանս յանհաստատուէ
 և 'ի տատանմանէ մտաց , 'ի յոմանս 'ի տկարուէ
 ուղեղան, կամ 'ի ցուրտ և 'ի դաղջ կազմնւածոյ,
 կամ ևս 'ի սեւաւ մաղձոյ , կամ յայլ մաղձոցն
 առատուէ, 'ի յոմանս 'ի դաղտնի հպարտուէ, որ
 ոչ թողու այլոցն դատողուէ հաւանիլ : 'ի յոմանս
 'ի յրնկերակցուէ խղճահար անձանց , կմ 'ի յրն
 թերցմանէ դրոյն՝ յորս բարոյկն անարանուէն
 սկզբունք խատուք իսկ յիշագրին , և 'ի յոմանս
 'ի դիւացն թելադրուէց, զորս ան վն արդար ինչ
 պատճառի (զոր թէ և ոչ գիտեմք) թոյլատրէ :

Բ. Արդ ճանաչելով զպատճառն և զսկիզբն
 խղճահարուեցն այնոցիկ՝ զյարմար և զպատկա
 նաւոր դեղս պարտ է տալ . վն զի և թէ պատ
 ճառի 'ի մարմնաւոր ինչ տկարուէ , խորհրդոյ
 և օգնուէն բժշկաց յանձնել պարտ է , եթէ 'ի
 տղխուուէ , զուղիղ և զամբողջ վարդապետուի
 պարտ է հակադրել նմա . եթէ 'ի հպարտուէ ,
 պարտ է հեռակիլ խոնարհուէ մանաւանդ 'ի բաց
 մերժել զյատուկ դատողութիւն , և զայն բարե
 պաշտե փրկաւէ տխրատուցն այլոց ներքոյ արկա
 նել : եթէ 'ի դրդմանէ դիւաց, և 'ի տատանմանէ
 մտաց , կամ յայլ ինչ պատճառաց ծնցի , պարտ
 է զօգնուին այ խոնարհ խնդրուածովք հայցել .
 բայց մանաւանդկն և փրկարար դեղընդ դեմ ամ
 խղճահարուեցն է խոստովանահօրն կմ այլ իւրա
 քն իւր բարեպաշտօն, խոհեմ և իմաստուն առն
 զխղճահարուիսն , և զներքին կացուին հող
 ւոյն հաւատարմութ և պարզմտութ յայտնել ,
 և խորհրդովք նր խոնարհաբար հանդարտիլ
 և դատողութն նր , ևս յաղաղակելն խղճահար
 խղճի մտաց իւրոց՝ զոր ոչ երբէք լսել, այլ միշտ
 'ի բաց մերժել պարտիմք, հաստատութ հեռակիլ
 ուր ասէ սքն անդոնիոս , նավարոս և այլք :

Գ. Բայց եթէ որ երբեմն այնպէս խղճահա
 րութ ստիպեացի , մինչ զի առ ինքն իւր սահմա
 նել

նել ինն , և ոչ դիմել առ խոստովանահայր ոք , կամ յայլ ումեքէ զխորհուրդ ինչ խնդրել կարէ , յայնժամ կամ նոյն ինքն զիւրահալուին որ ծնա նի զունայն խղճահարուիս , կարէ լինիլ բաւա կան պատճառ , առ 'ի բաց մերժել զնոյն ինքն խղճահարութիւն և բողորովին 'ի շայ' քառնալ . մանաւանդ զի երկիւղած անձիք , որք առաւել կամին մեռանիլ , քան 'ի դործս ինչ անհաճոյ գտանիլ այ , յայտոսիկ պատահմունս՝ յորս ճա նաչել ոչ կարեն , միժէ մեղուցեալ իցեն , կամ ոչ . այսէ , միժէ զկատարեալ կամ զազատ հաւանուիս փորձուեցն ընծայեալ իցեն , յայնժամ ապահովութիւն կարեն համոզել ինքեանց , թէ ոչ երբէք ազատութիւն հաւանեալ իցեն առ այն , կամ գոնեա զմահացու ինչ մեղս ոչ իցեն դործեալ . որով հետեւ ոչ կարէ լինիլ մեղք , եթէ ոչ իմաս ցին իսպէս , թէ ազատաբար հաւանեալ իցեն փորձուեցն այնոցիկ . Բայց ոչ այսպէս այնոքիկ , որք 'ի բաղում մահացու մեղս յաճախ անկանին , զի նոյն ապահով ևս է զխոստագոյն կողմն խղճահա րուէ ընդունիլ , և զինքեանս ճանաչել պարտաւորս մեղաց , և ևս թէ հաւանեալ իցեն զայն , քան թէ համոզել ինքեանց վտանգիւ . թէ վիցեն մեղուցեալ . քանզի այսպիսիքս յաղադոս սովորու թեն մեղաց՝ զխայթն մեղաց հազն զգան ,

Հ Ա Տ Ո Ւ Ա Ճ Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ :

Թէ զինչ է երկբայ խիղճն մտաց , և 'ի յերկբայուէ զինչ պարտ է առնել :

ա. **Վ**իտե՛լի է , զի այլէ երկբայութիւն իրաւանց և այլ երկբայութիւն գործոց . քան զի երկբայութիւն իրաւանց ասի այն , որ է , 'ի պարտաւորուէ , կամ 'ի յօրինաւոր իշխանուէ գործելոյ . կամ 'ի յօրինաւոր զօրուէ գործոյ : Եւ բաժանի 'ի գործնական , և 'ի տեսական երկ

երկբայութիւն : Տեսական երկբայութիւն է , որով
երկբայի վն իմիջ , մի՛ թէ օրինաւոր է , թէ ապօ
րինաւոր , իսկապէս , թէ ոչ իսկապէս . յի , մի՛
թէ այսպիսի դաշնադրութիւն իցէ օրինաւոր .
կամ մի՛ թէ պսակն այսպիսի դաշնադրութիւն իցէ
իսկապէս : Իսկ դործնական երկբայութիւն է ,
մինչ երկբայի ոք ՚ի մասնաւորս , այսինքն , աբ
դեօք իցէ օրէն այժմ և աստ զայսինչ դաշնա
դրել . կմ տալ զհաւանութի խճդյս այսմիկ , և՛ :

Երկբայութիւն դործոյ է , որով ոք երկբայի , մի
թէ զայս ինչ արարեալ իցէ , թէ ոչ . այսինքն .
մի թէ ուխտեալ իցէ , կամ եթէ ուխտեալ
իցէ , աբդեօք կատարեաց զայն : Եւ զայս դի
տացեալ մեր ,

Ասեմ նախ , թէ առնել , կամ ոչ առնել զիմե
դործնական երկբայական խղճիւ մտաց , կամ
դործնական երկբայութիւն իրաւանց , է միշտ
մեղք . Ուստի երրորդ Ղուկիոս պատն՝ նա որ ըզ
կնի չէ երկրորդին միամտութիւն պսակելոյ , սկսես
դի երկբայիւ վն մահո՛ւան առաջին կողակցոյն ,
և ևս թէ արդեօք կարացել լն օրնց պահանջել
զպարտս անկողնոյն յերկրորդ ամուսնոյն , մե
ղանչէ ասէ , եթէ զպարտսն պահանջէ , յորքան
ժամանակս մնայ ՚ի նոյն երկբայութե . Եւ ևս զի
որ դնէ զինքն ազատաբար յորոգայթ մեղանչելոյ ,
մեղանչէ , ոմ ասէ սքն թօմաս , իսկ որ դործէ
այսպիսի դործնական երկբայութիւն զնէ զինքն
յորոգայթ մեղանչելոյ . ապաուրեմն մեղանչէ .

Թ . Ասեմ երկրորդ , թէ ոչ է մեղք առնել զիմե
կմ ոչ առնել տեսնն երկբայութիւն , յորժմ դործնա
կանապէս դատէ դործօղն , թէ աստ և այժմ այս
ինչ դործ է օրէն նմա , զոր օրինակ . թէ ոմ հոգա
տակեալն տեսականաբար երկբայի , մի թէ պս
տերազմն այն , զոր թաղաւոր իւր յուրուցանէ ,
իցէ արդար , սակայն ՚ի մասնաւորի դործնակա
նապէս կարէ դատել , թէ է օրէն նմա յայնպիսի
պարզմ մարտիւ . մինչ ոչ երևի նմա անարդար
լն

լինել էր . սոյ յայտնաբար ուսուցանէ սքն օգուտ
տինոս ընդդէմ փախտոսի . Եւ ոչ հակառակի .
զի մի ընդ տեսական երկբայուե կայանալ կարաս
ցէ գործնական ճշմարիտ և ստոյգ դատողութիւն .
զի ճշմարտութիւն և ստուգութիւն գործնական և
տեսական դատողութե կախի ՚ի զանազան պատ
ճառաց և յսկզբանց . Չի այլ են պատճառքն ,
որոց վս ոք կարէ երկբայիլ զարդարուէն պատե
րաշմի , զոր Թագաւոր իւր յարուցեալ է . Եւ
այլ պատճառքն , որոց վս դատել կարէ , Թէ է
օրէն նմա յայնպիսի պատերազմի մարտիլ :

Ասեմ երրորդ . ՚ի յերկբայուիս գործոց , ՚ի
հանդիպիլ հարկաւորուեն , որ լինցի վս փրկուե
հոգւոյ զաներկեւան կողմն ընտրել պարտ է միշտ
ուստի հետեւի . Թէ ՚ի մատակարարել զսոր
հուրդս , որք ՚ի փրկուի հարկաւոր են , յորժմ
երկբայուի ինչ պատհի , աներկեւանադոյնն վճիւ
՚ի փրկուի այնորիկ , որում խորհուրդն մատա
կարարի , ընտրելի է , զոր օրինակ , եթէ երկ
բայեսցի մի Թէ մանուկն մկրտեալ իցէ , Թէ ոչ .
աներկեւանադոյնն վճիւ ՚ի փրկուի նր ընտրելի
է , այս է , կրկին մկրտել զայն Թէ ուրք . Որ և
նմանադէս ասելի է , յորժամ առողջութի մարմ
նոյ ուրուք է ՚ի վտանգի . զի յայնժամ բժիշկն
պարտէ օդնել նմա այնու գեղով , զոր աներ
կեւանադոյն իսկ դատէ , ադա Թէ ոչ՝ ծանրապէս
մեղանչէ : Եթէ զանցառեալ զայնու վս փորձե
լոյ զանստոյն գեղ տացէ նմա :

Իսկ ՚ի յայլ երկբայուիս , յորս ոչ է այնքան
ստիպումն հակաւորուե , և ոչ ևս սաստկութ
պարտաւորի ոք առ ՚ի ընտրել զանկասկածադոյնն
կողմն , մանաւանդ , եթէ մեծ իմն անհանդատու
Թի անտուստ ծնցի . զոր օրինակ , եթէ ոք երկ
բայեսցի զճննդեամբ իւրով մի՝ Թէ է օրինաւոր
Թէ ոչ : ոչ է պրնկն միշտ ըմբռնել զխտադոյն
և զապահովադոյն կողմն , այլ զմիջակն , և զբարե
հաճոյնն , մինչ է հաւանական և տպահով :

Դ. Ասեմ չորորդ , ՚ի յերկրայուն միշտ բարե գոյն է թէ ուրիշ ստացողին . Աստի հետեւի , զի եթէ ռք երկրայիլ սկսեսցի , մի թէ այն , զոր մինչև յայժմ միամտութիւն ստացեալ ունի , իցէ իւրն , թէ այլ ումք , և ոչ կարէ ճանաչել մեծաւ զգուշութիւն քննեալ : յայնժամ զայն կարէ ունիլ առ ինքն աներկեան խղճիւ :

Ասեմ հինգ երորդ , թէ ՚ի յերկրայուն զոր ծոց՝ ոչ է բաւական կարծիքն . այլ պարտ է յայտ նուրի իրին , ուր ասեն Սթթու և այլք , այսինքն , ՚ի յերկրայուն մի թէ ռք ուխտեալ իցէ , թէ ոչ , ոչ պարտի համարիլ ուխտեալ . իսկ եթէ երկեսցի նմա ուխտելն , և երկրայուն իւր իցէ շուրջ զհատարմամբ ուխտին , յայնժամ պարտաւորի կտարել զայն : այսպէս ևս եթէ ռք երկրայեսցի , մի թէ օրէնք ինչ հրատարակեալ և հաստատեալ իցէ , թէ ոչ , եթէ զկնի ամ զգուշութիւն քննելոյ՝ զոչ ինչ ստուգութիւն նր կարացի իմանալ , այլ միշտ մնացէ երկրայոյ՝ յայնժամ կարէ կարծել , թէ ոչ իցէ հրատարակեալ , իսկ եթէ զկնի իմանալոյ՝ թէ օրէնքն հրատարակեալ և հաստատեալ է , երկրայեսցի՝ մի թէ բարձեալ , կամ խտրանեալ իցէ ներհակ ինչ սովորութիւն նր , յայնժամ կարծիքն է ՚ի տեղի օրի նաց , և ադա պարտաւոր է առ ՚ի պահել զայն :

Գիտելի է ևս զի երկրայական խղճի մտաց , զի յորժամ ռք յայնպիսի նեղուէ դտանի , մինչ զի զոր ինչ և առնէ , երեւի , թէ ոչ կարէ զերծանիլ ՚ի մեղաց , և այսպէս երկրայ և տարակուսեալ առ ինքն մնայ , թէ զինչ առնել պարտ է , զոր օրինակ ՚ի հարցանել ուրութիւն մասնաւոր ինչ ընկերակցութե զի պաղտնի մեղացն ուրութե , զոր կարծէր , թէ դիտե նա , զինչ առնել պարտ է յայնժամ , մինչ յերկրայունց կողմանցն տեսանէ զորոպայթն մեղաց , զի զի եթէ ասէ չգիտեմ կամ թէ այն ռք ոչ է դործեալ զմեզսն , զոր հարցանէ , ստէ . իսկ եթէ յայտնեսցէ զայն , կամ

կամ փոխեսցէ դրանն , անդ եղեալքն կարեն
հասանիլ ճշմարտուե իրին , և այսպէս զհամ-
բաւ ընկերին ապականէ , և անկանի 'ի մեզս
բամբասանաց :

Պալմնեմ , թէ 'ի յայնպիսի պատահման , և
'ի յայլ նմանս , եթէ ոչ իցէ այլ հնար խոյս
տալոյ , և ոչ կարէ իւրք կերպիւ աղատել զինքն
յայնպիսի անձկուե , յայնժամ զայն պարտի ընա-
րել . որ փոքրագոյն չար ինքեան երևի . և 'ի
գործէն զայն , զխիղճն մտաց 'ի բաց մերժել .
զի թ կանոնի օրինաց , առ անկարելին ոչ ոք պար-
տաւորի ॥ Չի ս ասէ սքն օգոստինոս , մեղանչե-
անդ , ուստի ոչ կարէ իւրք կերպիւ զերժանիլ :
և առ ոչ ինչ օգտէ ասելն . թէ նա զինքն չարուք
'ի յորոգայթն այն արկեալ իցէ , զի զինչ և իցէ
վն անցելոյն , որոչ է և ևս 'ի յիշխանուե նր ,
արդարեւ բաւական է առ 'ի զերժանիլ 'ի նորա
գոյն մեղաց , զի արասցէ զայն , որ 'ի յինքն
զգաց . ॥ Չի յոչ խմբ ժամանակի զառաւելն
(ըստ կերտոնի) պահանջէ 'ի մարդկանէ ան-
օք (ույ մեկնէ ժզ' թրիա') առ անկարելին
ոչ պարտաւորէ :

Պ Ր Ա Կ Վ Ե Յ Ե Ր Ո Ր Դ :

Յաղագս հաւանական կարծեաց :

Եւ քանզի , բանք անճարանիցն , որք վասն
հաւանականութեն կարծեաց են , յոյժ
օգտել կարեն 'ի յուզիղ և 'ի փրկաւէտ իմա-
ցումն ասացելոցս , և զոր ասելոցն եմք , և ևս
'ի յուզողի անճորձոց : վն և շահաւէտ իսկ
համարեցաք զենթակայէս սահախնչ լայնատա-
բած վարդապետել , և զնշանաւոր տարակու-
սուիս 'ի վր այնորիկ , որքան կարն է լուծա-
նել , պահեալ միշտ զմերն ճանսողարհ համառօ-
տութեան :

Հ Ա Տ ՈՒ Ա Ծ Ա Ռ Ա Ջ Ի Ն :

Թէ զե՛նչ է հաւանական կարծիքն :

Ա. **Օ** երկու ինչ պարտէ մեզ մեկնել աստ .

■ **Ն** ախ՛ թէ զե՛նչ է կարծիքն . Երկրորդ ,
 Թէ սո՛ղի կարծիքն համարիլ պարտի հաւանկն :

Որքան առ առաջինն , ոչ այլ ինչ է կարծիքն լծ
 անաբանից , եթէ ոչ հաճուի բանին , առ մինն
 յերկուց ներհական կամ հակասական նախադա
 սուեց . ունելով և զերկիւղ ինչ ՚ի ներհակն նր .

Ասացաք հաճուեթի , զի յերկբայուէ զանազա
 նեցի . որ զմիտն իբրու կախեալ թողու , և ոչ
 յերկաքանչիւր կողմն թողու հակիլ :

Բանին . զի առ կարծիքն ոչ է բաւական ա
 ռաջին գործ մտացն , կամ պարզ ըմբռնումն . այլ
 խնդրի դատողութի ինչ կմտրամաբանութի բանին :

Առ մինն յերկուց ներհական , կամ հակակն
 նախադասուեց . զի կարծիքն միշտ հակ է զմիտս
 առ մի կողմն . ապա թէ կախեալ մնայր ՚ի մէջ եր
 կոցունցն՝ ոչ կարծիք , այլ երկբայութի անուանելու :

Ունելով և զերկիւղ ինչ ՚ի ներհակն նր . զի
 և թէ ոչ իցէր երկիւղ , այլ ստուգութի բտտ ամի .
 յայնժամ ոչ էրկարծիք , և զի ստուգութին ծնանի
 ՚ի ճշմարիտ և ՚ի ստոյգ սկզբանց . և յայտնի ա
 պացուցուեց՝ վայ է դիտութի . իսկ եթէ ՚ի սուտ ,
 և ՚ի մոլար սկզբանց ծնցի՝ անուանի յանդգնութե

Բ . իսկ որքան առ երկրորդն , են երկու մա
 նաւանդական թէութիք , որք խնդրին առ ՚ի
 բննել զհաւանականութիւն կարծեաց ուրուք :

Առաջինն է , զի մի՛ ընդդիմացի ճշմարտու
 թեցն , որ ընդունեալ է յեկեղեցւոյ , կամ յայտ
 նի բանին , և մի ևս յանդգնաբար ներհակեցի
 հասարակ և ընդունելի վարդապետութեն անա
 բանից :

Երկրորդն է , զի ունիցի զհաստատ ինչ հիմն ,
 Իէ

վն զի ոչ է բաւական առ 'ի հաւանական դատել , ոչ ներհակին երբէք ճշմարտութե , այլ և ևս հարկաւոր է , զի հաստատեցի 'ի յսկզբանց ինչ , որ իցէ ճշմարտութեն համաձայն . ուն ինի եթէ հաստատ ինչ պատճառաւ , կամ մեծամեծ և հաւատարիմ վկայութիւն երևեացի :

Գ. Խնդրեացես , թէ ո՞նչի վկայութիւնք ծանր և հաւատարիմ համարիլ պարտին , որք կարացն զկարծիս ինչ առնել հաւանական : Պատասխանեմ , թէ են՝ որք զտոյդ տեղի վրդնացն ունին , և որոց վկայութիւնքն՝ և ևս հաւանական : և են , որք խնդրեն զվկայութիւն բազում վարդապետաց 'ի միասին : և են , որոց վկայութիւն միայն է բաւական , և թէ պէտ սահմանել զայս յոյժ դժուարին է , սակայն ոչ որք ընդ դիմանայ , զի մի զանազան պատահմունք երբեմն կարացն հանդիպիլ , յորս համարեացի ևս վկայութի միոյ վարդապետի բեկն առ 'ի դործելուք հաւանականաբար և ապահովութիւն : զոր օրինակ , աշխարհական որք կասկածեալ , միթէ իցէ օրէն նմա առնել զայսպիսի դործ , կամ զայսպիսի պաշտադրութիս կատարել , կարէ խորհրդովն հոգաբարձութիւն իւրոյ , և խստականահօրն յատուկ եպիսկոպոսին , կամ ևս ինքեան եպիսկոպոսին , որք ասեն , թէ է օրէն , զայսպիսի ինչ կատարել , քանզի ո՞ երբէք կարացէ ասել թէ խորհուրդքն . (զորոց զթուէ և զգիտութիւնն համարիմք , ոչ կարէ երկբայիլ .) ոչ է բաւական առ 'ի հաւանականութիւն և ապահովութիւն դործել , թէ և հեղինակութիւն այն , որում 'ի դործելն հետեւի՝ իցէ միայն միոյ վարդապետի : և ոչ ևս ապաշխարողքն յանդիմանին , որք 'ի յամտարակուսութիս խղճի մտաց իւրեանց , յորում ոչ զի տեն զինչ առնել , միոյ խոստովանահօրն , զորայր բարեպաշտօն և դիտուն համարեն , խորհրդովք հանդիւն , և բաւական համարեն միայն զվկայութիւն նորա :

Աւտի հետեւի , թէ զհեղինակութիւն զայն , զորմէ է այժմ բան մեր , մեծ համարել պարտիմք ՚ի զանազան պարագայից , այսինքն , կամ ՚ի թէ ուր անձանց՝ որոց խորհրդոցն ՚ի գործելն հետեւիմք , զի ոչ ոք է , որ ոչ խոստովանեսցի : թէ հեղինակութիւն եպիսկոպոսին կամ հոգաբարձութիւն ՚ի մեծի համարման պարտէ լինիլ առաջի իւրաքանչիւր ումեք . և ևս ՚ի թէ ուր այնոցիկ մեծի կամ փոքու իրաց , և դժուարութեց , որոց վասն խնդրի խորհուրդ , զի ոչ ոք երկբայի առայս , թէ մեկնութիւն պատահմանցն այնոցիկ , որք մեծ ինչ համարին , կմ շրջապատեալ են բազում և մեծամեծ դժուարութեք՝ խնդրել պարտ է , ՚ի մեծամեծ վարդապետաց , կամ միոյ , կմ երկուց թեթեալոյն վարդապետաց յայտնի վկայութիւն բաւական համարին : Եւ ևս ոչ ոք է , որ ոչ խոստովանեսցի , թէ հեղինակութիւն այն , որով զվարդապետ ոք , կամ զհովիւն , կամ զխոստովանահայր հանդարտել պարտ է , ոմ զի բաւականապէս զկարծիս ինչ հաւանկն համարեսցի , պարտէ , յառաջագրել զմեծամեծս և զծանրագոյնս քան զայն , որ ՚ի յայս խկ պատահման աշխարհականին ումեք բաւական է :

Գ. Գործեալ առ ՚ի գործելուրուք հաւանա կան կարծեօք՝ ոչ է բաւական , զի սկզբունքն այնոցիկ , որով լինի հաւանական . իցեն յայտնի այլոյ , այլ հարկաւոր է , զի և ինքն ծանիցէ , այսինքն , զի դիտացէ , թէ գործէ ամբողջ ինչ պատճառաւ , կամ ծանր և հաւատարիմ վկայութեք . վս զի մինչ կարծիքն այն է ուղղեալ առ գործն՝ առ ՚ի լինիլ որոյ ուղիղ , պարտ է լինիլ արդար և խոհեմ , որ ոչ երբեք լինի , եթէ գործողն զոչ ինչ այսպիսի բան , և վկայութի ՚ի գործելն ունիցի :

Եւ ևս այսպիսի պատճառս կամ վկայութիւն պարտի լինիլ նմա յայտնի ՚ի գործելն , կամ յառաջ քան զգործելն , և ոչ զկնի գործելոյն միայն .

Յաղագս մարդկային գործոց
 ապա թէ ոչ՝ այսպիսի պատճառս և վկայութիւս
 առ գործն այն՝ ոչ է ուղղեալ : ուստի սխալին
 այնքիկ . որք զկնի գործելոյն կամ զանց առնե-
 լոյն , չջեն զգիրս վարդապետաց , զի գտցեն
 զվկայութի ինչ առ կողմն իւրեանց . զի պատճառն
 այն և վկայութիւն հետեւեալ , ոչ ինչ օքտէ առ
 ուղղութի գործոյն , որ զբարութի և զչարութի իւր
 առնու ՚ի տրամադրուէ գործողին մինչ գործէ ,
 և ոչ ՚ի ճանաչմանէն , զոր զկնի գործոյն ու-
 նիլ կարէ :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ճ Ե Ր Կ Ր Ո Ր Դ :

Մեթէ իցէ օրէն գործել իւրաքանչիւր հաւա-
 նական կարծեօք :

Արդ՝ ճշմարիտ է , զի հասարակաբար խօսե-
 լով և ՚ի բաց ընկեցեալ զիւրաքանչիւր
 հաւանական կարծիս ՚ի մասնաւորի , ոչ միայն է
 բառ օրինաց , այլև երբեմն հարակաւոր է գոր-
 ծել հաւանական կարծեօք , մինչ բազմիցս մ՛դիկ
 ոչ կարեն գործել այլապէս . Չի ոչ են զարդա-
 բեալ հրեշտակային իմացականութի , որք կարաս
 յեն դո՞մ ինչ տեսանել անսխալաբար և հայեցո
 զականութի : ջանգի և կիրառութի իսկ տեսա-
 նեմք , զի յոյժ սակաւ են այնքիկ . (բաց յայնո
 ջիկ , զորս անձային հաւատովն իմանամք :) զորս
 կարասցուք իմանալ ստոյգ և յայտնի ապացու-
 յութի , մանաւանդ ՚ի գործելիս , յորս հազիչ
 կարէ ընիլ բարոյակն պատճառ ինչ գործելեաց .
 որում՝ այլ իմն ներհակ նք՝ ոչ կարասցէ ընիլ :

Գարձեալ ՚ի պարզ և ՚ի ստոյգ մեկնութի յառա
 ջտողեալ խնդրոյս գիտելի է , զի երկխոյն այն ,
 գործէ ասացաք յանցեալ հատուածն , թէ մնաց
 ՚ի միասին ընդ հաճութե կարծողին , ՚ի հաւանա-
 կան կարծեաց , է կրկին , զի ո՞մն է ներքին և
 գործնական և ո՞մն արտաքին և իբր տեսական :

Արդ՝ երկիւղն ներքին և դորճնական է այն՝ որ զգործօղն անյանգորր առնէ , և անբաժ որսը , ՚ի գորճնական դատողութեանն , յայն ժամ մինչ գործէ : մինչդէ և ոչ զմի կողմն ընտրէ , թէ այժմ և աստ , զայս կամ զայն , գործել : կամ ոչ գործել կարասցէ լինիլ ըստ օրինաց :

Իսկ երկիւղն արտաքին և տեսական է այն , որով ևս եթէ գործօղն ըստ ներքնայն և ըստ գորճնական դատողութեանն իցէ բաւականասպէս բացորոշեալ թէ աստ և այժմ . այս կամ այն գործել կամ զանց առնիլ ըստ օրինաց կարէ . բայց յարտաքնայն երկնչի , զի մի՛ ընդ տեսական դատողութենն իւրոյ վասն այս ինչ իրի կամ գործոյ կարասցէ լինիլ սխալու մնինչ :

Արդ՝ դիտացեալ մեր զբաժանումն՝ աւերմբ , թէ է օրէն գործել իւրաքանչիւր հաւանական կարծեօք , որ իցէ ընդ արտաքին և տեսական երկիւղն . բայց ոչ երբէք է օրէն գործել ներքին , և գորճնական երկիւղին :

Եւ պատճառ առաջնայն է , զի երկիւղն այն արտաքին , որ միացեալ է միշտ իւրաքանչիւր կարծեաց (որքան ևս իցէ հաւանական զի եթէ ոչ իցէր յարեալ ՚ի նա և երկիւղինչ . ոչ երբէք լինէր կարծիք , այլ գիտութիւնն . կամ այլինչ տեսակ ճանաչման) ոչ արդեւու , զի մի գործօղն հաւանական կարծեօք ըստ ուղիղ բանի գործեսցէ . զի (ո՞նչ յասացելոցս ՚ի յանցեալ հատուածս երևի ,) հետևի ՚ի գործելն . հաստատ ինչ պատճառաց , կամ մեծամեծ և հաւատարիմ մկայութեց , որ համարի բաւական , առ ՚ի ասել թէ ուղղապէս գործէ :

Եւ պատճառ երկրորդին է , զի առ ՚ի գործել արուք ուղղամոզս պարտի լինիլ բարոյականաբար անկասկած , և առ ինքն ներքին դատողութեանն բացորոշեալ , թէ աստ և այժմ այս կամ այն առանց մեղաց , գործիլ կամ զանց առնիլ կարէ . և զայս արդարև կարէ բացորոշել . թէ և ոչ իցէ ստոյգ :

այլև ունիցի զերկիրս ինչ, որ ՚ի տեսական դա-
տողութե ՚ի վր՝ այնորիկ իրի կամ գործոյ սխա-
լիլ կարէ : Զի դատողութիւն այն գործնական է
մերձաւոր կանոն մտղկային դործոց . իսկ տե-
սական դատողութիւն է իբր հեռաւոր . Եւ է
հարկաւոր ՚ի բարոյական ուղղութի իւրաքան-
չիւր գործոց, զի իցէ համաձայն մերձաւոր կա-
նոնին որ ուղղէ . արդ՝ լինի համաձայն, եթէ
գործօղն իցէ ստոյգ բարոյականաբար, թէ ուղ-
ղատէս գործէ, թէ և տեսականապէս ոչ իցէ
այնքան ստոյգ . այլ զերկիրս ինչ ունիցի վասն
ներհակին նորա :

Ասացէ որ, թէ լինին ստոյգ, և ոչ լինին
ստոյգ տեսանի հակադրիլ միմեանց . և ապա ՚ի
նոյն գործօղն ՚ի միասին դտանիլ ոչ կարեն : Պա-
տասխանեմ, թէ այն ոչ է ներհակութի, զի թէ
պէտ զմիոյ, սակայն ոչ նոյնով կերպիւ ասին .
քանզի գործօղն է ստոյգ, թէ ըստ օրինաց յայն
ժամ կարէ գործել հաւանական կարծեօք, թէ
և ինչք կերպիւ ոչ իցէ ըստ ամի անկասկած վս-
տպահովութե պատճառի . կամ վկայութեցն,
յորոց և յառաժողոյսի կարծիքն . այլ ունիցի
զերկիրս ինչ վս ներհակին, վս զի բարոյական
գործնական ստուգութիւն, ոչ ՚ի բաց հերքէ զամ
երկիրս տեսական . այլ ընդ նմա ՚ի նոյն գործօղն
դտանիլ կարէ՝ ոյց երեւի ՚ի սք գրոց . իմաստ .
28 . || Երանեալ է այր, որ երկնի միշտ : և փի
լիս՝ 1 . || Ահիւ և դողութի զանձանց զերկութի
գործեցէք : յորոց երևի, թէ թէ պէտ ստոյգ
է յոյն առ ՚ի ստանալ զերկութիւն յամ հաւա-
տացեալս ՚ի ձեռն գերբնական առաքինութե՝
յուսոյ, որ հաստատեալ է անային ողորմութե
և քի արդեամբն ստուգիւ . բայց և այս ոչ ներ-
հակի, զի մի՝ ՚ի միասին ՚ի նոյն հաւատացեալն
դտոյի ահ և երկիրս առ ՚ի ոչ կարուսանել զնոյն
փրկութիւն վս տկարութե և անհաստատութե
յատուկ կամայն :

Հ Ա Տ Ո Ւ Ա Տ Ե Ր Ր Ո Ր Դ :

Արդեօք իցէ օրէն յերկուց հաւանական կարծեաց ընդունիլ զմինն, որ իցէ սակաւ աներկբայ և սակաւ հաւանական :

Ա զիւրին և ՚ի յայտնի մեկնուի յառաջագրեալ խնդրոյս զխտելի է նախ, զի հաւանականագոյն կարծիքն է այն, որ զկատարեալ թէ ու թիսն, զոր եղօք յառաջին հատուածն ստացեալ ունի, կամ որ ոչ իւրեք ընդդիմանայ ճշմարտութեն հաւատոյ, կամ հասարակ և ընդունելի վճռոցն վարդապետաց, այլ հաստատեալ է խկական ինչ պատճառաւ, կամ ծանրագոյն ինչ վկայութիւն, իսկ ապահովագոյն կարծիքն է այն, որ զմեզ յամ տեսակացն մեզաց հեռացուցանէ, վն յերկուց կարծեաց, որոց մինն ստէ, թէ է մեղք, իսկ միւսն ստէ, թէ ոչ է մեղք առնել զայս ինչ, կամ ոչ առնել : այն՝ որ ստէ, թէ է մեղք, միշտ է ապահովագոյն մինչ ոք վարի այնու, և ՚ի նմանէ, որ դատապարտէ հրաժարի, արդարև ոչ ինչ կերպիւն զինքն դնէ յորոպայթ մեղանչելոյ կամ դոնեա մահացօրէն - իսկ թէ պէտ այսպիսի կարծիքս է ապահովագոյն, սակայն ոչ է միշտ հաւանականագոյն, մինչ բազմիցս հաստատեալ է ՚ի տկարագոյն պատճառս, զոր բարւոք իսկ եցոյց ՚ի հերոսն հետէ սքն Անտոնիոս, որ մեկնելով զկարծիսն սքն թօմայի, որ բաց ստէ. և սքն Պօնափենթուրայի, որ ստոր ստէ, թէ մեղաւորն զինի անկանելոյ ՚ի մահացու մեղս՝ պարտական է ըստ մծային օրինացն վաղվաղակի խոստովանիլ, և թէ իցեն բազում խոստովանահարքս ստէ, թէ կարծիքն սքն թօմայի է հաւանականագոյն, և վն այսորիկ ՚ի կիրառութե հասարակ ամենեցուն :

Գիտելի է երկրորդ , զի բան մեր աստ ոչ է զխորհրդոյ , այլ զօրինաց , այս է , զի ոչ խնդրեմք աստ մի՛ թէ բարեգոյն ևս իցէ , և առաւել օգտակար հետեւին ապահովագոյն , թէ հաւանականագոյն կարծեաց : զի յայտնի իսկ է առ ամենեւեան , թէ ըստ ինքեան խօսելով , բարեգոյն ևս է հետեւիլ ապահովագոյն կարծեաց , կամ յերկուց հաւասարաբար ապահովկարծեաց , հետեւիլ հաւանականագունին : Այլ խնդրեմք , մի՛ թէ պարտաւորի որ անձային օրինօք հետեւիլ միշտ ապահովագոյն և հաւանականագոյն կարծեաց :

Գիտելի է երրորդ , զի մինչ խնդրի ՚ի մէջ անձաբանից , մի՛ թէ իցէ օրէն յերկուց հաւանական կարծեաց հետեւիլ սակաւ հաւանականին , իմացեալ լինի ևս սակաւ ապահովն : Վս զի եթէ սակաւ հաւանականն լինէր յոյժ ապահով , զոր որ ՚ի յերկրայու թի արկանէր , վս ընդ դրկելոյ զայն , որով հետև այնու , որով է յոյժ ապահով . յոյժ առաւել ևս յամ տեսակացն մեղաց սղատ կացուցանէ . Եւ ապա ոչ միայն էր ըստ օրինաց , այլ ևս դովելի հետեւիլն նմա ՚ի դործելն իբրև կանոնի :

Բ. Արդ գիտացեալ մեր զայսոսիկ , Ասեմ , թէ է օրէն յերկուց հաւանական կարծեաց , թողեալ զհաւանականագոյնն , հետեւիլ սակաւ հաւանականին , միայն թէ իցէ այն ճշմարտիւ հաւանական . այնու իմացմամբ , որով մեկնեցաք յառաջին հատուածն : ոս ուսուցանեն բազում և մեծամեծ անձաբանք . Թողեթոս , Նաւարոս , Կամախէսս , Նիկողոս Իզամպերդոս և այլք բազումք :

Հաստատելք նախ ՚ի բանից սքնն լեօնի պապին ՚ի Թուղթն . զգ . առ դեղջուկն Նարբոն , որ ասէ , || Զայնոսիկ , որք կամ երկրայական եղեն , կամ իրթին , այնմ պարտէ մեզ հետեւիլ որ ոչ գտանի հակառակ աւետարանական պատ
ունի

անիրանաց , և սք հարցն բանից : Աւտի ՚ի բա
նիցս սքյն կարեմք ձեռնարկել այսպէս . Ամե
նայն կարծիք , որ ճշմարտիւ է հաւանական ,
թէ և իցէ սակաւ հաւանական քան զայն , որ
համարի հաւանականագոյն , սակայն ոչ է հակա
ռակաւետարանական պատուիրանաց , և սուրբ
հարցն բանից , ուրեմն ըստ մտաց սքյն հայրա
պետին , հետեւիլ այնմ է օրէն : Էզրակացութիւն
յայտնի իսկ է , և նախագասութիւն իսկ երևի ,
զի եթէ կարծիքն այն աւետարանական պատ
ուիրանաց , կամ սք հարցն վճռոց ներհակէր ,
ոչ լինէր հաւանական , ուր երևի յսացելոցս
յառաջին հատուածն :

Հաստատեմք երկրորդ , Գործն այն համարի
բարի , և պարկեշտ , և ապա ըստ օրինաց , որ
ուղիղ բանին է համաձայն , իսկ գործն այն ,
որ լինի հաւանական կարծեօք կամ ըստ աղղման
խղճի մտաց , որ հետեւի հաւանական կարծեաց ,
է համաձայն ուղիղ բանի , որ ոչ պարտաւորէ
յատկապէս առ ՚ի հետեւիլ հաւանականագոյն
կարծեաց . այլ կարծեացն , որ իցէ ճշմարտիւ
հաւանական . Եւ ոչ և ս այնու զի ՚ի գործեւն
ուրուք հետեւեցի հաւանական կարծեաց , թո
ղեալ զհաւանականագոյնն կարէ ասիլ , թէ չա
րեաւ գործէ , կամ հիմնեալ է ՚ի սուտ և յսոց
րինաւոր ինչ կանոն այլ միայն՝ զի ՚ի գործեւն ոչ
հետեւի կատարելագունին , որում հետեւիլ ոչ
պարտաւորի : Ապա թէ ոչ , եթէ պարտաւոր
իցէր ՚ի յամն հետեւիլ կատարելագունին , պարտ
էր ասել . թէ նա , որ թողեալ զկրօնաւորա
կան կեանս , զոր կատարելագոյն և ապահո
վագոյն իսկ դատէր , զամուսնական կեանս ըն
տրեաց , գործէ չար և վատթար դատողութիւն ,
և ապա մեղանչէ , և զոր առանց մոլորութե
ն ոչ կարեմք հաստատել :

Գ. Բայց պիտեւ պարտ է աստ զոմանս ինչ ,
չուրջ զասացուածովքն մերովք : Նախ վն խոր
հրդոցն

հրդոցն եկեղեցւոյ , քան զի 'ի մատակարարել
ուրաք զխորհուրդս ինչ , պարտի միշտ ընդ-
շրկել զհաւանականագոյնն և զապահովագոյնն
կարծիս 'ի նիւթ և 'ի տեսակ նր' , յորժամ կա-
րէ լինիլ : զորօրինակ : Թէ և ոմանք վադապետք
համարեացին հաւանական , Թէ է իսկապէս
մկրտութիւն , որ լինի խաշուիչ կամ այլ ինչան
մաքուր ջրով , և պարզ սրսկմամբ : և Իրճէ ,
Թէ է իսկապէս սրբադործուն 'ի հաց հա-
ճարոյ . սակայն մեղանչէ նա ծանրապէս : որ այ
նու կերպիւ մկրտէ , Թողեալ զպարզ և զմա-
քուր ջուրն , զոր 'ի պատրաստի ունի , և որով
կարէ մկրտել . կամ սրբադործէ : Թողեալ զանխը
մօր հացն ցորենոյ , որով կաբէ պատարագել :

Երկրորդ նկատմամբ առ դատաւորս , և առ
բժիշկս , զի դատաւորքն 'ի վճռելն , պարտին
հետեւիլ հաւանագոյն կողման : և զգատ իւր-
եանց առ 'ի յօդուա այնորիկ , որոյ վէճն հաւա-
նականագոյն պատճառօք ապացուցանի . իսկ
բժիշկքն 'ի տալ զդեղս պարտին հետեւիլ ապա
հոգագոյն կարծեաց , և որ հաւանականագոյն է
յառողջութի հիւանդին . մինչ զայս արդարու-
թիւն , և սէրն յերկոցունցն իսկ պահանջէ :

Իսկ այլք յաւելուեն և զերրորդն նկատմամբ
առ ուսուցիչս , և առ վարդապետս , և մանա-
ւանդ առ այնոսիկ , որք զհաւատն և զքարս
ուսուցանեն . զի նոքա պարտին ուսուցանել
աշակերտաց իւրեանց զայնոսիկ , զորս համար-
ենն ողջամիտս և հաւանականագոյնս , և մանա-
ւանդ զքարոյական հոգս իսկ 'ի կիր արկանել .
զի որքան կարեն ճշմարտութեն վարդապետու-
թե յուսուցանելն հետեւեացին . ապա Թէ ոչ
երկի , Թէ վնասեն աշակերտաց իւրեանց : և
հասարակութեն օգտի :

Դ. Խնդրեացես , մի՛ Թէ վարդապետ կամ
ի ստմնհայր որ կարասցէ տալ զխորհուրդ ըստ
հաւանական վճռոյ , Թողեալ զհաւանականա-
դոյնն

գոյնն , որում ինքն հետևի : Պատասխանեմ չ
 իզամպերդոսի բաժանմամբ . զի կամ աշակերտք
 և խնամքերդ իք խնդրեն զխորհուրդ ըստ մտաց
 նր լուսն յառաջադրեալ խնդրոյ , կամ խնդ
 րեն միայն , թէ զինչ իցէ օրէն , և կամ թէ
 զինչ իցէ օգուտ առնել յայս ինչ պատահման :
 Արդ՝ եթէ խնդրեն լը առաջին կէրպի , զխոր
 հուրդս , սլարախն տալ զխորհուրդ ըստ յատուկ
 վճար իւրեանց . ապա թէ ոչ , հաւատարմութի ոչ
 առնեն . այլ ստել երևին , որ ոչ երբէք է օրէն ,
 է թէ ըստ երկրորդին , կարեն պատասխանել
 վս այն զոր հարցանեն , ըստ հաւանական ինչ կար
 ծեաց , թէ է օրէն : Իսկ եթէ լը երրորդին , հարց
 ցին պարախն խոհեմութի քննել զամ , զնոյն անան
 իսկ , որ զխհոս խնդրէ , և զամ պարագայս իրին ,
 որոյ վս խհոն խնդրի , ևս և զժմկն , յորում այս
 նի խհոն խնդրի : և զամ խոհեմութի իսկ քննեալ
 տալ զխորհուրդ վս այնորիկ , որ առաւել օգուտն
 է : մանաւանդ զի երբեմն բարութի ևս է , և պարտ
 իսկ է տալ զայնուիսի խորհուրդս , որ իցէ հաւա
 նական միայն , թողեալ զհաւանականադոյնն . վս
 զի կարէ պատահիլ երբեմն , զի նա որ խնդրէ ըզ
 խորհուրդս այնուէս իցէ պատրաստ , մինչ զի ոչ
 առնելոց իցէ , եթէ ասացինմա լը հաւանակա
 նադոյն վճար . ուստի հետևի . դնել զնա յորտ
 դայթ մեղանչելոյ . յորմէ կարէք ազատիլ , եթէ
 առեալ լինէր նմա խորհուրդ ըստ հաւանական
 վճար . որ հաճոյացեալ նմա , զինքն յոժարութի
 հպատակէր նմա : սակայն պարտի նա , որ ըզ
 խորհուրդս տայ , այնպէս կառավարել զինքն ,
 զի մի այլք դայթակղեսցին . տեսեալ զնա ոչ
 այնպէս տալ զխորհուրդ , ուր ինքն կարծէ .
 կամ առնէ :



Գ Լ Ո Ւ Ի Ե Ր Կ Ր Ո Ր Դ :

Յաղագս մեղաց :

Պ Ր Ա Կ Ա Ռ Ա Ջ Ի Ն :

Թե՛ զի՛նչ է՛ մեղքն :

Մ. **Յ**առաջադրեալ խնդիրս, ոչ զսկսնական
մեղաց, զոր յանցանօքն այլոց ստանամք
զորմէ յառաջին հատոր գործոյս 'ի չորրորդ ըն-
ձեռուէն սասցաք, այլ զներգործական մե-
ղաց, յորում յատուկ կամաւ անկեալ լինի, վայ
սահմանէ զայս սքն օգոս' || Գործեալ, ասա-
ցեալ և ցանկացեալ ըզէ՛մ յաւիտենկն օրինացն
այ, և 'ի սահմանս յայս՝ որում և համաձայն
գտաւ սքն թօմաս և ընդ նմա վարդապետք 'ի
հասարակի, զերկուս ինչ պարտիմք իմանալ զօ-
րու թք, 'ի գտանել այնոցիկ, լինի և սահմանն
կատարեալ այսպէս :

Մեղքն է կամաւորական գործեալ, սասցե՛լ
և ցանկացեալ, կամ զանցառեալ ընդդէ՛մ յաւի-
տենական օրինացն այ :

Ասի նախ, գործեալ, սասցեալ, և ցանկա-
ցեալ, զի ոմ ուսուցանէ սքն թօմայ, ամ չար
գործ, կամ է 'ի կամաց յառաջագոյեալ, և
այսպէս է ցանկացեալ. կամ է հրամայեալ, և
այսպէս պատկանի առ արտաքին գործն խօսա-
կցուէ. կամ գործոց, և է գործեալ և սասցեալ :

Ասի երկրորդ, կամաւորական, զի առ 'ի լինիչ
մեղք հարկաւոր է, զի լիցի կամաւոր, կամ յա-
ռաջագոյեացի 'ի յաղաս կամացն հաճուէ. մինչ
զի

զի ըստ վարդապետուէն սբին օգոստինոսի , և ապա հասարակ ամ ամսարանից . || Ոչ իւրք է մեղք , որ ոչ է կամաւոր :

Ասի երրորդ , կամ զանցառեալ , զի մինչ հրա մայականն և արդէլականն ըստ սբին թօմայի առ մի սեռ պատկանին . այնպէս մեղանչէ նա , որ ոչ առնէ զայն որ հրամայի , որպէս մեղանչէ նա , որ առնէ զայն որ արդէլեալ է նմա :

Ասի չորրորդ , լքէ մյաւխտեննն օրինացն այ . զի ուր երևեսցի յասացելոցս 'ի հետևեալ գլխն . մինչ յաւխտենական օրէնքն այ է առաջին և գլխաւոր կանոն ամ ուղղուէ որ 'ի յամ միջկային գործս կարէ գտանիլ , հետևի , թէ ամ գործ , որ 'ի պատկանաւոր ուղղուէ պակասի : և սյայն մանէ առաջին յաւխտենական օրինացն կանոնէ մուրրի . և ապա յաւխտենական օրինացն այ հա կառակի : Եւ այս այնպէս ճշմարիտ է , մինչ զի և սյանցանէ ըն զեկեղեցական և զքաղաքական օրինօք մի այն է մեղք , ըստ որում օրէնքն այնո քիկ 'ի յաւխտենական օրինացն յառաջադային կմ ընդ նմա համաձայնին , կամ անտուտ ունին զոյժ պարտաւորելոյ , ուր եթէ յանցանէ ըն իմացի ընդ գէմ յաւխտենական օրինացն այ ' լինիլ իւրք իմացմամբ :

Բ. Արդ 'ի գիւրջին իմացումն ասացելոցս , և զորս ասացուք ' գիտեի է , զի առ իսկութի մեղաց ' երկու ինչ մանաւանդ խնդրին , այս է , նախ , զի գործն այն լիցի միջկային , ցի կամաւոր և ազատ , և ապա զի իցէ չար և վատդար . այ սինքն , զի ոչ ունիցի զպատկանաւորն համեմա առ ի կանոնի իւրոյ . և մերձաւոր կանոն մարդ կային գործոց ' է ուղիղ բանն , ուր 'ի վերոյ ասա գոք ' . իսկ հեռաւորն , և գլխաւորն և առաջինն , է յաւխտենական օրէնքն , որ 'ի ձեռն լուսոյ բնա կան բանին իւրաքանչիւր ումէք յայտնի , ըստ բա նի առաքելոյն հոսմաց շ . || Որք (այսինքն , ամ օք) ցուցանեն զգործս օրինացն գրեալ 'ի սիրտս իւ

խրեանց՝ վկայութի մտաց խրեանց (այսինքն
խղճի մտաց խրեանց) Եւ վն սքն օգոստինոս ,
և սքն (թօմաս 'ի վերոյ եղեալ սահմանն նախ
եղին զայն , որ պատկանի առ էութի մարդկային
գործաց , իբրև զնիւթաւոր մեղաց , և ապա
զայն , որ պատկանի առ բան չարի , ոյն զուսա
կան նոյնոյ չարի : Եւ պատճառ տեսական մեղաց ,
ոյն ուսացանենն անարանք՝ ոչ այլ ինչ է , եթէ ոչ
պակասութի ուղղութենն այնորիկ , զոր մարդն
հրամանաւ յաւիտենական օրինաց , և աղգամայք
ուղիղ բանին անեղ պարտի 'ի գործս իւր . ուս
տի սքն օգոստինոս 'ի մեկնութի սքն յօհաննու
ասէ || Մնդքն է ոչ ինչ , զի բանիւ ոչ եղև : և 'ի
գիրս բաղարին այ : || Մի ինդրեացէ ասէ , ոք
զարարողական պատճառ մարդկային չարութեն ,
զի ոչ է արարողական , այլ պակասական : և սքն
Ամբրոսիոս վսխակահայ և հողւոյ ասէ , շինչ է
չարութեն : եթէ ոչ կարօտութի բարւոյ , և սքն
Անսելմոս , || Ոչ է ասէ ոյնիսուի անիրաւուն ,
կամ գործ , կամ այլ ինչ էութի , այլ միայն հե
ռաւորութի պատկանաւորն արդարութե :

Գիտելի է և ևս ըստ սքն (թօմայի , զի այլ
կերպիւ մեղքն 'ի վիճիստփայից առեալ լինի , և
այլ յանձանիցն . զի վիճիստփայքն զայն միայն հա
մարին մեղք , որ ուղիղ բանի հակառակի . իսկ ան
արանք յաւելուն , թէ մեղքն է ընդ դէմ կամացն ,
օրինացն այ . և վն վչաացուցունն , և արհամար
հունն ինչ այ . ուստի 'ի սահման մեղաց՝ սքն օգոս
տինոս ուղղապէս ասէ , թէ է այն ընդ դէմ յա
ւիտենական օրինացն այ , զի դնէ զգլխաւոր ,
և զմանաւանդական տգեղութինն մեղաց՝ առա
ջի աչաց :

Պ Ր Ա Կ Ե Ր Կ Ր Ո Ր Դ :

Մի թէ են մեղք՝ մահացուք , և ներելիք :

Ս. **Ա**բաղու մս յմծաբանիցն մեղքն բաժա
նի , զինասն բաժանի մեղքն 'ի ներգոր
ծականն և 'ի յունակականն . Ներգործականն
է այն , որ գործով կատարի . իսկ ունակականն է
որ մնայ զկնի ներգործապէս գործելոյ , ըստ
կերպի ունակական պահասութե :

Գարձեալ նոյն ինքն ներգործական մեղքն բա
ժանի 'ի կողմանէ պատուիրանի 'ի յանձնառա
կանն և 'ի զանցառականն . 'ի կողմանէ առար
կային , 'ի մեղս ընդ դէմայ , ընդ դէմանձին իւ
րոյ , և ընդ դէմ ընկերին : 'ի կողմանէ ենթա
կային 'ի մարմնաւոր և 'ի հոգեւոր մեղս . 'ի կող
մանէ կերպին , 'ի մեղս սրաի , բերանոյ և գոր
ծոյ , 'ի կողմանէ արարողական պատճառին , 'ի
մեղս որ 'ի կրից , 'ի ապիտութե . և 'ի չարութե .
և ապա 'ի կողմանէ չարութե 'ի մահացու և 'ի
ներելի մեղս :

Եւ այժմ ասացուք զս վերջին բաժանմանս ,
իսկ զս մնացելոցն 'ի ներքոյ 'ի տեղիս իւրեանց
մեկնեցուք :

Արդ՝ մահացու մեղքն է , որոյ զս մարդն
զրկի 'ի սրբարար շնորհաց . և արդիւնաւորի
յաւխտենական դատապարտուէն պատժոյ . իսկ
ներելին , թէ պէտ է մեղք , բայց ոչ զրկէ զմարդն
'ի սքարար շնորհաց , և ոչ առնէ պարտաւոր
յաւխտենական դատապարտութե ,

Եւ ճշմարիտ է այս ըստ հաւատոյ , թէ են
մեղք , որք մահուչափ են , և են որք միայն նե
րելի : Եւ նասն թէ են ոմանք մեղք մահուչափք
յայտնի է առ ամենեւեան . և երևի 'ի սք գրոյ .
որ 'ի բազում տեղիս վկայէ զդատապարտուէն
կմ զյաւխտենական մահուանէ զս անկանելոյ 'ի
մեղս

ցեալ իցեն մակուշադ . զոր օրինակ , մինչ դա-
ւիթ շնացաւ , առանց կարծեաց մահուչափ մե-
ղաւ . սոյ ուսուցանէ սքն ամբբոսիտ , մինչ սքն
պետրոս երիցս ուրացաւ . առանց կարծեաց
մեղաւ մահուչափ ըստ վկայութե . սքնն սգոս-
տինոսի 'ի մեկնութի սքնն յօհաննու , որ ասէ
'ի յուրանալ նք երիցս' երկնէէր նա 'ի մահուա-
նէ մարմնոյ , ուստի և 'ի մահ հ . դւոյ անկանէր :

Հաստատի երկրորդ ի նամակէ փիտափ հինգ-
երորդ պապին' և դրիդորի երեքսանբորդի . զոր
ութնրէ ուսուցանաս նորոշեաց , յորում դա-
տապարտի նախադատուին միքայէլի պոպիտի ,
որ ասէր . սչէ մեղք 'ի բնութե իւրմէ ներելի :
այլ ամ մեղք արժանանայ յախտենական դա-
տապարտութե :

Հաստատի երրորդ այնու , զի եթէ ամ մեղք
նախասահմանելոցն իցէր ներելի' հետեւէր , զի
մի կարասցէ նախասահմանեալն կորուսանել
զորքարար շնորհս' մինչ միայն 'ի ձեռն մահացու
մեղաց կորուսելլինի ասկայն և այս իբրև սուտ
և հերետիկոսին դատապարտեցաւ 'ի ժող' թրի' :

Ինչքեպես , թէ զինչ է յատուկ և տեսա-
կան պատճառ , որով մեղք ինչ մահացու 'ի
ներելեացն տարբերեցի : Պատասխանեմ' թէ
բազում յոյժ են բանք ամաբանիցն 'ի վր ին-
դրոյս . Չի ոմանք համարին , թէ այնու տար-
բերի , զի մահացու մեղքն , է ընդ գէմ պա-
տուխրանին , իսկ ներելին է ընդ գէմ խորհր-
դոյ . Այլք . թէ մահացուն է ընդ գէմ օրինաց ,
իսկ ներելին արտաքոյ օրինաց . Այլք հաւա-
նական և ս ասեն . թէ մահացու մեղքն բառ-
նայ զկարգն առ վերջին վախճան , զի բառնայ
զսէրն , և զնորհս . որով մարդն առ ամ ուղղի-
և առ նա իբրև առ վերջին վախճան միանայ .
իսկ ներելին ոչ բառնայ զկարգն առ վերջին
վախճան . մինչ ոչ բառնայ զսէրն , այլ միայն ըզ-
հարգն առ միջոցսն , զի դնէ զանկարգուի 'ի մարդ

կայն դործս , որ առ անձ անձիլ պարտէր , իբրև
առ վերջին վախճանն , և սակայն ոչ կարէ , մինչ
մեղքն առ անձ անձիլ ոչ կարէ : Իսկ այլք հաւնկա
նագոյն և սասեն , թէ բաժանիչ տեսական պատ
ճառ մահացու մեղացն 'ի ներքին մեղաց' յայնմիկ
կայանայ , զի 'ի յամ մահացու մեղս դտանի վշտա
ցուցումն և անարգումն ւնյ . կամ յայտնապէս ,
կամ լռելեայն , և կամ մեկնողաբար , որ երևի
'ի բազում տեղիս սք դրոց . ուր տրտնջայ անձ վն
անարգելոյ և արհամարհելոյ 'ի մեղաւորաց :
յորմէ հետևի անջատումն սիրոյ , և բարեկա
մունէ , որ է 'ի մէջ ւնյ և մարդկան : Իսկ 'ի ներք
ին մեղս արհամարհումն այս ւնյ ոչ դտանի , և
ապա և ոչ անջատումն սիրոյ , և բարեկամութե
նյ . ուն 'ի մարդկայինս բարեկամունէ թէ թէ և ինչ
վշտացումն , թէ պէտ անհաճոյ թուի , սակայն ոչ
մինչև առ արհամարհումն յառաջանայ . և ապա
զկայն սիրոյ և միութե ոչ բաժանէ :

Պ Ր Ա Կ Ե Ր Ր Ո Ր Դ :

Որով արգեօք պատճառաւ մահացու և ներքին
մեղք 'ի մէջ իւրեանց ճանաչիլ կարեն :

Առ . **Թ**է պէտ ուն ասացաք յանցեալ պրակն :
Ճշմարիտ է , և 'ի սք գրոցն յայտնա
պէս երևի , թէ մահացու և ներքին մեղքն 'ի
մէջ իւրեանց տարբերին , սակայն ոչք են մեղքն
այնոքիկ ըստ տեսակին և անհատուն մահացուք ,
որք և յարքայութեն երկնից 'ի յաւիտեանս հեր
քեսցեն , և կամ ոչք են ներքինք : որք զհասա
նիլն առ այն ժամանակաւ իւրք արգելուցուն ,
յատուկ և մասնաւոր դատողութք դժուարին
իսկէ դտանելն , և վտանգաւոր իսկ սահմանելն ,
ուն ասէ սքն օգոտաինոս :

Զանդի քահանայիցն է պաշտօն զանազանել 'ի
մէջ բորոտունէ և բորոտունէ , և ոչ կարէ 'ի յա
տեան

տեան խոստովանուէ զՎՃիւռ հատանել , եթէ
 ոչ ճանաչեսցէ զՃանրութի , և զԹեթեութի մե-
 ղացն . վնջ զի ՚ի յայսպիսի խաւարնտինս տեղի՝
 տալ զլոյս ինչ յառաջադրեմք զամանս , որ հա-
 սարակ անաբանիցն ընդունելի , և սք հարցն
 հաճելի , որով յամ պատահման զամ մահացու ,
 և զներելի մեղս ճանաչել հաւանականաբար , և
 ապահովութիք ճամ որ կարացցէ :

Եւ դիտելի նախ , զի ոմանք մեղք ըստ սեռի
 իւրեանց են մահացուք , և ներհակին ծանրաց-
 ուղիղ բանի , և օրինացն նոյ , սնլ սուտ երդումն ,
 մարդասպանութի և այլն : Իսկ ոմանք ոչ ընդդի-
 մանան ծանրացէս ուղիղ բանի և անօրին օրի-
 նացն , և ապա ըստ սեռի իւրեանց՝ ոչ են մահա-
 ցուք . այլ միայն ներելիք , ոնլի են այնքիկ , զո-
 բոց ասէ սքն օգոստինոս ՚ի չորրորդ բանս յՂգո
 տղեղութե հոգւոյ . || Քանիցս անգամ որ ՚ի կե-
 բակուր և ՚ի յրմայելի առաւել մատչի քան զհար-
 կաւորն , քանիցս անգամ առաւել խօտի քան ըղ-
 պիտոյն , կմ լռէ քան զվայելն . քանիցս անգամ
 դաւանացուցանէ զազքատն , որ թախանձանօք
 խնդրէ , և՛ սոյնպէս և այլք , զորս անդ ՚ի Թիւ
 աճէ : և զի ՚ի ճանաչել զայսոնիս , որք ըստ սեռի
 իւրեանց մահացու կամ ներելիք են , ամ որ բա-
 զում անգամ յատուկ իմացմամբն մուրիլ և սու-
 տրիլ կարէ , վնջ զերկու կանոնս ՚ի հասարակի
 տան վարդապետք , որովք զՎՃիւրս և զապահով
 դատողութի զորպիսութե մեղաց կարեմք ունիլ :

Թ . Առաջին կանոն ՚ի սք դրոց է , զի մինչ սք
 զլիք աւանդեն . Թէ ոմանք մեղք մերժեն յար-
 քայուէ երկնից , զմեղաւորն յաւանկն մահուան
 արժանի առնեն , Թ շնամի նոյ կացուցանեն , յայտ
 ջիկ և յայլ նման խօսակցուէց կարեմք իմանալ ,
 Թէ սոյսպիսի մեղքն լը սեռի իւրեանց են մահա-
 ցուք . և զայս կանոն ցուցանէ մեզ սքն օգոս՝ որ
 ասէ || Թէ ոմանք մեղք Թեթեութի իսկ համարէին ,
 եթէ ՚ի սք դրոց ծանրագոյն իսկ ոչ ցուցանէին :

Երկրորդ կանոնն է ՚ի ընդհանուր եկեղեցւոյ . և ՚ի վարդապետացն համաձայնունն . զի մինչ ՚ի բանիցն սք զբոց ոչ երևի բարւոյք և ս , մի թէ այս ինչ մեղք ըստ սեռի իւրում ներկի . թէ մահուչափ իցի : պարտի նկատել առ այն . զոր վարդապետք եկեղեցւոյ վճառն : Չի կթէ միաշունչ ուսուցանեն , թէ այս ինչ մեղք ըստ սեռի իւրում է մահուչափ , պարտի համարել զայն մահուչափ , իսկ եթէ ներկի , ներկի : Բայց եթէ ոչ միաբանեցին վարդապետացն բանք ի մէջ իւրեանց , յոյնժամ զհաւանականագոյնն և զապահովագոյնն , կամ գոնե զհաւանականն , և զապահովէ ընդդրիել պարտ է :

Գրաւելի է երկրորդ , զի ոմանք մեղք լն սեռի իւրեանց մահացուք , վն երկուց կարեն լինիլ ներկի . կամ զն թեթեւուն նիւթոյ . կամ վն անկատարուն գործոյն , ոն ուսուցանե նավարուս ՚ի հասարակ վարդապետացն բանից . Եւ զերկաքանիս բոցն իսկ վկայե սքն օրոսաիննս ՚ի գիրս բնուե և շնորհաց , զլ . 38 . որ խօսելով զարդաբոցն՝ որք ներկաբար մեղանչեն ասէ ॥ Բազում անգամ ՚ի թեթեւագոյնս . և երբեմն յանդրոյշ իսկ անձինս սպրդի մեղքն , Եւստի գողութն , որ ըստ սեռի իւրում է մեղք մահացու , ՚ի պատճառս թեթեւութե նիւթոյն , լինի ներկի . ոն եթէ գողութն բարձեալն իցի անորդ և սակաւագին : Նոյնպէս և բարկութն , որ ըստ սեռի իւրում է մեղք մահացու , վն անկատարուն գործոյն լինի ներկի . ոն եթէ օք անկատար զգուշութիւն և ազատութն բանին մեծի ինչ վրէժ լինդրութե ցանկացի : Եւ որ բարւոյք և սխմացի ,

ն Գրաւելի է երրորդ , զի շարժմունք կամաց , և այլ կարողունց . են երկուք աւրբերութն : Չի ոմանք հետեւին լի և կատարեալ բանին զգուշուն , և բացարձուն . ոն օք կատարելագէս ձանձաղե թէ խորհի . կամ ցանկաց , և կամ ըստ արտաքնոյն գործէ զլար և զապօրինաւոր լինչ .

և սակայն այսու նմին ՚ի խորհուրդն , ՚ի գանկունն , կամ ՚ի դործն յայն մնայ . յայնժամ ոչ է երկբայու ՚ի ինչ վն մեղանչելոյ մահու շափ , եթէ նիւթն է բուական առ մահացու մեղս :

Իսկ այլք ծագին ՚ի նչք զգգու շանայ բանին , որք կոչին նախկին նախկնոյ , այսինքն , մինչ ՚ի թե լաշրու է գիւաց , կամ յանոցիկ , որք արտաբուսն զգայուեցն պատահին , և կամ յայլ ինչ բնական արամադրութի ճեանին , ուր վատթար ինչ խորհուրդ , ուստի կալքն , կամ զգայական ցանկութիւն բնականօրար առ յառաձագրեալ առարկայն շարժի . և այսոցիկ շարժմունքս ոչ առնեն յանցաւոր , որովհետեւ ոչ են ՚ի յիշխանուէ մարդոյ . || Զի ս ասէ սքն օր ու՛ մեղանչեանց , ուստի ոչ կարէ իւրիք կերպիւն գերծանել : Աւտի սքն դրիզօր պաղն . || Յայնժամ կատարի մեղքն ասէ , մինչ ՚ի շարժման բերկրութե՛ն ապաստար լինի հաւանութի : արդ մինչ ՚ի շարժմունն յայնտիկ նախկին նախկնոյ՝ ոչ է ազատութի . ոչ և ս և հաւանութի , ապա և ոչ մեղք : և դարձեալ սքն օր ստիկնու ՚ի գիրս քաղաքին ուր խօսելով վն ապօրինաւոր շարժման ստորնայն ցանկուեց՝ ասէ այնոցիկ են առանց մեղաց , մինչ ոչ հաւանութի նոյ . իսկ այսոցիտի շարժմանց նախկին նախկնոյ ոչ առեալ լինի հաւանութի , մինչ կանխէ նմ ազատուէ , որ ըստ սքն թամայի առ հաւանութիւն հարկաւ որայեւս ինդրի . ուրեմն ըստ մտաց սքն օր ստիկնուսի ոչ երբէք են մեղք : Իսկ այլք շարժմունք թէ նոյ կանխեն կորեւ բանին զգուշուէ և ազատուէ . սակայն հետեւն զգուշուէ ինչ , և անկատար խոկման բանին , և վն լինին անկատար հաւանութի , իբր թէ ասիցնէք , կիսահատար ազատութի , որոյստի հաւանութի կարէ լինիլ ՚ի կիսարթունն , կամ և ս ՚ի հսկողն , որոց անձն բարկութի և երկիւղեաւորօտեալ իցէ , և կամ զբաղեալ այլ ինչ խորհրդովք՝ մինչ զի ոչ իմացի՝ կատարելայեւս զստ

յու թիւն բերկրու թեւն այնորիկ , որով ախտաւ
նանն : Ուստի անկատարաբար և թեթեալաբար ,
այս է , ներելաբար մեղանչենն : Վիյ ստէ սքն
ողտաօինոս 'ի վեցերորդ գիրն ընդ դէմ յու լիա
նոսի դր 9 . և 10 . ուր խօսելով վասն անկարդ
տափմանն . || Միշտ առանց մեղաց լինեաք ստէ ,
մինչև բժշկեցի չարս , (այս է , ցանկութե)
եթէ նմա ոչ երբէք հաւանեաք չարեաւ . Իսկ 'ի
յայնոսիկ թէ և ոչ մահացօրէն երբեմն 'ի նոյն
խկ ապտամբ տափմանէ , այլ ներելաբար յազ
թիմք , այսու ստրտաւ որիմք ստել հանապաղօր .
Թող մեղ զպարտիս մեր : Յայտոցիկ բանիցս սքն
երևի , թէ 'ի յառնել շարժմանն ցանկութե 'ի
վի մարդոյ ' թ երկց կարէ լինիլ , այս է , առանց
մեղաց , եթէ ոչ իւրեք հաւանիմք նմա . մահա
ցու մեղօք , եթէ ազատաբար հաւանիմք նմա .
և ներելեօք , եթէ անկատար և կիսակամ ազա
տութեք հաւանիմք նմա :

Ե. Գիտելի է շրորդ , զի մեղքն ըստ սևութի
խրում ներելի , հինգ կերպիւ կարէ լինիլ մա
հացու . ույ յասացելոցս 'ի յանցեալ դու խն եր
և ի Նախ' եթէ գործի մուար խղճիւ մտաց կար
ծելով զմեղս ինչ մահացու , որ իրաւի ոչ է :
Երկրորդ' եթէ ուղղեցի առ մահացու մեղք
ինչ . որդոյն , եթէ ոք զբանս ինչ դատարկ ար
տաբերեալ , կամեցի նովաւ զայլս առ մահացու
մեղս ածել : Երրորդ' եթէ կացուցի վերջին
վախճանն 'ի նոյն խկ ներելի մեղս , այսինքն ,
յանկարգ սէրն իրի ուրուք , որ լինի , ույ ստէ
սքն թօմաս , մինչ ոք այնպէս ցանկայ ներելի ինչ
գործոյ , մինչ զի ատրատ է գործել , թէ և ս
իցէ մահացու : Չորրորդ' եթէ 'ի յաղատաբար
դո ծելայ ներելի ինչ մեղաց' ծնցի մեծ իմն դայ
թակղուի , զոր և խկ գործօնն ետես յառաջա
յոյն , կամ տեսանել կարէր և պարտ էր : Հինգ
երորդ' եթէ յանցանելն , կամ անհնազանդուին
ըստ ինքեան իցի ներելի , սակայն վստեսակա
ւոր

ւար արհամարհման օրինաց , կամ՝ օրինադրին ,
լինի մահացու :

Խնդրեսցես , մի՛ թէ բազում ներելի մեղք կա
րեն կացուցանել զմի մահացու մեղս : Պատաս-
խանեմ ը սքնն թօմայի , թէ այս ոչ կարէ լինիլ ,
այսա թէ ոչ , հակառակիմք յատուկ վարդապե-
տունն ժղ՛ թրի՛ , որ ասէ , թէ մեք ներելի
մեղօք հեռանչ ոչ կարեմք ՚ի սրբարար շնորհաց :

Ղ Առարկեսցես , թէ ՚ի բզմ՛ ներելի դողու-
թնց կարէ լինիլ դողուի մահացու , զոր օրինակ,
համարեսցուք , թէ քսան դրամն կացուցանէ զմի
մահացու մեղս գողուէ , և եթէ որ յւրաքանչ-
իւր առուր դողացի զմին՝ յառջին և յերկրորդն
և ՚ի հետևեալսն մեղանչէ միայն ներելաբար ,
իսկ ՚ի քսաներորդն մահացօրէն : Պատասխա-
նեմ , թէ գողուին այն վերջին է մեղք մահացու ,
ոչ զի անտուտ և ՚ի յառաջանցելոցն աճի և
բաղկանայ մահացու մեղքն այն , այլ զի ՚ի նոյն
վերջին գողուէ պարունակի յայտնի , կամ լռե-
լեայն կամեցողուի ընդ անարդարաբար ունելոյ
վերջին դրամն ընդ նախկին իննև տասանց , և
մինչ քանակու թիս այս է բաւական առ մահացու
մեղս ը համարման մերոյ , վնյ այս վերջին գո-
ղու թիս է մահացու :

Եւ թէպէտ ներելի մեղքն , որքան և իցեն ,
ոչ կարեն հաւասարիլ երբէք միոյ մահացու մե-
ղաց . սակայն ճշմարիտ է ըստ սքնն թօմայի , զի
ներելի մեղքն , մանաւանդ այնոքիկ , որք ազատ
կամօք դործին , այնքան պատրաստեն զմարդն
առ մահացու մեղս , որքան սովորուի լինի մարդ-
կային կամաց ՚ի դործելն զայնոսիկ անձային օրի-
նացն ՚ի վորբազոյնս ոչ հնադանդիլ , ուստի սա
կաւ առ սակաւ ապա ՚ի բաց մերժել զլուծն անձին
օրինաց ՚ի մեծագոյնս և ՚ի ծանրագոյնս գթիլ յա-
ռաջանայ , ը բանի էկլս՛ 19 . || Որ արհամարհէ
զսակաւս , սակաւ առ սակաւ կործանեսցի :

|| Եստի ասէ սքնն օգոստինոս . || Մի՛ առ ոչ ինչ

համարերը դմեզս քո . թէ են փոքունք , զի եւ
փոքր կաթիլք անձրեաց զգեաս լցուցանեն , եւ
դճառս յարմատոց անտի տապալեն , դու որ
ասեսդ . թէ փոքր ինչ է մեղքն իմ , կամ մոգի-
տել , թէ սրբանիցս զայնպիսի մեղս գործես ,
եթէ կամիցիս արգեօք զայնքան փոքր վերս ՚ի
մարմնի քո . եւ զաղաս , կամ զպատուաւածս ՚ի
հանդերձս ունիլ : արդ՝ մինչ ոչ կամիս , զի լի-
ցին վէլք ՚ի մարմնի քո եւ բլծք եւ պատառուածք
՚ի հանդերձս քո . զի էր արգեօք ոչ երկնիս
տալ քո զայստիկ հոգւոց քում :

Պ Ր Ա Կ Չ Ո Ր Ո Ր Դ :

Ո՛ւստի արգեօք ճանաչիլ կարէ տեսականոր
կամ թռչական տարբերութի մեղաց .

Մ. **Ե**ւ զի ՚ի Ժ՛՛ թրի՛՛ , սահմանեցաւ , թէ
զամ եւ զիւրաքանչիւր զկնի մկրտութե
գործեալ մահացու մեղս , որք մեծաւ քննութի
կարեն յիշիլ . պարտէ ՚ի խստաովանութե յայտ-
նել , նաև զպարագայս , որք զտեսակ մեղացն
փոփոխեն . վնց զի սպաշխարողն քննել կամ խոս
տովանահայրն առ այս օրնել սպաշխարողին կա
րասցէ . հարկաւոր է քննել , թէ նւստի ար-
գեօք տեսականոր , կամ թռչական տարբերու-
թի մեղացն ճնանի :

Եւ նախ՝ որ պատկանի առ տեսականոր տար-
բերութի մեղացն գիտելի է . զի այն մանաւանդ ՚ի
տեսականոր առարկայէն իւրաքանչիւր մեղաց
ճնանի . ոնց ասէ սք՛ն թօմաս , մինչ զի այնպիսի
մեղք տեսական տարբեր ՚ի մեջ իւրեանց համա-
բին , որոց տեսականոր առարկայն ներհակի
քաղական կատարելութեցն որք են տեսական
տարբեր . եւ յորոց կատարելութեց մեղքն զրկեն :
Արդ՝ մինչ մեղքն տեսականաբար կոչանայ ՚ի
պակասութն բարոյական ուղղութե կամ կատա-
րել-

բերեմ ուն յառաջին պրակն սաացօք . վն իւրս
քանիւք մղաց տեսական տարբերութիւնն 'ի
միւսոյ՝ առեալ լինի 'ի տեսականոր պատճառէն
ուղղունն և կատարելունն այնորիկ , յորմէ պա
կասի , քանի տեսական տարբերութիւն պակաս
ման , ուն ուսուցանեն փխխտօրայք , առեալ լի
նի 'ի տեսականոր տարբերութեւնէն , յորոց
պակասին :

Բ. Ուստի երևի , թէ մեզն այնորիկ զանա
զանին 'ի մջ իւրեանց տեսական . ոչ միայն զի
առաքինութեցն որք են զանազան տեսական ներ
հակին . այլ ևս զի նոյնոյ առաքինութեւն , սակայն
զանազան տեսականոր « առձառառ ներհակին ,
զոր օրինակ , սուտ երգումն և ուստազանցու
թիւն տեսական 'ի մջ իւրեանց տարբերին . զի
թէ պէտ նոյնոյ առաքինութեւն կ'օնի . բայց զանա
զան տեսականոր պատճառաւ ընդ դիմանանն ուն
բարւոք ևս իմաստին յասացելոցս յառաջն երգ ,
և յերկրորդ տասնաբանեոյ օրէնս :

Երևի երկրորդ , զի պարագայն այնորիկ որք
զտեսակ մեղացն փոփոխեն . կամ զմեղան տեսա
կառ զանազան բազմացուցանենն , որք զնոր և
զտեսական զանազան ազեղութիւն 'ի դրծն մեղաց
յառեղուն՝ պարտին 'ի խոստովանութեւն յայտնիւ
զորօրինակ , նա որ ուստե՝ պահել զամառուբս
ուրբաթու , և թէ զպահն զայն 'ի մջ քառասնոր
դական պահոց յուծցէ զերկինս տեսական դործէ
զմկս , թէ և թ'ուով իցէ մի , զի 'ի դործն նորա
կրկին ազեղութիւն տեսական զանազան դտանի . զի
առաջինն է ընդդէմ շնազանդուե օրինաց եկե
ղեցւոյ . իսկ երկրորդն է ընդդէմ առաքինութե
կ'օնի , որոյ պատկանի ուստեւն , և զուստն
հաւատարմութիւն կատարելն , և վն զպարագայն
զայն ուստի պարտ է յայտնել 'ի խոստովանութեւն ,
Գ. իսկ որ պատկանի առ թ'ուակն տարբերու
թիւն մղաց . դիտելի է , զի այնքան են մեղքն
թ'ուով զանազան , որքան են բարոյականաբար
մի

Յաղագս մեղաց :

միջահատեալ և կրկնեալ դործք կամացն , ուն
ասէ սքն թօմաս և այլք : վասն զի մինչ կամքն է
դիտաւոր սկիզբն կամաւորական բարի և չար
դործոց , ոչ ինչ է մեղք , որ ոչ յառաջադայի
յայնմանէ ազատ կամաց , ուստի հետեւի , թէ
թիւ մեղացն այնքան բազմանայ , որքան դործ
նոյնոյ կամացն բարոյականաբար միջահատեալ
կրկնի :

Ինչքեսցէս , թէ քրպիսի դործ կամացն հա
մարի բարոյականաբար միջահատեալ , զի կրկնե
լին նր՝ մեղքն բազմացի թուով : Պատասխա
նեմ , թէ դործն կամաց՝ յայնժամ բարոյականա
բար միջահատի , մինչ ոչ տեսականաբար , և ոչ
զօրութենաբար տեւէ ՚ի նոյնն : Ուստի որ դիմե
առ ՚ի դողանալ , կամ առ ՚ի սպանանել զթշնա
մին , թէ և ՚ի ճանապարհի զյառաջադրութիւն
դողանալոյ , և սպանանելոյ յաճախ նորոգեցէ ,
ոչ շամարի , և թէ ոչ միմիայն մեղք իսկ է թէ
առաջին կամքս այս դողուէ քնով միջահատեալ
կրկին նորոգեսցի , և կրկնեսցի , յայնժամ նոյն
մեղքն համարի թուով բազումբայց է թէ թիւն
միջահատեալ և կրկնեալ դործոցն այնոցիկ կա
մաց այնքան իցէ , զի բարոյականաբար սահմա
նել զայն անկար իցէ , յայնժամ բաւական է
յայտնելն ՚ի խօստովանուէ զտեւումն ժամանա
կի , այնպէս ուն ասացեալ է յառաջին ընձեռ
ունած ոյսորիկ վերջին մասին , գլ . 5 . պրակ . 14 .

Պ Ր Ա Կ Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ :

Յաղագս յանձնառական , և զանցառական մե
ղաց , և զանազան սատիճանաց նոցա :

iii. **Ո**ւսուցանէ սքն թօմաս , և զոր ուսու
ցեալ իսկ էր սքն օքոստ . , թէ ամ մեղք
երկու կերպիւն դործին . կմ դործին արդեւեալքն ,
և այս է մեղքն յանձնառուէ : կամ ոչ դործին
նրա

հրամայեալքն , և այս է մեղքն զանցառութե՛ն :
 Արդ այս է յատուկ տարբերութիս 'ի մեջ երկո-
 ցունցն , զի մեղքն յանձնառուէ ընդ գիմանայ
 բացասական պատուի անին , որոյ թէ ու թին է
 այնպիսի ըստ վարդապետուէ սբ յն թօմայի , որ
 յամ ժամ պարտաւորէ , իսկ մեղքն զանցառու-
 թե՛ն ընդ գիմանայ ստորասական պատուիրանին ,
 որ ոչ միշտ , այլ յեղերեալ միայն ինչ ժամանակի
 պարտաւորէ , ուր բարւոք և սխմացի յասացելոցն
 'ի ներքոյ 'ի մեկնութի տանաբանեայ օրինացն :

Արդ վս զանցառական մեղաց գիտելի է , զի
 ոչ միայն գործէ զմեղս զանցառուէ՛ յորժամ ոք
 ցանց առնու զնովաւ , զոր պարտ էր առնել ,
 ըստ բանի սբ յն Յակոբայ : || Որ ոք գիտեսցէ ըզ
 բարին , և ոչ առնէ մեղք են նմա : այլ և սյոր-
 ժամ կամի առնել զինն , յորմէ գիտէ . թէ հե-
 տեի զանցառուն , կամ գիտել կարէր և պարտ
 էր : Եւ գործս այս ըստորում է պատճառ զանց
 առական մեղաց՝ է մեղք . և ոչ զանազան 'ի
 զանցառկն մեղաց , թ բաւանականացոյն վճառ
 անարանից ուստի հետեւի , թէ բաւական է յայտ
 նելու բարք 'ի խոստովանուէ , թէ յաւուրս տօնից
 զանց առ 'ի ըսել զպատարաց . և ոչ պարտաւորի
 յայտնել զպատճառն զանցառութե՛ն այնորիկ .
 եթէ պատճառն այն՝ ըստ ինքեան չիցէ շար :

Իսկ վս յանձնառական մեղաց գիտելի է , զի
 երեք են մանաւանդական աստիճանք նորա , զի
 թմանք գործին սրտին , այլ բերանով , և այլք
 գործով . որպէս ուսուցանէ սբն թօմաս , և
 բարւոք և ս երեւի 'ի սբ գրոց՝ մտթ'' 15 . || Իսկ
 'ի սրտէ ելանեն խորհրդք շարք և'' , որք պզծեն
 զվարդ : Եւ սազմ . 14 . || || Իր ոչ նենդաւորեաց
 լեզուաւ իւրով , և շար ընկերի իւրում ոչ
 արար , Դարձեալ մեղք սրտին , կամ պարզ
 ննրքինք , երեք կերպիւն գործին . այսինքն , խոր
 հրդով , բերկրութ . և հաւանութ շար գործ ց ,
 Իսկ թէ պարզ խորհրդով մեղանչել կարէ , ըստ
 ինչ

ինքեան յարե : ուր որ զգուշութիւն և ազտութեամբ
կամեացի ընդունիլ զկարծիս ինչ , որ յեկեղեցւոյ
դաստապարտեալ : և 'ի բաց հերքեալ է : ըստ
այնմ խմատ ' : ॥ խորհուրդ չար բաժանէ զմիջն
յոյ : և ս թէ ոչ միայն հաւանութիւն չար դործոց
է մեղք՝ զորմէ ոչ է երկրայուի , այլ և ս պարզ
բերկրութիւն վս չար դործոյն , զոր անձարանք յա
մեղոզական կոչեն . ուր ուսուցանէ սքն թօմաս ,
և ընդ նմա ամ անձարանք , և և ս սքն օգտանս ,
որ ասէ : ॥ Ար որ դաստապարտի , եթէ զայնասիկ
որք թէ պէտ և ն առանց կամաց դործեոյ , սա
կայն և ն կամք հօգւոյն զմայիլ զնորք , և միայն
մեղք կամացն ճանաչեն , ոչ քառէ շնորհօք միջ
նորդին :

Եւ պատճառն , որով հաստատէ սքն թօմաս ,
է այս . զի այնպիսի է բերկրութիւն , որպիսի է և
առարկայ նր իսկ որ բերկրի զչար դործով , ըստ
որում է չար . առարկայ բերկրման նր է չար .
ուրեմն և բերկրութիւն նր է չար լինի մ հուշարի ,
եթէ բերկրի զմահուչարի չարեօք . ուր միջ ոք
խորհի զպոռնկուէ . և զգուշութիւն բանին ճանա
չելով թէ խորհի զմանե , բերկրի , իսկ լինի նե
րեւի եթէ բերկրի միայն զներքի չարեօք . ուր միջ
խորհի ոք , և խորհեցեալ բերկրի վս դարկ ինչ իրի :

Աստի հեռուի , զի եթէ ոք բերկրեսցի ոչ վս
չար դործոյն . ըստ որում է չար այլ վս ինչ
պարագայի նր , որ ըստ ինքեան ոչ է չար : զոր
օրինակ , եթէ խորհեցեալ զմարդասպանութիւն
ուրուք բերկրեսցի , ոչ վս մահուան նր . այլ
վս կերպին , և հարապիտութեն միջսպանին
'ի մարդասպանութեն դործեալ , ոչ Աղանչէ մս
հուշարի , որպէս ուսուցանէ սուրբն թօմաս 'ի
վերոյ :

Դ. Եւ գիտելի է աստ նախ , զի առ 'ի լինիլ
մեղք մահուչարի վս բերկրման զչարսնչ էրօք ,
երկու ինչ խնդրին . Առաջինն է , զի դիտասցե
նա՛ որ բերկրին , թէ ոչ միայն զի բերկրի զայն
պիսի

պիտի իրօք , այլ զի բերկրուն այն է չար , և ապրիկնաւոր , կամ գոնէ զայս ծանկցէ , մինչ ետ զպատճառ դիտուի բերկրմանն այնմիկ . Եւրկրորդն է , զի հաւանութի բանին հեռակեցցի բերկրունն այնմիկ յայտնաբար , կամ լռելեայն : ուղբարեոք ևս ուսուցանէ սքն օ ստոինես ի մէրոյ , զի անպատկան բերկրմանք ոչ միայն ոչ են ընդ ունելլ յայտնի հաւանութ . այլ ևս . || Ի մեր աննալն ի հողի ի բաց հերքել զարախն : Կատի ը մտաց սքնն , ոչ միայն մեղանչէ նա , որ յայտնա պէս և բացորոշաբար հաւանի ի բերկրութի զն չար ինչ իրի , այլ ևս այն՝ որ լռելեայն , այս է , որ զբերկրութին զայն մինչ կարէր ի բաց մերժել զանց էա .

Գ. Գիտելի է երկրոյ , զի բերկրութիքն այնոքիկ մն չար ինչ գործոյ . և թէ միացին կամայն առ ի գործել զայն . յայնժամ լինին տեսակաւ նոյն ընդ գործելոյ , ըստ բանիքի մն , մատթ . 3 . և Եթէ ամ որ հայի ի կին մարդ առ ի ցանկանալոյ նմա , անդէն շնացաւ ընդ նմա ի սպախ իւրու մէ Եւ վն յայտպիտի պատահման պարտ է յայտնել զպարագայս զայնասիկ ի խոստովանութե , որք զտեսակ մեղաց փոխօխէին , և թէ որ ծով կաւաարէին , այսինքն , մի թէ վն պարզ պտնկութե , թէ վասն շնութեան . և'' , բերկրեցաւ . Իսկ և թէ ամենեւին ոչ կամեսցի գործել զայնպիտի մեղս , այլ միայն ի բերկրութին ընդարձ կէս զի հաւանութին , յայնժամ հաւանական ինն է բաննն , որք ասեն , թէ ամ այս խի բերկրութիք են նոյն տեսակաւ , յորժամ ի նոյն և ի նման պատճառէ ծնանին , և ապա նա , որ միայն խաբ հրդով բերկրի զաղտեղութ , այսինքն , զպտնկութիք զնութե'' վն պարզ բերկրունն այնորիկ , և առանց հաւանութի գործն նոյն մեղաց , ոչ է պարտական յայտնել ի խոստովանութ զպարագայս անձանդ և այլոց նմանեաց , որք զտեսակ մեղացն , թէ գործեալ լինէին , փոխօխէին , այլ բա

Յաղագս մեղաց :
բաւական է յայտնելն միայն զհաւանութիւն առ
աղտեղի խորհուրդս ,

Պ Ր Ա Կ Վ Ե Յ Ե Ր Ո Ր Դ :

Թէ ոյք են պատճառք մեղաց :

Եւ ըրդ առաջին և զխաւոր պատճառ մեղաց
է կամքն , որ 'ի կանոնէ անձային օրի
նացն շեղի , ուն ուսոյց սքն օգոստինոս 'ի դիրս
երկուց հօգուոց ընդ դէմ մանիքեցւոց : ॥ Թէ
մեղքն առանց կամացն ոչ կարէ լինիլ . ամ միտք
զանձայինն առինքն դրեալ ընթեռնու : Բայց բաց
'ի կամաց են ևս այլ երկու ներքին և արտաքին
պատճառք , որք առ մեղս շարժեն և ածեն ,
զորոց խնդրեմք , թէ զինչ են այնորիկ . 'ի մեկ
նութի որոյ ,

Ասեմ նախ , թէ երկու են արտաքին պատ-
ճառք , որք շարժեն , և ածեն առ մեղս , այս
է , սատանայ , և աշխարհ , և նախ սատանայ թէ
լազրութն և փորձութն իւրով շարժէ և ածէ 'ի
մեղս' երևի 'ի սք գրոց , իմս' 2 . ॥ Նախանձու-
քանսարկուին' եմուտ մահ յաշխարհ , և Թեա'
3 . ॥ Ոտխն ձեր սատանայ իբրև զառիւծ դռչէ ,
չրժի և խնդրէ , թէ զո՞ կլանիցէ : սակայն յայս
մանէ փորձութէ դիւնն ոչ ինչ հարկաւորութի
հետևի կամացն առ 'ի մեղանչել , այլ միշտ մնայ
ազատութի և իշխանութի առ 'ի ընդ դիմանալ
ճմա , ուն ուսուցանէ սքն թօմաս ըստ բանի սքյն
Յակոբայ . 4 . ॥ Հակառակ կացէք շարախօսին ,
և լիցի փախտական առ 'ի ձէնջ : Եւ որքան առ
աշխարհն , եթէ անուամբ նք ըստ մտաց սքոյն
օգոստինոսի 'ի մեկնութի սաղմ . 34 . իմանամք
զանօրէն և զամբարիշտ մարդիկ . Ճշմարիտ է ,
զի ևս նօքս շարօրինակօք , և աղտեղի հրապու-
րանօք երբեմն զոմանս ածեն 'ի մեղս . էկզս' 2
॥ Որ մերձենայ 'ի ձիւթ աղտեղացի 'ի նմանէ ,
և

և որ հաղորդի հպարտաց՝ զգեցցի զհպարտութիւնս
 ք. Ասեմ երկրորդ, առ ՚ի բաց մերժել, և
 անարգել զհայհոյութիւն քրիստոնէիցն, որք աւ
 սեն, թէ ան է պատճառ և հեղինակ մեղաց :
 բաց յայնոցիկ, զորս ասագաք ընդ դէմ ամբարշ
 տուեալս այսմիկ յառաջին մասն դործոյս, ընձե՛
 ւ. Գլ՛ 2. պրակ. 7. զնոյն կրկին ՚ի բաց հեր
 քեմք վկայութիւն սք դրոց, սաղմ. 7. || Ոչ թէ դու
 ան, կամիս զանորէնութիւն և սքնն Յաղագս : ||
 Չի ան անփորձ է չարաց՝ փորձէ նա, և ոչ զբ :
 Դարձեալ սուրբն Բարսեղ զհերետիկոսութիւնս
 զայս ՚ի բաց մերժեաց յամբողջին ճառս, որոյ
 մակագիրն է, յաղագս թէ ան ոչ է հեղինակ
 չարաց, ուր ցուցանէ, թէ նոյն իսկ ամբար
 տաւանութիւն է ասելու բար, թէ ան է հեղինակ
 չարաց, որ և ասել, թէ ան ոչ է :

Առարկեն նախ հերետիկոսք զբանն և փայ՛ 1.
 || Որ զամ յաջողէ ըստ խորհրդոց կամաց իւ
 րոց, ուրեմն և զմեղսն :

Պատասխանէ սքն Հերոնիմոս ՚ի վք այնորիկ
 բանին, թէ. || Չայս իմանալ պարտութիւն, ոչ զի
 ամ, որ յաջխարհի լինի կամօք, և խորհրդօք
 այ լինի, ապա թէ ոչ, և չարքս այ կարելին
 համարիլ, այլ զի զամ զոր առնէ, խորհրդով,
 և կամաւ դործէ :

Առարկեն երկրորդ ՚ի բազում տեղիս սք դրոց
 ասի, թէ ան զմեղաւորս խստացուցանէ և կու
 բացուցանէ : Պատասխանէ սքն օգոստինոս :
 թէ ան խստացուցանէ, և կուբացուցանէ ոչ
 մասնակցելով չարաց, այլ ոչ մասնակցելով
 շնորհաց, այսինքն, մասնաւորաց, և դործու
 նէից, սոյ երևի յասացելոցս ՚ի յընձեռն ան
 շնորհաց :

Առարկեն երրորդ. թէ զիրք սքք ՚ի բազում
 տեղիս ասեն, թէ մեղք ինչ դործին ըստ կամաց,
 ըստ կարգ ադրուե, և ըստ հրամանի այ և այն :
 Պատասխանէմ, այտու և այլով իմացեալ լինե
 միայն :

միայն , թէ ան թոյլտայ զմեզս . և անօրէն ան
բարչտայն կատօք՝ իբրև դորձեօք վարի առ ի
կրթել զարդարս , և առ ի սատճել , զորս ի
յաւխակեից պատճել սահմանեաց , ուղ ասէ սքն
օքոստինսս , և այլ բազում սուրբ հարք :

Գ. Առարկեն չորորդ , թէ ան յատկապէս
գործակցի ի դորձն մեղաց ք մեղաւորին : Աստի
հետևել , թէ ի միասին ընդ նմա է պատճառ այն
բիկ : Աստի նեւ , թէ պէտ ան յատկապէս դոր
ծակցի ի դորձն , բայց ոչ ՚ի պակաստ ի դորձայն
այնորիկ , կամ ՚ի սպեղութի ուղղութե , որ ՚ի նոյն
դորձն գամնի . յորում միայն կայանայ անսական
բան նոյն իսկ մեղաց . ուղ ՚ի վերոյ աստեղցս
երևի : և առա թէ պէտ է պատճառ դոյ ծոյն ,
բայց ոչ է պատճառ պակասութեն , որ ՚ի նմին
գամնի : ուղ շարժական կարողութի է պատճառ
ինչ շքեղոյ , բայց ոչ է պատճառ կաշխարհ . որ
միայն ՚ի պակասութե բարձրցն պատճառի : Աս
տի սքն թօմաս . մեղքն ասէ , ոչ արարողական
պատճառի , այլ պակասական պատճառի համա
րեալ ինի , որպիսի է միայն մարդն որ մեղանչէ :

Դ. Եւ սքնն առ ներքին պատճառս մեղաց՝
երկք յիմ սքանկոյն թուին , այսինքն , ՚ի կողմս
նէ ատորին ըզձի՝ տկարութի կամ կիրք : ՚ի կողմս
նէ վերին ըզձի կամ կամացն՝ շարութեան . իսկ
՚ի կողմանէ իմացականութե՝ տգիտութի . ուղ ասէ
սքն թօմաս : արդ զերկուց առաջնոց վարդապե
տեալ մեր ասա՝ զերբորդն ՚ի հետևեալն պրակ
մեկնեացուք :

Եւ նախ , սի մեղքն երբեմն պատճառի ՚ի
շարժմանց , և ՚ի կրկն ստորին ըզձի՝ զուցանեն
որ զիրք , գանկէ ի 11 . || Յանկութի դարձոյց
զսիրտ քո և հոսոց՝ 7 . || Բայց տեսնեմ այլ
երեսս յանդամս իմ զինեալ հակառակ օրինաց
մտայ իմոց՝ և զերեալ զես օրիւօքն մեղաց : Արդ
պատճառի մեղք ՚ի ցանկութե , կամ ՚ի կրկն
զգայական ըզձից՝ ըսա երկուց , ուղ ասէ սքն

Թօմաս : Նախ ըստորում գարձուցանէ , և շրջէ
 զգգուչուն բանին : Երկրորդ ըստորում զկամս
 գրգռէ , և առնէ զի առարկայն առաւել պատ-
 կան , և ըզձալի երևեսցի . և զերկաքանչիւրն
 եցոյց սքն յակօք . դէ ՚ ստելով : || Իւրաքան
 շիւրք փորձի առ յիւրոց ցանկուեց ձգել և պատ-
 րեալ : և այստիտի մեղքս , որք 'ի կրից ծնանին ,
 ասին ևս , Թէ յառաջագոյն 'ի տկարութի . զի
 կիրքն , ուն ասէ սքն Թօմաս , ևն իբրու տկարու
 Թիք և հիւանդութիք հոգւոյ . և այսոքիկ ըստ
 երկուց կարեն պատահիլ , ուն ասէ նոյն սքն Թօ-
 մաս : Նախ նախընթացաբար առ գատողութի
 բանին , որպէս մինչ որ յառաջ քան զգիտել 'ի
 շարուի գործոյն իւրոյ՝ ամբոխեսցի 'ի կրից ,
 և յայնժամ եթէ այնքան սատարիկ իցէ այն , մինչ
 զի զգատողութի բանին ըստ ամի խափանեսցէ :
 այնպէս զի որ սա շարուի գործոյն իւրոյ՝ վասն
 սատարուեցն կրից՝ գիտել ոչ կարասցէ , յայն-
 ժամ ոչ լինի մեղք , մինչ ոչ է ազատութի կա-
 մաց , առանց որոյ հաւանութին ոչ կարէ լի-
 նիլ ազատ , վասն որոյ սուրբն օգոստինոս :
 || Եւս եթէ իցեն ասէ 'ի մեղ մինչ եմք 'ի մահ
 կանաչու մարմնի աստ ցանկութե մեղաց , եթէ
 ոչ ումք 'ի նոցունց տայաք զհաւանութի , ոչ ու-
 նեաք զպատճառս ասելոյ հօր մերոյ , որ յեր-
 կինս է , Թող մեզ զպարտիս մեր : Եւ գարձել 'ի
 գիրս բաղաբին այ : || Անհնազանդութին այն ցան-
 կուեց , այնքան առաւել առանց մեղաց է 'ի մար-
 մնի , որ ոչ հաւանի , որժան առանց մեղաց է 'ի
 մարմնի , որ ննջէ : Իսկ եթէ կիրքն ոչ բարձցն
 զգատողութի բանին . այլ զայն միայն ըստ մասին
 հեռացուցեն կմ արդելուցուն , այնպէս զի բա-
 նականութին բաւականապէս ծանխցէ զշարուի
 գործոյն այնորիկ , յայնժամ ոչ առբասրէ 'ի մե-
 ղաց : այլ զճանրութի նր Թեթևացուցանէ ,
 || Եստի սքն օգոստինոս ասէ : || Մեղք առաջին
 ծնողացն մերոց վասն այն եղև ծանր . զի տա-
 ի Թ Բ Բ կարին

կա ին ցանկութիւն ոչ ընդդիմանայր կամաց , այսինքն , թէ մեղքն այն ապառնի ինի թեթեւ , եթէ ՚ի նախընթաց ցանկութէ դործեսցի :

Երկրորդ կիրքն կարեն պատահիլ հեռեւաբար , այսինքն , յորժամ ազատաբար զինքեանս շարժեն առ շարինչ յորմէ հեռեւի և կիրքինչ ՚ի ստորին իղձս , և յայնժամ կիրքն այն ոչ առ բարէ ՚ի մեղաց , և ոչ թեթեւացուցանէ զճանրութիւնսն , այլ մանաւանդ ծանրացուցանէ , ուր ասէ սքն թօմաս , և է նշան մեծի հակման , որ է ՚ի նոյն կամս , առ ՚ի դործել զմեղս :

Իսկ թէ մեղքն երբեմն պատճառին ևս ՚ի չարութիւն կամ ՚ի վատթարութիւն կամացն , մինչ զի երբեմն որ յատուկ և ազատ շարութիւն մեղանչէ , երևի ՚ի սք դրոց , յօբ . 34 . || Եւ իբր խորամանկութիւն խտորեցան յօրինացն նոյն , և զամճանապարհս նր ոչ կամեցան ճանաչել Ուսուցանէ սքն թօմաս , թէ մեղքն այն , որ յատուկ և ազատ շարութիւն դործի , է ծանրագոյն քան զայն , որ ծնանի ՚ի տկարութիւն և ՚ի կրից , ք , զի բղի ՚ի մեծի ազատութիւն կամացն :

ՊՐԱԿ Ե ՕՌՆ Ե ՐՈՐ Դ .

Թէ սրով կերպիւն տգիտութիւն է պատճառ մեղաց , և կամ սրով կերպիւն անմեղա գիրս առնէ :

Ամենուր յառաջադրեալ ինդրոյս գիտել պարտ է , ըստ վարդապետութեան հասարակ անձաբանից , զի կրկին է տգիտութիւն , մինն իրաւանց , և միւսն դործոց , տգիտութիւն իրաւանց է , մինչ տգիտանալք զօրէնս ինչ կամ զսովորութիւնս , որ ասնի զօրութիւն օրինաց , որ արդեւու , կամ հրամայէ զիմն , զոր օրինակ , եթէ որ ոչ գիտիցէ , թէ եկեղեցական օրէնքն արդեւու ուտելն զմիս յաւուրս ուրբաթու : Իսկ տգի

տղիտուծի գործոց է , յորժամ տղիտանամք զմասնաւոր ինչ , որ հրամայեալ , կամ արդէլնալ է , և ՚ի նմանէ իբր յառարկայէ կախեալ կայ բարոյական գործ ինչ . զոր օրինակ , եթէ որ ոչ գիտիցէ զլինիլն միս , զոր ուտէ , կամ ոչ ծանիցէ : Թէ է ուրբաթ օրն . ուն բարւոք ևս ուսուցանէ ի զամսերթոս , և զայս , որ վստգիտուէ ասացաւ ՚ի մանալ պարտիմք ևս վասն անզգուշուծե . և մտաւցման :

Դարձեալ տղիտուէց ոմն է նախընթաց , ոմն համընթաց , և ոմն հետեւեալ : Նախընթաց , տղիտուին է այն , որ ոչ ուղղակի , և ոչ անուղղակի է կամաւոր , և վս այն անուանի նախընթաց՝ զի կանխէ ամ գործոյ կամացն , և նոյնն ասի անյաղթելի , և հաւանական , կամ արդար : Անյաղթելի է , յորժամ ոչ իւրիք քննուք կարէ յաղթիլ : Իսկ հաւանական կամ արդարն է , մինչ , թէ և բացարձակապէս խօսելով , ամ զգուշուծք քննեալ , որ կարէր ՚ի կիրարկանիլ , կարէր յաղթիլ , սակայն ոչ էր պարտ . զի ոչ ինչ պարտաւորութի էր առ ՚ի կիրարկանել զմեծագոյն զգուշուիլ քան զայն , զոր ՚ի կիր էարկ , սակայն և այնու յաղթել ոչ կարաց , և վս բարոյակա նաբար ասի անյաղթելի :

Ը . Համընթաց տղիտուին է , յորժամ տղիտանամք զիմն , սակայն զոր եթէ գիտեաք ևս առնեաք , ուն մինչ որ համարեսցի սպանանել զգազան , և սպանցէ զթշնամին , վս զի այնպէս էր պատրաստ , զի եթէ ծանիցէր , թէ է թշնամի իւր՝ տակաւին սպանանէր :

Իսկ հետեւեալ տղիտուին է այն , որ իւրիք կերպիւ է կամաւորական , և կամացն՝ ուղղակի , կամ անուղղակի հետեւի , և որ ևս ասի յաղթելի . զի իւրիք զգուշուք յաղթել կարէր և պարտ էր , և բաժանի ՚ի փափաքեալն , և յոչ փափաքեալն : Փափաքեալն է ուղղապէս կամեցեալն . զոր օրինակ , մինչ որ յասկապէս կամի տղիտանալ

դիմե , զի ազատութեամբ ևս մեղիցէ :

Իսկ ոչ փափաքեալն , է անուղղապէս միայն
կամեցեալն , զոր օրինակ , յորժամ փախսի յաշ-
խատանացն ուսման . յորմէ հետեւի , և տղի-
տութի ինչ : և գիտացեալ մեր զբաժանմունս
զայստիկ ,

Առեմ նախ , թէ տղիտութիւն երբեմն է պատ-
ճառ մեղաց , սոյ երևի 'ի սբ գրոց , գրծց' 3 .
|| Գիտեմ եղբարք , զի անգիտութեալ արարիք :
և ան արեւոթ' 1 . || Չի զայս յանգիտութե , և
յանհաւատութե դարձէի : զոր և ուսուցանէ սբն
թօմաս , թէ ոչ իւրաքանչիւր տղիտութի է պատ-
ճառ մեղաց : այլ այն միայն . որ է յաղթելի , և սա-
կայն բառնայ զճանաչումն ինչ , որ եթէ ծանիցիւր ,
արդեւոյր զգործն մեղաց՝ ըստ բանի առաքելոյն
առ հրէայս . ան կորսթ' 2 . || Չի եթէ էր ծա-
նուցեալ , ոչ երբէք զան փառաց 'ի խաչ հանէին :

Ասեմ երկրորդ , թէ յաղթելի տղիտութիւն ոչ
միայն է պատճառ մեղաց , այլ ևս է մեղք , վն-
ճուլունն միաւորելոյ ընդ նմա . որով որ ծաւա-
նայ գիտել զայն , զոր պարտ էր զիտել , և
կարէր . սոյ ասէ սբն թօմաս , և հաստատի 'ի սբ
գրոց . սաղմ' 4 . || Չմեղս մանկուէ և զանգիտու-
թե իմոյ մի՛ յիշերև' : և 'ի բանից սբյն օգոս'
որ ասէ : || Ոչ համարի քեզ 'ի մեղս , զոր ակա-
մայ տղիտանաս , այլ զի ծուլանաս քննել , զոր
տղիտանաս :

Գ. Ասեմ երրորդ , թէ նախընթաց , կամ
անյաղթելի տղիտութիւն թէ իրաւանց , և թէ
գործոյ՝ ըստ անի անմեղադիրս առնէ , ուն ասէ
սբն թօմաս , և ընդ նմա վարդապետք 'ի հա-
սարակի , և հաստատի նախ 'ի բանից քի տն
մերոյ՝ յօհանու . 13 . || Իմ եթէ չէր եկեալ և
խօսեցեալ ը նմ , մեղ ինչ ոչ գոյր նց : զոր մեկ
նեւով սբն օգոստինոս ասէ : || Նրբա առ որս
քն ոչ կեն և ընդ նմ ոչ խօսեցաւ , ունին պատ-
ճառս անմեղադիր լինելոյ . բայց ոչ վն ամ մե-

ղաց իւրեանց , այլ վն այն մեղաց՝ որով 'ի քն
 ոչ հաւատացին : և նքն Բեռնարտոս մեկնելով
 զսոյն իսկ բանս քնի՝ ॥ Եթէ ասէ խօսիցելի ,
 բայց ոչ ընդ նս : տղիտու թին անմեղապիր առ
 ներ վասն անհնազանդութեն :

Հաստատի երկրդ այսու պատճառաւ , սպի
 տուին այն անբասիր առնէ 'ի մեղաց , որ 'ի գոր
 ծոյ մեղաց ըստորում'է մեղք՝ բառնայ զբան կա
 մաւորականի . զի ոչ է մեղք , որ ոչ է կամա
 ւոր : իսկ նախընթաց տղիտուին՝ բառնայ զբան
 կամաւորականի 'ի գործոյ մեղաց , և առնէ զայն
 պարզ անկամաւորական , սոյ ասէ սքն թօմաս ,
 և սմ վարդապետք , ուրեմն անբասիր առնէ
 'ի մեղաց :

Ասեմ չորրորդ , թէ համընթաց տղիտու թին
 մինչ է անյաղթելի , անբասիր առնէ 'ի մեղաց ,
 սոյ ասէ իզամպերդոս : և պատճառն է , սոյ
 ասէ սքն թօմաս , և ս էթէ ոչ առնէ զգործն
 ակամայ , սակայն առնէ զգործն ոչ կամաւոր ,
 և այսպէս՝ յայսպիսի գործս ոչ գտանի բան կա
 մաւորականի , առանց որոյ մեղքն կարէ լինիլ ոչ
 ինչ :

Ասեմ հինգերորդ , հետեւեալ կամ փախա
 քեալ , և ոչ փափաքեալ տղիտուին՝ ոչ երբէք
 անբասիր առնէ 'ի մեղաց զչար գործն , որ նովաւ
 լինի . զի ոչ արդելու , զի մի լիցի այնպի գործն
 կամաւոր . սակայն այս է տարբերութիւն 'ի մեջ
 երկոցունց . զի տղիտուին այն , որ ոչ է փա
 փաքեալ , թէ թեւացուցանէ զմեղք , զի առնէ սա
 կաւ կամաւոր . իսկ այն , որ է փափաքեալ ,
 զմեղք ոչ թէ թեւացուցանէ , այլ մանաւանդ ծան
 բացուցանէ . սոյ ասէ սքն թօմաս :

Դ. Ինդրեացես , մի թէ կարէ լինիլ անյաղթե
 լի տղիտուի ինչ բնական իրաւանց : Պատասխա
 նեմ նախ , թէ զընդհանուր սկզբունս բնական
 իրաւանց իւրաքանչիւր 'ի շարհ հասեալ որ ոչ
 անյաղթելի , և ոչ յաղթելի տղիտուի կարէ
 Բ Է 3 սն

անդիտանալ որպիսի են այսօրիկ : ॥ Պարտ է
զբարիս առնել : ॥ 'Ի շարեաց հեռանալ : ॥ Ոչ
ուժեք շնասել : ույ ասէ : սրն թոճաս , զի այսօ-
քիկ են ընդհանուր , և ըստ ինքեան յայտնի կա-
նանք մարդկային դործոց . և իւրաքանչիւր ու-
ժեք ընդարոյս և բնածին : Ուստի սրն օգոստի
նոս : ॥ Արդարուք ասէ , պարտ է կեալ , իւ-
րաքանչիւր ուժեք զիւրն հատուցել , և' . մի'
թէ ոչ խոստովանիս զայս ճշմարիտ վս իմ և
վս քո , և ամ կենդանեաց ընդարոյս լինիլ այ
սորիկ հասարակաբար :

Պատասխանեմ երկրորդ , անյաղթելի տգի-
տուին բնական իրաւանց որքան առ սկզբունս՝
որք են սակաւ ընդհանուրք , կարէ լինիլ յո-
մանս անձինս ևս 'ի բոլոր կեանս իւրեանց , զի
յայտնի իսկ է , թէ բազում ընդդիմութեք բնա-
կան իրաւանց են , զոր ոչ միայն տգէտք և ան-
ուսումք , այլ ևս իմաստունք և սրամիտք ոչկա-
րեն ճանաչել . վս զի և Կասիանոսն երբեմն ,
և այլ սր արք համարեցին , թէ օտուժին եր-
բեքնէ օրինաւոր առ 'ի շարժել զոք առ բարի
ինչ , կամ առ 'ի արդելուլ զչար ինչ . և այժմ
բազումք ևս իմաստուն անձինք , ևս և ամա-
բանք տարաձայնին 'ի մէջ ինքեանց վս պատ-
կանելոյ իրի ուրուք առ բնական իրաւունս .
զոր օրինակ , վս զաշնադրուե ինչ , մի' թէ է
տոհոսառուի կամ անարդար՝ թէ ոչ . և այսպէս
տարաձայնին 'ի մէջ իւրեանց , զի ոմանք բաց
ասեն , և ոմանք ստորասեն : Ուստի երևի ,
թէ 'ի յոմանս 'ի նոցանէ է անյաղթելի ադիտու
թին բնական իրաւանց :

Պ Ր Ա Կ Ո Ւ Թ Ն Ե Ր Ո Ր Դ :

Թէ ոյք են ներգործութիք մեղաց :

Ա. Երեք յստեմանիցն 'ի հասարակի թուին .
 Առաջինն է : զի վնասէ բնուէ մարդոյ ,
 և զբարին նր նուազէ : ուղ ասէ սքն թօմաս ,
 իսկ բարին բնուէ 'ի մարդն է եռակի . Առա-
 ջին բարին կայանայ յայնոսիկ , որք օրատկանին
 առ էութի բնուէ մարդոյ , որպիսի են սկզբունքն ,
 որովք ինչն բնուին կայանայ , և յատկուիքն , որք
 'ի նոցունց ծնանին . որպիսի են բանականութիւն ,
 և ազատութիւն , և " : Երկրորդ բարին է հակումն
 և յօժարութիւն այն , զոր 'ի բնուէ իւրմէ մարդն
 ըստորում է բանական ունի առ առաքինութիւն :
 իսկ երրորդ բարին է : պարզ և սկզբնական ար-
 դարուէ , որ անձամբ առաջին մարդոյն՝ առ ընդ-
 հանուր մարդկային բնութիւն ամանցեցաւ . և այ-
 նու իմացմամբ՝ բարի բնուէն կոչի : արդ յայտ-
 ցիկ երկց բնական բարուէց , ուղ ասէ սքն թօ-
 մաս՝ առաջինն ոչ իւրք թողք բառնալ , կամ նո-
 չապիկ կարէ : երրորդն՝ սկզբնական մեղք լի ամի
 բարձաւ : իսկ երկրորդն՝ այսինքն . հակումն
 այն մարդկային բնուէ առ առաքինութիւն , թէ-
 ոլէտ նուազի մեղք մինչ գործն նր առաքինութեն
 ներհակի . սակայն ոչ երբէք ըստ ամի բարձեալ
 լինի .

Բ. Երկրորդ ներգործութի մեղացն է . բիծ ինչ
 և տղեղութի , զոր հօգին 'ի ձեռն մեղաց ստանայ ,
 և որ զկնի անցանելոյ գործոյ նոյն մեղաց՝ 'ի հո-
 գին մնայ , ուղ ասէ սքն թօմաս , և հաստատի
 'ի սք գրոց , յետուայ 22 . || Մեղայք 'ի բելքե-
 դովք և մինչև ցայսօր բիծ անօրէնութե ձերոյ
 մնայ 'ի ձեզ : և երմյ . 2 . Առատաւորեցար յա-
 նօրէնութե ըստ առաջի իմ ասէ թր : և ևս երեւի
 'ի բաղում տեղիս սք գրոց , ուր կոչէ զմեղա-

և որս ապահանեալս , և սխիճ

Արդ բիծս այս մեղաց ըստ հաւանականորոյն վճարոց անճարանից ոչ այլ ինչ է , եթէ ոչ չարութիւն իսկ մեղաց . ըստորում ևս զկնի անցանելոյ գործոյն մեղաց համարի մնալ և տակել , մինչ չեապաշխարութի ջնջեացի . և բիծս այս ևս կոչի՝ ունակական մեղք , այնու զի իբրու ունակակա նաբար զկնի գործելոյ զմեղս մնայ 'ի հողին :

Ի. Եւ գիտելի է աստ , զի զունակութիւն զայն պարտէ տարբերել 'ի յախտաւոր ունակութի , կամ 'ի վատթար հակմանէ և յօժարութիւն յայն մանէ , որ վն կրկնելոյ զգործս մեղաց՝ ծնանի 'ի հողին , և 'ի նմա մնայ ևս զկնի ջնջելոյ բծոյն այնորիկ մեղաց՝ հեղմամբ շնորհաց , և միայն բարձեալ լինի 'ի ձեռն հակառակ և յաճախ կրկնեալ գործոցն առաքինուէ : Իսկ երրորդ ներգործութի մեղացն է պարտաւորութի պատժոյ . և ճշմարիտ է այս , զի պատիժ ինչ մեղաւոր մարդոյ յաստուծուստ սահմանեալ է : ոմ մտի՞ :

|| Եւ որ ասիցէ ցեղբայր իւր մորոս՝ պարտաւոր լիցի գեհնն հրոյն : և հռօմ՝ 2 . || Եւ զուրի և անձկութի ի վն ամ մարդոյ , որ գործէ զչարս : Արդ պատիժս այս մինչ արդարութի յոյ սահմանի՝ համարի , թէ մեղաւորն է արժանի այնմիկ , և վն մեղաց լինի պարտաւոր պատժոյն այնմիկ : Իբար ձեալ գիտելի է վն այսորիկ երրորդ ներգործութեանս մեղաց , զի ոչ ամ պատիժ է վն մեղաց , որով հետև բազումք յարդարոց իսկ և 'ի սքց՝ կրեցին և կրեն զնեղութիս և զվիշտս ոչ 'ի պատիժ մեղաց , այլ 'ի փորձութի , և 'ի կրթութի առաքինուէց , ոմ ոչ ոք կարէ ոչ ընդունիլ վն ամենամբ անճարնի կուսին , և վն այլ բնմսք :

Գիտելի է երկրորդ , զի թէպէտ մեղքն ըստ ինքեան և տեսականաբար առեալ՝ ոչ կարէ լինիլ պատիժ մեղաց , ոմ ուսուցանէ սքն թօմաս , սակայն կարէ լինիլ պատճաճամբ , որպէս անդ ուսուցանէ , այսինքն . 'ի պատճառս բարձման ներ-

Ներդործական ինչ շնորհաց , յորոց երբեմն անձ
զրկէ զմեղաւորն 'ի պատժել զառաջին մեղս նր .
ուստի հետեւի անկանխէն 'ի յայլ մեղս :

Գ. Խնդրեացես , թէ որքան պատիժ իւրաքան
չիւր ներդործական մեղաց յատուծուած սահ
մաննալ իցէ : Պատասխանեմ բաժանմամբ , զի
եթէ հարցցի վն մահացու մեղաց՝ ճշմարիտ է լն
հաւատոյ՝ զի կացուցեալ է յայ յաւիտենական
պատիժ մնասու և զգայուեց վն իւրաքանչիւր
մահացու մեղաց : վն պատժոյ մնասու , որէ
զրկուին յերանեալ տեսուէ , երևի մտթ'' 3. ուր
ասի , թէ դատապարտեալքն և լցեն 'ի խաւարն
արտաջին : Իսկ վն պատժոյ զգայուեց՝ երևի
իսկ անդ . մտթ'' 25. || Երթայք յինէն անիժ
եալք 'ի հուրն յաւիտենակն : Իսկ մինչ ասի , թէ
կացուցեալ է յաւիտենական պատիժ վն իւրա
քանչիւր մահացու մեղաց՝ զայս իմանալ պար
տիմք , ոպ ասէ ի զամպերդոս , ոչ միայն վն մշան
ջենականուէ պատժոցն այնոցիկ որքան առ տե
ուան , այլ ևս վն անիոսիստուէ պատժոցն այնո
ցիկ այնպէս զի զոչ ինչ փոփոխուան նոյ , և կամ
մխիթարուի 'ի պատիժս երբեք տեսանելոյ են
դատապարտեալքն . վն ասէ եսայի զլ' վեր
ջին : || Որքն նոյ ոչ մեռանի , և հուրն ոչ չիջանի :

Իսկ թէ անձ արդարուք վն միոյ և բոպեական
մահացու մեղաց զյաւիտենական պատիժս սահ
մանեաց՝ ասացաք ան հատոր . ընձեռ'' Գ. զլ'' Գ.
պրակ Գ. Եւ ևս ցուցանիլ կարէ այսու պատճա
ռաւ , վն զի դործն մեղաց թէպէտ ըստ ինքեան
խորհեցեալ՝ առ սակաւ ժամանակ տեւէ , սա
կայն լն ըզձի մեղաց՝ իբրու առ բոլոր յաւիտենա
կանուին ընդ արձակի , զի ոպ ասէ սքն թօմաս .
որ վն ժամանակաւոր զմայլման ժամանակաւոր
բարւոյ ուրուք թողու զյաւիտենական զմայ
լումն ծայրագոյն և յաւիտենական բարւոյն . ոպ
առնէ անձ որ , որ մահացորէն մեղանչէ , և ար
դարաբար համարի՝ թէ կամի զմայլիլ զժամանա
կաւոր

կաւոր բարեաւն այնուիկ 'ի յախտեան , և վնջ
զմեզս իւր , որ կայանայ 'ի յանկարգ զմայլումն
ժամանակաւոր բարւոյն այնորիկ' 'ի բոլոր յախ
տեանս կամի ընդարձակել : Ուստի լինի , զի մինչ
մեղքն այն ըստ ըղձի է յախտենական , արդար
իբրևամբն այ՝ յախտենական պատիժն արժա
նի համարեցի նմա :

Իսկ եթէ խնդիրս իմացի վն ներելի մեղաց՝
Ճշմարիտ է ըստ հաւատոյ , զի ներելի մեղքն 'ի
յամարդարս աստ՝ և 'ի հանդերձեալն ոչ արժա
նանայ յախտենկն պարժոց , այլ միայն ժամանա
կաւոր պատժոց . սոյ է ևս ըստ հաւատոյ , թէ
արդար անձինք մնացեալք 'ի յընկալեալ արդա
րութե մինչև 'ի մահ՝ ոչ զրկին 'ի յախտենական
երանուէ 'ի յախտեանս : Սակայն տարակուսու
թի՞ մեր է վն ներելի մեղացն այնոցիկ , որով
մեղաւորքն և դատապարտեալքն յաստի կենացս
չունեն . զի սթոս և այլք անարանք համարին ,
թէ պատիժն վն ներելի մեղացն այնոցիկ լինելոց
է միայն ժամանակաւոր . սակայն այլք հաւանա
կանադոյն ևս ընդ սրջն թօմայի ուսուցանեն ,
թէ պատիժն այն լինելոց է յախտենակն ոչ այն
բան վն ճանբուէ , որքան վն անթողանելի դոյոյ
ներելի մեղացն այնոցիկ , որով հետև 'ի դժոխս
ոչ է տեղի թողուէ և փրկուէ :

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Մ Ն :

Վասն դժոխոց և տանջանացն դատապար
տելոց :

Ըրդ որով հետև 'ի մէջ այլոց ներգործու
թեցն մեղաց ամենադառն և սարսա
փելին է պարտաւորութի յախտենական պատ
ժոց՝ ոչ լինի սուանց օգտի , զի բարւոք ևս նկա
տեցի ամենամեծ սաստկութի նր ընձեռել մեր
զտեղոյ և զորպիսուէ յախտենական պատժոցն
այնո

այնոցիկ կարճ 'ի կարճոյ , և թէ զինչ ըստ հա-
ւատոյ ուղղափառ վարդապետացն կանոնի իմա
նալ պարտ է մեկնել ,

Ասեմ նախ , թէ դժոխքն կամ բանան դա-
տապարտելոցն վասն սահմանեալ է տեղի ինչ
իրական , և մարմնաւոր 'ի ծոց երկրի հաստա-
տեալ , ուն ասէ սքն թ՛ամաս :

Եւ ճշմարտուիս այս հաստատի 'ի . ք դրոց'
Թուոց 10 . || Պատառեցաւ երկիր 'ի ներք յ ստից
նց , և իջին կենդանւոյն 'ի դժոխս և ծածկեաց
երկիր . և Յօբոյ 10 . դժոխքն կոչի || Երկիր
խաւարչաին , ծածկեալ 'ի մառախուղ մահու :

Հաստատի և ևս սոյն իսկ ճշմարտութիս 'ի
նախնի սք հարց , որք զայս ուսուցին . ուն թեր
թու լիանոս . || Ոչ հաւատամք ասէ , թէ դժոխքն
իցէ պարզ ինչ փոսորակ , և կամ խորափխ
ինչ 'ի ներքոյ երկրի . այլ է խորխորատ 'ի ծոց
երկրի , և 'ի միջին կէտ աշխարհի :

Եւ սքն Աթանաս , || Մեղաւորացն ասէ հո
գիքն , եղեալ են 'ի դժոխս , 'ի ներքոյ անկեր
կրի և ծովու , ը սաղմոսերդուին , || Եդին զնա
'ի դբի ներքնոււմ , 'ի խաւարի , և 'ի ստուերս
մահու : Եւ սքն կիւրեղ աղեքսանդրացին , յա
ղագս ելց հոգւոյն . || Յայնժամ ասէ . յաիշտա
կեն դեք զհոյին , և ածեն զնա 'ի խաւարչաինս
երկրի , և ամենապինդ ոտնակապօք պնդեալ 'ի
ստորին կողմն բանաին , 'ի պահպանութի դժո
խացն ընկենոււն :

Գարձեալ , թէ որքան , և որչափ ընդարձակ
նահանգք . և լայնատարած անապատ տեղիք 'ի
սիրտ երկրի դտանին՝ կարեմք իմանալ յայտնա-
պէս 'ի յերկրադրուեցն երկրաչափից , զի ըստ
հասարակ և հաւանական բանից նց 'ի մակե-
րևութէ երկրի մինչև առ միջակէտ նր են առ
ւելքան զերեք հազար և զհինգ հարիւր մղոնս ,
որք առնեն զկիսադունդն բոլոր շրջանակի նորա
Ուստի ըստ թուաբանիցն բանից անչափ են բա

ցատուհիքն, որք ՚ի փոր երկրի են տարածեալք, յօրս զանազան և երկայնատարած ընդունարանք և տեղք գտանին, թէ վն արդարոց առ ՚ի բաւել առ Տմկ ինչ, թէ վասն դատապարտելոց ՚ի յաւիտենական տանջանս: և թէ վասն ՚ի լիմպոս մանկանց՝ որք ՚ի կենացս աստի սկզբնական մեղք չունեցին:

Ասեմ երկրորդ, թէ գտանի ՚ի դժոխս ճշմարտիւ մարմնաւոր հուր, որ զհողի և զմարմին դատապարտելոցն այրէ ՚ի յաւիտեան, ուն ասէ սքն թօմաս, և հաստատի ՚ի սք դրոց. էսյ. 33.

|| Մերժեցան ՚ի սիօնէ անօրէնք, դողումն կալցի զամբարիշտս, խակ օրդ, ս կարասցէ ՚ի ձէնջ բնակիլ ՚ի հուր կերիչ, և ս բնակեցի ՚ի յաւիտենական բոց. և յայտն՝. 23. դժոխքն կոչի:

|| Լիճ այրեցեալ հրով և ծծմբով:

Եւ զայն խակ ուսուցին սք հալքն. ուն սքն կիպրիանոս, || Անմահ ասէ սղորմելիքն ապրեսցին ՚ի հնոցին, և անսպառ բոցն տոչարեացէ զմերկ մարմին նյ. Հրդեհեցի ծիրանազգեաց մեծատունն, և ոչ օք կարկառեացէ զկաթիլս ջրոյ պառակեալ լիզուի, ՚ի յատուկ ճարոյ իւրեանց տասրակեալ վալաշտաքն եռացին, և ՚ի մջ բոցարձակ կաթսայից ողորմելի մարմենքն հրդեհեցին: Եւ սուրբն զլիզոր մեծն. || Չի ուն ասէ, զոչարձս առնէ զընարեալս երանութի, հաւատալ պարտ է և մեզ, զի և այնպէս զդատու պարտեալն յօրէ չունան նյ հուրն բոցակեղարացէ:

7. Ասեմ երրորդ, թէ բաց ՚ի զգայական տանջանաց հրոյն, կրեն և զայլ բազմազան տանջանս դատապարտեալքն. ուն սաղմոս 10. || Տեղացի ՚ի վր մեղաւորաց որոգայթ, հուր և ծծումբ, այս միրիկ բաժին բաժակի նյ: և յոբայ. 24. || Ի ջրոյ ձեան առ խստագոյն տասն անցցին. այս է, (ուն մեկնէ Հուկոն կարտինալն) ամբարիշտք ՚ի դժոխս ՚ի տանջանաց. առ տանջանս

Չանս անցցին , Եւ յայտն . 18 . || 'Ի միում աւուր եկեացեն 'ի վի՛ր գի՛ր հարուածք . մահ , սուգ եւ սով . և'' :

Չայն իսկ հաստատեն և ևս սք հարքն , ուղ սքն բարսեղ . 'ի մեկնութի սաղմ . 11 . ուր ասէ , թէ զկնի վերջին դատաստանի 'ի գծոխս եղիցի || Անթիւ ցեղ թիւնաւոր և գիշատող որդանց , և թէպէտ ճաշակեն , բայց ոչ երբէք յազին . անհանդուրժելի է ցաւ խայժուածոց նց : Եւ սքն կխրեղ || Անդ է ասէ բանտն խաւարամած ամենաթշուառ ծառայիցն կապանքն անխղելի . և ոչ է զօրութի որ զշղթայս խորտակել կարասցէ . Պաշտօնեայքն գաղան և գծնեայ . խարաղանքն անծախ . քերիչն ամենապինտ և անբեկանելի . տանջանքն անհանդուրժելի . ձիւթն թանձրամուխ և ամենադոջ՝ ծծումքն ժահահոտ . անկողինն ամենաբորբ . փայտագէզն անչէջ . որդունքն թիւնաւոր և ժահահոտ . և'' : Եւ սքն օգոտսինոս աւ յաւիանոս . || Վայ նց ասէ , որոց պատրաստի ցաւ որդանցն . բոց բորբոքման , ծարաւն անզգլանալի - բոց և կրճտումն ստամանց , արտասուք աչաց . և խաւարն արտաքին և'' . իսկ 'ի բանս չորից եղանակացն պենտէկոսաէի ասէ . || Յիշեալ զայստսիկ . և զհուրն զայն գեհեհոյն , այնոցիկ , որք զքեզ զբոգունն : այս է , ցանկունց և ըզձիցն բոցոյն հակադրեալ . զի հուրս այս , որ 'ի ներկայ կեանս է՝ ծախէ զամ զոր ընդունի . իսկ այն զոր ընկալնաւ , միշտ ամբողջ պահէ : և վայ և անժիջանելի ասի , ոչ զի ինքն ոչ շիջանի , այլ զոր և ընդունի՝ ոչ ծախէ , և ոչ շիջուցանէ :



Գ Լ Ո Ի Խ Ե Ր Ր Ո Ր Դ :

Յաղագս օրինաց :

Եղի ուր ասացաք յանցեալ դուռսն՝ մեզքն ոչ այլ ինչ է, եթէ ոչ զանցստուռն օրինաց, և վնջ ՚ի կատարեալ ծանօթութի մեղաց՝ ինդրի ևս ճանաչուան օրինաց : Ուստի ասեառաքեալն հռօմ՝ 3. Քանզի օրինօքն է գլուտութի մեղաց :

Պ Ր Ա Կ Ա Ռ Ա Ձ Ի Ն :

Թէ զինչ իմանալ պարտիմք անուամբ օրինաց՝ և ՚ի քանիս բաժանի օրէնքն :

Արդ օրէնքն անյատկապէս առեալ նշանակէ զերաքանչիւր կանոն, և զկերպ գործոցն, որով իմացմամբ քերականացն, և այլոց արհեստից կանոնքն կոչին օրէնք : և ևս օրէնք կոչին բանաւորացն կանոնք, թէ ևս իցեն անարդար, ըստ այնմ Եւրոպ 10. || Վայնց, որք դնեն զօրէնս անիրաւս : Իսկ եթէ յատկապէս և նեղապէս առեալ լիցի, ըստ մտաց սբյն թօմայի, նշանակէ ուղիղ կանոն և չափ մարդկային գործոց : որով կամ ուղղեմք առ ՚ի գործել ղբարին, կամ հրաժարիմք ՚ի գործելոյ ղչարն :

Արդ այսու իմացուածով իմացեալ՝ բաժանի օրէնքն ըստ սբյն թօմայի. ՚ի յաւիտենականն, ՚ի բնականն, և ՚ի դրականն : և Գրականն բաժանի ՚ի յածային դրական օրէնս, և ՚ի մարդկային դրական օրէնս : և մարդկայն դրական օրէնքս ոյս՝ բաժանի ՚ի յեկեղեցական և ՚ի քաղա

ղա

ղաքական օրէնս , ունի ևս անձային դրական օրինաց ոմն է հին , կամ մոլորական , և ոմն նոր , որ օրէնք աւետարանական , կամ քնի կոչի : զի 'ի նմանէ ունի 'ի գերադոյն օրինադրէ տուաւ , և հրապարակեցաւ : Չյախտենական և դքնական օրինացն ընձեռեալ մեր աստ՝ զգրական անձային , և վարդային օրինացն վարդապետեացոք 'ի հետեւեալն :

Բ . Արդ յախտենական օրէնքն , ունի ասէ սքն թօմաս , է բան անձային իմաստուէ , ըստ որում անձ գործոց և շարժմանց է ուղղիչ . զի ունի 'ի յիւրաքանչիւր արհեստաւորս կանխէ բան այնոցիկ , որք 'ի ձեռն արհեստի ընկն , այսպէս ևս 'ի յիւրաքանչիւր կառավարիչս կանխել պարտ է ուղղիչ բանն այնոցիկ՝ զորս ստորադրեալքն կառավարուէ նք՝ առնել , կամ ոչ առնել պարտին : Իսկ անձ ունի իմաստութիւն իւրով արարիչ է անձիրաց , այսպէս ևս է կառավարիչ , Ուստի իմաստուին այն՝ ըստ որում անձան անձինչ ստեղծաւ , ունի զբան օրինակի և նախատպի . Իսկ ըստ որում անձան անձին ուղղին առ պարտաւորն վախճան , ունի զբան յախտենական օրինաց :

Իսկ մինչ յախտենական օրէնքս այս զանձստեղծուածս ուղղէ ըստ պատկանաւորութե բնուէնց՝ վնայ այլ կերպիւն անբանիցն , և այլ կերպիւն բանականացն ծանուցեալ յառաջադրի , զի անբանիցն յառաջադրի 'ի ձեռն կատարման և իբր թէ տպաւորման կարգին այնորիկ , որ 'ի յախտենական օրինացն յառաջադայի : Իսկ բանականացն իբր 'ի ձեռն ճառագայթից անձին իմաստուէ , որ պայծառացուցանէ զբանական միտս , և 'ի գործս իւր ուղղէ ըստ սաղմոսերդուին գաւթի , 4 . || Նշանեցաւ առ մեղ լոյս երեսաց բոց մը : Ուստի ասէ սքն օգոստինոս : || Ծանօթութի յախտենական օրինացն տպաւորեալ է յիւրաքանչիւր մարդիկ :

Եւ թէ որքան է զօրութի և կարողութի յախտենացն

նահան օրինացն , կամ աստուտ երևի , զի ամ
 և խրոջքանչիւր ստեղծուածք՝ ըստ ամի հնազան
 դին նմա : արդ զն անբանիցն երևի 'ի սաղմոս
 148 . || Հուր և կարկուտ , ձիւն և սառն , կողմ
 մրրիկ , սք առնեն զբան նր : և սաղմոս 153 :
 || Հրամանի բուս մնայ տիէն զի ամբն ծառայք
 բո են : և զն բանական ստեղծուածոցն երևի .
 զի կամ ըստ ուղիղ բանի առնեն , և յայնժամ
 յաւիտենական օրինաց կանոնի հետեւին , և կամ
 'ի յուղիղ բանէ մուրին , և յայնժամ որքան պս
 կասին 'ի յաւիտենական օրինաց 'ի կողմանէ դոր
 ծոցն , ուն ասէ սքն թօմաս այնքան լցեալ լիւին
 'ի կողմանէ կրից , այսինքն , ըստորում այնքան
 յաւիտենական օրէնքն ցուցանէ : զն նոյն , որքան
 պակասին առնել զայն որ պատկանի նայնոյ իսկ
 օրինաց , որով իմացմամբ բարւոյք և ս ասէ սքն
 օգոստինոս , || Հրաման ետուր նոր , և է այն
 սէս , զի ամ անկարգ հոգի լիցի պատիժ խրոյ
 ինքեան :

Դ. Բնական օրէնքն ուն ասէ սքն թօմաս , է
 ինքն բնական դատողութիւն , կամ արդ ուն բա
 նին , որով ի ձեռն լուսայ , որ յայ իբր 'ի հե
 ղինանէ բնուէ տուեալ է , և 'ի յաւիտենական
 օրինացն նր ճանաչեմք , թէ զայն ինչ առնել
 պարտ է , որ ուղիղ և արդարն է . և հակադար
 ձաբար փոխչիլ պարտ է յայնմանէ որ ոչ ունի
 զուղղութի և զարդարութի : արդ 'ի յուղիղ ճանա
 չումն բնական օրինացն գիտելի է նախ : զի բնա
 կան դատողութիւն այն , ունի զբան օրինաց , ոչ
 զի է 'ի մէնջ , այլ զի է 'ի մեղ յամային օրինացն
 տպաորութի : ուստի յայնմայէս երևի , թէ
 բնոյ էր այսպիսի օրէնքս 'ի թա դաւորէն
 դաւթի , կոչի լոյս երեսաց , այսինքն , իմաս
 տութի ամային նշանեցաւ առ մեղ . զի զամ զօրութի
 և զլոյս խրոյ ամային իմաստուէ , կամ յաւի
 տենական օրինաց իբր ճառ աղայթիւք բնոյ ունի :

Գիտելի է երկրորդ , զի բնական օրէնքն , ուն
 ինքն

ասէ սքն թօմաս , է մի և նոյն առ ամ մարդիկս
որքան առ առաջին , և ընդ հանուր սկզբունս ,
թէ քստ ծանօթուէ , և թէ ըստ ուղղուէ , այ-
սինքն , ամ մարդկ այնու , զի են բանականք՝
զընդ հանուր սկզբունս բնական օրինացն ճանա-
չեն , և իբրև արդար և ուղիղ ցուցանեն , յի
պարտ է առնել զբարիս , պարտէ փախչիլ
ի չարաց . պարտ է ազդման բանին հետևիլ ,
և այլն : Իսկ որքան առ եզրակացունսն , որք ՚ի
նոցունց բղխին , պատահի բազմիցս պակասիլ բազ-
մաց ՚ի յուղիղ բանէ վս չար սովորուէ մեղաց .
և անտուտ ծնեալ խաւարմանն իմացկնուեն . և
այսոյ ՚ի բնկն օրինացն մոլորիլ : Ուստի տեսանեմք
առ բիւմ հեթանոսս երբեմն զհապաշտութիս և
զայլ ապստամբութիս ներհակս բնական օրինաց .
սակայն հատատեալս և ընկալեալս ՚ի նոցունց ,
զորոց ասէ առ արեալն հօսմ՝ 1 . || Իսաւարեցան
անմտութի սիրտք նոյ , և փոխեցին զփառս անեղ
ծին այ , ՚ի նմանութի պատկերի եղծանելոյ մար-
դոյ , և թռչնոց և չարքոտանեաց և այլն :

Գ. Գիտելի երբոք , զի բնական օրէնքն պար-
տաւորէ զամ մարդիկ ՚ի ժամու յայնմիկ , յո-
րում լուսաւորի բանկնսն նոյ . և որով զբարին և
զչարն կարեն զանազանել , և կիրառուիս այս բա-
նականութե է իբր ծանօթութի բնակն օրինացն , և
այսու իմացմամբ պարտի իմացեալ լինիլ բան ա-
ռաքելոյն հօսմ՝ 7 . || Եւ ես առանց օրինացն
երբեմն էի կենդանի , այլ իբրև եհաս յիս պա-
տուիրանն՝ մեղքն կենդանացան : այսպէս և ս
մեկնէ սքն Բարսեղ ՚ի մեկնութի սաղմոսին . և
սքն Հերոնիմոս՝ ՚ի թուղթն առ Աղկասիայ ուր
ասէ : || Մինչ եհաս պատուիրանն , այս է , ժա-
մանակն իմացման ցանկուէ բարւոյ , և հրաժար
ման ՚ի չարէ , յայնժամ մեղքն սկսան կենդանա-
նալ . և մարդն լինիլ պարտաւոր մեղաց :

Գիտելի է չորորդ , զի բնական օրէնքն այն-
պէս պարտաւորէ զամ մարդիկ . մինչ զի յոչ իմիք

սրտոսհման՝ ՚ի պարտաւորուէ՛ պահպանուե՛ նր կարեն՝ զերժանիլ : և նախ ճշմարիտ է , զի մարդ հային ի շխանուքն՝ ոչ կարէ բարձեալ լինիլ պարտաւորութիւն այն , մինչ բնական օրէնքն՝ ՚ի յաւիտենական օրինացն այ հասանի , և զամ զօրութիւր՝ ՚ի նմանէ՛ ունի , ունի ասացաւ ՚ի վերոյ : Ուստի լաքտանցիոս ասէ , || Ոչ է՛ ումք օրէն յաւելուլ ՚ի յօրէնս յայս , այս է , ՚ի բնականս , և ոչ պակասել ՚ի սմանէ՛ . զի ոչ ՚ի ձեռն ձերակուտից , և ոչ ՚ի ձեռն ժողովրդեան՝ կարեմք ազատիլ յօրինացս աստի :

Ե. Իսկ որ պատկանի առ ամային ի շխանութիւն , թէպէտ ոմանք ամաբանք համարին , թէ նովակարէ տնօրինիլ ՚ի բնական օրէնս , սակայն հաւանականադոյն ևս է բաննց , որք ասեն , թէ այս ըստ ամիրնդ զիմանայ ամային իմաստուէն , և վնջ ոչ կարէ լինիլ , ունի ասէ սքն թօմաս , զի բնական օրէնքն ըստ սքն օգոստինոսի ոչ այլ ինչ է , եթէ ոչ տպաւորութի յաւիտենական օրինացն , և անսոսոսոս բանին ամային իմաստուէ՛ ՚ի միտս մարդոյ , իսկ ամ , ունի ասէ առաքեալն 2. տիմո՛ 2 .

Ուրանայ զանձն իւր ոչ կարէ :

Ասացես , թէ ելից 12. հրամայեաց ամ իսլթւոյ , զի ընկալեալ զինչս եգիպտացաւոցն ՚ի փոխ ակամայ նց՝ առ ինքեանս ունիցին , և ընդ իւրեանս տարցին . և որով տնօրինեաց բնական օրինացն , որ զգողութիւն արդեւու :

Պատասխանեմ , թէ յայնմիկ պատահման զոչինչ հրամայեաց ամ ընդդէմ բնական օրինացն . զի օրէնքն այն արդեւու զանարդար բարձումն ընչիցն այլոց . իսկ իրքն այնոքիկ , զորս բարձին ինչիքն՝ հրամանաւն այ՝ ոչ ևս էին այնու հետե ինչ այլոց , այլ իսրայելացւոց՝ վն վեհադոյն տերուէն այ , զոր ունի ՚ի վր ամ ստեղծուածոց , որով տէրութիւն իրացն եգիպտացւոց՝ առ իսրայելացիսն էանց . և այսպէս ամ ոչ տնօրինեաց զբնական օրէնս , այլ փոխեաց զառարկայն գործոյն այնս

այնորիկ , զօր հրամայեաց , և արար զայն այնու
պատճառ աւ պարկեշտ , և օրինաւոր :

Պ Ր Ա Կ Ե Ր Կ Ր Ո Ր Դ :

Թէ զինչ է մարդկային օրէնքն , և շուրջ
զորով նիւթով շրջաբերիլ կարէ :

Ս՝ արդկային օրէնքն ըստ սբյն թօմայի , ոչ
այլ ինչ է . եթէ ոչ կարգադրուի ինչ
բանին առ հասարակ բարին . հրապարակեալ
յայնմանէ , որ նախագահն է հասարակուե , վս
պարտանդելոյ զհպատակեալսն :

Ասի նախ կարգադրուի բանին , զի դրական
օրէնքն եղեալ ինի ըստ հրամայական կերպի .
իսկ հրամայելն ըստ սբյն թօմայի , է գործ բա
նին . ստկայն հանդերձ գործոնն կամաց :

Ասի երկրորդ առ հասարակ բարին . զի ՚ի բան
օրինաց ինդրի . զի մի՛ գիցի միոյ կամ երկուց
անձանց . այլ բոլոր ինչ հասարակուե . զի օրէնքն
ոչ ՚ի դիւրութի յատուկ անձին ումք . այլ ՚ի
յօգուտ հասարակուեն ամ պարտի ինիլ . Աս
տի որպէս ասէ սուրբն թօմոս տանուտէրն
կարէ սահմանել զհրամանս կամ զկանոնս ինչ ,
բայց ոչ կարէ հաստատել զօրէնս : Ասի երրորդ
զմարդկային օրէնս պարտի հաստատել նա , որ
հասարակուեն նախագահ է , ըստ բանի առ սքե
լոյն . հռօմ՝ 13 . || Ա՛մ անձն՝ որ ընդ իշխանու
թի է , ՚ի հնազանդուե կացցէ , քանզի ոչ ուս
տեքէ իշխանութի , եթէ ոչ յսյ . Եւ ոսլ ՚ի բա
նիցս յայսոցիկ երևի , թէ ընդ իշխանութի ե
ղեալքն պարտին հնազանդիլ մեծաւորաց բար
եանց , այսպէս և ս բարւոր ՚ի բանիցս երևի , թէ
մեծաւորքն այնորիկ ունին զիշխանութի տալ
զօրէնս ընդ իշխանութի եղելոյն :

Ասի չորրորդ , մարդկային օրէնքն պարտի հրա
պարտելիլ . զի յայնժամ օրէնքն հաստատին . յոր

Ժամ հրապրելին . քանզի սոյ ասէ սքն թօմաս . ॥
 Օրէնքն եղեալ լինի 'ի կերպ կանոնի և շափու ,
 իսկ կանոնն և շափն եղեալ լինի առ այս , զի 'ի
 կերարկցի առ այնտիկ , որք կանոնաւ օրինն և շա
 փինն , ուստի առ այս , զի նա զգորու ի ունիցի
 պարտաւ օրելոյ պարտի զի 'ի կիր արկցի առ մար
 դիկ , որք ըստ այնմ կարգաւ օրել պարտին , և
 այսպիսի կիրարկուս լինի մինչ 'ի ծանօթութեց
 ածինոյն իսկ հրապարակմամբ :

Ասի հինգ երօրդ , թէ օրէնքն պարտի սահմա
 նիլ վս պարտաւ օրելոյ : Եւ նախ , զի մեծա
 ւորք հասարակուեն ունին զիշխանաւ զընդիշխա
 նու թէ եղեալսն պարտաւ օրելոյ . հաստատի 'ի
 վերոյ ասացելոցս , և ևս 'ի ժզ' կոտանախնեայ ,
 յորում հակառակն վճիռ Աիկէփայ , և Հուս
 Յօհաննու դատապարտեալ հեբքեցաւ իբր զհե
 բնախոսական . իսկ թէ ևս խնդրի 'ի կողմանէ
 օրինադրին դիտաւ որու ի պարտաւ օրելոյ , երևի
 անառւստ , զի եթէ օրէնքն ոչ պարտաւ օրէր ,
 ոչ ևս կարէր ասիլ օրէ՞ք այլ մանաւանդ խնդ ,
 զի օրէնքն այնու մանաւանդ 'ի խնդ զանազա
 նի . զի խորհուրդն ազատ թողու զկաման առնե
 լոյ զայն , զոր խրատէ . իսկ օրէնքն , առ 'ի առ
 նեւ զայն , որ նովաւ հրամայի , պարտաւ օրէ .
 Ուստի սքն հերժնիմաս . ॥ Այն որ խնդ վատա
 ջադրի , է 'ի կամս մատուցանողին . իսկ այն որ
 հրամայի , պարտաւ օրէ 'ի կատարել :

Յաւել սքն թօմաս և զայլ թէութա ինչ մարդ
 կային օրինաց . այս է , զի իցէ արդար . պար
 կելտ , կարելի . տեղոյ և թմիլի սլատկան . վս
 օգտի հասարակուեն սահմանեալ . և'' , որք 'ի
 ներքոյ ասացելոց բարւոք ևս իմացին :

Է իսկ որ պատկանի 'ի նի թ օրինաց . ստոյգ
 իմն է , զի մարդկային օրէնքն ոչ հրամայէ զքճ
 ինչ , որ արդէլեալ իցէ բնական կամ դրական
 անձային օրինօք . և զովնչ կարէ արդելուլ որ
 բնական կամ անձային դրական օրինօք հրամայեալ
 է ,

է , զիմարդկային օրէնքն ոչ պարտի բնական օրի
նացն հակառակիլ . և կամ գերազանցել զնորք
ոչ կարէ : մինչ բնական օրէնքն է անլուծանելի .
ոնչ յասացելոցս 'ի վերոյ երևի , ևս առաւել և
անձային օրինացն . վն զի ոնչ իշխանն առաքելոց
սքն Պետրոս գործոց . 3 . ստէ . || Հնազանդիլ
պարտ է այ առաւել , քան մարդկան , Աստի
սքն օրստ' : || 'Ի Ժմկար օրէնս այս ստէ , ոչ ինչ
է արդար և օրինաւոր , որ ոչ իցէ հասեալ առ
մարդիկ 'ի յաւիտենկն օրինացս յայսմանէ :

Դարձեւ մարդկային օրէնքն կարէ արդելուլ
զամ արտաքին գործս , որք չիցեն բնական կամ
անձային օրինօքն հրամայեալ . Կարէ և ևս հրա
մայել զամ արտաքին գործս , որք բնական կամ
անձային օրինօքն չիցեն արդելեալ . Աստի քս
ժրն մեր . մտ' 23 . || Չամ ինչ ստէ , զոր ասիցեն
ձեզ' արարէք և պահեցէք . սակայն և այս պար
տի իմացեալ լինիլ այսոն . միայն թէ արդելու մն ,
կամ հրամանն այն լիցի պարկէ շա , արդար . կա
 պահպանութի իւր զոչ ոք պարտաւորէր , սա
 կայն զպահպանողսն իւր , ոչ առնէր պարտաւոր
 յանցանաց : Որև յաւել , թէ այս ամենաբաղդը
 նախախնամութիւնն սոյ եղև , զի կամ մինչ հրէ այքն
 հզօրանալ տուեալէին օրինացն իւրեանց արարող
 զուէց՝ զիւրաւ առ հաւատն քի դարձցին , և կմ
 ևս զի մի հին օրէնքն այն իբրև զշար և աւելոր
 դասալաւ , և արհամարհեալ քիւ երևէր , և զի
 պատուով ինչ թաղեալ լինէր :

Ե. Եւ թէ երբ արդեօք , ոչ միայն մեռեալ ,
 այլև մահաբեր լինիլ սկսաւ հին օրէնքն յայտ
 նապէս ոչ երևի , սակայն ճշմարիտ է , զի ՚ի բա
 զում դարուց հետեւ պահպանութի հին օրինացն
 է մահաբեր և ապօրինաւոր . ոսկ ասեն սքն Հե
 բոնիմոս , և սքն օգոստ՝ և ոչ միայն ՚ի ժամա
 նակս նոյ , այլ յառաջ քան զժամանակս նոյ , վնոյ
 սքն իդնատիոս աշակերտ և ժամանակակից ա
 ռաքելոցն , ՚ի ք թուղթն , ॥ Եւ թէ ոք ասէ ,
 ընդ հրէայսն կատարէ զգատիկն . կամ զօրինակ
 տօնախմբուէ նոյ ընդունի , բաժանորդ է նոյ ,
 որք զմրն սղանիս , և զառաքեալս նոյ : Ուստի
 երևի , թէ հաւանական իսկ է քան սուտարեզի ,
 որ ասէ , թէ ՚ի կենդանութե իսկ առաքելոցն
 իշխանաց , սկսաւ մահաբեր լինիլ մովսիսական
 օրինացն պահպանութի . սրով հետև ՚ի միոյ
 կողմանէ աւետարանական օրէնքն դրեթէ ընդ
 ամ տիեզերս աշխարհի սկսեալ էր տարածիլ և
 մանաւանդ ամ հրէիցն յատկապէս , որք էինն
 ցրուեալք ընդ ամ երկիր ծանուցաւ , և ՚ի
 միւսոյ կողմանէ , վայելչուչ իմն էր քրիստոնէա
 կան կրօնի , և հաւատոյ դաւանութե . ասել
 և ուսուցանել և ևս հաստատել առաքելոցն թէ
 հին օրէնքն մեռեալ և մահաբեր է :



Գ Լ Ո Ի Խ Չ Ո Ր Ո Ր Դ .

Յաղագրս Աճային օրինացն , կամ տասնա
բանեայ պատուիրանաց :

Թ՛ **Տ** ասնաբանեայ օրէնքն է : Թ՛ ապին դրական
 օրէնքն , որ պարունակէ զտասն պատու
 իրանս . որոց առաջին երեքն առ Թ՛ պատկա
 նին . իսկ եօթն մնացեալքն դիտեն առ ընկերն :
 Եւ յառաջ քան զմուտ մեր 'ի մեկնութի տաս
 նաբանեայ օրինաց՝ զերկու ինչ պարտիմք դի
 տել : Առաջինն է , զի Թ՛ բարոյական պատու
 րանք (Թ՛ առէ սքն (թօմաս) պարունակին 'ի տաս
 նաբանեայ օրէնս . կամ Թ՛ սկզբունք 'ի յեղբա
 կացութիս իւրեանց : Իսկ 'ի նոյնն պարունակին
 առաջին սկզբունք հաւատոյ , և ևս առաջին սկզ
 բունք բնական օրինաց . որպէս , ॥ Մի
 է Թ՛ , և ընկերն է սիրելի . դարձեալ , ॥ Չոր
 ոչ կամիս , թէ արասցեն քեզ մարդի . մի՛ արաս
 ցես և դու նոցա : Կամ Թ՛ եղբակացութիք ,
 որք յառաջին սկզբանցն պարզասէս և մերձա
 բար բղխին . որպիսի են Թ՛ սեւասկաւոր պատու
 իրանքն պարունակեալք 'ի տասնաբանեայ
 օրէնս . Կամ Թ՛ երկրորդին եղբակացութիք ,
 յառաջագայեալ յառաջին եղբակացուեցն յայնո
 ցիկ : որպիսի են Թ՛ . որք 'ի տասնաբանեայ
 օրինացն պատուիրանաց ծաղին . կամ որք առ
 այն ածին . զորոց ասացուք 'ի ներքոյ 'ի մեկնու
 թի իւրաքանչիւր պատուիրանաց :

Իսկ ըստ արժանւոյն կարեմք ասել , թէ տաս
 նաբանեայ օրէնքն է բարբառակ համառօտութի
 և ժողով Թ՛ օրինաց . Թ՛ առէ սքն օգոստինոս
 յորում , Թ՛ որք առ բարս բրիստոնէի պատկա
 նին են Թ՛ ժողով Կողոնկայ . այնպէս զի , էթէ
 զպա

զպատուհիրանս նր բարւոյք խնայողք , բաւական
խիկ են 'ի յուզողութի արտաքին և ներքին մարդ
կային դործոց :

Երկրորդն է , զի զպատուհիրանսն զայնոսիկ տաս
նաբանեաց օրինաց , քսն արն իբրև օրինազիր
ոչ միայն նորոգեաց , և հրատարակեաց , այլ 'ի
բազում տեղիս սբջ աւետարանի երևի , մանա
ւանդ 'ի մտ' 7. և 19. մրկս . 10. և զւկս . 18.
այլևս մեկնեալ ընդարձակեաց ըստորում առա
ւել կատարելութի աւետարանական օրինացն պա
հանջէր . և թէպէտ 'ի բազում տեղիս սբ աւե
տարանի կարեմք տեսանել զայս . սակայն մա
նաւանդ շաւղոյն ևս 'ի բանն , զոր առաջն
աշակերտացն 'ի լեառն խօսեցաւ , մտ' 5. 6. և
7. 'ի 7. յորում ըստ սբջն օգոստ' 'ի բանն ան աւ
լեառն . և ըստ սբջն թօմայի , զայն ամ պարու
նակեաց , որ խնդրի առ կատարեալ քրիստո
նէին կենաց , արտաքին և ներքին դործս :

Արդ՝ պարտ է մեզ աստ 'ի յառաջագրեալս
ընձեռեւ և մեկնել զիւրաքանչիւր պատուհիրանս
տասնաբանեաց օրինացն 'ի մասնաւորի , ըստ
որում քսն արն մեր մեկնեալ ընդարձակեաց
յաւետարանի անդ , ըստ առաւել ընդունելի
սբջ հարցն և այլ հաւանականագոյն հեղինակ
ացն վզսլուէ , պահելով միշտ զհամառօտութի
զոր խոստումն մեր պահանջէ . Եւ զի զիւրու
խիկ կարացողք յայանել , զերկու ինչ պարտ է
մեզ յիւրաքանչիւր պատուհիրանս քննել : Առա
ջինն է , թէ զինչ նովաւ պատուիրի , կամ
արդեւեալ լինի : Երկրորդն՝ որքան կերպիւ
ոք մեղանչել կարէ ընդդէմ այնմիկ . և վնջ
զիւրաքանչիւր պրակս 'ի բազում հատուածս
բաժանեացուք :

Պ Ր Ա Կ Ա Ռ Ա Ջ Ի Ն :

Մեկնեցուք զԱռաջին պատուիրանն տասնաբանեայ օրինայ :

Ես եմ ար ամբոս . և՛

Մե՛ ունիցիս զայլ ամս առաջի իմ՝ .

ամ. Առաջին պատուիրանս այս տասնաբանեայ
 օրինացն, կրկինէ, ուղ ասէ հոսմ՝
 ուսու՝ մասն. 3. դլ՝ 2. Չի՛ ՚ի միայ կողմանէ
 զինն հրամայէ, և ՚ի միւսոյ կողմանէ զինն ար
 դէլու . և այս է իմացուած նր . ուղ անդ ստի :
 || Չիս ուղ զամ ճշտ պաշտեան . և օտար ամոց մի՛
 մատուցես զպաշտօն . Որով երևի, թէ ըստ
 մասին է ստորասական . և ըստ մասին արդեւա
 կան : Արդ այս է տարբերութի՛ն ստորասակն
 և արդեւական պատուիրանաց, զի ստորասա
 կանքն, թէ պէտ պարտաւորեն միշտ, բայց ոչ
 ՚ի միշտ, ուղ ասեն Աճաբանք, իսկ արդեւա
 կանքն միշտ և ՚ի միշտ պարտաւորեն, այս է,
 ուղ մեկնէ սքն թօմաս . զի թէ պէտ ստորասա
 կան պատուիրանքն միշտ ունին զզօրութի պար
 տաւորելոյ . սակայն ոչ պարտաւորեն առ ՚ի կիր
 արկանել անմիջապէս և հետեւաբար զգործս
 զայնուսիկ : որք նովաւ հրամային . այլ ըստ տեղ
 ւոյ և ժամանակի, և ըստ այլ պատկանաւորն
 պարագայից . ըստ որոց պարտի միկային գործն
 շափաւորիլ զի լիցի գործ առաքինութն : իսկ
 արդեւականքն յամ ուրեք և յամ տեղ ոչ պար
 տաւորեն : Եւ թէ պէտ առաջին տասնաբա
 նեայ օրինացս պատուիրան ըստ որում ստորա
 սական, մանաւանդ պատկանի գործոցն կրօնի,
 որովք պարտաւորն պաշտօն, այ տուեալ լինի .
 սակայն առ այն՝ գործք անաբանական առաքի
 նութեցն ամիլ պարտին, ուղ ասէ հոսմ՝ ու

սուցարանն : որով իմացմամբ ասէ սքն օգոստինոս , թէ || Հաւատով , յուսով , և սիրով զամ սաշտել պարտ է : և ստի հետեւի , թէ առաւել իմացումն առաջին պատուիրանիս այսորիկ խնդրի . զի մեկնեացուք : թէ զինչ վն հաւատոյ յուսոյ , և սիրոյ . և կամ զինչ վն կրօնի 'ի սմին մեզ պատուիրեալ կամ արդեւել լինի :

ՀԱՏՈՒ ԱԾ ԱՌ ԱԶԻՆ :

Թէ զինչ վն հաւատոյ յառաջին տասնաբանեաց օրէնս հրամայեալ , կամ արգելեալ լինի :

Ա ասն տուաբինու թ են հաւատոյ , և յատուկ զործոց նր . և վն պարտաւորութն , սք պատկանի իւրաքանչիւր ումք առ 'ի կիր արկանել զայնոսիկ ' ասացաք յառաջին մասն գործոյս ընձեռ ' առաջին . զլուխ . 1 . թէ իւրաքանչիւր 'ի չափ հասնեալ ռք առ 'ի հաւատալ զամ . և զիւրաքանչիւր ճշմարտութիս քրիստոնէական կրօնի անորոշաբար հաւատալ պարտաւորի : իսկ բացորոշ հաւատով պարտ է հաւատալ . թէ մի է ամ 'ի յէութե , և երնք 'ի յանձինս : որդին այն ներմարմնացաւ : և զայլ խորհուրդսն 'ի հանդանակն պարունակեալ : և ևս և զայնոսիկ որք առ խորհուրդս եկեղեցոյ պատկանին : զորս ընդ ունին , կամ ընդ ունիլ պարտին : նաև զայնոսիկ , որք ըստ պահանջման կացուէ , և թէ ու թեն իւրաքանչիւր ումք են հարկաւոր առ 'ի ըստանալ զյաւելիտենական փրկութին :

Բայց թէ երբ ստորասական պատուիրանս այս պարտաւորէ , կամ թէ յորում Ժմկի պարաւանդի ռք առ 'ի կիր արկանել զգործ ինչ հաւատոյ ' ասեմ . թէ լը հաւանականադոյն և 'ի կիրարկանելի վճարոցն ամբանից մանաւանդ յերիս դիպաւածս պարտաւորի իւրաքանչիւրոք առ 'ի կիր

կիր արկանել զգործս հաւատոյ :

Առաջինն է, մինչ նախապէս խորհուրդ ինչ հաւատոյ բաւականապէս յառաջագրի առ ՚ի հաւատալ . ուր ասեն վարդապետք բազումք, և ըստ վարդապետութեոս այսմիկ, մանկունքն, ՚ի լուսաւորիլ բանականութե իւրեանց, և յառաջագրիլ նոյ բաւականապէս խորհրդոցն հաւատոյ . պարտաւորին առ ՚ի հաւատալ զայն գործով. և մանաւանդ մինչ ճանաչեն աղքատիք մտաղ իւրեանց, թէ պարտաւորին առ այն : նոյնպէս և զանհաւատիցն ասել պարտ է :

Է. Երկրորդն է, թէ ըսնիցս անգամ ոք առ ՚ի կիրարկանել զգործ ինչ առաքինութե սարտաւորի, զոր առանց հաւատոյ կատարել ոչ կարէ, ուր մինչ ոք պարտաւորի զղջացեալ ՚ի մեղաց հրաժարիլ, զխորհուրդս ինչ ընդունիլ և այլն . ուր ասեն վարդապետք . բայց ուսուցանէ լայիման, թէ յայսմիկ պատահման պատուիրանն հաւատոյ ըստ ինքեան և ուղղակի ոչ պարտաւորէ, այլ միայն անուղղակի և ըստ պատահման : Ուստի լինի, զի : Եթէ ոք զխորհուրդ ինչ ընդունիլ զանցառնու ՚ի լինիլ նոյ պարտաւոր առ ՚ի ընդունիլ . բաւականացի յայանէլն ՚ի խոստովանուել, թէ զայս ինչ խորհուրդ ընդունիլ զանց արարի . և ոչ է պիտոյ յայանել զանցառումն ներգործական հաւատոյն, մինչ զանցառումն այսորիկ ոչ է տարբեր մեղք ՚ի զանցառութե նոյ : Առայս պատահումն պատկանի, մինչ ոք տեսանէ զինքն, որ ոչ կարէ այլով յողթել փորձութե ինչ . Եթէ ոչ ՚ի կիր արկանելով զանցառութի ինչ հաւատոյ . զի յայնժամ ՚ի կիր արկանել զայն պարտանդի . ուր մեկնէ լայնատարած Վալենտինոսն :

Երրորդն է, մինչ ոք ըստ իրաւանց, և հրապարակական իշխանութե հարցանի վն հաւատոյն . զի յայնժամ պարտաւորի թէ ըստ ներքնայն առ ՚ի բղխել և թէ ըստ արտաքնայն առ ՚ի դաւանիլ . ևս

և ա իթէ 'ի խոստովանութի անտի մահ նմա պատահիլ երևեսցի , Եւ մանաւանդ ևս մինչ մասնուոր որ հարցանէ վառն հաւատոյ , պարտէ ոչ միայն առ ոչ ինչ համարել . Գայլ և ըստ արտաքնոյն խոստովանիլ . և թէ 'ի զանցաւմանէ խոստովանութեն նք անայինն պատիւն նշանաւորաբար բժաւորիլ կարացէ , կամ մեծադոյն ինչ դոյթակզութի ընկերին պատահիլ երևեսցի . ուր ասէ սքն թօմաս :

Դ Յասացելոցս դիւրաւ իմացեալ լինի , թէ զինչ վն հաւատոյ այսու առաջին պատուիրանաւս տասնարանեայ օրինացն արդելել լինիրայսէ , ամ մեղք , որ է հակառակ հաւատոյ , զոր 'ի հասարակի սքն թօմաս կոչէ տնհաւատութի , և այս կրկին է ասէ , զի մինն է բացասական ուղի է 'ի յայնտիկ , որք ոչ երբէք զինն լսել կարացին զն հաւատոյ , և որ ոչ է մեղք ասէ , այլ մանաւանդ պատիւ մեղացն առաջին ծնողաց , Եւ յաւել , թէ որք այսու և եթ կերպիւն են անհաւատ , վն այսպիսի անհաւատութս , ոչ դատաւարտին . այլք՝ դատաւարտին վն այլ մեղաց , որք առանց հաւատոյ թողեալ լինիլ ոչ կարեն :

Իսկ միւսն է անհաւատութի նոյնոյ հաւատոյ հակադրեալ ըստ դիմադարձուն , ուր ասէ սքն թօմաս , որ և ըստ սմանց կոչի զրկողական : որ սխի է 'ի յայնտիկ , որք զճշմարտութի հաւատոյ բաւականապէս լսեալ , ոչ կամին ընդունիլ . Եւ զայս նոյն իսկ սքն թօմաս յերիս տեսակս բաժանէ , այս է , Հեթանոսական , Հրեական . և Հերետիկոսական , որոյ յաւելու և զուրացողութին : վն զի որք , կամ ընդդիմանայ հաւատոյն , զոր ոչ ընկալեալ է . և այս է անհաւատութին հեթանոսաց : կամ ընդդիմանայ հաւատոյն , զոր ընկալեալ է 'ի պատկեր , և 'ի յօրինակ , և այս է անհաւատութին հրեից : և կամ ընդդիմանայ հաւատոյն՝ զոր ընկալեալ է 'ի յայտնուն ճշմարտութե . և այս է անհաւատութին

ուրացողաց, եթէ ընկալեալ հաւատքն բոլորն վին 'ի բաց մերժեսցի: Իսկ եթէ ըստ մասին, անուանի հերեօփոսութի:

Դ. Եւ դիտելի է աստ, և զոր յառաջին մասն դորձոյս լայնատարած իսկ ցուցաք, թէ 'ի բան հերեօփոսութե երկու ինչ ինդրին, ունի ասէ սքն թօմաս Առաջինն է, զի իցէ աղանդն ընդ զէմ յայ յայանեալ, և յեկեղեցւոյ յառաջադրեալ, ճշմարտութե ինչ հաւատոյ: Երկրորդն է, զի այսպիսի աղանդս կամակորուք, և յանդդնութի իսկ ունիցի: ուստի ունի ասէ սքն օգոստինոս: || Եթէ որ զմոլար և զհակառակ իմացուած իւր անանց կամակորութե պաշտպանէ վն քննելոյ մեծաւ զգուշութի վճշմարտութին, և է պատրաստ յուղղի 'ի դտանել ճշմարտութե ոչ երբէք 'ի մէջ հերեօփոսացն է համարելի: Եւ առ հերեօփոսութին պատկանի և ևս մեղքն, որք զմասանց ինչ հաւատոյ ազատաբար երկբային, քանզի ասի զհերեօփոսաց. || Երկրայն 'ի հաւատս' անհաւատ է: Կաև եթէ որ դնէ զինքն յորոգայթ մոլորելոյ 'ի հաւատս, ունի եթէ որ վն հետաքրքրութե, կամ վն այլ վարթար ինչ դիտաւորութե զգիրս հերեօփոսացն ընթերձցի, և վարդապետութե նոյ ունկնդիր լիցի, և ընդ նոյ յանդգնաբար վն հաւատոյն վիճեսցի, կամ յաճախ կենցաղաւարեսցի ընդ նոյ որոգայթիւ մոլորելոյ:

Հ Ա Տ Ո Ւ Ա Ճ Ե Ր Կ Ր Ո Ր Դ:

Յաղագս տասնութի յուսոյ, և մեղաց որ հակառակ նճա:

Ա. Երբն է Աճարանական տասնութի ինչ գերբնական, որով հաւատացեալն 'ի ներկայ կեանս փրկարար բարու, և 'ի հանդերձեալն յաւիտեանական կենացն յայ սղասէ յուսադրութիւն 'ի ձեռնարդեանցն քի:

Ասի

Ասի նախ առարկինու ի ննչ դերքնական . զի ուն ոչ որ յսժ հաւատալ , այսն ևս ոչ որ ի նա յուսալ կարէ , ուն պարտն է , առանց օգնեալ լինելոյ դերքնական ինչ օգնութի . ուստի սքն պօնալին թուրայ ի բան սաղմոս երգութի . սաղմոս . 70 . || Զի դու ար յոյս իմ օս , սակ , ոչ որ կարէ դբանս զայստիկ ճշմարտութի սակ է թէ ոչ նա , որում ի ներքուստ աղգեալ է հո գին սք :

Ասի երկդ՝ Աճաբանական , զի գիտէ անմի ջապէս առ ան ուն յառաջին և ի մանաւանդաւ հան առարկայ , ուն սակ սքն թօմաս . || Զի բաց ի նոյնոյ նյ՝ զայլ ոչ ինչ նուազագոյն կարեմք յուսալ յայ :

Ասի ք . նովաւ սպասել պարտի յայ ոչ միայն յաւիտենական փրկութեն , որ ի վայելումն նոյն նյ կայանայ . այլ և իւրաքնչիւր փրկարար բարեաց . այս է , առ ի ստանալ զփրկութին հարկաւոր , կամ օգտակար , թէ մարմնաւոր , և թէ հոգևոր : և որ երևի ի բանից քն ին մերոյ , որովք ուսոյց մեզ խնդրել և հայցել յայ ի տերուական աղօթս . վս զի ուն սակ սքն օգոստինոս . || Անորիկ առ յոյսն պատկա նին , որք ի տերուական աղօթս պարուանակին :

Ասի ք . բարեացն այնոցիկ յուսալ և սպասել պարտ է հաւատացեալ ոք , զի ըստ հասարակ բանիցն անաբանից հաւատն նախնութաց լինիլ պարտի յուսոյ . մինչ ի ձեռն հաւատոյ ծա նուցեալ լինի այն , որում յուսով յայ սպասել պարտ է :

Ասի Ե . թէ բարեացն այնոցիկ յուսալ պարտ է յուսադրութի , զի յոյսն ի վր ամենակարողութե և հաւատարմութեն նյ , որ խոստանայ՝ յենու : Ուստի առաքեալն եբրդ՝ Ե . կոչէ . Սխարիսիս հաստատուն և անշարժ անձանց , և թէպէտ յուսադրութին այն , ըստորում է ի յսժ՝ պարտ է լինիլ զգուշագոյն . սակայն ի կողմ

Ճանէ՛ մերմէ՛ բազում պակասութիք դործակցու
 թէ՛ մերոյ պատահիլ կարեն , որք զգորութիւն
 խոստմանն նոյ արդէլուն , վնայ ասէ՛ առաքեալն
 փեղցլ՝ 2 . ॥ Ահիւ և թողութիք զանձանց փրկու
 թի՛ր դործեցէք : Վն զի ասէ՛ սքն օգոստինոս . ॥
 Արյուսայ՝ և ոչ երկնի՛ անիոյթ է . իսկ որ եր
 կնի՛ և ոչ յուսայ՝ ընկղմեալ է , և իջանէ՛ ի
 խորս իբրև զԼէ՛մ :

Արի դ . ՚ի ձեռն արդեանցն քնի . զի թէ պէտ
 ՚ի կողմանէ՛ մերմէ , և ևս առ ՚ի ստանալ զյաւի
 տենտական կեանս պիտոյ են և արգիւնք . սակայն
 զի առանց շնորհացն նոյ , որք ՚ի ձեռն արդեանցն
 քնի մեզ հնդանին , ոչ ինչ կարեմք , և ՚ի յայնս
 սիկ , զորս կարեմքն , և կամիմք առաւել հզոր են
 շնորհքն նոյ քան զմարդկային կամս . վնայ ասէ՛
 Ժղ՝ թրիտ՝ ॥ Քաւ լիցի բրիտանէ՛ ի յուսալ և
 պարծիլ յանձն իւր , և ոչ ՚ի յանձ , որոյ բարութիւն
 այնքան է ՚ի մարդիկ , զի որ իւրն է պարզե՛
 մարդկան կամեցաւ լինիլ վարձ :

Բ . ՚ի սահմանէ՛ սաստի յուսոյ կարէ իմացեալ
 լինիլ , թէ զինչ է նիւթաւոր և տեսական առար
 կայ այսորիկ առաքինութեա . զի նիւթական
 առարկայ յուսոյ պարունակէ զամ բարիս զոյ
 շոտիկ , զոր խոստացաւ մեզ ամ . որ է ճայրա
 դոյն և մանաւանդական բարի խոստացել մեզ :
 իսկ տեսական առարկայ յուսոյ է ճայրադոյն
 բարութիւն նոյ ՚ի մեզ . և ՚ի կատարել զխոստումն
 հաւատարմութի :

Խնդրեացես , մի՛ թէ կարեմք յուսալ ՚ի մար
 դիկ , կամ յոյլ արարածս : Պատասխանէ՛ սքն
 թօմաս , թէ պէտ ՚ի յանձ միայն ոնոյ յաւաքին պատ
 ճառ ամ բարութե՛ յուսալ պարտիմք , սակայն
 է ևս ըստ օրինոյ՝ յուսալ և աղաւինիլ ՚ի մար
 դիկ , կամ յոյլ արարած . ոնոյ յերկրորդական
 և ՚ի դործիքական պատճառ . որով ըստ կարգի
 նախախնամուեն նոյ օգտիլ կարեմք առ ՚ի ստա
 նալ զբարի ինչ , որ առ վերջին և ճայրադոյն

Քարին ուղղեսցի :

Դ. Ի մեկնել մեր զայսոսիկ կարճ՝ ի կարճոյ՝ պարտ է այժմ տեսանել, թէ զինչ վստաքինունս յուսոյ այսու առաջին տասնաբանեաց օրինացս պատուիրանաւ պատուիրի : Կամ արդեւեալ լինի . Եւ նախ ճշմարիտ է, զի անձինն պատուիրան, հրամայէ յուսուլ ՚ի յանձ, ուն ստէ սքն թօմաս, և պատուիրանս այս ըստ որում բացասական, զյուսահատու թիւնն արդելու, և պարտաւորէ միշտ, ուն յասացելոցս ՚ի վերոյ երևի : Իսկ ըստ որում ստորասական, մանաւանդ յերիս պատահ մունս ըստ հաւանական վճռոցն անբանից պարտաւորէ : Առաջինն է, յորժամ նախ ՚ի չափ հասեալ ոք բուականապէս ճանաչէ, թէ ստեծեալ է յայ առ ՚ի ստանալ զյաւխտենն կեանս, և յայնժամ պարտաւորի յուսուլ յայ զյաւխտեանական կեանս, և զհարկաւոր միջոցս առ ՚ի ստանալ զայն : Երկրէն է, յորժամ պարտաւորի առ ՚ի առնել զինն, առ որ ներդործու թին յուսոյ իրբև հարկաւոր պատրաստու թի նախընթաց խնդրի : զոր օրինակ, յորժամ պարտաւորի զղջալ ՚ի մեղաց, զի առ ՚ի թողուի նց, յոյս անձինն որդործու թեն խնդրի . ուն ասէ ժող. թրիս . Երբ որդն է, յորժամ ծանր ինչ դործու թի յուսահատու թե պաշարէ, զոր ոք միայն ներդործու թի յուսոյ կարէ յաղթել :

Բայց ասէ իզամուրթոս : Թէ ՚ի կատարել զպատուիրանս՝ ոչ է հարկաւոր միշտ ներդործու թի բոլորէ զներդործու թի յուսոյ, այլ բաւական է ևս զորու թի սոսինքն . ըստ որում պարունակի զորու թի սոսինքն ՚ի ներդործու թի այլ ինչ առաքինութե, ուն կատարեալ զղջման . որ յայնժամ տեսականաբար ՚ի դործ ածի :

Ե. Իսկ որ պատկանի առ մեզսն, որ ընդդիմանայ յուսոյ, և ապա այսու առաջին պատուիրանաւս արդեւեալ լինի, ասեն անաբանք, թէ ըստ երկուց մանաւանդ ընդդէմ յուսոյ մեղան

չել կարէ , այս է : անձնապատասխանութիւն , և յուսահատութիւն : Դարձեալ . անձնապատասխանութիւն կրկին կարէ լինիլ . ունի ասէ սքն թօմաս . զի նախ մինչ որ յանդգնի , թէ կարէ ստանալ զանձային շնորհս , կամ զյաւիտենական փառս անձամբ անձին , և բնական զօրութիւն : Երկր մինչ յանդգնի , թէ միայն անձային ողորմութիւն ստանալոց է զթողութի մեղաց իւրոց առանց ապաշխարութե ինչ . կամ զյաւիտենական երանութիւն , առանց արդիւնաւոր գործոց :

Իսկ յուսահատութիւն է , մինչ որ կամաւորութիւն անձային ողորմութեւն ոչ ապաւինի , և ոչ յուսոյ յայ զթողութիւն մեղաց , կամ զյաւիտենական երանութիւն , և զմիջոցսն , առ այն հարկաւորս . և վա որոց զամ ջան իւր , որ ՚ի կողմանէ իւր մէ պահանջի՝ ՚ի բաց թողու : Սուտի բարեօք ասէ . թօլեթոս , թէ յուսահատութիւնն երբեմն միացեալ է ընդ հերետիկոսունն , ունի մինչ որ համարի , և կամակորութիւն ըմբռնէ , թէ ան կամ ոչ կամի , կամ ոչ կարէ զմեղս իւր թողուլ : և թէ սղորմութի նր ոչ է այնպիսի , որ զբազում և զճանրագոյն մեղս բազմոցս կրկնեալ թողու կամեայի , կամ կարացէ . և զոր ՚ի խոտոզանութե յատկապէս յայտնել պարտ է :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ճ Ե Ր Ր Ո Ր Դ .

Յաղագս աղօթից .

Ա. Եւ թէպէտ աղօթքն , յատկապէս խօսելով է գործ առաքինութեւն կրօնի , զորմէ ՚ի ներքոյ ասացուք . սակայն առ առաքինութիւն յուսոյ և ևս պատկանի . և զանձկագոյն միաւորութի ունել ընդ նմա երևի , վայ աստ կարճ ՚ի կարճոյ գիշուք զայնոսիկ , զորս անձաբանքս սեն վասն աղօթից :

Եւ նախ աղօթքն է ելք կամ (ըստ դամասկացւոյն .)

և ոյն, համբարձու մն մտաց առ ամ 'ի դոզուի և 'ի
 դոհու 'ի նր, և ևս 'ի մատուցանելոյ զպաղատանս
 վն 'ի ր. և վն այլոց : Եւ այսու իմացմամբ առեղ,
 բաժանի աղօթքն նախ 'ի մենւորն՝ զոր իւր քննելու
 որ մատուցանէ վն իւր և վն այլոց : և 'ի հա
 սարակն . զոր պաշտօնեայն եկեղեցւոյ յանուն
 ամ հաւատացեալ ժողովրդեան մատուցանէ .
 զորմէ ասէ Կենսագիտս, || Թէ մինչ 'ի կիր արկա
 նեն երկուցնք ժողովրդեանն այ զպաշտօնն յան
 ձնեալ իւրեանց առաջի դթուէթն այ, ծանուցա
 նեն զպիտոյս մարդկային աղոթի, և ամ եկեղե
 ցի հեծեծանօք ընդ նս պաղատին և հայցեն :

Երկրորդ բաժանի աղօթքն 'ի մտաւորն, որ
 միայն ներքին ներգործութի մտացն լինի. և 'ի
 ձայնաւորն, որ պնոյն ներքին ներգործութին
 ձայնիւ և բանիւ յայանէ. և զերկաքանչիւրն յի
 շէ սք դիրք, ուղ վն մտաւոր աղօթից ասէ. սաղ
 մոս. 2. 6. || Զի քեզ ասաց սիրտ իմ . իսկ վասն
 ձայնաւորին ասի, սաղմոս 141. (Չայնիւ իմով
 ես առ մոր կարգացի : Եւ վն երկուցուցս ասէ
 իրիտորոս) || Բարի է սրտիւ աղօթել . բարի է
 ևս և ձայնիւ զամ հողեւորն երգօք փառաւո
 բէլ : Եւ մինչ բազում են զոր ամսաբանք ասեն
 վասն աղօթից . մէք զայնցանէ միայն աստ վար
 դապետեացութ, որք առաւել հարկաւոր են. և
 'ի մեծադոյն դիրութի 'ի զանազան խնդիրս և
 պատասխանիս 'ի միասին բացայայտեացութ :

Ք. Եւ նախ խնդրեմք, մի' թէ աղօթքն հար
 կաւոր է 'ի փրկութի, հարկաւորութքն պատ
 ուիրանի . կամ մի' թէ մարդիկ պարտական են
 աղօթել առ ամ ամային պատուիրանա :

Պատասխանեմ, թէ այո, և երևի յայտնապէս
 'ի սք դրոց. մատ. 7. || Խնդրեցէք և տացի ձեզ,
 հայցեցէք 'և դողիք. բաղխեցէք և բացցի ձեզ,
 և 'ի դուռսն . 16. || Արթուն կացէք և աղօթս
 արարեք, զի մի անկանիջիք 'ի փորձութի : և զու
 կառու 11. || Պարտ է յամ ժամ կալ յաղօթս և

սքն սկեբերան ՚ի դիրս տէրունական աղօթից :
 || ոսկ տակ մարմինս մեր այս առանց հոգւոյ մե
 ռեալ և հոտեալ է այսպէս և հոգի մեր առանց
 շարժելոյ զինքն առ աղօթս՝ մեռեալ և թշու
 առ , և ներսեալ է : և սքն օղոստինոս ՚ի մեկ
 նութի սաղմոսին 122 . || Նոս ասէ . որում պար
 փելի յոյ սէրն ոյ՛ և վս ոյ սէր ըկերին , ճշմար
 տիւ վաղվաղակի աղօթել պարտի , որով առա
 տասցի նմա պարգևս այս :

Եւ այս հաստատիւ կարէ այսու պատճառաւ .
 ոչ ոք կարէ զհրամանս ոյ սրահել , և ՚ի նոյն պահ
 պանութեն միշտ տեւել , և յարուցեալ փորձու
 թեցն յաղթել , նաև զգրկութին յաւիտենական
 ստանալ առանց յատուկ և մշտակոյ անձային շե
 նորհացն օղոսթե . թէ և առաջին շնորհքն , որ
 բարդեալ լինի միջոյ կանխէ ան և իւր քնչիւր
 արդեանց նք . և ապա և աղօթից սակայն ճշմո
 է , զն աղօթքն է մինն յոյ կացուցեալ միջոցիցն
 ՚ի մշտատեութիւն ՚ի յաճուած ստացեալ շնոր
 հացն այնոցիկ . ոսկ ՚ի վերոյ ասացեալ վկայու
 թեց սք պրոցն երեւի : Ուստի հետեւի , թէ ա
 ղօթքն ըստ անձային ստատելիքունացն է հարկու
 ը որ առ ՚ի ստանալ զգրկութի :

Դ . Խնդրի ք . թէ յերբ ոք սրնու որի աղօթել ,
 Պատասխանեմ . և թէ յառաջադրեալ խնդիրս
 իմացի վս եկեղեցական պատուիրանաց՝ ՚ի յա
 առկ ինչ ժամանակի զիւրաքանչիւր մասունս
 անձային ժամակարգուէ ըստ եկեղեցական սահ
 մանադրուէ պարտէ ասել . զորմէ ասացուք
 ՚ի ներքոյ ՚ի համառօտութե վս կղերիկոսական
 կացութե : Իսկ և թէ վս անձային պատուիրա
 նացն առաջադրեալ խնդիրս իմացի , որով
 հետեւ պատուիրանս այս աղօթելոյ՝ է ստորա
 սական , թէ պէտ պարտա որէ միշտ . բայց ոչ
 ՚ի միշտ . ոսկ ասեն անձաքանք . և ապա զսահմա
 նադրութին ժամանակի , յորում անձային պա
 տուիրանս այս այնպէս պարտա որէ , մինչ զն
 զան

զանցառուսն աղօթից լիցի մեղք . յանձնեմք ձա
նաչել դատողութիւն խոհեմ և հանձարեզ առն
լսա զանազանութեւն պատահմանն փորձութեց
որողայթից և հարկաւորութեց : զոր օրինակ ,
եթէ փորձութիւն ինչ ծանր պատահեացի , կամ
փասակար առ թ մեղանչելոյ հանդիպեացի , կմ
ծանր դժուարութիւն 'ի պահպանուսն պատուի
բանաց գիպեացի , յայնժամ առանց կարծեաց
լսա բանից անարանից՝ պարտէ առն առ անձ 'ի
ձեռն աղօթից պիմել , և զօրնութիւնը՝ պողա
տանօք հայցել : յաւել նախարոս , թէ նա ևս
պարտաւորի աղօթել որ տեսանէ , թէ սչ կարէ
այլով արդեւուչ զլեւան ընկերին , եթէ ոչ միայն
աղօթիւք :

Բայց Լեզուս վարդապետն ասէ , թէ բաց
յայտոցիկ , և յայլ նման պատահմանց պարտա
ւորի իւր քննչւոր օք և ևս աղօթել առ անձ . այն
պէս զի յերկար ինչ ժամանակ , ուր զամիս մի
առանց մեղաց բոլորովն յաղօթից դադարիլ ոչ
կարէ : զի զանցառուսն այսպիսի փրկարար և
հարկաւոր կրթութեւն առանց մեծի և յանցա
ւորն փաստու փրկութեւն՝ ոչ կարէ ընկիլ :

Գ. ինչքի Գ. թէ սկարէ , և պարտի աղօթել :
Պատասխանեմ , թէ անմարդ մինչ է 'ի ձանա
պարհի կենացս այսորիկ : կարէ և պարտի աղօ
թել : վս զի անմարդ կամ է արդար , կամ մե
ղաւոր . եթէ արդար է , կարտի աղօթից 'ի
տեսել միշտ յարդարութեւն , և պարտէ ինչգրել ,
զի մի անկանիցի 'ի փորձութիւն : իսկ եթէ մեղա
ւոր է , և ևս առաւել կարտի աղօթից , վսկ
քս արն մեր յաւաճողրեաց անցն առնել զպա
ղատանս զայս , թ ոչ մեզ զպարտիս մեր : զի մե
ղաւորքն 'ի թողութիւն մահացու մեղաց իւրեանց ,
իսկ արդարքն 'ի թողութիւն ներքի մեղաց պար
տին պաղատիլ : Աստի ասէ սքն թօմաս . ոչ
միայն արդարքն , այլ և մեղաւորքն յաղօթել
իւրեանց յուսալ պարտին . թէ յոյ լսէ թ ինիւն

Յաղագս տասնարանեայ
 աղօթքնց, այսինքն, եթէ աղօթեն և պաղա-
 տին, և ըստորում մեղաւորք, այլ ջերմեռան
 դուժք և ուղիղ ըղձիւ, և միացեալ թէուեցն
 զորս նոյն սքն թօմաս մեկեւ, այսինքն, եթէ
 վսխարեանց աղաչեն զայնօսիկ, որք ՚ի փրկուի
 իւրենց են հարկաւոր. եթէ հաւատով, յուսով,
 և ճշմ ըղձիւ, և վս հաշտեցուցանելոյ զմծ. և
 ևս եթէ թախանձանօք խնդրեն, և յայնժմ ուղ
 ասէ սքն օքսա՝ լսելի լինին և առանց կարծեաց
 ընկալնուն, զոր խնդրեն. բայց մինչ պիտոյ իցէ
 ընկալնուլ, զի թէ ուղ երբեմն ոչ խնայէ մծ տալ
 զիմն, սակայն երկարէ, զի ՚ի պատկանաւոր
 ժամանակի տացէ:

Խնդրի ք. թէ առ ո՞ւր ուղիւ պարտի աղօթքն,
 և զո՞ւ աղաչել պարտ է:

Ե. Պատասխանեմ, թէ երկու ստոյգ իմն է:
 Առ աջինն է, զի առ մծ իբրև առ ծայրագոյն հե
 շինակ, և սկզբնին պտճա մամ պարգևաց, և բա
 րեաց բնութեան, շնորհաց, և փառաց, որք
 ՚ի ձեռն աղօթից խնդրեալ տտանալ կարեն.
 աղօթել պարտ է:

Երկրորդն է, զի ևս առ սքնն ՚ի յերկինս, և
 առ երանեալս աղօթել և կարգալ կարէ, զի վս
 մեր առաջի մյ բարեխօս լիցին. ուղ մեկնեալ ցու
 ցաք ՚ի յընձեռուածն ներմարմնութե գլուխ Զ.
 սրակ. 2.

Ճշմարտ է և ևս, զի ևս ՚ի կենցաղս յայս
 եղեալ մարդկանց կարեմք խնդրել զօգնութիւն
 բարեխօսութե առ մծ. զի զայս իսկ երբեմն մծ
 պատուիրեաց բարեկամացն սքլ Նահապետին
 Յօբայ. և սքն Պօղոս բազում անգամ յանձնէ
 զինքն աղօթիցն հաւատացելոց:

Բայց խնդրեմք մի՛ թէ կարէ ուղիւ աղօթքն
 մեր առ ՚ի քաւարանի եղեալ հոգիան:

Պատասխանեմ. թէ ոմանք մծաբանք համա
 բին, թէ կարէ ոք աղօթել առ հոգիան, որք են
 ՚ի քաւարանի, ոչ միայն ՚ի հասարակի առ հաւա
 տաւ

տացեալսն , այլ և մասնաւորապէս վն այնոցիկ , որք մասնաւորապէս 'ի կեանս յայս նց եղեն սիրելի . իսկ սքն թօմաս ընդդէմ այսմիկ ասէ . || Զի թէպէտ են գերազանցքքան զմեզ որքան առօչկարել մեզանչեւ , սակայն ստորինք են քան զմեզ որքան առ պատիժսն , յորում են , և ըստ այսմ ոչ կարեն աղօթել վն այլոց , այլ մանաւանդ ունին զպիտոյս աղօթիցն այլոց : զի եթէ ըստ մտաց սքն թօմայի ոչ կարեն աղօթել վն մեր , ուրեք և մեք ոչ կարեմք աղօթել առ այնոսիկ , մանաւանդ թէ և հոգիքն այնոքիկ վն մեր աղօթեացեն , սակայն մեք ընդունայն կարգամք առ նոսա . որովհետեւ ոչ են յայնմիկ կացութն , յորում կարացեն ճանաչել զաղօթս մեր , ոնչ զսքն 'ի յերկինս , որոց երանելի կացութն յամ կողմանէ պահանջէ , զի ծանիցեն զաղօթսն , որք առ նոսա են ուղղեալք , մինչ այս մանաւանդ առ պատահական փառս նց օգտել կարէ :

Խնդրի է . թէ վն որոց պարտ է աղօթել :

Ե . Պատասխանեմ , թէ ոչ միայն մեք վն մեր աղօթել պարտիմք , այլ և վն ամենեցուն , զորս սիրել 'ի սիրոյ անտի պայտաւորիմք , և որոց աղօթիւք մերովք օգնել կարեմք . Եւ այս երևի 'ի նոյն իսկ բանիցն աւերունական աղօթից . վն զի ոնչ ասէ սքն կիպրիանոս , || Ոչ կամեցաւ խաղաղութեն վարդապետ պաղատիլ ուրուք վասն իւր միայն . զի ոչ ասեմք հայր իմ , կամ զհաց իմ տուր ինձ . և այլն . այլ Հայր մեր , զհաց մեր տուր մեզ , և ' . Եւ այս հաստատի և ևս այնու , զի ըստ սքն թօմայի , զայն ' յաղօթել մեր պարտիմք խնդրել , որում պարտիմք ցանկալ 'ի սիրոյ անտի . իսկ ոչ միայն վն մեր , այլ և վն այլոց պարտիմք 'ի սիրոյ անտի ցանկալ բազում բարեաց : ուրեք պարտիմք ևս վասն նց զբարիսն զայնոսիկ յաղօթելն հայցել :

Աստուատ հետևի նախ , թէ մեք յաղօթել մերում զոչ որ 'ի կենցաղս եղեալ մարդկանց' որք

ևս իցեն մեղաւոր . կամ՝ ևս լնասարար մեր ,
զրկել 'ի հասարակ աղօթից մերոց , զի զոչոք ևս
մեղաւոր և կամ թշնամի մեր պարտիմք 'ի սիրոյ
անտի զրկել , և այլն . ուն ասէ սքն օգոստինոս ,
զի ուն զոչ ոք մինչ 'ի կենցաղս է , զրկել պարտ
է 'ի խրատուցն բարեբարութի . այսպէս և ոչ ու
մեք խնայել պարտ է զօգնութիւն աղօթից :

Հետևի երկրորդ , թէ մեք վստմն ննջեցելոցն
այնոցիկ պարտիմք աղօթել . որոց աղօթիւք մե
րովք օգնել կարեմք , և սպա ոչ կարեմք աղօ
թել վստմն պարտելոց , մինչ ոչ են ընդունակ
չնորհաց նր , և թողութե մեղաց : Եւս և ոչ
վստմն երանելեաց , կամ վստմն սրբոց , որք են 'ի յեր
կինս , որովհետև յեղբիառացն են կացուցեալ
և ոչ կարօտին օգնութե մերոյ : Ուստի ասէ
սքն օգոստինոս . || Արհամարհէ զմարտիրոսն ,
որ վստմն մարտիրոսի աղօթէ , Սակայն ոչ է հակա
ռակ բանից մերոց , վստմն երջանկութե նց և վս
տմն պարգևացն շնորհաց և փառաց , որ տունեալ
է նց գովել զսքն , և գոհանալ զնմանէ : այլ ևս
հայցել 'ի նմանէ , զի յամենամեծ փառս իւր առս
ւել յայտնի լիցի սրբութի նց , որով բազումք
շարժեացին հայցել զբարեխօսութի նց , և հե
տևիլ առաքինական վարուց նց :

7. Խնդրի զ . թէ ուն պարտ է աղօթել :

Պատասխանեմ . երկու մանուանդական
թէութիւք 'ի յաղօթս խնդրին . այսինքն , ուշա
դրութի , և Գերմեռանդութի . Եւ նախ , թէ
ուշադրութիւն պիտոյ է , ուսուցանէ սքն Թօ
մաս , մինչ զի 'ի սկզբանն աղօթից . որ աղօթէն 'ի
միտս իւր գիցէ ուշադիր լինիլ : կամ առ մեծ ,
զօր աղօթէ , կամ առ իմացունած բանիցն աղօ
թից . կամ առ բանն . եթէ ձայնիլ իսկ աղօ
թէ : և մի լիցի զյառաջադրութիս զայս անձին
'ի յառաջ ընթաց լինիլ աղօթիցն փոխօխել , կմ
զմիտս իւր կամաւ առ ս և լիցէ իր դարձուցա
նել , որ զուշադրութիւն արդեւուլ կարացէ :

ուստի սքն կիպրիանոս , || 'ի կալ մեր ասէ յա
ղօթս , հակել և ունկնդիր լինիլ պարտիք մձ
որտիւ պաղատանացն 'ի բաց մերժեսցի յայնժմ
մամարինաւոր և աշխարհային խորհուրդ , և մի
լիցի յայնժամ հոգւոյն խորհիլ , եթէ ոչ զայն
զոր պաղատինն . և զինչ է ծուլութիւն օտարանա
լոյ . և յափշտակելոյ յաղանդի և յանպատշաճ
խորհրդոց . յաղօթել քոյ . իբրու թէ այլ իմն է ,
զորմէ առաւել պարտիս խորհիլ , քան թէ ընդ
այ խօսիլ , և զհարդ կամիս յոյ լսելի լինիլ , մինչ
դու՝ ինքնդ քեզ ոչ լսես , կամիս , զի յիշեսցէ
զքեզ մձ , մինչ դու ինքդ ոչ յիշես զքեզ :

Իսկ ջերմեռանդութիւն , և ևս խնդրի , այս
ինքն , զի աղօթքն յառաջօտցի 'ի բարեպաշտ
ինչ ըզձից . և լիցի մեծաւ խոնարհութեան
ձին , և մեծաւ յարդամբ այ . աներկբայ հաւս
տով և ճշմարտ յուսով առ մձ . և այլ նման
պատրաստութե , զորս սրբազան գիրն յաճախ
յիշէ , և զոր գովեն իսկսք հարքն . և իրաւի . ոչ
օք է , որ զինքն ոչ ամբաստանեսցէ իբրև ըզ
պարտաւոր յանցանաց , եթէ սակաւ յարդու
թեամբ , և կամ թերութե ինչ հաւատոյ , և
յուսոյ աղօթեսցէ առ մձ : ուստի երևի կամ
ևս իսկ 'ի դատաւորէն խղճի մտաց , թէ սլի
տոյ է այսպիսի ջերմեռանդ իղձ յաղօթելն :

Ը. Խնդրի . է. թէ զինչ պարտ է 'ի յաղօթս
հայցել , Պատասխանեմ , զայն մամ ըստ օրինաց ,
և արգիւնաւորաբար կարեմք յոյ խնդրել և
հայցել , որք կարենն ածել զմեզ 'ի կեանս , որ
պիտի են նախ յաւիտենական բարիքն , յորում
կայանայ ինքն երանութիւն . և միջոցքն . որք են
հարկաւորք առ 'ի ստանալ զայն . ոպի են շք
նորհքն և առաքինութիւն : կարեմէ և ևս խնդ
րել զժամանակաւոր և զարտաքին բարիս . և
այս ըստ որում առ 'ի ստանալ զնոյն երանութիւն
ի՛նք կերպիւն ածել կարեն : և այս յայտնասպէս
երևի 'ի բանից նոյն աղօթից , զոր ինքն քո տրն
ՁԸ

մեր ուսուցանել կամեցաւ մեզ . մատթ . Ը . յոչ
 բում կատարելուք պարունակին թէ զինչ յայ
 կարեմք . կամ պարտիմք խնդրել : Ուստի սքն
 օգոստինոս զտէրունական աղօթիցն խօսելով :
 || Եթէ ասէ ընդ ամենայն աղօթս և խնդրուածս
 բնեկցես , ըստ համարման իմոյ՝ զոչ ինչ գըտ
 ցես , զոր ոչ տէրունականս այս պարունակես
 ցէ աղօթս : Վս որոյ օգտակարադոյն և ս համա
 բեցաք աստ մեկնել կարճ՝ ի կարճոյ զբանսն իսկ
 տէրունական աղօթիցն ըստ մտաց սք հարցն .
 ոչք զիւրաբանչիւր բանս նք յատուկ բարեպաշ
 տութն ըղձիւ մեկնեցին :

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Մ Ն :

՝ Որ պարունակէ զհամարօս մեկնութի տե
 րունական աղօթիցն ըստ մտաց
 սք հարց :

ա. **Լ** աջին բան տէրունական աղօթիցն .
 Հայր մեր որ յերկինսես : պարունա
 կէ իբրու զյառաջաբանութիւն ինչ նոյնոյ
 աղօթից . որով զբարերար կամս այ առ մեզ իբ
 բև հօր մերոյ յիշեմք . || Չի ոչ է արդեանց մե
 բոց ասէ սքն օգոստինոս . այլ շնորհացն ասելն ,
 հայր մեր . և ոչ ասեմք զայս վս այն , զի զամ որ իւր
 կամաւն մեզ բարերար , և որ նախ սիրեացն զմեզ
 առ ի լսել և բարերարել շարժեցուք . և ապա
 իբրու թէ ընդ առն ումեք ընձեռիցեմք առ ի
 յափշտակել զբարեհաճութի նք : այլ զի ի մեզ
 ի ձեռն անուանակոչութեն այնորիկ՝ մեք զոր
 գիական համարձակութի առ նա ունիցիմք . ||
 Չի զինչ ասէ սքն օգոստինոս այժմ ոչ տայ որդ
 ւոցն զոր խնդրեն . մինչ ետ նոցա լինիլ որ
 զի իւր :

Եւ այս հետևին խնդրուածք եօթն : և ո
 բոց առ սքն երկնս պատկանին առ վերջին վախ
 ճանն .

Ճանն . որ է ան : իսկ շորեքին առ միջոցսն . որք
 անեն առ նոյն վախճան :

Եւ առ արհնն է : || Սք եղիցի անուն քս : || Ղե
 ոչ թէ աղաչեմք ասէ սքն օգոստինոս այսպէս .
 իբր թէ ոչ իցէ սք անունն այ . այլ թէ ՚ի սք
 ունիլ պարտ է զայն . այսինքն . այնպէս ծանու
 ցեալ լիցի ան . զի մի՛ ինչ սքադոյն քան զնա հա
 մարեացի . կամ ոսկ ասէ սքն ասկերերան : ||
 Աղաչեմք . զի ան ՚ի ձեռն կենաց մերոց փառա
 ւորեացի . իբր թէ ասացէ իւրաքանչիւրք . կե
 ցո՛ զեղ այնպէս : զի մեօք ան օք փառաւորեա
 ցէ զքեզ : զի սք եղիցին . նոյն է . որ և փառաւո
 րեացի . վս զի վայելուչ իմն է աղօթիցն պաղատո
 շաց առ ան . զօրինչ խնդրել յառաջ քան զփառա
 յօր : այլ զան ինչ փառաց նք յետադրել :

Բ . Եկեացէ արքայու թի քո . || Ձի ոչ վս այն
 ասեմք . ասէ սքն օգոստինոս . իբր թէ ան այժմ
 ոչ թագաւորէ . յերկրի . կամ թէ միշտ իցէ թա
 գաւորեալ ՚ի նմա . այլ զեկեացն իմանալ պարտ
 է . թէ արքայուին այ յայտնի լիցի ամենեցուն .
 կամ ըստ մտաց սքոյն հերոնիմոսի . || Ձի թա
 գաւորու թի սքնայի . ջնջեացի յաշխարհէ աս
 տի . և մի թագաւորեացէ մեզքն ՚ի մահկանա
 ցու մարմնի աստ . այլ ՚ի մեղ յիւրքն իւր օք թա
 գաւորեացէ ան . կմ ևս ոսկ մեկնէ սքն Կիպրիա
 նոս ՚ի քանս տէրունական աղօթից . || Սնդրեմք
 ասէ զգալուստ առ մեղ արքայու թեն . և այն
 բիկ . որ խոստացեալն է մեղ յայ քի արեամքն
 ստացեալ . զի ՚ի ծառայել մեր յանցեալ դարս .
 ՚ի վախճան աւուրցս ՚ի տիրապետելն քի թագա
 ւորեացուք : || Եկեացէ ասէ սքն օգոստինոս ար
 քայու թին ՚ի կամիլ և յոչ կամիլ մեր՝ բայց զցան
 կու թի մեր առ այն շարժեմք . զի եկեացէ մեզ .
 և թագաւորեացուք ՚ի նմա :

Գ . Եղիցին կամք քո . ոսկ յերկինս և յերկրի .
 || Ըստու քանիչ ասէ սքն Կիպրիանոս . ոչ խնդ
 րեմք . զի արասցէ ան . զոր կամի . այլ զի մք
 կա

կարացուք առնել, զոր ան կամի. և զի ՚ի կա
տարել կամացն այ, ունիմք զհարկաւորուի կա
մացն. և պաշտպանութեն այ, այս է գործոց
նր. զի ոչ որ զորութի իւրով չզոր է, այլ ան
ային ողորմութիւն աներկիւղ:

Կամ ո՞նչ մեկնէ սուրբն օգոստինոս. || Եղիցին
կամք քո, այս է, հնազանդ լիցուք պատուիրա
նաց քոց. ո՞նչ յերկինս և յերկրի, այս է, ո՞նչ
հրեշտակք. այսպէս և մարդիկ: Իսկ սուրբն
յօհան օսկերերան նկատեալ առ այս ասէ. ||
Չի ոչ ասէ: եղիցին կամք քո ՚ի յիս, կամ ՚ի մեզ,
այլ յամ սրերք ՚ի վր երկրի. զի լուծցի մուրուին,
և հիմնեացի ճշմարտութիւն. և ՚ի բաց մերժեա
ցի չարութիւն, և կրկին դարձցի առաքինուին:
և արդ զի ոչ զանազանէ զերկինս յերկրէ:

Գ. Չհայ մեր հանապազորդ տուր մեզ այսօր,
|| Ա յնորիկ երեքին ասէ սքն օգոստինոս, զորս
՚ի վերոյ խնդրուածս հայցեմք, աստ սկսին, և
որքան առաւել յառաջ ընթանամք՝ առատանան
՚ի մեզ. իսկ կատարեալքն, որոց ՚ի հանդերձեալն
յուսամք՝ միշտ ստացեալ լինին: Իսկ չորիւք մեա
ցելովք, որք հնուին, խնդրեմք զժամակ որս
որք են հարկաւորք առ ՚ի ստանալ զյաւիտե
նականութիւն, իսկ սքն յօհան օսկերերանն. ||
Հրամայեաց անն ասէ, աղօթս առնել վն հա
ցի, և ոչ վն արժաթոյ, և ոչ վասն անձնասի
րութե. այլ միայն վն հանապազորդական հացի:
և վասն որոյ յաւել. տուր մեզ այսօր, զի մի՛ ծա
խեսցուք զմեզ մեծաւ զբաղմամբ վասն հետեւե
առուր. զի ոչ միայն ասեմք զհաց մեր հանապա
զորդ տուր մեզ այսօր, զի ունիցիմք առ ՚ի ուտել,
որ հասարակ է ՚ի մէջ արդարոց և մեղաւորաց.
այլ զի զոր ուտեմքն ՚ի ձեռաց ան ընկալցուք, որ
է միայն սրբոց:

Կամ ո՞նչ մեկնէ սքն Հերոնիմոս. || Խնդրեմք
ասէ, զի տացէ մեզ տէր զվերնայինն և զդերս
զանցական զհաց. զհացն ասեմ զայն զոր ասէ

յաւ ետարանի . || Եւ եմ հացն կենդանի , որ յեր
կնից իջեալ : || Չի հաց կենաց ստէ , սքն Ախալ
բիանոս է ինքն քս , և հացս այս ոչ է աւենե
ցուն , այլ մեր . և զհացս զայս խնդրեմք հանա
պապօր տալ մեզ , զի մի՛ որք 'ի քս եմք . և զհա
զարդու թին հանապապօր ընկալնումք՝ 'ի միջ ար
կեալ զխորոցն ծանրադայն ինչ յանցանաց՝ 'ի
կերկնային հացէ անտի արդելեալ 'ի մարմնոյն քի
անջատեսցուք : արդ խնդրեմք , որք 'ի քսն եմք
զի մի՛ 'ի սրբութի նք և 'ի մարմնոյ իւրոյ հե
ռացուք :

Ե. Եւ թող մեզ զպարտիս մեր , ոմ և մեք թա
ղումք մերոց պարտապանաց : || Չկնի օգնութեն
հացի ստէ , սքն Ախալբիանոս խնդրեմք և զթո
ղութին յանցանաց , զի որ կերակրին 'ի տնէ ,
կենդանի լիցի և 'ի տէր . և ոչ միայն ներկայ կե
նօքս , այլ և յախտննականօքն մի թարեսցի , առ
որ հասանիլ կարէ , եթէ մեզ քն շնորհին , զորս
պարտք մեր անուանէ տէրն . և այլն :

Արդ որ վս մեղաց աղօթել ուսոյց՝ նա ինքն ըզ
հայրականն շթութի խոստացաւ . բայց յայտնա
պէս և զօրէնս ինչ կացոյց առ նոյնն պարտաւ
բեալ զմեզ , ոմ զի խնդրեմք շնորհիլ յանցանացն
մերոց՝ նոյնոմ և մեք պարտապանացն մերոց շնոր
հեսցուք : Արդ որով յուսով աղօթէ ստէ սքն
սակերերան , որ զթ շնամութին պահէ ընդդէմ
ընկերին , յորմէ դուցէ ևս մեաս ինչ հասեալ ի
ցէ . զի ոմ ինքն , որ աղօթէն՝ ստէ յասելն՝ թո
ղում , և ոչ թողու . այսպէս և ինքն խնդրէ յայ
զթողութի , և ոչ թողու նմա :

Չ Եւ մի՛ տանիր զմեզ 'ի փորձուի , այսինքն ,
ոմ մեկնէ թերթութիանոս , մի՛ թողուցու զմեզ
անկանիլ 'ի փորձութի յայնմանէ , որ փորձէնս
|| Եւ զոր ստեմք ստէ , սքն օգոսափնոս մի՛ տա
նիր զմեզ 'ի փորձուի , զինչ այլ խնդրեմք , եթէ
ոչ , զի մի թողոցես զմեզ անկանիլ 'ի փորձութի
|| 'ի խնդրուածս յայս ստէ , սքն կիպրիանոս
յայտ

յայտնապէս երևի, թէ ընդդէմ մեր ոչ ոք կարէ կալ հակառակ, եթէ ան նախ թոյլ ոչ ապրէ. զի ան երկիւղ և ջերմեան հոգով մեր դարձցի առ ան, և այլն: զի մինչ աղաչեմք, զի մի՛ անկցուք ՚ի փորձութի՛ խրատիմք այսու վն տկարութե՛ն: և փոքրագութե՛ն մերոյ յաղաչել մեր այսպ. զի մի ոք ստահակութե՛ք ամբարձցի, մի ոք հպարտութե՛ք, և ամբարհաւածութե՛ք անձին իւրոյ համարեսցի ինչ. և մի ոք զխոստովանութե՛ն և ըզջարջարանացն իւրոց զփառս ինքեան անցի. մինչ ինքն իսկ արն՝ ուսուցեալ զխոնարհութիս աւսեր. || Արթուն կացեք և աղօթս արարեք զի մի անկանիցիք ՚ի փորձութի՛ն:

Է. Այլ փրկեալ զմեզ ՚ի չարէ, ամէն. || Աղօթել պարտ է սակ սքն օգոստինոս, ոչ միայն զի մի անցուք ՚ի չարն, զոր ոչ ունիմք, որ ՚ի վեցերորդն է եզեալ տեղի խնդրուածաց, այլ և զի ազատեսցուք յայնմանէ, յորում արդէն անկեալն եմք. Եւ այս վերջին խնդրուածս ասէ սքն կիպրիանոս, պարունակէ զամ չարիս. և ըզձախորդութիս, որով թնամին մեր գուն գործեալ ջանայ ընդդէմ մեր ՚ի կորուստ, յորոց կարեմք ճշմարտիւ ինիլ աներկիւղ և ապահով, եթէ փրկէ զմեզ ան, եթէ մեզ, որք հայցեմք և պաղատիմքս՝ զօգնութի իւր պարգևէ: Կամ որպէս ասէ սքն սոկերերան. || Խնդրեմք ազատիլ ՚ի չարէ, այս է, ՚ի սատանայէ, որ կոչի չար վն ծայրագոյն չարութե իւրոյ, ոչ զի բնութն. այլ զի ընտրութն իւրով իսկ ունի, և զի զան տանէ իս յարուցանէ ընդդէմ մեր զպատերազմ. || Իսկ այս վերջինս ասէ սքն օգոստինոս, որ ՚ի արևնկն աղօթան է եզեալ, այնքան յայտնապէս երևի, մինչ զի քրիստոնեայն յիւրաքանչիւր փորձութիս եզեալ աստուստ սկսեսցի, այսու հեծեցի, այսու զարտասուս հեղցի, և այսու եզերեցի զաղօթս իւր. վն հետևի, Ամէն, որով իղձ աղօթողին յայտնի լինի:

Հ Ա Տ ՈՒ Ա Ճ Չ ՈՐ ՈՐ Դ՝

Յաղագս Առաքինութեն սիրոյ , և վս մեղացն
որ է ներհակ նմա :

Ս. Ա երն է գերբնական առաքինութիւն մծաբա-
նական , որով զամ ՚ի վերջան զամ ինչ
սիրեմք վս իւր , և զընկերն վս այ :

Ասեմք առաքինութի գերբնական . զի միայն
բնական զօրութի ոչ լինի ստացեալ . այլ հար-
կաւոր է զի յայ պարբնեսցի . վս ստէ առա-
քեալն համ . 5 . || Չի սերն այ սիւսեչէ ՚ի սիրտս
մեր ՚ի ձեռն հոգւոյն սբլ , և՛՛ Եւ սքն օղ ստս ,
|| Սերն այ ստէ , սիւսեալ լինի ՚ի սիրտս մեր ,
ոչ զի որով նա սիրէ զմեզ . այլ զի որով զմեզ
սիրելիս իւր առնէ .

Ասեմք երկրորդ , Աճաքանական , զի զամ
ունի անմիջապէս յառարկոյ նախապետականա
բար , լըրմ է ըստ ինքեան գերադոյն և անեղբ
բարի , և երկրորդաբար , ըստորում զքա-
րութի իւր բանական ստեղծուածոց յայտնէ .

Ասեմք երրորդ , որով զամ ՚ի վերջան զամ ինչ
սիրեմք վս իւր , վս զի ըստորում ստէ սքն բե-
նեւիկտոս , պտճա սիրելոյ զամ , է մծ : կերպն .
սիրել զնա առանց կերպի , և զոր և ս բարւոք
մեկնեացուք ՚ի ներքոյ :

Ասեմք չորրորդ , և զընկերն վս այ , այս է :
վս մծային բարւոյ , որ ՚ի յընկերն փայլի , կամ
առ սր ընկերն ստեղծեալ է :

Իսկ մինչ վս ամենազնիւ առաքինութես բա-
զում ինչ սովոր են վիճել մծաբանք , մք միայն
զմանաւանդականս աստ , և զհարկաւորս ՚ի գի
տութի ըստ ընդունելի հասարակ վարդապետու
թե նյ և և ս զայնսսիկ , զորս սքն թօմոս լայնա
տարած մեկնէ , ընձեռել կամեցաք .

Բ. Առաջինն է , զի սերն ոչ միայն է գերբնա-
կան

կան առաքինութի անձաբանական , դերագոյն
բան զայլ ամ առաքինութիս կատարեալ , ուղ
բարուք ցուցանէ սքն թօմաս , այլ ևս իբր
տեսակ առաքինութեցն այնոցիկ , այսինքն ըստ
որում այնոցիկ՝ տայ զվերջին և զծայրագոյն
կատարելութի , կատարելարօք կարգադրեալ
զգործ նց առ վերջին վախճանն :

Երկրէն է , զի սերն ոչ է ցանկուի , կամ իղձ
աշխարհային այլ ճշմարիտ և կորեալ բարեկա
մութի , որով նախ յայ առանց արդեանց մեքոց
սիրեցաք , և բարեբարութք նր զօրացեալք
փոխաբերաբար սիրեմք զնա . և ի վերջ զամ ինչ
սիրեմք վս բարուէ նր , ոչ զի առ մեզ բարի և
բարեբար է , այլ զի ըստորում ըստ ինքեան է
անհուն բարի . և բարեբար . և ադա անչա
ժաբար սիրելի . մինչ (ուղ յառաջին մասն ,
ընձե՛՛ 2 . զլ՛՛ 2 . ասացաք .) ամ ինչ որ յատեղ
ճռեալս բարի և կատարեալ է , կամ կարէ լի
նիլ . նոյնն ամ յամ , մանաւանդ ևս դերագոյն
և կատարելագոյն կերպիւ գտանի , որ զնա ամ
սիրոյ ամենարժան առնէ :

Դ . Երրորդն է . գործք սիրոյ , որոց ոմանք են հրա
մայականք , որպիսի են այնոցիկ , որք ՚ի ձեռն
հրամանի սիրոյ ՚ի կիր արկանին . ուղ մինչ որ
տայ զողորմութի աղքատի , ոչ միայն զի կարօ
տուէ նորա օգնեսցէ , այլ մանաւանդ , զի
այ հաճոյացի , և նմա զգործ ինչ հաճելի մա
տուցէ : իսկ այլք են յառաջ եկեալք , որք են
յատուկ նմա , և ՚ի տեսակաւ որ սլատառէ նր
յղացեալ լինին , և որովք մարդն անի առ ամ
ուղ առ ծայրագոյն սիրելի , կամ ՚ի ձեռն միտէ
ըղձից . զնոյնն կամեցեալ՝ զոր և ամ կամի . ըզ
հրամանս նր , զխօրհուրդս և զայլս՝ որք հաճոյ
են նմա , ըղձալով , և կատարելով ոչ վս այլ
դատաճառի , և թէ ոչ զի զկամս իւր ամային կա
մացն կատարելապէս միաւորեսցէ , և համա
ձայնեսցէ , կամ ՚ի ձեռն միտէ որութեն բարե
կա

կամուժե՛ն , որով կամի այ զամբ բարիս , զոր ին
բեան կարէ կամիլ . զի ներքին և զէական բա
րիս կամի նոյնոյ այ վասն ճշմարիտ և կա
տարեալ հաճուժե՛ն նր՝ ՚ի նոսին , իսկ զարտա
քին բարիսն այս է , զփտուս , զզատիւ , զսէր ,
զպահպանուժի , և զայլ պաշտօնս կրօնի , և
առաքինուժեց ինքեան այ յանկայ , և կամի ,
զի մատուցեն ինքն՝ և այլ արարածք ամենաբոբ
բոբ սիրով , որով զայս ամ ոչ միայն կամի , և
ջանկայ այ , այլ ևս ամ զօրուժե՛ք իւրով , որով
կարէ , զի ճշմարտիւ մատուցի , կատարէ :

Դ. Չորդն է , զի ճշմարտէ , զոր ասէ սքն
բեանարտոս , թէ չարին սիրելոյ զամ , է ան
չարի . վասն զի սէրն , թէ նկատեցի առարկայ
աբար ըստ բարւոյն այնմիկ , զոր կամիմք այ , թէ
արժողականաբար ըստ համարման , զոր վսնոյ
նոյ այ իմանամք , և թէ սաստկաբար ըստ եռաց
ման , և ընդարձակման , որով ՚ի ձեռն սիրոյ
առ ամ ամիմք , ոչ երբէք ունի զչարս : քանզի
պարտիմք արդարև սիրել զամ առարկայաբար ,
և ամենամեծ վակմամք ՚ի վերջան զամ ստեղծու
ածս : ուստի քս արն մեր մտժ՝ 101 || Որ սիրէ
ասէ , զհայր կմ զմայր առաւել քան զիս , չէ ինձ
արժանիև թէ այ Ե հասարկ վճարոց Ածաբանիցն
սաստկուին կմ ըրձուկումն սիրոյ ՚ի ներքոյ պար
տաւորուեն ոչ անկանի , և կարեմք պարզներգոր
ծուք սիրոյ բաւարարել ամյին պատուիրանի ,
որ հրամայէ սիրել զամ բոլորով սրտիւ , սակայն
ոչ է սահմանեալ աստիճան ինչ սաստկուժե՛ն սի
րոյ սա ամ : և մեք ոչ ինչ եռանդադոյն և սաստ
կադոյն սիրով կարեմք սիրել զամ . ապա թէ
ոչ , ոչ մնայր առաւել սաստկաբար սիրելոյ զամ .
առ որ թէ պէտ ոչ պարաւանդիմք հրամանաւ ,
սակայն հրաւիրիմք և յորդորիմք ՚ի ձեռն շնոր
հաց նորս :

Ե. Հինգրդն է , զի ունակուժին սիրոյ , օնչ
և վս այլ ամաբանական առաքինուեց ասելի է ,
Եր 1 1 ոչ

ոչ բղխի բնականաբար 'ի ձեռն ներդործուեց ,
 ան լատն բարոյական առաքինութեցն ունակու
 թեց' ուսուցանեն փիլիսոփայք , այլ յայ սիւնի ,
 ուն առաքեալն հոսմ' 5 . || Ահրն այ սիւնեալէ
 'ի սիրտս մեր 'ի ձեռն հոգւոյն սբջ , որ տուեալ
 է մեզ , և հետեւաբար ըստ հաւանականադոյն
 և հասարկ բանիցն անձաբանից' 'ի նոյնոյ այ առա
 տանայ . և ոչ 'ի ձեռն այլինչ դործոյ ներդործու
 թե , և թէ ոչ միայն 'ի ձեռն պատրաստական և որ
 գիւնաւոր ներդործութե , ան յառաջին մասն
 ստացաք : ընձեռն' 6 . գլ' 1 . սրակ 6 . վնջ ժղ'
 թրի' ցուցանէ , թէ եկեղեցին զաճումն զայն
 ինդրէ յայ յաղօթս ինչ յասելն : || Տուր մեզ
 ար զաճումն հաւատոյ , յուսոյ , և սիրոյ :

Արդ թէ 'ի ձեռն ներդործութեց ամանց որք
 զաճումն սիրոյ ստանալ կարէ , ոչ յայտնապէս
 երևի 'ի մէջ անձաբանից . զի ամանք համարին ,
 թէ միայն 'ի ձեռն ընդարձակ ներդործութեց
 ունակութե կարէ ինիլ . և այլք 'ի ձեռն հա
 ւասար ընդարձակեալ ներդործութեց . իսկ
 այլք ասեն , թէ մղն 'ի սէրն եղեալ , 'ի ձեռն
 իւրաբանչիւր առաքինութեցն ներդործութեց'
 ստանալ կարէ զաճումն սիրոյ , զոր 'ի մէջ այլոց
 ուսուցանէ երանելին ֆրանչիսկոս սալէ զեանն ,
 և զոր հաստատէ 'ի 24 . կանոնէ ժղ' թրի' ուր
 անսահմանաբար և առանց բացառութե ասի ,
 թէ ընկալեալ արգարութիւն աճի 'ի ձեռն բա
 րեգործուեց . զի ուր . ասէ նա , ըստ սբջն բեռ
 նարտասի , ոչ ինչ բացառոցի , և ոչ ինչ զա
 նազանի :

Եւ թէ պէտ լատն մեծի առնս հեղինակուե ,
 և բնի բարեգոյն պատճառաց , որովք հաստատէ
 նոյնն , վերջինս այս վճիռ հաւանականադոյն
 ևս ըստ արժանւոյն երևեացի , սակայն ստրա
 հալադոյնէ , և օգտակար խրատ անցն , զի զկա
 տարեկադոյն ներդործութիւնս սիրոյ' յաճախ
 բղխեցի : և զայլ բարեգործութիս 'ի պատ
 ճառէ

Տառէ : Ծոյնոյ առաքինութիւն ներքին հոգւոյն
ըզձին 'ի գործ ամչեն . զի այսու պատճառաւ
ոչ միայն զաճուին , այլ և զառատութիւն ամբային
առաքինութեն այնորիկ ընկալնուլ արժանանան :

Ը Քարձել պատուական դանձն այս միով մտ
հացու մեղօք բոլորովին կորուսեալ լինի : և է
ըստ հաւատոյ , զոր և հաստատեաց ժող' Թրի' :
որ և հակադարձաբար , Թէ 'ի ձեռն ներեի
մեղաց սէրն ոչ կորուսանի , սահմանեցաւ 'ի
նոյն խկ ժող' . որ յայնապէս խկ սաէ : || Թէ
արդարքն սրբանիցս 'ի ներեի մեղս երբ և իցէ
անկանին , վն այսորիկ ոչ դադարին 'ի գորչ ար
դար : յորոց երևի , Թէ ոչ միայն սէրն ոչ կո
րուսանի , այլ և ոչ նուազանայ 'ի ձեռն իւրա
քան վեր ներեի մեղաց : զոր ուսուցանէ սքն
Թօմաս . և ընդ նմա վարդապետք 'ի հասարա
կի : քանզի եթէ սէրն նուազեր 'ի ձեռն ներեի
մեղաց' անտուստ հետեւէր , Թէ 'ի ձեռն բազում
ներեի մեղաց' սէրն բոլորովին կորուսեալ լի
նէր . զի ամ' եզերեալ 'ի ձեռն յաճախ բարձման
եզերելոյ ուրուք սղառի : Եւ Թէպէտ այսպէս
է , սակայն խոստովանիլ պարտ է , Թէ եռանդն
սիրոյ նօձազի 'ի ձեռն ներեի մեղաց : և Թէ ոչ
չեն հակառակք սիրոյ' սակայն գործոց նր' ներ
հակին և զվատթար ունակութիւս սակաւ առ սա
կաւ 'ի հողին ծնանին , որով զք առ 'ի գործել
զմեծագոյն և զմահացու մեղս կարգադրի :

Է . Ա եցնքն է , Թէ է յատուկ պատուիրան
ինչ վն սիրելոյ զմծ ոչ միայն բացասական , որով
արգելեալ լինի ամ' ինչ , որ կարէ գործիլ ընդ
դէմ պարտաւորն սիրոյ նր' , այլ և ստորասակն ,
որով զմծ ներքին ինչ ներգործութիւն սիրել պար
տաւորիւք . որով սաէ սքն Թօմաս , և հաստատի
'ի քանից քսի նն մերոյ մտթ' 22 . || Սիրեսցես
զմծ ամ' քո յամ սրտէ բուսմէ . և'' : և մինչ յա
ւելու զայստօսիկ առ նոյնն : || Այս է մեծ և առա
ջին պատուիրանն : զնոյնն յայլոց պատուիրա
ւնայն

Խնդրեսցեալ , թէ եթր պարտաւորէ պատուի
բանս այս : Պատասխանեմ նախ . թէ ճշմարիտ
է , և յայտնի առ ամեն . զի յայնժամ մեք առ 'ի
բլխեւել զներդործութիս սիրոյ պարտաւորիմք ,
յորժամ առ 'ի կիրարկանել զդործ կատարեալ
զղջման պարաւանդիմք . թէ 'ի կէտ մահոճան ,
մինչ այլով ընդ այ հաշտիլ ոչ կարեմք , և թէ
մինչ 'ի կացու թէ մահացու մեղաց եղեալ , զխոր
հուրդս ինչ ընդունիլ , կամ մատակարարել կա
միմք , և ոչ դտանի խստովանհայր . զի յայնժմ
դործ կատարեալ զղջմանն սիրով տեսկաւորիլ
պարտի , ուղ ասէ ժղ'' թրի'' :

Պատասխանեմ երկդ , թէ հաւանական իմն
է , զոր ուսուցանեն նավարոս և այլք . թէ միջն
'ի կիրարկանել զներդործութի սիրոյ պարտա
ւորի , մինչ զառաջին կիրառութին բանականու
թե ելից , և բաւականապէս ծանեալ , թէ ամ
է ծայրագոյն բարի և վերջին վասնձան , առ որ
զինքն և զիւրան 'ի ձեռն ներդործութե սիրոյ'
ուղղել պարտէ : և թէ պէտ պօնակինս և այլ
ամծաբանք ասեն , թէ յայնժամ առ 'ի կիրարկա
նել զներդործութի սիրոյ ոք' ոչ է պարտաւոր
'ի ներքոյ մահացու մեղաց , սակայն աներկբաց
իմնէ առ ամեն , թէ զանցառումն այն ոչ է մեղք
մահացու 'ի նմա , որ զայնմանէ պարտաւորու
թէ զոչ ինչ լուան , կամ խորհեաց , թէ առ 'ի
կիրարկանել զներդործութի սիրոյ պարտաւորի .
կամ որ վարդապետացն այնոցիկ վճռոյ հաւա
նիլ ոչ կամեցաւ , և զհակառակն վճիռ իբրև
զհաւանական ընդդրկեաց :

Ը. Արդ որ պատկանի առ մեզս , որ է ընդ դէմ
սիրոյ . թէ պէտ ամ մահացու մեղք ըստ որում
են վշտացու ցիւք այ' ընդդիմանան առաջինու
թե սոյսմիկ , սակայն երկու են , որք նմա յատ
կապէս և մասնաւորաբար հակառակին :

Առաջինն է ասելու թէ այ' զոր մեղաւորն կարէ

յղանալ 'ի յինքն . ուղ առուցանէ սքն թօմաս :
'ի խորհելն զոմանս զործս անճային կամաց , որք
ապականեալ կամաց նք ներհակին . ուղի են պս
տիճքն մեղացն վս եգեալք . զի ան ըստ ինքեան
յատկապէս ատել զոր ոչ կարէ , մինչ 'ի բնութե
լուրում ոչ այլ ինչ , եթէ ոչ անհուն սիրելու 'ի
դտանի : և մեղքս այս առանց կարծեաց ծանրա
գոյն է 'ի միջ ամ մեղաց , ուղ ասէ սքն թօմաս ,
մինչ սովաւ մարդն մեծապս յայ հրաժարի :

Երկրն է , ծուլութի , ուղ ասէ սքն թօմաս .
և ոչ այլ ինչ է , եթէ ոչ սիրութի և ձանձրութի
ինչ կամաւոր , և ազատ վս հոգևոր բարւոյ ,
ըստորում է անճային բարի . ք . ըստորում 'ի
ձեռն այնորիկ հոգևոր բարւոյ , այսինքն , 'ի
ձեռն ընկալման խորհորդոց և այլ բարեգոր
ծութնց՝ մարդն գիմէ առ ան , ծառայէ նմա .
և փառաւոր առնէ զնա , և'' : և այսպէս ներ
հակի ուղղապէս սիրոյ , որոյ յատուկ է ուրա
խութին վասն հոգևոր բարւոյ :

'ի մեկնել մեր զայնտակ , որք առ սերն պատ
կանին , ըստորում առ ան նկատէ , երևի , թէ
կարգ վարդապետութես պահանջէ , զի և վս
սիրոյ ընկերին վարդապետեսցուք : իսկ զի բա
զումք , որք առ առ սքինութիս այս պատկանին ,
'ի յեթից տախտակն պարունակին , պատշաճա
ւոր իսկ համարեցաք ընձեռել զայնցանէ յետոյ ,
որք առ սերն ընկերին պատկանին 'ի մեկնել մեր
զչորորդ , և զհետևեալ պատուիրանս :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ճ Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ :

Յաղագս առաքինութեն կրօնի , և մե
ղացն . որ հակառակ նմա :

Իրօնն ըստ սքն թօմայի , է առաքինութիւն
այն . որով մարդիկ զպարտաւորն պաշ
տօն և պատիւ այ տան . և որ ոչ է անարանական

այլ առաջինն և մանաւանդականն 'ի մեջ բարոյ
անկանայ . մինչ յանմիջապէս առարկոյ ոչ զինքն
զամ՝ այլ զպաշտօն և զպատիւն նք ունի :

Եւ գործ սորա , ոտք և այլ առաքինութեցն
է կրկին . զի սմանք են յառաջ եկեալք , որովք
մարդն հպատակի այ և զպարտաւորն պաշտօն և
զպատիւն նմա մատուցանէ , որպիսի են երկր
պաշտին , պատարազն , մատուցումն , ազօթքն ,
ուխտն , և'' . Երկրպագելով զամենաբարձր
տէրուին այ յարդեմք և զմեզ նմա , որքան կա
րեմք հոգւոյ և մարմնոյ խոնարհութիւն հպատա
կեմք : 'ի ձեռն զմտադի , զինքն զամ պաշ
տեմք , իբրև զամենամեծ կենաց և մահու զհե
ղինակն . 'ի ձեռն մատուցման խոտուվանիմք
զբացարձակ և զամենազօր տէրութիւն այ 'ի յամ
ստեղծութեամբ : 'ի ձեռն ազօթից՝ առնա զիմեմք ,
ոտք առ աղբիւրն և սկիզբն ամբարեաց , որում
յուստամքն : իսկ 'ի ձեռն ուխտի ձանաչեմք զնա
իբրև զվերջին վախճան , առ որ զմեզ և զամ
մերսն յատուկ ըզմիւ առ նա ամեղ կամիմք . զօ
րոց ամից 'ի մասնաւորի կատարելութիւն իսկ վար
դապետէ սքն թօմաս : իսկ այլք են հրամայ
եալք , որպիսի են ամ գործք այլոց առաքինու
թեց . որք առ պաշտօն այ ամիւ կարեն . ուստի
տակ սքն յկք , գլ' : Արձանորութի սք և
անարատ այս է , այց առնել որբոց և այրեաց
'ի նեղութե նոցա :

Բ . Եւ որ պատկանի առ մեզն հակառակ ա
ռաքինութեն կրօնի . են բազումք , և բազմա
պատիկք , զորոց ոչ միայն աստ , այլ և 'ի հետ
և եալ յերկուս պրակս վարդապետեացուք .

Առաջինն և մանաւանդականն և իբր արմատն
այլոց է աւելորդապաշտութիւն , որով ըստ սքն
թօմոցի , կամ այ ապօրինաւոր պաշտօն , կամ
արարածոց անպարտն պաշտօն մատուցանի ,
Առաջինն այն բաժանի և ևս յերկուս տեսակս
որոց մինն է , մինչ այ մատուցանի սուտ և կեղ
ծեալ

ճեալ պաշտօն , ունէ թէ որ այժմ զպատարագս
հին օրինացն մատուցէ : Չի պաշտօնս այս ըստ
սբին թօմայ , է սուտ . մինչ կացուցեալ էր առ
ի նշանակել զպատնի խորհուրդս կենաց և
մահու թի ան մերոյ . որ արդ իսկ կատարեալ
է : Առ այս մեզս պատկանի և ևս ըստ թողեթո
սի զսուանշխարս ինչ փոխանակ ճշմարտի են
թաղրել . կամ զսուտ հրաշս ձևակերպել , առ
ի սուտ անուամբն կրօնի զողորմութիս աստի և
անտի ժողովել :

Իսկ միւսն է , մինչ մատուցանէ որ այ զաւել
լորդն պաշտօն . այս է , ուն մեկնէ սբն թօմաս ,
մինչ լինի իմն , որ ոչ ածի ի փառս այ , և
ոչ ևս առ այս , զի միտք մարդոյ առ ան համ
բարձցի . կամ անկարգ ցանկութիք մարմնոյ
սանձադարեացին , կամ ևս է արտաքոյ սահմա
նադրութեն այ , կամ է ընդդէմ օրինաւոր և
քննեալ սովորութեն եկեղեցւոյ . և Չի զայս
սիկ անսն ասէ սբն թօմաս , համարել պարտ է
ընդունայն և աւելորդապաշտական :

Եւ աւելորդապաշտութիւն այն , որով որ
զանպարտն պաշտօն արարածոց մատուցանէ ,
ունի զհնդեան տեսակս , այս է , զկապաշտու
թի , զմուշուի , զհմայուի , զունայն պահպանուի
այս է զաւելորդապաշտութիւն , և զկախարդութի :

Կապաշտութիւն է , մինչ անայինն պաշտօն
արարածոց ինչ իբրև այ մատուցանի , իսկ ըստ
թողեթոսի , կապաշտութիւն ոչ միայն կրօնի ,
այլ և հաւատոյ հակառակի , զի ուն ճշմարիտ
երկրպագութի ոչ է , եթէ ոչ կանխեսցէ յիմա
ցականութե հաւատն , որով զբարձրութի նր
ձանաչեմք , որում հպատակիմքն , այսպէս և
սուտ երկրպագութի , որ է կապաշտութիւն , են
թաղրել զմոլորութի յիմացականութե , որով համա
րիմք զարարածս ինչ արժանի անյին պատուոյ :

Սոպութիւն է անկարգ իշխանութի ինչ տա
լեալ ի ձեռն դիւաց զայնադրութի ընդ նս ,

որով'ի ձեռն վատթար և անելորդապաշտանն
 միջոցից լինի ինչ, որ է' ՚ի վերջան զգորութի բնու
 թե և սակայն ոչ գերազանցէ զբնական զորու
 թին գիւնաց. և դաշնադրութիւն այն մոգուց ընդ
 գիւնաց լինի կամ յայտնաբար յերևել իսկ գիւնաց,
 աչաց մարդկանց, կամ ՚ի ձեռն այլոց մոգուց,
 որք զտեղի դիւացն լնուն. կամ լռելեայն կար
 դալով առ դևս, որ ոչ միայն լինիլ համարի,
 մինչ որ բանիւ խնդրէ զգորութիւն գիւնաց, այլ
 և սքանկցս անգամ որ փորձէ առնել զիմն, այ
 նու, որ ոչ ըստ ինքեան, և ոչ գերբնական
 ինչ յածուստ պարզեալ զգորութիւն զայսպիսի
 ներգործութիւն կարէ յառաջ բերել. ուր մինչ
 բանք ինչ, և կնիք ՚ի կիր արկանին առ ՚ի բուժել
 զցառս և զվերս ինչ:

Գ. Եւ ըստ թուեթոսի միշտ մոգութեան միացեալ է և հերետիկոսութիւն, ուր եթէ մտն յանդ
 գնութեամբ հաւատայ թէ դևք կարեն առնել
 զհրաշս, կամ զիմն առանց թոյլատրութե ան
 յատուկ զգորութեամբ իւրեանց կարեն առնել.
 վն զի ըստ սբյն օգոստինոսի, || Աննաճշմարիտ
 է, ասէ, թէ միայն ան կարէ առնել զամ, զոր
 կամի, և թէ ոչ կարեն դևք առնել զիմն բնա
 կան զգորութեամբ իւրեանց, եթէ ոչ թոյլ աս
 ցէ ան:

Յաւել նոյն թուեթոս. թէ կարէ երբեմն
 պատահիլ, զի ոմանք պարզամիտ անձինք ըստ
 Պարտէ ըստ ամի պահել . զի 'ի նորունական աւ
 ուր մի' ոք համարձակեցի գործել կամ վաճա
 աւել . կամ գնել . բաց 'ի կերակրեղինաց անտի ,
 զի ամբն աղատուի և ըստ պարտին յաւուր յայն
 միկ օրքան կարնէ գնացեն յեկեղեցին , և'' .
 Իսկ օրյաւուր կիրակիի զաշխարհինս և զգուեհ
 կահանս յանգղնեցի վարել զգործս , սուանց
 կարծեաց առնէ ընդդէմ օրինացն այ : Եւ սքն
 գրիչոր : || 'ի նորունական աւուր , յերկրային
 աշխատանաց անտի սակ , պարտ է գադարիլ և
 բոլորովն աղօթից պարապիլ . զի զօր զաւուրս
 վեց ծուլութիք գործեցաք , յաւուր նորունական
 յարութեն աղօթիւք քաւեացուք :

Ընդ ծառայակն գործս համարին և այլ երկու
 թեոք գործոց , որք թեպէտ չեն ծառայականք ,
 սակայն արգելեալ լինին եկեղեցական օրինօք 'ի
 կիր արկանել յաւուր կիրակիից , և տերունակն
 աւուրց . զի զհօդի մարդոց աշխարհայնօքն յոյժ
 զբաղեն , և յաճային սաշտմանց յոյժ հեռա
 ջու

ցուցանեն . այս է , վաճառն կամ առևտրուիք .
և դատաստանական և դատողական գործք :

Եւ այս հաստատի և ևս 'ի բազում ժողովոց
բաճանայապետիցն բանից . ուր 'ի ժող' վարիզոյ
'ի ժամանակս չի գրի գորի պատկին յամիտն 220 .
ուր ստի , || Կայսերականն բարձրուէ պատկանի ,
զի ի չխանութիւն տունեալ նմա յոյ՝ յերկիւղ ամենե
ցուն լիցի : 'ի չթողուչ համարձակել ուրուք 'ի
որբաղան և յամենամեծար աւուրս յայս , (այս է
'ի կիրակի) առ 'ի պարսպիլ 'ի վաճառս , և 'ի
դատաստանականս և 'ի դաւեհկականս գործ : Եւ
'ի ժող' Արեղաստինեայ , արգելեալ լինի , || 2ի
մի 'ի արուեստն աւուրս հրնրկկն վաճառք . այլ
և դատանին վէճք և դաժնազուիք 'ի կիր արկցին :

Բ . Իսկ վս սմանց գործոց ոչ միաբանին անա
բանք , մի՛ թէ ծառայական են , թէ ոչ . և ապա
թէ արգելեալ իցեն 'ի արուեստական աւուրս :
Չորոց սասացուք կարճ 'ի կարճոյ , զի ըստ նա
ւարստի , և այլոց , ոչ է ծառայական գործ , և
ոչ արգելեալ 'ի արուեստական աւուրս՝ զնալ 'ի
ճանապարհ , գրել . զնալ յորս 'ի պատճառս
դրօսանաց . ձկնորսութիւն , և պատկերաճանու
թիւն . թէ պէտ այլք ըստ արգելանց երկրային ,
մի՛ թէ օրինակելն զգիրս ինչ կամ նկարագրելն
վս շահու և վարձու , նոյնպէս և զնալն յորս 'ի
արուեստական աւուրս իցէ օրէն . որովհետեւ այս
պիսի գործք մանաւանդ վարձկանացն և մշա
կացն յատուկէ , մինչ վս շահու լինին և վարձու ,
և վս ծառայական պարտին համարիլ , ուստի
սպասողադոյն ևս է , հեռի կալն 'ի սոցունց :

Ուսուցանէ նաւարոս 'ի վերոյ 'ի սքնն թմյէ ,
թէ 'ի արուեստական աւուրս վեց գործք ըստ օրի
նաց կարեն գործիլ : Նախ այնոքիկ , որք
պատկանին 'ի պաշտօն ոյ , Երկր այնոքիկ ,
որովք հոգևորքն մակրրին . ուր ուսուցանել բա
նիւ և գրով : Երբ՝ որք հարկաւոր են 'ի յա
տուկ պահպանութն հոգւոյ և մարմնոյ :

որք են հարկաւոր ՚ի յատուկ պահպանութի հոգւոյ և մարմնոց ընկերին : Հինգ երգ՝ որք հարկաւոր են առ ՚ի զերծանել ՚ի մերձակոյ հոգւոյ և մարմնաւոր վնասու իւրոյ անձին և կամ ընկերին : Աեցրգ, որք ՚ի պատրաստումն կերակրոցն ինչքին :

Դ. Եւ ՚ի հասարակի խօսելով սուեմ, թէ իւրօրանելու դործ ևս ծառայական ըստ օրինաց կարէ գործել զն հարկաւորուեն հասարակութե, և կամ զն յատուկ անձին ուրուք, ուր ՚ի ժամանակի հնձոց վասն շեղեղացն անձրեաց վտանգի տանել զցորեանն ՚ի յըշտեմարանս . կմ զայլ ինչ գործ գործել, զն աղատելոյ ՚ի վնասու . Վն այսորիկ ևս և աղքատ արհեստաւորք երբեմն ըստ օրինաց ՚ի արունական առուրս կարեն գործել ՚ի չինիլ որողայթի դայթակղուն, եթէ առանց գործելոյ յառուր յայնտիկ ոչ կարացնեն պահել զընտանիս իւրեանց . բայց սակայն յայս պիտի պարադայի ՚ի լինիլ ուրուք, բարեգոյն է միշտ դիմել նր առ մեծաւորս, այս է առ եմքն, կմ առ միմքն նր, և ինդրել զն առ այս զհրաման : Կայնպէս ևս զծառայական գործս կարեն գործել ՚ի պատճառս զթուե և կրօնի . ուր զարգարել զսեղանս, կամ զայլ ինչ նման պատրաստութիս եկեղեցւոյ, և սակայն եթէ հնար ինն իցէ առնել զայնտիկ ՚ի նախընթաց առուրն, չէ վայել թողուին ՚ի արունական առուրս առնել . Եւ օրինաւոր սովորուին ևս որ ՚ի մեծաւորացն զանցարեալ յարդելեալ գործս ինչ, կարէ զմիմքն ևս անմեղադիր առնել . ուր վաճառն ՚ի ժմկս հրպրկին առուրուե . և ՚ի յայլ նման ժամանակս և պատահմանս :

Իրձլ յանցանել ուրուք զպատու իրանաւս ՚ի թեթեւ նիւթս կարէ անբասիր լինիլ գոնեա ՚ի մահացու մեղաց, ուր եթէ որ զբաղեացի ՚ի ծառայական գործս ՚ի սակաւ ժմկս, այս է զժամ մի . (և այս առանց դայթակղուն) ոչ հմարի մեղք մնչոս :

Ի. Մակայն գիտելի է , զի են քաղում գործք ,
 որք թէպէտ չեն ծառայականք , սակայն չէ օրէն
 գործել զայնասիկ ի նրունական աւուրս , վն
 երկարուն ժմկի զոր պահանջեն , սրոյ վն երևին
 ներհակիլ առ ի սք առնել զաւուրս զայնասիկ :
 Չի ս արգիւտք անմեղադիր կարէ առնել զայնս
 սիկ , որք ի խաղս ի կագս ի դասարկաբանութիս
 ի յորսս . և ի յայլ նման գործս ծախեն զքոյր
 օրն : Այլ ըստ արժանւոյն տրուեցայ զնեցունց
 սքն կիւրեղ աղեքսանդրացին ի և զիրն . ի մեկ
 նութի սքն յօհ . գլ . 5 . || Ո՛րքան են քրիստոս
 նեայքն , որք զաւուրս տօնից ծախեն ի ծառայ
 ական խաղս , ի զեղխութիս , ի պարս , և ի
 յայլ ունայնութիս աշխարհիս , փոխանակ մաս
 դրուք ծառայելոյ նոյ , յաճախելոյ յեկեղեցիս ,
 պարապելոյ յաղօթս , և ներկայ դասնելոյ եկի
 զեցական ժամակարգուեցն և պաշտմանցն , և
 զսճ շարժեն անառակ վարուք իւրեանց ի բար
 կութի : Մի թէ այս է պաշտելն զտօնս , պա
 րասիկ անառակութե , դարմանել զորովայնն ,
 և կատարել զհամս մարմնոյ . և այլն : Յա
 ւուրս գործոց իւրաքանչիւրք պարապի և
 զիտէ ի գործ իւր և ի յօգուտ , և ոչ ոք է՝
 որ ծախէ զժմկ իւր յանառակութի ի զեղխութի .
 ի խաղս և ի յունայնութիս աշխարհի . իսկ յաւ
 ուրս տօնից յամ կողմանէ , ի զինարբուս , ի պան
 դակս , ի թէաւրօնս և ի պարս զիմեն , ի նախա
 տինս անուանն նոյ , և ի յարհամարհանս տօնից :

Եւ թէպէտ համեստ և պարկեշտ և շովաւոր
 զբօսանան յաւուրս տօնից զինի կատարելոյ զպաշ
 տօնն կրօնի չէ արդէլեալ || Սկնն (սակ սքն յօհ .
 ոսկեքերան) այնոյ պարտէ կատարել զաւուրս
 տօնից , զի մի՛ ըարձակութե մարմնոցն ապակա
 նեացի և մաքրութի հոգւոյն . այլ մանաւանդ ի
 բաց եկեալ յամ անառակուեց , յարեկցութեց
 և ի զեղխութեց պարապեացութի ի զգաստութի և
 ի սք պարզամտութի , զի զայն զոր մարմնաւոր
 թուժկա

Ժուժկալու թիւ ոչ ստանամք, մաքրու թիւ մտայ
խնդրեսցուք :

Է. Երկրն որ ՚ի սթ առնել զաւուրս տօնից
խնդրի, է, զի զաւուրս զայնտակ ծախեսցուք
անձային պաշտման, և այլ բարեգործուեց, և
բաց յայլոց կրօնի և բարեպաշտուէ կրթուեցն,
որք առ պարտաւորն հաշակումն տօնից պատկա
նին, յաւելեալ լինի մանաւանդ և մի ինչ. այս
է, զի յաւուրս կիրակիից և արուեստական տօնից,
անձ և իւրաքանչիւր հաւատացեալքն, որք զկիրա
սումն բանականուէ լցեալ լիցեն, ներկայ գտցին
տաննասթ պատարագի, այնու ջերմեանդ ութ
և ուշադրութիւն, որ վայելն է մեծի խորհրդոյս.
որ և սէ ըստ պատուիրանի եկեղեցւոյ, և հաս
տատի իսկ սովորութիւնն ան հաւատացելոց :

Արդ՝ առ ՚ի պահել ուրուք զպատուիրանս
զայս երկու ինչ խնդրին : Առաջինն է, զի լիցի
մարմնովն ներկայ, և մտօքն համբարձեալ առ
անձ : Զի որ զխոսացեալ թէ պատարագի յայս ինչ
եկեղեցւոյ և մնայ ՚ի տան, մտօքն միայն խոր
հեցեալ զնչդս պատարագի, ոչ կատարէ զհրա
մանս զայս. ուղ և ոչ նա, որ մարմնովն ներկայ,
մտօքն կամառ մեկուսի է յանայն խորհուրդս և
՚ի ցնդմունս ՚ի նշանաւոր ինչ ման պատարագի.
սակայն ոչ է հարկաւոր (ըստ թուլեթոսի) սկան
ջօք լսել, կամ մտօք իմանալ զաղօթան պատա
րագին, կամ զպատարագիչ քահանայն աչօք
տեսանել. այլ բաւական է բարոյական ներկայու
թիւնն. և զօրութենական գոնեա մտադրու
թիւնն : Այ կարէ որ (ըստ թուլեթոսի և այլ բն
անձարանից .) յայնժամ մինչ ներկայ է պատա
րագի, ասել զժամակարգութիւն իւր, և զայլ
աղօթս՝ առ որս պարտաւորի, և զերկաքանչիւր
պարտաւորութիւն ՚ի միասին կատարել. միայն
թէ, ուղ ասէ նաւարոս՝ այնպէս ասացէ զա
ղօթան զայնտակ, զի մի՛ զհարկաւոր զուշադրուի
իւր ՚ի լուր պատարագի կորուսցէ, և զխոսացի
և

և կամեսցի լսել զպատարագն , և դռնեա պաշտել զսփ Գորութե՛նաբար մատուցմամբ այնորիկ պատարագի :

Ը խնդրեսցես , մի՛ թէ ոք 'ի խոստովանիլն լուիցէ միանգամայն և պատարագն՝ բաւարարէ արդե՛ք պատուիրանի : Պատմ թէ , թէնչ սուարէզ և այլք ըստ պօնակիինայ համարին , թէ ոչ կատարէ , սակայն հաւանականագոյն է , թէ նա , որ 'ի Ժմնկի պարզի մանաւանդ 'ի ձայնաւորի , զոր լսէն՝ զսակաւ Ժմանակս ծախէ 'ի խոստովանիլ՝ վճարէ միանգամայն և զպարտան լսելոյ զպատարագ : զի 'ի նոյն ապաշխարուէ դործն և զայլ բազում դործս այլոց առաքինութեցն , այս է , զղջման , խոնարհուէ , բարի յառաջագրուէ և՛ . 'ի կիր արկանէ : ուք ըստ ինքեան ոչ ներհակին 'ի լուր պատարագի . այլ մանաւանդ յոյժ օգտեն 'ի ինիլ ուրուք ջերմեռանդուք ներկայ պատարագի : նաև զի հասարակ սովորուին , և կիրառուին այնպէս ունի զտեղի , մինչ զի 'ի հոգարարձական եկեղեցիս , կամ 'ի յայնստիկ մանաւանդ յորում մի , կամ երկու պատարագ միայն հաշակի՝ ոնչ 'ի դիւղօրայս և 'ի շէնս բժմ հաւատացեալք սովոր են խոստովանիլ ևս 'ի հաշակիլն պատարագի , զոր և լսենն , և ոչ ոք եպիսկոպոս , կամ մեծաւոր զայս արդէլեալէ մինչև ցայժմ :

Երկդն , որ խնդրի է , լսել ամբողջ զպատարագն , դռնեա մինչև 'ի յորհնուի քահանային . զի որ զմասն ինչ պատարագի թողու առանց պատճառի՝ մեղանչէ : Եթէ փոքր է զանցարարեալ մասն , մեղանչէ ներելաբար : իսկ եթէ նշանաւոր՝ մահացօրէն :

Է. Եւ թէ զինչ է նշանաւոր մասն պատարագի՝ զոր 'ի թողուլ ուրուք մահուչափ մեղանչէ , ոմանք համարին զմասն զայն պատարագի , որ յսկզբանէ մինչև 'ի յընթերցուածս ներփակաբր ընդարձակի , և առանց մահացու մեղաց թողուլ

Յաղագս տասնաբանեայ
կարէ : իսկ այլք ասեն , թէ նշանաւոր մասն
պատարագի՝ է մինչև ի յըսկիզբն աւետարանի :
յաւել նաւարոս , և այլք թէ կարէ որ բաւորա
բել պատուիրանի զի արդ և իցէ , եթէ զմասն
զայն լուցի : ի յայլ պատարագէ . և այս թէ ոչ
հաւանական տեսանի , սակայն բարեգոյն խրատ
իսկէ , և ապահովագոյն զամբողջ պատարագն
քահանայի միոյ լսել : և ևս ասէ նոյնն , թէ ոչ
է պարտաւորութի առ ի լսել զբազում պատա
րագս յաւուր ծննդեան ան , այլ բաւական է
մինն առ ի կատարել զհրամանն :

Ի՛նչ անմեղազիր կարէ լինիլ որ յոչ լսելն զպա
տարագն յաւուրս ասնից մի բնական , կամ բա
րոյական սկարութե : Բնական անկարութիւն է ,
մինչ որ ամենեկին ոչ կարէ առնել զայն , ուր եթէ
է ի բանտի , հիւանդ յանկողնի , կամ ճանապար
հորդ ի ծովու և՛ . ըստ այնմ բանի իրաւանց՝
սա անկարելին ոչ որ պարտաւորի իսկ բարոյա
կան անկարութիւն է , մինչ որ ոչ կարէ լսել զպատա
րագն առանց մեծի դժուարուէ , կամ հոգևոր ,
և մարմնաւոր մեասու իւրոյ՝ կամ այլոց : ուր
յերկնչիլ ուրուք , զի մի ի գնալ յեկեղեցի ի ճա
նապարհի ի թշնամեոյ անտի սպանցի , կամ ի
թողուլ իւր զաւան միայն՝ դողք կողոպտեսցեն
զտունն , կամ եթէ թողցէ զհիւանդն միայն ի
տան , մեծ իմն մեաս հանդիպեսցի նմա , ուր ա
սեն անարանք :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ճ Ե Ր Կ Ր Ո Ր Դ :

Յաղագս . թէ բանի կերպիւ որ կարէ մեղանելի
ընդդէմ երգ տասնաբանեայ օրինացն
պատուիրանի :

ա. **Ա**՛ն զանչեն նախ այնոքիկ , որք յաւուրս
տանից ըդդէմ եկողոյ արդեւման առանց
օրինաւոր պտձախ դործեն զճառոյակն դործս .
և

և որք զայլ առ այս բռնաբարեն , կամ ամեն
մեղանչեն և ևս մեծաւորք քաղաքին , որք թո
ղուն պարասիլ զհոյատակելու իւրեանց յաւուրս
տօնից 'ի ծառայական դործս :

ԳՃԼ այնորիկ որք յաւուրս տօնից առանց հարկա
ւորութե լաճառեն , կամ դենն , մանաւանդ ,
եթէ 'ի վաճառելն , կմ 'ի գնելն ծախսեն զմեծա
դոյն ժամանակ . ևս և այնորիկ , որք յաւուրս
յայնտսի բանան զկրպակս իւրեանց , և զինչս
իւրեանց գնեն արտաքոյ առ 'ի վաճառել : մե
ղանչեն և գատաւորքն և սաշտօնեայք նց եթէ
առանց հարկաւորութե յաւուրս տօնից կոչեն
զվկայս 'ի քննուի , և զայլ դործս գատողու 'ի
կիրարկանեն նաև այնորիկ , որք զբոլոր օրն տե
րունական , կամ զմեծադոյն մասն նր ծախսեն 'ի
խաղս , 'ի սարս , 'ի գեղսուիս , 'ի դինարքուս ,
և յայլ աշխարհային ունայնութիս :

Բ. Մեղանչեն և նոքա , որք յաւուրս տօնից
ոչ լսեն զպատարագ , կամ զայն ամբողջ ոչ լսեն ,
կամ որք թէպէտ լսեն , բայց առանց ուշադրու
թե , և կամ զնշանաւոր մասն նր ունայն խօսակ
ցուք , և գատարակ խորհրդովք անցուցանեն
կամաւ :

Մեղանչեն և տանուտեարք , և մեծաւորք ,
որք զորդիս , և զստորագրեալս իւրեանց ոչ հո
գան ստաքել առ 'ի լսել զպատարագ կամ զբա
ղեն զնս յայնպիսի դործս , որք վս այնորիկ ոչ
կարեն լսել զպատարագ :



ՊՐԱԿ ՉՈՐ ՈՐԴ՝

Մեկնեացուք և զչորորդ պատուիրանն տասնաբանեայ օրինաց :

Պատուեալ զհայր քո և զմայր :

Որովհետև ըստ վարդապետուէ սքշն թօմայի պատուիրանքն , որք պատկանին առ պաշտօն սիրոյ ընկերին՝ առ այս չորորդ տասնաբանեայ օրէնս ամին . վսյ յառաջ քան զմեկնել մեր զմասնաւոր պաշտօնս զայնտակ , որովք պարտաւորիմք առ ծնօղս և առ մեծաւորս , կարգ վարդապետուէն պահանջէ , որում և նախարոս հետեի , զի նախ վս սիրոյ ընկերին և հասարակ պատուիրանաց նք և պարտաւորուից ընձեռեացուք : Եւ առ 'ի դիւրուի' զերխ ինչ մանաւանդ աստ մեկնեացուք : Առաջինն է , թէ ոյք են անձինքն , զորս պարտաւորիմք սիրել : Երկդ , թէ զոր կարգ պարտ է պահել 'ի սիրելն : Երդ , թէ զինչ են գործք սիրոյ , և երք պարտաւորիմք առ 'ի սիրել : և ապա անցուք առ յատուկ պարտաւորութին չքդ պատուիրանիս , և քննեացուք , թէ ոյք են անձինքն , որք անուամբ հօր և մօր անուննին , և սոյ պարտաւորիմք պատուել զնս :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ճ Ա Ռ Ա Ջ Ի Ն :

Թէ ոյք են անձինքն , զորս պարտաւորիմք սիրել :

Ս . **Ո**ւսուցանէ սքն թօմաս , թէ չորք են , զորս մանաւանդ սիրել պարտիմք , ըստ մտաց սքշն օգոստիկոսի . Առաջինն է , որ է 'ի վք մեր . այս է , անձ , Երկդն է , որ էմք մեք , Եւ .

Էրդն է , որ է մերձ առ մեզ . այս է ընկերն .
 Չրդն է , որ է 'ի ներքոյ մեր , այս է , յատուկ
 մարմինն : Է՛ւ նախ վս սիրոյ այ յառձինն պրակ
 սասցաք : Իսկ որ պատկանի 'ի սէրն յայն , որով
 զմեզ իսկ 'ի սիրոյ անտի սիրել պարտիմք , սակ
 սքն թօմաս , թէ մինչ սէրն՝ որով սիրեմք զսօճ ,
 ևս առ այնոսիկ , որք այ կն պարտի արծարծիլ .
 և ևս մինչ ըստ առաքելոյն հօմ'' 14 . || Չի ոչ
 ոք 'ի մէջ անձամբ կեայ , և ոչ անձամբ մեռա
 նի , եթէ կեամք մն կեամք , և եթէ մեռանիմք
 մն մեռանիմք : և իրաւի այնքան կերպիչ . որ
 քան յսօճուէ նք փոյլին կատարելուիք , և որք
 'ի բարուէ նք առ մեզ հեղանին բարեբարուիք :
 վայ իւրաքանչիւրք զիւր ինքն ոչ վս իւր , այլ
 վս այ , իբրև ինչայ , պարտի սիրով սիրել :

Է՛ւ որ պատկանի 'ի մարմին մեր , սակ նոյն
 սքն թօմաս , թէ մարմինն մեր կարէ ըստ երկուց
 նկատիլ . կամ ըստ բնուէ իւրում , կամ ըստ շա
 ղախմանն մեղօք , և ըստ ազականուէն պատ
 ժովք : Արդ՝ մինչ բնուի մարմնոյ մերոյ յայ է ,
 և կարեմք վարիլ նսվաւ 'ի ծառայուի այ , ըստ
 բանի առաքելոյն հօմայ 6 . || Պատրաստեցէք
 զանգամս ձեր զէն արդարուէն այ . վայ կարեմք
 այսու և զմարմինն մեր սիրել . բայց զչազախուէն
 նք 'ի մեզս , և զազականուէն նք 'ի պատիժս ոչ
 երբէք պարտիմք սիրել 'ի մարմնի մերում , կամ
 սածել զնա 'ի նոյնն , այլ մանուանդ վս ըլձի
 ճշմտ սիրոյ հեռացուցանել զնոյնն 'ի նմանէ .
 որով իմացմամբ սակ առաքելայն կօզս . 3 .
 || Սպանէք այսուհետև զանգամս ձեր զեր
 կրաւորս :

Ք . Իսկ որ պատկանի առ ընկերն , զոր սիրել
 պարտիմք : Ասխ . ըստ սքն թօմայի , լեն ընկեր
 մեր անբան կենդանիքն , զի անընդունակ են դեր
 բնական երանուէն . 'ի հաղորադուի որոյ սէրն
 հիմնիլ պարտի . և սպա և ոչ զանպարտեալքն
 և զևրն , զի ոչ կարեմք կամիլ նյ ըլանին բա

բիւս . մինչ նց զայն ամ ոչ կամի . այլ մանաւանդ
 զներհակն 'ի յամ յաւիտեանս սահմանեաց :

Այլ են ընկեր մեր ըստ սքնն թօմայի , բարի
 հրեշտակքն և ամ մարդիկ , երանեալք և կամ
 որք 'ի կենցաղս են . թէ արդարք , և թէ մեղա-
 ւորք , թէ բարեկամք մեր և թէ չարարարք .
 և զսոսա այնպէս սիրել պարտիմք , մինչ զի ոչ
 կարեմք զսոսա ներհկն սիրոյ . այս է ասելու
 թք , և'' հաւածել . կամ 'ի շասարակ սիրոյ ան
 աի զո՞ որք և իցէ 'ի բաց բառնալ . այլ և մանա
 շանդ լիցուք պատրաստ թ տրամադրուէ սրտի
 զներքին դործս սիրոյ բղնել . և զարտաքինսն
 'ի կիրարկանել առ ամ ոք բարեկամ և թ շնամի
 մեր 'ի ճանաչել մեր պարտաւորիլ առ այս ըստ
 սահմանելոյ օրինացն այ :

դ . Է՛ ի որքան առ թ շնամիս , թէպէտ դ ժ ո՛ւ ա
 բին իմն է , սակայն ստուգիւ պարտիմք վս այ սի
 բել զնս . զոր յայտնապէս իսկ պատուիրեաց քս
 արն մաթէ . 5 . || Իսկ ես ասեմ ձեզ . սիրեցէք
 զթ շնամիս ձեր . Նաև զհասարակ նշան սիրոյ ցու-
 ղանելնց այնպէս , ոպ այլոց հաւատքն ցուցու
 նեմք : այլ և 'ի յետին կամ 'ի մեծի հարկաւո
 բուէ նց օգնել և բրբարել նց այնպէս , ոպ և
 այլոցն , որք չեն թ շնամիք , օգնեմք և բրբարեմք .
 ըստ այնմ , զոր հրմյց քս . թէ . || Բարի արա-
 բէք ատելեաց ձերոց . և'' . Է՛ և ս անարգել
 'ի նոցունց շնորհել յանցանաց նց վս այ . ոպ
 հրամայէ քս . մտ'' 6 . || Այա թէ ոչ թ ողուցուք
 միկան զյանցանսնց , և ոչ հայրն ձեր երկնաւոր
 թ ողոյէ ձեզ զյանցանս ձեր . և 'ի 13 . դլ'' եցոյց
 թէ պարտէ շնորհել ոչ միայն արտաքուստ , այլ
 և 'ի ներքուստ 'ի սրտէ անաի . բայց և թէ զբա-
 ւաքական կամ զբրէական անարգանացն , որ
 կրեացն զայն , կամիցի ինդրել դատաստանաւ
 զհատուցուէն , ոպ օրէնքն պահանջէ . ոչ պար-
 աի առնել զայս վս ատելու թէ , և կամ վրէժ
 խնդրու թէ , այլ զբաղաբականն զայն խնդրել
 միայն

միայն վս' ՚ի հասուցումն վնասուն , խի զքրեա
կանն վս սիրոյ արդարուն կամ վս այլ ինչ առա
քինութե' . և ոչ ՚ի պատճառս ատելութե' և
վրեժ խնդիր ընկերոյ :

Եւ թէպէտ ճշն է , զոր տեսցաքն . սակայն
բոս օրինաց և վայել իմն է ատելն և թշնամա
նելն զմեզս թշնամեացն և մեղաւորացն , և զայն
եթէ հնար է , և զոր իրաւունքն թոյլատրեն ,
ուղղել . կամ ցանկալ զի անձ , կամ մեծաւորքն
ուղղեացեն և կամ պատժեացեն զայն . վսյ ատէր
առաքեալն . գղտ. 5 . 10 . || Եւ որ խառնեցուցս
նէ զձեզ , կրեցէ զդատաստան , ս' ոք և իցէ :

Այլ և կարեմք խնդալ ընդ այնպիսի պատժումն .
բոս որում նովաւ բառնի չարն մեղաց . Եւ
հակադարձաբար տրտմիլ ՚ի տեսանել մեր զյա
ջողումն մեղաւորաց ՚ի չարիս . ուստի սքն դրի
դոր պապն . || Բազմիցս պատահի ատէ . առանց
թողլոյ զսէրն ընկերին , խնդալ ընդ չարիս թշնա
մեացն , և տրտմիլ ընդ յաջողումն նյ առանց
յանցանացն նախանձու , սրովհետեւ կործանմամբ
նյ ոմանք բարւոք կանգնին . և ՚ի զարդանալ
նյ ոմանք անարդարաբար նուաճեալ ընկճին :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Ե Ր Կ Ր Ո Ր Դ :

Թէ զնր կարգ պահել պարտ է ՚ի սէրն :

Ա՜ շմարիտ է , թէ պարտ է պահել զկարգ
ինչ ՚ի սիրելն : ուն ատէ : քն թօմաս .
Եւ կարգս այս բոս նոյնոյ պահանջէ ՚ի մէնջ նախ
սիրել զսծ ՚ի վերք զամ արաբածս առանց ինիք
բաղդատուն : Եւ ինչ զկնի տյ սիրել զմեզ ինքն .
Ապա և զընկերն մեր . և Յետոյ զմարմինն մեր :

Արդ՝ մինչ սիրելն ոչ այլ ինչ է : Եթէ ոչ կա
միլ զբարի , և են երեք մանաւանդկն սեռք բար
եաց , զորս մեզ կամ ընկերին մերում կարեմք կա
միլ . այս է զհոգեւորս , ուն զնորհս , զառաքի
նութիս , և զփառս , և'' . զմարմնաւորս , ուն ըզ
կեանս ,

Յաղագս տասնօրանեայ
կեանս , և զառողջութի մարմնոյն և'' . և զար-
տաքինս , ուն զհամբաւ , զհրամաւիս , և'' . վն
վերոյիշեալ կարգ սիրոյն պահանջէ . զի զինի-
ւն , (զոր 'ի սիրել իսկ 'ի վերոյ վննացաք :)
իւրաքանչիւր ոք նախ զիւր ինքն սիրեսցէ որքան
առ հոգ և որ բարիս . և ապա զընկերն որքան առ
նոյն հոգ և որ բարիան . Յետոյ զիւր ինքն , որքան
առ մարմնաւոր բարիան . և ապա զընկերն որք
առ նոյն մարմնաւոր բարիան . Եւ ապա այսոյէս
զինքն և զընկերն որքան առ այլ արտաքին բա-
րիս : ուն ասէ սքն թօմաս :

Ը . Ուստի հեռու ի նախ , թէ չէ երբեք օրէն
ու մեք պատճառանօք առ 'ի օգտել ընկերին ու և
իցէ կերպիւն մեռակ հոգւոյ իւրոյ ազատ կամաւ
անկանելովն 'ի մեզս ևս 'ի փոքրագոյնս . վն ասէ
քն մտ'' 16 . || Չինչ օգտիցի մարդ , եթէ զաչ-
խարհս ամ շահեսցի , և զանձն իւր տուօթե-
ցէ : Եւ 'ի զլ'' 22 . դնէ զսէրն անձին իւրոյ ,
իբրև զկարգ և զկանոն սիրոյ ընկերին ասելով ,
|| Սիրեսցես զընկերքո , իբրև զանձն քո . զի կա
նոնն , ուն ասէ սքն թօմաս , է առաջինն և մանա
ւանդականն քան զկանոնաւորեալն :

Հեռու ի երկր , թէ որքան առ այլ մարմնաւոր
և արտաքին բարիս իւրաքանչիւրք պարտի առա
ւել զիւր ինքն սիրել , քան զընկերն . ուստի ուն
ասէ սքն օգոստինոս . || Եթէ ոք դնէ զանձն
իւր վն անձին ընկերին . ոչ սիրէ զընկերն իւր
ոն զանձն իւր , այլ առաւել քան զանձն իւր .
|| Իր (ուն յաւելու) զկանոն ուղիղ վննաթէն
գերազանցէ . սակայն ոչ է ընդդէմ սիրոյ կար-
գի . եթէ ոք վն այլ ինչ առաքինուէ զանձն իւր
դիցէ փոխանակ ընկերին իւրոյ կենացն . որ և
'ի զիրս սքն Հերոնիմոսի , և սքն Ամբրոսիո
սի իբրև պարկեշտ և կատարեալ սիրոյ պաշտօն
գովի . Եւ ևս առաւել կարէ և երբեմն պրնկն
իսկէ ոք վն թամանակաւոր փրկուէ հոգիւն իւր
րոյ . այսէ քաղաքին , կամ հայրենեացն , դնել
զանձն

զանձն և զամ արարքին ինչս իւր. մինչ կարգ բանին պահանջէ, զի մասն վն բոլորին իւրոյ կորկցէ :

Հետևի երջ, թէ զհոգևոր բարին ընկերի մերոյ պարտիմք նախագասել մարմնաւոր բարւոյն մերոյ, և սուս օգնել պարտիմք ընկերին մերոյ՝ որ է ՚ի վերջին հոգևոր հարկաւորուէ, ևս որոգայթիւ կենաց մերոյ . յերևիլ հաւանական յուսոյ օգնու թե՛ այնու՝ ընկերին . ուստի սքն յօհաննէս 1. յօ5. 3. || Եւ մեք պարտիմք ասէ, վն եղբօր մերոյ զնեւ զանձինս մեր :

Եւ արդ՝ ՚ի վերջին և բարոյականաց յանյազ թելի հոգևոր հարկաւորուէ՝ պարտի իւրաքան չիւր քրիստոնեայ զայն պահել զկարգ սիրոյ, որ երևի ՚ի վերոյսացելոցս զորև ուսուցանէ սքն օգոստինոս՝ և սուս ամարանք ՚ի հասարակի. իսկ հովիւքն և հոգաբարձուքն հօտի իւրեանց ոչ մի այն ՚ի յետին, այլ և ՚ի ծանր հարկաւորուէ նց օգնել պարտին որոգայթիւ կենաց իւրեանց, ուղ լայնատարած մեկնէ զրիգոր վալենտինեանն :

Դ. Իսկ որքան առ կարգն սիրոյ ընկերին, զոր պահել պարտիմք, զիտելի է, զի մինչ պարտիմք օգնել ընկերին մերոյ, որ է ՚ի վերջին կամ ՚ի ծայրագոյն մարմնաւոր հարկաւորուէ, զայս կարգ սիրոյ պահել պարտ է . նախ օգնել պարտիմք մերձաւորագունիցն մերոց արեան, ուստի հետևի, թէ զհայրն և զմայրն գերազանցել պարտիմք քան զայլս ամ. և սուս զկինն. և յետոյ զորդիս և զնզբարս, և զայլ արխնակիցս . ըստ սրուճ յաստիճան աղգակիցուէ մերձաւորագոյն են ըստ մարմնոյ, ուղ ուսուցանէ սքն թմա.

Բայց եթէ բաղդամին լիցի ՚ի մեջ աղգկնցն լը մարմնոյ և ՚ի մեջ աղգկնցն ըստ հոգւոյ, թէպէտ բաղուճ են բանք վգնացն վն այսորիկ, և ոչ երևի յայտնադէս միտք սքն թօմայի ՚ի վր խնդրոյս, վն հաւանականագոյն ևս երևի մեզ բաննց, որք ասեն, թէ թէնք բացարձակաց խօսել լով, զայնտօիկ՝ որք բարեգոյն և սրբագոյն են :

Յազազս տանաբանեայ
 առաւել սիրել պարտիմք ք զսահու սքս և բարիս
 առարկայքր , այս է սիրով հաստատուէ և հո
 ճոյուէ , որով զնոցայն առարկինուի , և զսրբուի
 առաւել համարիմք և սիրեմք . սակայն արժողա
 բար զայնոսիկ , որք մեզ ըստ մարմնոյ մերձադոյն
 են՝ առաւել սիրել պարտիմք քան զայնոսիկ , որք
 միայն հոգևորաբար մեզ միացեալ են . ուր ասե
 ի զամուկերգոս . և այլք :

Եւ սակայն ոչ ներհակի բանիցն մերոց , նախ
 ադասեւն երբեմն ըստ օրինաց զբարեկամ կամ
 զբարերար որ՝ մերձաւորացն արեան , ուր ուսու
 ցանէ վաղննախնոսն . կարէ ևս երբեմն պատահիլ ,
 զի վս օրինաւոր և հարկաւոր պաճառի փոխօխեսս
 ցի ըստ օրինաց և պարկեշտաբար վերոյստացեալ
 կարգ սիրոյ . ՚ի պաշտպանուին կամ ՚ի հաճուի
 անձին , որ օգտակարն է հասարակութե և բա
 րեաց նր յոյժ :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ճ Ե Ր Ր Ո Ր Դ :

Յազազս ներգործութնց սիրոյ առ ընկերն , և
 մանաւանդ՝ ՅՂԻ ս մարմնաւոր ողորմուէ :

iii. **Վ**ազում յոյժ են ներգործուիք սիրոյ առ
 ընկերն , և զորոց զմանաւանդ ահանսն
 թաւէ սքն թօմաս , ասելով . նախ սիրելուին ,
 որով ընկերին մերոյ ՚ի ձեռն սիրոյ կամիմք զբա
 րիս . Երկր՝ բարերարուի , որով զբարին , զոր նմա
 կամիմք , որքան կարեմք , ըստ իրին տամք նմա :
 Երր՝ ցնծութի , որով վասն բարւոյ նր , այս է
 վս դարձման նր ՚ի մեղաց , և զարդացման նր
 յառարկինուիս և . ուրախսանամք . Չրդ խղճի ,
 որով ընդ ընկերին մերոյ ջանամք առ այնոսիկ ,
 որք առ հոգևոր բարին նր օգտեն : Հինգերդ
 ողորմութի , որով թշուառունց նր , իբրև մե
 լոցն ցաւակցիմք , և նմա օգնեմք , որք կարեմք :

Արդ՝ երկու են մանաւանդ կն ներգործութիք ողոր
 մու

մուն , զորոց անձաբանք լայնատարած ուսուցանեն , այս է , տալ զողորմութիւն . և եղբայրական յան յանդիմանութիւն :

Եւ ողորմութիւն ըստ սքնն թօմայի , է զործ սիրոյ , որով որ վնայ կարօտունն ընկերին օգնէ : Եւ զի ըստ երկուց կարէ կարօտիլ ընկերն , այս է , ըստ հոգւոյ և լո մարմնոյ , վնայ և զերկուս տեսակս ողորմութիւն զուցանէ և սքնն թօմասփնն է հոգւոր ողորմութիւն , որով հոգւոր պիտոյից նք օգնեմք . զորմէ վարդապետեսցուք ՚ի հետ և եւալ հատուածն . և միսն է մարմնաւոր , որով մարմնաւոր թշուառութեց և պիտոյից նք ՚ի թիկունս հասանիմք :

Բ. Արդ՝ վն մարմնաւոր ողորմութես այսորիկ շիտեղի է , զի առ այս ոչ միայն խնդիլ , այլ և հրամանաւ պարտաւորիմք , ուն զուցանէ սքնն թօմաս , և յայտնանդ երևի ՚ի բազում տեղեաց անձաշունչ գրոց . ուն է զիլ՝ . 16 . || Այս էր անօրէնութիւն սոգոմայ , զձեռն յաղքաւն և ՚ի անանկն ոչ կարկառեկն . Եւ մտ՝ 26 . քս արն մեր առաքէր ՚ի դեհեան հրոյն յախտենից զայ նստիկ . որք զզործ ողորմութե ոչ էին արարեալ , նոյնպէս և սք հալք միահաղոյն վկայեն զայս , ուն սքնն Ամբրոսիոս . որ խօսելով վն ողորմութե . || Հատուցանես տակ զպարտս , ոչ կարկառես անպարտաբար , և վն այսորիկ զքեն տակ սք գիրք , խոնարհեցն աղքատաց զունկն բո . և հասն զպարտսքո : Եւ սքն բարսեղ ՚ի բարսղն որ ՚ի վն քակեցից զլտեմարանս իմ : || Մեծատունն այն տակ , ոչ խորհէր զաւելորդան կարկառել աղքատաց և ոչ զմտաւ , ամէր զանձայինն զհրաման : Եւ սքն գրիգոր նաղիանդեանն : || Մեք տակ անձային հրամանաւն և օրինակաւն ՚ի կարկառունն ողորմութե յորդորիմք :

Բայց տարակուսութիւն է աստ , թէ մինչ պատ ունիրանս այս է ստորասական , երբ արդեօք պարտաւորէ : Եւ զի բարեգոյնս և ստուգաղոյնս

գոյնս ծանկցուք, գիտել տարտէ լս վարդապե
տուէ սբյն թօմայի, թէ պարտաւորուին առ'ի
տալ զողորմութի, ծնանի յերկուց սկզբանց.
Առաջինն 'ի կողմանէ այնորիկ, որ տայ, եթէ ու
նի զաւելորդ ինչս. որք կամ են աւելորդ բնու
թեւ, այս է, ոչ հարկաւոր 'ի պահպանումն կե
նաց իւրոց և ընտանեացն. կամ են աւելորդ ան
ձին. այս է, ոչ հարկաւոր 'ի պահպանումն յատ
կուէ և արժանատաւութեանն: Երկրորդ 'ի
կողմանէ այնորիկ. որ աւնու, եթէ ստիպեացի
հարկաւորութի ինչ. և այս եռակի կարէ լինիլ.
Առաջինն է վերջին հարկաւորութի, որում եթէ
ոչ սղ'սեմք, զեստի կեանք մարդոյ. Երկրորդն
ճանր, որում եթէ ոչ հասանիմք 'ի թիկունս,
անձկութի և դժուարութի կարէ պահպանել զկեանս
իւր. Երրորդն է հասարակ, որպիսի է այնոցիկ,
որք ընդ դրունս դրունս մուրանան:

Գ. Արդ՝ շխապեալ մեր զայս, ասեմք կարճ
'ի կարճոյ 'ի վր' խնդրոյս, որ դժուարին իսկ,
և տարակուսական. և որ զբաղումս 'ի վր'ոյց
'ի զանգնս էարկ 'ի վճիռս. թէ ևս հաշանա
կան մեզ երեւի բան նց, ըք ասեն, թէ իւրա
քանչիւրք պարտաւորի 'ի ներքոյ մահացու մե
ղաց կարկառել զողորմութի յաւելորդացն բնուէ
այնոցիկ, որք են 'ի վերջին հարկաւորութեւ. իսկ
յաւելորդացն անձին, այնցիկ որք ճանր հարկաւոր
ութեանն անձկանան և սոյ ասէ թողեթոս ըստ մտաց
սբյն թօմայի, զոր և հաստատէ 'ի բանիցս քի
տն. մա'' 23. || Երթայք յինէն անիծեալք 'ի
հորն յաւիտենական, զի քաղցեայ' և ոչ ետուք
ինձ ուտել. և'' օտար էի, և ոչ ժողովեցիք
զիս և'' հիւանդ էի և 'ի բանտի, և ոչ տեսիք
զիս: քանզի յայտնի իսկէ, թէ հարկաւորութիս
այսոցիկ չեն վերջին. և սակայն դատապարտե
տրն զայնտիկ, որք ընկերին իւրեանց յայսպիսի
հարկաւորութիս ոչ հասանին 'ի թիկունս: Իսկ
յաւելորդացն անձին իւրաքանչիւրք 'ի ներքոյ
մա

մահացու մեղաց պարտաւորի կարկառել աղքատաց զողորմութի ՚ի յամ հարկաւորութիւննց, մինչ զի ոչ սք կարէ ըստ օրինաց ունիլ առ ինքն զաւելորդսն իւր : այլ աղքատաց, որք ոչ երբէք և յոչ ուրեք պակասին : զայնոսիկ կարկառել պարտաւորի ՚իսկ թողէ թոսն ՚ի վերոյ ստէ, թէ հասարակ բան վղձայն է բասացական : թէ տէտեն, որք ստեն թէ մեղանչէ : և սպա թէ ոչ սք ՚ի ներքոյ մահացու մեղաց առ ՚ի կարկառել աղքատաց զաւելորդս իւր պարտաւորի առանց մեծի կամ վերջին հարկաւորութիւննց : և թէ ոչ համար ճակիմ ստէ նոյնն առ այս պարտաւորել ՚ի ներքոյ մահացու մեղաց զայնոսիկ, զորս անմեղաշէր ստենն բնմ յոյժ աճքնք, զորս և ՚ի վկայ կոչէ :

Սակայն բարեւոյաշու թք իսկ խրատէ զայնոսիկ, որք ունին զաւելորդս, թէ ոչ է պարտնց ստառ ամենայնիւ ատահով ինիլ : այլ երկն չի պարտէ նց : զի մի՛ դուցէ արահուք իւրնց կամ իւրայնոցն խաբէսցին : և զքուշուք նկատեսցեն : զի զաննն է դատաստանն այ ՚ի դատաստանաց մարդկանց, և վնց ապահովադոյն և ս է զաւելորդսն կացուէ և արժանապատուէն ՚ի դործ սիրոյ կամ ՚ի յայլ դործ, որ այ հաճոյ և ՚ի պատիւ նր ծախելքան թէ դատարկաբար առ ինքեան ունիլ : մինչ մանաւանդ և սք հարբն, զորոց զբազումս ՚ի վկայ կոչէ : զայս ՚ի մեծ խստապէս պահանջեն : և ստեն, թէ ամբքիս տոնէից ասօրինաւոր իմն է զաւելորդսն պահել մինչ են աղքատք որոց կարկառել զայնսիկ կարեն :

Յաւել նոյնն և ևս, թէ այլազգ այսու պատուիրանաւս կարկառելոյ զողորմութիւն պարտաւորին այնոքիկ, որք զհոգ այլոց կրեն : մանաւանդ զեկեղեցական և զհողեւոր : Եւ այլ ազգ այնոքիկ, որք ոչ ունին զմոյթ այլոց : Չի ստբա վճարեն զպարտան տալով զողորմութի այնոցիկ, որոց պատահինն : ՚իսկ նոքա և ևս որոնել պարտին իւր կերպիւ, մի՛ թէ ընդ իշխա

իշխանութիւնք և ընդ հողաբարձութիւնք իւրեանց եղև
 ալքն կարօտին մեծաւ կարօտութիւնք ինչ . զի օգնես
 ցեն նց ։ Ուսուցանէ և ևս . թէ եկեղեցական
 անձինք . որք կամ զեկեղեցական եկամուտս ու
 նին . զորոց ՚ի ներքոյ ՚ի տեղաջ իւրում ասաս
 ցութ . կամ միայն զհայրենեացն զբաժինս վայել
 լին ։ այսու պատճիրանաւս տա ՚ի առնել զը
 զորմութի խստագոյնս և ս պարաւանդին . զի ՚ի նս
 տու լըրդք առաւել ևս դտանին ք ՚ի յաշխարհս
 կանս . որով հետև ոչ զկանայս՝ ոչ զուստերս և
 ոչ զգաստերս ունին . և ևս մինչ զպարկէշտութի և
 զչափ ՚ի կերակուրս և ՚ի յղլեատան ունիլ պար
 տին . և ոչ կարօտին քաղում իրաց . և ոչ ևս
 պարտաւորին ՚ի բազում ծախս ։

դ . խնդրեսցես , մի թէ մամանձինք ըստ օրի
 նաց կարեն տայ զողորմութիս ։ Պատմ , ըստ
 սլին թօմայի , թէ նա , որ է ընդ իշխանութի օւ
 րութ . յընչից անախ . սրով է ընդ իշխանութի
 մեծաւորին իւրոյ , ոչ կարէ տայ զողորմութի ըստ
 սրինաց . և թէ ոչ միայն հրամանաւ մեծաւորին
 իւրոյ . սրոյ ընդ իշխանութիս է ։ Ուստի հետևի .
 թէ կրօնաւորք , ընտանիք , և ծառայք , ա
 ուանց հաւանութե մեծաւորացն . ճնողացն , և
 աքցն տայ զողորմութիս ըստ օրինաց ոչ կարեն .
 և թէ ոչ միայն ՚ի պարտաւորել զնս վերջին հար
 կաւորուէ ուրութ կարօտելոյ ։ Սակայն կարեն
 ընտանիքն ՚ի յատուկ ընչից իւրեանց , և թէ շա
 հետլ իցեն , տալ զողորմութի . սոյ ևս յայնոցիկ .
 որք շնորհեալ են նոցա ՚ի ճնողաց իւրեանց ՚ի
 ծախս նց ըստ հաճոցից իւրեանց . սոյ ասէ թո
 լութիս ։

ե . իսկ որ պատկանի առ կինն , թէ պէտ ՚ի
 հասարակ ընչիցն առանց հաւանութե առն ոչ
 պարտի տալ զողորմութիս , սակայն սոյ նոյնն
 ասէ . առնել զայս , և թէ բաց ՚ի յօժտէն զոր
 երեք ՚ի տուն տան , ունիցի և զայլ յատուկ ինչ .
 կամ որ պարտէաւ իցէ նմա , և ևս ձեռօք իւ
 րովք

բովք դործեալ ունիցի . և կամ այլ կերպիւն . բայց վն այսոցիկ զսովորութիւն երկրին պարտ է պահել . Իրձէ կթէ այրն խելագարեացի , կամ զհոգ մատակարարուե ընտանեացն նմա յանձնեացի . կամ գերբան զչափն լիցի ժլատ և ագահ . ոչ կամեցեալ ամենեւին տալ զողորմութիւն ևս 'ի պարտաւորիլ իւր առ այն . զի յայնժամ կինն կարէ առնել ըստ օրինակին արիդեա . ւն . թգրց . 27 . որ ետ դաւթի դաղտ յառնէ իւրմէ անտի . Յաւել նոյնն՝ թէ կարէ ևս 'ի յննչիցն . որ է հասարակի մէջ առն և իւր տալ զսակաւալափ ողորմութիւն , առանց վատու առն իւրոյ պիտոյից :

Հ Ա Տ ՈՒ Ա Տ Չ ՈՐ ՈՐ Գ .

Յաղագս հոգևոր ողորմութե և եղբայրս
կան յանդիմանութե :

ւն . **Ո**ւսուցանէ սքն թօմաս , թէ կօթն կերպիւն կարեմք դործել զհոգևոր ողորմութիւն , այս է : Ուսուցանելով զտղէտս , տալով զնորհուրդ երկրայեւոյ . մտիթարելով զտրտ մեալս . յանդիմանելով զմեղաւորս . տանելով համբերութե այնոցիկ , որք ծանրանան և դժուարինս լինին 'ի վր մեր . շնորհելով յանցելոցն առ մեզ . և աղօթելով վն կենդանեաց և ննջեցելոց :

Արդ՝ վն հոգևոր ողորմութե նոյնն ուսուցաւ վն մարմնաւորին ասելի է . պահելով միշտ զպարտաւորն շարտաւորի . այս է , թէ իւրաքանչիւրոք պարտի լն կարեաց իւրոց օգնել ընկերին իւրում , որ է 'ի վերջին և բարոյականաբար յանյաղթելի հոգևոր հարկաւորուե . ուղ ասուցաք յեքիզ հատուած . Էւ ևս 'ի ծանր , այս է . մինչ դժուարու և մեծաւ անցիութե հոգևոր հարկաւորութիւն այն յաղթիլ կարէ , Էւ թէ պէտ պարտաւորութիւն այս օգնելոյ ընկերին , որ 'ի ծանր հոգևոր հարկաւորութե ոչ պարտանդէ խս :

խտառակէս և անձկագոյն՝ զաշխարհահայնս . սակայն զքննյս խտառակէս պարաւանդէ . մանաւանդ զայնսօսիկ , որք յանձնեալ ունին զհող հողւոց , որք սպա՛ի պաշտօնէ անտի իւրեանց պարտաւորին իսկ ուսուցանել տղխտաց զհարկաւորս ՚ի փրկուի նց , տալ զուղիղ խորհուրդս վն իրացն , որք են հարկաւոր ՚ի փրկուի նց . միտիթարել ըստ կարեաց իւրեանց զորտեալսն , զի մի ծանրացնալ բեռանք շարեաց յուսահատեսցին . նոյննչ և այլ պակասուեցն տանիլ . շորհէլ յանցանացն և նախատանացն . յանդիմանել զձեզաւորս . և իսկ ենդանեաց և ննջեցելոց աղօթել ՚ի պահանջել ՚ի նոցուց կարգ սիրոյ , կմ պաշտօնն յանձնեալ նց :

Բ. Բայց է յատուկ դ ծուարուի ինչ իս եղբայրական յանդիմանուե մեզուցելոց . և սրով անուամբ անձքնք իմանան զամբան որ ՚ի կիրարկանի առ ՚ի խրատել , յանդիմանել , յորդորել , ազալել , կամ կրթել իս ՚ի մեզաց դարձուցանելոյ զոք . և ՚ի պաշտօն և յառաքինուիս ածելոյ .

և այս իս յատուկ ընկերին օգտի և բարւոյ :

Առդ՝ իս առ այս եղբայրական յանդիմանուե ասեմք , թէ պարտաւորիմք առ այս ոչ միայն ը խորհրդոյ , այլ և ըստ պատուիրանի : ուր հաստատե սքն թօմաս , և ընդ նմա վղաւոր ՚ի հասարակի ՚ի բանից բի մն , մա՛՛ 13 . ॥ Եթէ մեղիցէ բեղ եղբայրքս , երթ յանդիմանեա՛ զնա . և՛ այս է , եթէ դիտացեալ քոյ մեղիցէ եղբայրքս , ուր մեկնէ սքն օ դոստինոս . որ զայտօսիկ բանս բի մն իբրև զպատուիրան իմանայ :

Այսու յառաջագրեալ մեր , զերիս ինչ մօնաւանդ իս եղբայրական յանդիմանուեթէ իմդրեմք . Առաջինն է , թէ երբ առնել պարտէ , Երկդ թէ ո՛ առնել պարտէ : Երրդ զորովե կարգ պահել պարտէ ՚ի նոյնն :

Դ. Առ առաջինն պախնմ՝ , թէ մինչ պատուիրանս այս է ստորասական , ոչ պարտաւորէ յամ թմկի ,

Թմկի , այլ միայն 'ի շորիս պատահմունս . Առաջինն է , յորժամ իմանաս զմեզս ընկերին , զի եթէ ոչ ծանխցես , ոչ պարտաւորիս յանդիմանել զնա , ունչ ուսուցանէ սքն թօմաս . ուստի ասէ իմաստունն յառակս . 24 . || Մի' խնդրեսցես զամբարշտութի' ՚ի տան արդարոյ , և մի' անյան գորր արասցես զհանդիսս նր' . Երկն է , զինս որ մեղան , շիցէ ուղղեալ , և ոչ ևս իցէ կարծիք ուղղեալ լինելոյ նր' ինքեամբ կամ 'ի ձեռն այլոյ . մս զի եթէ ուղղեալ իցէ , կամ 'ի մերձս կայն ուղղելոց համարեսդի' , ոչ կարօտի յանդիմանուէ քո , և սոցա ոչ պարտաւորիս յանդիմանել զնա . ունչ ուսուցանէ վալենտինոս . մանաւանդ յոյժ հաւանական է քան լայիմանի' , ընդ այլոց , թէ անցեալ մեղքն , առ որ կրկին անկանելոյ շիցէ որոգայթ , ոչ անկանի 'ի ներքոյ պարտաւորութն պատուիրանի յանդիմանելոյ զեղբայրն , ուստի էկզսկյ . 19 . || Յանդիմանեալ զեղբայր քո , զի մի' կրկնեսցէ : Երկն է , եթէ յուսասցիս անտուտ պտուղ ինչ յանդիմանուէ քո . Չի եթէ ոչ իցէ յոյս ուղղուէ , և մանաւանդ երկիցես , թէ նա' որ մեղանն յանդիմանութք քով վատագոյն ևս լինի , յայնժամ ոչ երբէք պարտաւորիս առ այն : ուստի սքն օգոստինոս : || Առ սէրն պատկանի ասէ , զի սք զանց առնիցէ առ 'ի յանդիմանել զչարագործս վասն երկնչելոյն , զի մի' չարագոյն ևս լիցի : սակայն ոչ այսպէս , մինչ մս զանց առնելոյ յանդիմանուէ քո' այլք գայթակղին : մս զի յայնժամ յանդիմանել պարտ է զչարագործն առ 'ի ոչ տալ զս
 ո ինժ այլոցն մեղանչելոյ :

Չորորդն է , զի տեղին , ժամանակն , և այլ պարագայք 'ի յանդիմանուի լիցին յարմարք : մս զի եթէ այլ ինչ տեղի և ժամանակ յարմարագոյն ևս երևեսցի , ոչ պարտիս վաղվաղակի զնա յանդիմանել . այլ բարուք իսկ առնես երկարել քո : ունչ ուսուցանէ սքն թօմաս . և սքն օգոստին

տինսս 'ի վերոյ , թէ խրատ սիրոյ է , եթէ ոք
երկարէ առ 'ի յանդիմանել զչարագործն վն 'ի
դիտուել ժամանակի խրատելոյ պնա :

Գ. Եւ որ պատկանի առ երբոյ խնդիրն , թէ
ն արդեօք պարտաւորի առ եղբայրական յանդի
մանուի . սակ սքն թօմաս , թէ ամ ոք պարտա
ւորի զօրութի սիրոյ առ այս : և հաստատի էկլս'
17. ուր սակ , թէ ամ : || Պատուիրեաց իւրա
քանչիւր ումք վն ընկերի իւրոյ : և մտթ' 17.
ուր քս անբացօրոշաթր պատուիրեաց սակ լով :
|| Եթէ մեղիցէ քեզ եղբայր քո՝ երթ յանդիմա
նեալ պնա և'' : Բայց հոգաբարձուք , և մեծա
ւորքն , որք կրեն զհոգ օյլոց՝ անձկագոյնս առ
այս պարտաւորին : Իսկ եթէ նկատեսցի յանդի
մանու թիս այս , զի է դործ դատաստանական
վրէ ժխնդրութե՝ առ նոսա միայն պատկանի .
այ սակ սքն թօմաս :

Իսկ որքան առ երբոյն խնդիր , թէ զորպիսի
կարգ 'ի յեղբայրական յանդիմանութե պահել
պարտ է , և մի թէ կարգ ինչ հարկաւոր
'ի քսէ անէ 'ի յաւետարանի անդ սահմանեալ
իցէ 'ի պատուիրանէ , այսինքն , զի մեղուցեալն
նախ առ անձնակի խրատեսցի , և եթէ այսու
ոչ օգտեսցի մեղուցեալն , առ աջի միոյ , կմ երկուց
յանդիմանեսցի , և ապա եկեղեցւոյ իւրոյ մեծա
ւորին ծանուցի : Պատմ ըստ մտաց սքյ վար
դասուտին , թէ ոչ միայն եղբայրական յանդի
մանուին , այլ և կերպն նր 'ի քսէ անէ սահ
մանեալէ պատուիրանալ : և մինչ պատուիրանս
այս է ստորասական , և ոչ յամ ուրեք և ժամա
նակի պարտաւորէ , սատուստ հետեւի , թէ յայն
ժամ միայն պատուիրանալ պարտաւորիմք պա
հել զկերպն զայն յանդիմանուէ , մինչ համա
րիմք հարկաւոր առ 'ի հասանիլ առ վախճանն
յանդիմանուէ : վն սակ սքն օգոստիսոս , || Ըն
տրել պարտ է երբեմն զայս , և երբեմն զայն .
զի երբեմն յանդիմանել պարտ է զեղբայրն 'ի մէջ
լէ

բա , և նր՛ միայն , և երբեմն առաջի ամէյն :

Առդ ուսուցանէ վարդապետն զէ օրդ վայելե
տինեան , թէ բաղում են պատահմունք , զի ի
յայնասիկ ոչ երևեսցի պարտաւորութի առ ի պա
հել զսոյն կարդ եղբայրական յանդիմանութե .
այ եթէ մեղքն է հրապարակօրէն , կամ , թէ և
դաղանի , սակայն դիտէ ի վնաս հասարակու
թե , և իցէ սրողայթ ի յամեն , կամ եթէ վն
պատկանաւոր ինչ պարագայի խոհեմաբար դա
տեսցի , թէ կերպն այն յանդիմանուն՝ ինելոց
է անօգուտ ի յուղղութի ընկերին : զօր ևս ու
սուցանէ սքն թօմաս ըստ սքնն օգոստինոսի .
զի եթէ զկնի ծածուկ յանդիմանուն մեղաւորն
ամենեկին ոչ ուղղեսցի , օգտակարագոյն իսկ է
երբեմն զմեզս նր՛ եպիսկոպոսին , կամ մեծաւո
րացն , ոչ ոնչ դատաւորի , այլ ոնչ հօր յայանել .
բան թէ՛ վկայիցն առաջի յանդիմանել . զի նա
հայրական սիրով , և խրատու օգտել կարէ ա
ռաւել քան զերաբանչիւր ոք :

Է. Են և այլ դժուարութի վն եղբայրական
յանդիմանութե , և զորս աստ կարճ ի կարճոյ
լուծցուք : Առաջինն է , մի թէ ևս փոքրագոյնքն
պարտաւորին եղբայրական յանդիմանութե զմեծա
դոյնան խրատել : Պատմ թէ այդ . միայն թէ ի
ցին չորք վերոյ ասացեալ թէութիք . ոնչ ուսու
ցանէ սքն թօմաս , և հաստատէ օրինակաւ սքնն
Պողոսի , որոյ ի լինիլն ը իշխանութե սքնն Պետ
րոսի՝ իբրև առաքելոցն իշխանի , յանդիմա
նեաց զնա եղբայրական սիրով . սակայն յանդի
մանութիս այս փոքրագունիցն առ մեծաւորս՝
պարտի լինիլ ամ հեզութե և յարգմամբ , ըստ
այնմ . « տիմօ » 3 . || Չծերն մի՛ պատուհասես
ցես , այլ մի թարեւմիր իբրև զհայր :

Երկրորդն է , մի թէ իցէ պարտաւորութի առ ի
յանդիմանել վն ամ մեղաց՝ ևս ներելեաց եղ
բայրական յանդիմանութե : Պատմ , թէ պէտ
դովելի իսկ է յանդիմանել զեղբայրն ևս վննե

բեւի մեղաց խոհեմութիւն , և սիրով . սակայն ոչ պարտաւորիմք առ այս զոնեա 'ի ներքոյ մահացու մեղաց , մանաւանդ երբեմն օգտակարացոյն իսկ է անտես առնել զայննի 'ի թեթեւացոյն մեղս , եթէ ոչ իցեն այնպիսի , որք կամ զգայթակղութիւնս , կամ կարացեն տալ զպատճառս առ 'ի գործել զմեծացոյն մեղս : և երբեմն բարւոյք իսկ է սպասելն , և դիտելն 'ի կրկին անկումն մեղաւորին 'ի նոյնն . յորում բնքոնեալ կարացէ շահակտութեալ ուղղել :

Վերջոյ գծուարութիւն է : մի թէ պարտիմք խրատել և յանդիմանել զայն , որ անդիտութեալ մեղանչէ : Պատմ , թէ մեք պարտաւորիմք առ այս , եթէ անդիտութիւնն է յաղթելի , այս է : զայնմանէ , զոր ոք կարէ և պարտէ դիտել : իսկ եթէ է անյաղթելի , զանօրջանելի է : զի կմ յուսամք պողոյ յանդիմանուեն այնորիկ մերոյ , կամ ոչ . եթէ յուսամք , պարտիմք ուսուցանել տգիտաց , մանաւանդ եթէ հոգ նր յանձնեալ է մեզ . իսկ եթէ ոչ յուսամք , պարտէ թողուլ զնա 'ի միամտութեան . միայն թէ անտուսս այլոցն մնաս կամ գայթակղութիւն մի ' հետեւեացի :

Չորս գծուարութիւն է , թէ որպիսի մեղք իցէ թողուլն զեղբայրական յանդիմանութիւն : Պատմ թէ նա մեղանչէ մահուչափ , որ պատշաճաբար և դիւրաւ արդելուլ կամ 'ի բաց բառնալ կարէ եղբայրական յանդիմանութեան իւրով զամենամեծ հոգևոր թշուառութիւնն , որ է մեղք ինչ մահացու . և ոչ համարձակի յանդիմանել զնա վն չար ինչ ժամանակաւոր երկիւղի , կամ վն ցանկութե ժամանակաւոր ինչ ընչից : որ 'ի յանձն նր գերագոյն համարի քան զսէրն ընկերին : ող հաստատի յասացելոցս հմծ . 1 . իսկ նա , որ վն կրից երկիւղի , ամօթոյ , կամ մտք բողոքութեն ոչ համարի զինքն ուղղակի առ այս պարտաւորիլ , կամ ոչ տեսանէ զինքն յարմար եղբայրական յանդիմանութե , և վն զանց առ .

նունէ : բազմիցս միայն ներելաբար մեղանչէ :
 ուր ուսուցանէ սքն թօմաս . Սակայն եթէ որ
 զանցառնէն յանդիմանել՝ չիցէ մեծաւոր , կամ
 թէ ոչ ծնցի՝ ի զանցառնելոյ նր անտիծանի դայ
 թակղուծի ինչ :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ճ Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ :

Յաղագս թէ որդիսի մեղք ընդդիմա
 նան սիրոյ ընկերին :

Թորք են մեղքն , որք ընդդիմանան սի
 րոյ ընկերին . և առ որս այլք կարեն
 ածիլ . այս է , ատելուի , նախանձ . անմիաբա
 նուի , և դայթադղուի : ուր ասէ սքն թօմաս :
 Իսկ ատելուին ընկերին լինի ըստ երկուց , այս
 է , դարչման , և թշնամուէ : Ատելուին դարչ
 ման է օտարացումն և հրաժարումն կամաց յըն
 կերէն վն չարի ուրուք . զոր ՚ի նմա ձևակեր
 պեմք : Իսկ ատելութիւն թշնամութե է , որով
 զչարինչ՝ կամիմք ընկերին . Երկուքանչիւր ատե
 լութիքս են մեղք մահուչափ ՚ի սեռէ իւրնց .
 զոր օրինակ , եթէ ոք հրաժարի և դարչի յըն
 կերէն ըստ որում մարդ , կամ ըստ որում քրիս
 տոնեայ . Գձի եթէ զմեծ իմն չար նմա ցանկայ :
 ըստ որում է վնաս նմա , ըստ այնմ . 1 . յօհ : 3 .
 ॥ Ամ որ ատէ զեղբայր իւր , մքաստղան է :
 Բայց պակասուին աղատուէ , և թեթևութիւն
 նիւթոյն , կարէ փրկել ՚ի մահացու մեղաց . մա
 նաւանդ ոչ երբէք լինի մեղք , եթէ ոք զմեղա
 ւորն ատէ , ոչ ըստ որում մարդ , այլ ը որում
 մեղաւոր . այս է , զի դարչի ՚ի մեղաց նր . կամ
 ցանկայ նմա զչար ինչ , ոչ ըստ որում վնաս նր
 է . այլ ըստ որում օգտէ ՚ի ջնջումն և ՚ի բար
 ճումն մեղաց նր . ուր երևի յասացելոցս յանցել
 հատուածն :

Բ . Նախանձն ըստ սքն թօմայի , է արդա
 կա

կանեալ իղձ կամացն. որով որ տրամի վն բարւոյ ընկերին . ըստ որում է նոռազեցուցիչ դերու զանցուէ անձին իւրոյ : Եւ զի բարեգոյն ևս ի մասցի . զիտեի է ըստ Թողեթասի, որ ըստ եօթ նից կարէ պատահիլ, զի տրամեցի որ վն բարւոյ ընկերին : Առաջինն է, զի այնու երկնի, Թէ մի պատահեացի վնաս ինչ անձին իւրում : ուղ եթէ որ տրամեցի վն ընտրուեթ ուրուք յիշխանութի ինչ, վն երկիւղին, Թէ մի' պատահեացի անտուտ վնաս ինչ անձին իւրոյ : Բայց եթէ երկիցէ վն առ այս, զի անարդարութի վնասն այն հասանելոց է նմա, ոչ երբէք է մեղք, իսկ եթէ արդարութի, և իրաւամբ, ուղ եթէ գողն կամ աւազակն տրամեացի վն ընտրուեթ արդարադատ առն' ի դատաւոր, որ ոչ Թողու առանց պատժոյ զչարութի նր, մեղանչէ, զի ուղ ոչ է օրէն նմա զայսպիսի այրն արդեւուլ յիշխանութին և յարժանապատութին վն այսպիսի երկիւղի, սյսպէս ևս տրամիլն վն առ այս' է ասորինաւոր :

Երկրորդ տրամիլ կարէ որ վն բարւոյ այլոց, զի ինքն ոչ ունի զայնպիսի բարի. ուղ ի տեսա նել ուրուք զիմաստուն որ տրամեացի, ոչ զի է իմաստուն, այլ զի ինքն ոչ ունի զայնպիսի իմաստութի : և տրամութիս այս անոռանի նախանձայուզութի, և է օրինաւոր, և պարկեշտ, եթէ բարիքն, որոց որ նախանձայոյզ լինի, ՚ի փրկութի հոգւոյ և ՚ի փառս այ ամին, ուղ ՚ի տեսանել ուրուք զայր ոմն Չերմեռանդ և սիրով ան վառեալ տրամեացի, ոչ վն բարւոյ նր : այլ զի տեսցէ զինքն ևս զարդարեալ այնու առաքելութի, իսկ եթէ նախանձայուզութին այն լիցի վն ժամանակաւոր ընչից, որք ոչ ամին ՚ի պարկեշտ ինչ վախճան, յայնժամ լինի չար, կմանջանաղան, վն պատճառին ուստի ծնանի :

Դ. Երրորդ տրամիլ կարէ որ վն բարւոյն այլոց . զի զնա անարժան դատե այնպիսի բարւոյ . և

Է այս է զայրացումն , և որ կարէ լինիլ բարի , կամ չար , վն պատճառին , յորմէ ճնանի . վն զի եթէ ոք տրտմեցի . թէ չարաճճիկ ոք , կամ չարագործ ստացաւ զիշխանութի ինչ , որում է անարժան , և երկբայի չարեօք վարիլն նր զնո վաւ , ոչ մեղանչէ : Իսկ եթէ 'ի վատթար ըղձից իւրոց անտի յանդգնութե անարժան դատեցի զնա բարւոյն՝ որում եհասն : և վն որոյ տրտմեցի , մեղանչէ ծանրապէս , կամ թեթեւաբար ըստ ծանրութե , կմ թեթեւութե նիւթոյն :

Չորորդ կարէ տրտմիլ ոք վն բարւոյ ընկերին , զի ոչ հաճի ընդ անձն նր : Զի յորժամ չար կամօք ոչ հաճիմք ընդ ումեք . բարի նր անհաճոյ թռի մեզ . և այս պատկանի սա ստեղծութին , զորմէ ստացաք 'ի վերոյ :

Նինգերորդ կարէ ոք տրտմիլ վն բարւոյ ընկերին , զի է նոճազեցուցիլ յատուկ անձին իւրոյ գերակայութե : Եւ այս յատկապէս պատկանի նախանձու . ոնք ասէ սքն թօմաս , և է ըստ սեռի իւրում՝ մեղք մահացու . եթէ պահասուն զգուշութե , և թեթեւութե նիւթոյն անմեղադիր ոչ արասցէ : Եւ այսպէս մեղաւ սաւուղ նախանձեցեալ ընդ փառս դաւթի : ըստ որում համարէր փառացն իւրոց փառօք նորա նոճազիլ :

Վեցերորդ կարէ ոք տրտմիլ վն ժնկեոր բարւոյ ուրուք , զի է յոյժ արդելիլ հոգևոր բարւոյն : Եւ այս պատկանի սա սեքն :

Եօթներորդ կարէ ոք տրտմիլ ևս վն ժամապարտ բարւոյ , զի չարութե և անիրաւօքար ինչ ժողովեալ են և ստացեալ 'ի Քրիստոս յատուկ անձին , կամ հասարակութե . Եւ այս պատկանի 'ի նախանձախնդրութի արդարութե :

Անփաբանութին է տարաձայնութի կամացն 'ի կամաց ընկերին վն բարւոյ ինչ . յորում օք պարտի համաձայնիլ . ոնք ասէ սքն թօմաս . Արդ՝ տարաձայնիլն յընկերէն 'ի չար ինչ , է

բարի , մանաւանդ ևս տարածայնիլն 'ի բարի
ինչ , բայց զոր կամիլ որ՝ ոչ երբէք պարտաւո-
րի , ըստ ինքեան ոչ է չար : այլ միայն յայնժամ
անմիաբանութիւն է մեղք . մինչ որ 'ի բարի ինչ ,
զոր կամիլ իսկ պարտաւորի , յայլոց վն վատ
Թար կամացն իւրոց տարածայնի :

Դ. Իսկ եթէ տարածայնութիւն այս է շուրջ ըզ
ճշմարտութիւն , որում որ հակառակաբանութիւն
ընդդիմանայ , անունանի վէճ : Եւ եթէ ճշմար
տութիւն այն՝ որում ընդդիմանայ որ դիտէ 'ի
պատիւնն այ , կամ 'ի նշանաւոր օգուտ ընկերին ,
ոպ յորժամ ընդդիմանայ որ ճշմարտութե հա
ւատոյ , կամ բարի վարուց , է մեղք մահացու .
իսկ եթէ մինչև առ այն հասցի տարածայնութիւն
և անմիաբանութիւն կամաց , մինչ զի որ զինքն
բաժանեցցէ յեկեղեցւոյ , և ոչ կամեցցի հնազան
դիլ երևելի դիտոյ , այս է հաճեալան քահա
նայապետին , ասի հերձոռաճողութի , և է ծանր
մեղք մահացու , ոպ ասէ սուրբն Թովաս :

Բայց եթէ 'ի տարածայնութե կամացն ծնանի և
բունութի զինուցն , որով անարդարաբար չեասեց
ցին ինչք կամ մարմին ընկերին , անունանի պա
տերազմ . սակայն եթէ յարուցցի պատերազմն
վն արդար ինչ պատճառի , և յայնմանէ , որ ու
նի զօրինաւոր իշխանութի , և ուղիղ դիտաւո
րութի . յայնժամ ոչ է մեղք . ոպ ուսուցանէ
մքն Թովաս , և 'ի նոյնն պատերազմիլ է ըստ օրի
նաց , Բայց եթէ մինն յերիցս յայսոցիկ յատկու
թեց ոչ իցէ , է մեղք մահացու , և այնքն ծանր՝
որքան մեծագոյն չեաս հասանի ընկերի .

Եւ եթէ պէտ զայս կարգ պարտ է պահել . սա
կայն չէ օրէն ընդ իշխանութեամբ եղեւոցն դա
տել զդիտաւորութի իշխանին . Չի բաւական
է , ոչ երևիլ նց յայտնապէս անարդար լինիլ
պատերազմն . մանաւանդ եթէ և երկբայեցին
վն արդարութե պատերազմի , կարեն , ևս և եր
բեմն պարտին 'ի հրամայելն նց իշխանին , պա
տե

տէրազմիլ վսնորա : Չոր բարեգոյնս իսկ մեկնէ :
 սքն օգոստինոս ասելով : || Այր արդար , է
 թէ ընդ իշխանութեամբ անօրէն և ամբարիշտ
 թաղաւորի զինուորեացի , ուղղութեամբ կարէ
 լա հրամանի նք պատերազմիլ . վս զի կամ ճանա
 չէ ստուգիչ , թէ ոչ է ընդդէմ օրինացն այ , զոր
 հրամայէ թաղաւորն . և կամ մի թէ իցէ , ոչ է
 ստոյգ : Եւ այսպէս թէ և անիրաւութիւն հրա
 մայելոյ զթաղաւորն պարտուոր , սակայն կարգն
 ծառայելոյ անմեղ կացուցանէ զզինուորն :

Ե . Իսկ դայթաղութիւն ուն ասէ սուրբն թ
 մաս , է բան կամ գործ սակաւ ուղիղ , որ տայ
 այլոց զառիթ կործանման . Ասի ան բան կամ
 գործ , զի ներքին ներդործութիւք մինչ ոչ են
 այլոց ծանօթ . ոչ կարեն և շնասել նոցա : Ասի
 ք . սակաւ ուղիղ , առ ՚ի նշանակել թէ երբեմն
 կարէ ծնանիլ դայթակղութիւն ՚ի բանից և ՚ի գոր
 ծոց , որ չիցէ ըստ ինքեան չար . այլ միայն ու
 նիցի զտեսակ չարի : Ասի ք . որ տայ այլոց զս
 ռիթ կործանման : Բայց ոչ զպատճառ , այնու
 զի յատկապէս խօսելով մարդկային կամք յոչ
 ինչ պատճառէ հզօեղրանոյ կարէ ածիլ առ մեզս ,
 այլ միայն իբր մերձեցեալ առ թի , կամաւ առ
 այն հաւանի :

Ադ . ասէ սքն թամաս , թէ այլ է ներգոր
 ծական դայթակղութիւն . և այլ կրողականն :
 Ներդործական դայթակղութիւն է նոյն ինքն բանն
 կամ գործն սակաւ ուղիղ : որ է առիթ կործան
 ման միւսոյ , որ և լինի , կամ յատուկ և ուղիղ
 գիտաւորութեամբ առ ՚ի ամել զոր ՚ի մեղս , և
 կամ թէ և առանց այսպիսի գիտաւորութե , սա
 կայն որ լինի ՚ի բնութէ իւրմէ կարէ ածել զայլս
 ՚ի մեղս . Իսկ կրողական դայթակղութիւն է նոյն
 ինքն հոգւր կործանութեմն այնորիկ , որ դայթակղի :

Ադ . կարէ երբեմն ներդործական դայթակ
 ղութիւն լինիլ առանց կրողականի , սոյ յորժամ
 որ ածել զունն ՚ի մեղս ջանապէս ոչ կարասցէ հա

Ճել զնա : Նոյնպէս կարէ երբեմն և կրողա
կան դայթակղուին լինիլ առանց ներդործակա
նի . ու մինչ որ 'ի բանից կամ 'ի դործոց միւսոյն ,
որք ըստ ինքեան չեն ածիչք 'ի մեզս առնու
ղառիթ կործանման , և դայթակղուէ մն վատթա
րուէ կամաց իւրոց : որպիսի էր դայթակղուին
փարխեցւոց 'ի պատճառս բանից քի՞ մն :

Եւ կրողական դայթակղուին է մեզք մահացու
կմ ներելի . ուլ ասէ սքն թօմաս . մն որպիսուէ
յանցանացն , յորում որ մն բանից կմ դործոց միւ
սոյն անկամի : Նոյնպէս և ներդործական դայ
թակաղուին է մեզք մահացու կմ ներելի . ըստ
որպիսուէն բանից և դործոց : որ տայ զառիթ
կործանման այլոց : կմ թ գիտաւ որուէ այնորիկ ,
որ տայ զայսպիսի առ ի՞ծս : Եւ թէ պէտ կրողա
կան դայթակղուին չէ յատուկ ինչ մեզք . և ոչ է
պիտոյ մեղաւ որին 'ի խառնուէ յայտնել զածիլ
իւր 'ի մեզս : Սակայն ներդործական դայթակ
ղուին է յատուկ մեզք՝ որ ներհակի ընդ դէմ ստա
ռէիրանի և զբայրական յանդիմանուէ , և ապա
պարտ է 'ի խառնուէ յայտնել և մանաւանդ
մինչ որ կամաւ է ած զուն 'ի մեզս : Բայց եթէ
առանց գիտաւ որուէ նր պատահեսցի դայթակ
ղուին , ոմանք վարդապետք ասեն . յայնժամ
ներդործակն դայթակղուին ոչ է յատուկ մեզք :
Սակայն հաւանական և ս այլք հատատեն , թէ է
մեզք : Ուստի նա որ գիտէ թէ այս ինչ բան կմ
դործ իւր սակաւ օւղիղ կարէ զայլս ածել 'ի մեզս ,
և ոչ հեռանայ այսու ամենայնիւ 'ի բանից կմ 'ի
դործոց անտի . պարտի ըստ վարդապետացն այ
նոցիկ զարարագայս զայս յայտնել 'ի խառնուէ ,
և թէ եղև մհցու մեզքն այն՝ որում ետ զառիթաւ

Եւ ապա յաւել սքն թօմաս . թէ չէ էրբէք
օրէն զհօգ և որ բայ իս՝ որք են հարկաւ որ 'ի փրբ
կուի անձին իւրայ կմ այլոց թողուլ . թէ և առնու
ցու որ անտաւտ զկրողական դայթակղուի . Եւ
ոչ ևս է օրէն առ 'ի զերծանիլ յայսպիսի դայ
թակ

ԹակղուԹԷ զմեզս ինչ ևս զներելի գործել . և
մանաւանդ ոչ է պիտոյ Թողուլ զգործ ինչ բա-
րի , որ ևս եթէ չիցէ 'ի պատուիրանաց անախ :
եթէ դայԹակղեացի ընկերն միայն վն շարուԹԷ
խւրոյ : Իսկ եթէ վն տգիտուԹԷ կամ տկարուԹ
նր ճնցի , յայնժամ առ 'ի զերծանիլ 'ի դայԹակ
ղուԹէ փոքրողեացն , օգուտ իմն էր զմմ գործ
բարի , որ ոչ է լը պատուիրանաց 'ի բաց Թողուլ .
և զայլ իւրաքանչիւր ինչ առնել , որ ոչ իցէ
մեղք . Եւ երկաքանչիւրոց զօրինակն տեսանեմք
յաւետարանի անդ 'ի յանձն քիմն . մատ . 15 . որ
վն դայԹակղուԹԷ փարիսեցւոց ոչ դադարեցաւ
'ի քարոզելոյ : Եւ հակադարձաբար , մատ . 17 :
առ 'ի բաւնալ զդայԹակղուԹԷ Ժողովրդեան ,
կամեցաւ աալ զհարկս , առ որ ոչ էր պարտական :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ճ Վ Ե Յ Ե Ր Ո Ր Դ .

Յաղագս պարտաւորուԹԷ որդւոց առ ճնոզս .
և ճնողաց առ որդիս :

Մայ 'ի հասարակ պարտաւորուԹԷց , ոչ
րովք իւրաքանչիւրոք առ ընկեր իւր
պարտաւորի , են և այլ յատուկ պարտաւորու
Թիք որդւոց առ ճնոզս , ճնողաց առ որդիս , որք
սյսու չորորդ պատուիրանաւս հրամային :

Արդ՝ ուսուցանէ հռօմեական ուսուցարանն .
Թէ բանիւք պատուենս զճնոզս քո՝ երեք ինչ նը
չանակին . այսինքն , սէր . պատիւ , և հնազանդու
Թի , վասն զի որդիքն պարտական են յատուկ ինչ
սիրով սիրել զճնոզս իւրեանց , մինչ զի ասելու
Թին առ ճնոզս յոյժ ծանրադոյն է մեղքքան զա
տելուԹիս այլոց անձանց : (Լատի սակ նազա
րոս Թէ 'ի միշս ասելու ԹԷ՝ զպարագայն անձին
ճնողաց պարս է յոյանել 'ի խոստովանուԹԷ .
Եւ ոչ է բաւական ներքին սէրն , այլ արտաքին
ըզձին ցուցանել պարտ է զինքն . և վն որոյ
պար

պարտին որդիքն օգնել ճնողացն մարմնաւոր և հոգևոր հարկաւորութեցն որքան կարեն . այսինքն , եթէ կարօտին մարմնաւոր պիտոյից տալ նոյն զկերակուրս և զայլ պիտոյս կենաց նոյն . եթէ հիւանդացին , կամ ՚ի բանտ արկցին , այց առնել նոյն , և ամ ջանիւ հոգալ յառողջութի և ՚ի փրկուելի նոցա , և ևս առաւել հոգալ , զի մի առանց խորհրդոցն արժանաւոր ընդունման ՚ի կենացս աստի չունեցեն . և կամ զբարեզաշտ գործս նոյն կատակալ յանձնեալս երկարեացեն . և կամ յեկեղեցական օգնութեցն և յայլոց զինի մահու նոյն զրկեսցին :

Պարտին և ևս որդիքն յարգել զճնօղս իւրեանց . ॥ Չի են (ասէ հոսովական ուսուցս) իբրև օրինակք ինչ անմահին ույ . ուստի ասի ելց . 21 . ॥ Որ անիծանէ զհայր կամ զմայր՝ մահու մեռցի . Վայ բազմիցս կատակք , յիշոցք , ծանակք , և այլ նման մեղք , որք զս թեթևութեան ի յայնսն են ներելի . սակայն զս անձին պարագայի ՚ի ճնօղսն իբրու միշտ են մահացու : Այնպէս հարկանել զճնօղս , ևս թեթևաբար յոյժ , և մանաւանդ միայն սղառնան նոցա , որ համարի մեծ ինն անարդանք առաջի նոյն , է մեղք մահացու , ուղ ասեն ամաբանք :

Պարտին և ևս հնազանդիլ որդիք ճնողացն , սոյն ասէ առաքեալն ՚ի բազում տեղիս , ևս առաւել . Կող . 3 . և Եփես . 6 . ॥ Որդիք հնազանդ ըրուք ճնողաց ձերոց : Եւ ինքնքս տրն մեր , առ ՚ի տալ զօրինակ սորա մեղ յանձն իւր , ամենայն մօր իւրոյ մարիամու , և հօր իւրոյ յովսէփայ ॥ Եր նոյն հնազանդ , զուկ . 21 :

Բ . Եւ նախ պարտի որդին հնազանդիլ հօրն ՚ի յայնստիկ . որք ՚ի կառավարութի տան պատկանին , մինչ զի եթէ ոչ կամեսցի հնազանդիլ ՚ի ճնողսն , և ՚ի հարկաւորս , և մանաւանդ զս անարգելոյ , և կամակորութե մեղանչէ մահացօրէն . Հպատակիլ պարտի և ևս ՚ի յայնստիկ , որք պատկանին

կանին 'ի պարկեշտ վարս , մինչ զի մեղանչէ մա-
հուչալի . եթէ յանդգնութ՝ ոչ կամեսցի հնազան
դիլ պատուիրանի հօրն . որով զնա 'ի մահացու
մեղաց , կամ 'ի յորոգայթէ նք , կամ 'ի վատթար
յընկերակցուէ : 'ի խաղից , և այլն . ջանացի յետո
ընկրկել :

Եւ թէպէտ ըստ սրբոյն թօմայի , որդին զկնի
'ի շալի հասանելոյ իւրոյ ոչ է հպատակեալ ուղ
ղակի ծնողացն 'ի յայնստիկ , որք առ 'ի ընտրել
զկացութի ինչ կենաց , այս է , կրօնաւորութե :
կամ ամուսնութե . սակայն մեղանչէ որդին , որ
ընդդէմ կամաց հօրն ամուսնանայ ընդ նմա որ
ոչ է հաւասար թէութե նք , և վայելչ համարին
Եւ այս է զանազանութիւն երկաբանչիւրոցն . զի իրաւունքն ՚ի յիրն , այնպէս առնէ զիրն զայն յատուկ նմին . որ ստացեալ ունի . մինչ զի ուր և գացի . որոյ և իցէ ՚ի ձեռս իրն այն ունի զկարողութի խնդրելոյ և առնլոյ զայն . և պարտաւորի յարդարուէ նա՝ որ ունի ՚ի ձեռս հատուցանել զայն . Իսկ իրաւունք առ իրն ոչ տայ զայս պիտի կարողութի ՚ի նոյն իրն . այլ միայն զարդար , և զպատկան պատճառ առ ՚ի ունիլ իրին . զոր օրինակ . գնէ որ զձի մի ՚ի միւսոյ , և տայ զդին նք . արդ՝ եթէ զձին չիցէ տակաւին յանձնեալ նմա վաճառողն , ունի միայն զիրաւունս առ ձինս և ոչ ՚ի ձին . ուստի եթէ վաճառողն դաւաճանութք զձին զայն կրկին վաճառեցէ այլում , և տացէ նմա . առ աջին դնողն ոչ կարի խնդրել յերկրորդ գնողէն . այլ միայն կարի խնդրել զայն ՚ի վաճառողէն . կմ զգին նք , և ես զօղուս իւր , զոր ունէր ՚ի գնելն իւր զայն : Եւ հակադարձաբար . եթէ վաճառեալ և գնողին ոչ յանձնեալ ձին այն մեռանիցի , կամ գողանցի :

ցի , 'ի մեաս վաճառողին , մեռանի և դողացեալ լինի . և ոչ գնողին :

Բ. Յորոց կարեմք իմանալ . թէ առ ինչ դիտենք զաղաքին օրէնք յասելն , նմա , որ ունի իրաւունս 'ի յիրն ստականի խնդրել զիրն . որ և անուանի ազատութի , որով իրն խնդրի և առնուլ կարէ սուր և դատնիցի . իսկ այնմ , որ ունի միայն իրաւունս առ իրն , ստականի խնդրել՝ զայն յանձնէն , և ոչ յամենայն ումեքէ , որոյ ևս գտցի 'ի ձեռս . կարէ խնդրել , և առնուլ , այլ միայն յայնմանէ , որ սարս էր տալ նմա վասն դաշնադրութե վաճառելոյ , գնելոյ . և այլն :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ճ Ե Ր Ր Ո Ր Դ .

Յաղագս թէ զինչ է տէրութիւն , և որոց պատկանի :

Թ. Բազում են տեսակ մասնաւոր իրաւանց , և զանազան պատճառք . որովք կարացէ պատկանիլ ումեք իշանութի առնելոյ , կմ՝ ունելոյ կամ կարգադրելոյ զիր ինչ . 'ի մ. Չ որոց գրլ խաւորն , և առ որ այլքն իբր ինչք կերպիէ օճին է տէրութիւն . և վս՝ որոյ 'ի մեկնել մեր զսոս . զիւրաւ իմանալ կարեն և այլք :

Եւ նախ դիտելի է , զի կրկին է տէրութիւն , այ օրնքն . իշխանական . և յատկական : տէրութիւն իշխանական , է կարողութիւն կառավարելոյ զչպատակեալս իւր հրամայելովն կմ՝ արգելով . դատելով , կամ ստոժելով , և կմ՝ վարձատրելով :

Իսկ տէրութիւնն յատկական է իրաւունքն ստացեալ ունելոյ զինն , և զնոյնն առնելոյ զինչ և կամի , ոմ զիւրն : Եւ ևս է կրկին . կատարեալ և անկատար : կատարեալ տէրութիւն՝ որ և ստի լի , է , որ պարունակէ գլխակունի իրին , և գլխարձակէ զինքն առնմ կիրառութի . և արամադրութի նր՝ . եթէ ոչ

Յաղագս տասնաբաննայ
արդեցի անձայն կամ մարդկայն ինչ օրինաք :
Իսկ անկատար տէրութիւն ունի միայն զյատկութիւն
սուանց օգտի նր . կամ զօգուան առանց յատկու
թե նր . Առաջինն անուանի տէրութի ուղիղ , որ
պիսի է տէրութիւն իշխանին , նկատմամբ 'ի յան
դատան կամ այնորիկ , որ կա զաղարակ իւր 'ի
սերմանիւ . Երկրորդն անուանի տէրութի օգ
տակար : որպիսի է տէրութիւն այնորիկ , որոյ ընդ
պատկանութեան է անդաստանն . կամ աշա
րակն . կամ որ 'ի վարձու կարու դրասուղս նր :
Բ . Արդ՝ որքան սա ենթակայն տէրութեան այս
է , սա անձն , որ է ընդունակ նմին , ուսուղանեն
անձաբանք 'ի հասարակի . Թէ ենթակայ նմին է
միայն քանական բնութիւն , մինչ որ միայն 'ի ձեռն
քանականուէ անմիջապէս ունի զիշխանութի 'ի
վր դործոց իւրոց , և նոքօք 'ի վր այլոց արտա
քին իրաց :

Եւ նախ ճշմարիտ է , զի անձ 'ի վր անձ արարա
ծոց զճարտարչն և զբացարձակ ունի զտէրութի :
որոյ վկայէ սք դիրն 'ի յանթիւ տեղիս , և հետեւա
պէս զայնասիկ ազատադէս , և ըստ հաճոյից իւ
րոց սուանց իրիք անիրաւուէ տրամադրել կա
րէ : Եւ ևս , զի մարդն է ընդունակ տէրուէ .
ըստ այնմ . Տննգ . ան . || Արասցուք զմարդ ըստ
պատկերի և ըստ նմանուէ մերում . զի իշխես
ցէ ձկանց ճոզու , և քաղանաց երկրի , և այլն
ս . որ պարզեւէ անձ մարդոյ զիշխանութի և զտէրու
թի 'ի վր այլ ստորնայն արարածոց . վս պատ
կերին այ , զօր կրէ , և որ կայանայ 'ի յիմացա
կանութե , որ է ընդունակ քանականուէ . և 'ի
յանձնիշխանուէ , բայց տարակուսութիւն է վասն
սմանց մարդկանց 'ի մասնաւորի , Թէ արդեօք
ունիցին իսկապէս տէրութի ինչ . և 'ի վր սրպիսի
իրաց , և մանաւանդ վս ընտանեացն է բանս :
Ընթե կարձ 'ի կարճոյ վարդապետեացուք . Թէ
ըստ տրամադրութե իրաւանց . մինչ ընդ իշխա
նութի հօրն են միայն զկարել տրութի երկուց ստա
ցուա

յո՛ւ աճօց կարեն՝ ունիլ . այս է բանկկն, և իբր բա՛ն
նակակն . Բանակական ստացուածքն են , որք
զինուորուք , կամ 'ի պատճառս զինուորութե՛
արդարութե՛ք ստացեալ լինին : ու՛ր առձիկք և
պարզեք դքսից , և'' . Իսկ իբր բանակականքն
են , որք ստացեալ լինին վն՝ եկեղեցական ինչ
բարերարուէ կամ վն՝ հրատարակական պաշտօնե
դատաւորին , ու՛ր փաստաբանութե՛ք . կամ այլ
ազատական ինչ արհեստիչ : Բայց զտեբութի
ուղիղ միայն ունին բարեացն այնոցիկ . զորս կ՛
'ի պարզեք այլոց , կամ յատուկ հանձարեղուք
կամ վաճառականուք և'' ստանան . և ոչ կարեն
առնել զնն զինչ և կամին առանց հա՛ւանութե՛
հօրն , առ որ մատակարարուին և օգուտն նոցա
մնայ :

Հ Ա Տ Ո Ւ Ա Տ Չ Ո Ր Ր Ո Ր Դ :

Յաղաքս թէ որով կերպիւ տեբութին յառ
կութե՛ ստացեալ լինի :

Ի՛նչ րտաքին ինչքն , որք կարեն անկանիլ Է
յատկական արութե՛ք ունին զեկուս տե
սակս . կմ՝ ոչ ուրուք են . կամ ուրումն յատուկ ,
և զերկաքանչիւրոցն յառաջադրեալս խնդիր ի
մացեալ լինի :

Ե՛ւ նախ որքան առ առաջինն , թէ իբքն ոչ
ուրուք ան են . առեմ , թէ նկատեալ 'ի հասա
րակ բնուի և յազանցն յիրաւունս , իբքն այնու
բիկ են առաջին ստացելոցն : Եթէ քաղաքական
օրէնք , և սովորուիք տեղւոյ վն՝ սմանց 'ի մաս
նաւորի , զայլ ինչ չիցեն սահմանեալ : Ե՛ւ այս
պէս ստացումնս այս է օրինաւոր , որով որ ըզ
տեբուի վերոյստացեալ իրացն ստանայ .

Աստուատ երևի , թէ էրէքն , և վայրենիքն
որք ոչ են ընդ իշխանութե՛ք ուրուք , կամ ևս ըմ
բանեալ երբեմն փախեան . և 'ի բնական ազա
տու

տուր իւրեանց կացուցան . ուր և գտանիցին ,
կարեն ըմբռնել : Եւ հակադարձաբար , բնա-
թիւ հեղ , և ընտանի կենդանիքն , ՚ի փախչի
իւրեանց ՚ի տանէ մն իւրեանց , ուր և գտցին
մոլորեալ , մն են հատուցանելի . զի իբր սատ,
կանաւորք մն համարին , զի գողէ նա , որ զայս
սխիս կենդանիս ՚ի փախչի նոցա տիրապետէ :
Նմանապէս ակունք և մարդարիտք և այլ նմանք ,
որք ոչ երբէք ունին զտեարս , և առ ամն ծո-
ղու , կամ յայլ տեղւոջ գտանին . են առաջին
գտանադին :

Բ. Բայց ոչ այսպէս վս իրացն այնոցիկ , որք
լինելով ընդ տէրու թիւ ուրու մն , կորուսեալ ե-
ղեն պատահմամբ ինչ . ուն նաւակոծու թիւ թս-
թափեցան ՚ի ծովն . և առ ամն ծովու գտանին .
քանզի եթէ ոք գտանէ զայսպիսիս , պարտի հա-
տուցանել մն իւրում . եթէ ծանիցէ զնա . և
առ ՚ի գտանել զմոր նր պարտի ջանալ որքան կա-
րէ : Իսկ եթէ ոչ գտցի տէր իրացն այնոցիկ ,
յայնժամ ըստ սթյն թօմայի , որում և համա-
ձայնին բազում մտաբանք . պարտ է զայնոսիկ աղ-
քատաց բաժանել . կամ ՚ի յայլ բարեպաշտու թի
ծախել . Եւ պատճառն է , զի որ կորոյսն զայն՝
ոչ դադարի լինելոյ տէր իրացն՝ կորուսանելովն
զայն . և վս որոյ եթէ այնմ , որ կորոյսն զայն հա-
տուցանիլ ոչ կարէ , հատուցի գանեան այնոցիկ ,
որոց և ինքն կորուսանողն կամիլ կարիմք գա-
տել . քանզի ոչ ոք է , որ ոչ կամեցի , զի կորու-
սեալ ինչ իւր կարկառեցի աղքատաց առա-
ւել , քան ՚ի յայլ ինչ ծախեցի :

Գ. Բայց են ևս վարդապետք , որք զներհակն
ունելով զիմացո՞ւած ասեն , թէ գտեալ ինչքն
այնոքիկ , յոչ երևիլ մն՝ զինի մեծաւ զգուշութի
որոնելոյ , կարեն մնալ առ գտանողն . որովհետե
ոչ է արգելեալ բնական , կամ եկեղեցական որի
նօք : ուն ասէ սոթաս , մետինա , և այլք առ լայի
մանն : Որ բարւոք իսկ եզրակացուցանէ , ասե-
լով ,

լի, թէ պէտ վերջինս այս վճիռ հաւանական է :
 և ոչ է պարտ անզգուշաբար դատաւարութեւ
 զայն, որ այսմ հեռակի. Սակայն առ աջինն է ևս
 բարեպաշտ, և ՚ի կիրառութեն սպասով և ըստ
 այնմ զոր ուսուցանէ նաւարոս կարէ, որ եզրանն,
 եթէ աղքատ իցէ, զմասն կամ զբոլորն դտելոյն
 հարկաւորութե իւրոյ ՚ի կիր արկանել. բայց
 բարեք իսկ լինի ևս որոշողն խոհեմ խոստովա
 նահօր վարիլ. զի յայսպիսի պատահման, նա լա
 ւադոյնս վճուեցէ, թէ զինչ առնել պարտ է :

Եւ որքան առ իրս, որք են յատուկ ումք,
 դիտելի է, զի տէրութի իրացն այնոցիկ ստացեալ
 լինի կամ կամօք մն իրին, որ զտէրութին նր ան
 ջուցանէ ՚ի յայլ. և որ ըստ երկուց լինի. կամ ՚ի
 ձեռն դաշնադրուէ ինչ, այս է. վաճառելը, փո
 փոխելոյ. և՛. և կմ առանց դաշնադրուէ՛ միայն
 ՚ի ձեռն պարգևման, խոստման և՛ : կմ կամօքն
 մեծաւ օրին կմ կարգադրուքն օրինաց, որ վս ար
 դար պաճար զտէրութի իրոց ինչ ՚ի միոյ առ միւսն
 անցուցանէ : Եւ այս լինի ՚ի ձեռն սահմանա
 դրուէ օրինաց. Չորոց ամց վարդապետեացուք
 ՚ի հետեւեալ հասուածս :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ճ Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ :

Յաղագս սահմանադրութե :

ԱՍ. Սահմանադրութե կամ կիրառութե մարտին
 է կերպ ինչ ստանալոյ զտէրութի, վս
 հետեւաբար վայելելոյ զինն ինչ մինչև առ ժամա
 նակն՝ որ յօրինաց անտի է սահմանեալ. Արդ
 կերպս այս ստանալոյ զտէրութի իրաց ինչ բազմ
 քահան օրինօք սահմանեցաւ թէ, || Ս՛ ՚ի լիցին
 ընդ երկար ժմկ և իբր, միշտ իրաց սմանց տէրու
 թ իբն անստոյգ : Եւ այս ոչ միայն յարտաքին
 արտենի. այլ և ՚ի խղճմտանս պարտաւորէ. ոչ
 զի կարասցէ ոք ըստ օրինաց զտիրապետութի
 իսա

իրաց ինչ անուանակոչուի սահմանադրու թէ
 տանի. սիյն միայն թէ սահմանադրուին օրինա
 էօր լիցի, և ունիցի զյատկուիս, զոր սահմանե
 օրեկքն: Որք են չորք և վրդպտաց: Առաջինն է
 վայելուիս, վասն զի ըստ կանոնի իրաւանց, ||
 Ասանց վայելմանն ստացուի իրին ոչ լինի:
 Երկրորդն է միամտուիս, զի ըստ օրինաց կանոնի,
 || Վայելոյն ոչ միամտուի յոչ ինչ թմկի կարէ լի
 յիլ թր իրին վայելելոյ: Երրորդն է հաւանակաւ
 ինչ ստացուի անուանակոչուի. պարզեմամբ,
 քնելով, փոխանորդուի, և. Եւ թէպէտ
 երբեք միամտուիս և ստանց անուանակոչուի
 'ի սահմանադրուի, սյս է, 'ի տիրապետուի իրին
 բաւականանայ. յորժամ ոչ է հակառակ կար
 ծիք վս իրին, և ոչ հասարակ իրաւունքն
 ընդդիմանայ: Չորրորդն է տեւումն վայելման մինչ
 և 'ի ժամանակն, որ յօրինաց անտի է սահմանել:

Թ. Խնդրեցեա, թէ որքան թմկ խնդրի առ
 օրինաւոր սահմանադրուի (այս է տիրու թի).
 Պիս ըստ հասարակ վարդապետացն վճռոց,
 թէ առ սահմանադրու թին կամ առ կիրառուի
 տիրապետուին ամ շարժական իրաց հաւանակա
 նաբար անուանակոչու թէ ստացելոց. խնդրի
 վայելուիս մինչև ցերիս ամս տեւեալ միամտուի:
 Իսկ առանց անուանակոչուի, մինչև ցերեսուն
 ամս. Չոր օրինակ, ոմն միամտուի պարզեւեաց
 իմն ինչ քեզ, զոր իւրն կարծէր. իսկ դու ևս,
 միամտուի ընկալար զայն, յայնժամ մինչև ցերիս
 ամս վայելել քոյ լինի իրն քոյն վս անուանակոչ
 ուեն պարզելի. Չի եթէ առանց ինչ անուա
 նակոչուի, այլ միայն միամտուի զնոյնն վայելես
 ցես, ոչ լինի քոյն. Եթէ ոչ միայն վայելմամբ
 քո մինչև ցամս երեսուն: Իսկ 'ի տիրապետուի
 անշարժ իրաց ընդ անուանակոչու թէ խնդրին
 տասն ամբ 'ի մէջ անձանց. այս է, 'ի մէջ այնո
 ցիկ որք 'ի նոյն դաւառի բնակին, թէ և ոչ բնա
 կեացին 'ի նոյն բաղաբի, և քսան ամ 'ի մէջ հե

աակայիցն . իսկ երեսուն ամ , եթէ ոչ իցէ ան
 ունանակոչութի , ոտի սասցաութի վերոյ վն շարժա
 կան իրաց . բայց ոչ այսպէս վն անշարժ եկեղե
 ցւոյ , վանուց . անկնլանոցաց , և այլ բարե
 ստացողական տեղեաց ստացուածոց . զի ի տերութի
 այնոցիկ խնդրին ամբ քառասուն . Եւ եթէ
 ստացուածքն այնոցիկ , իցեն հասակական եկե
 ղեցւոյն , միայն ՚ի վախճան հարիւր ամաց տիրա
 պետեալ լինին : իսկ շարժական կամ անշարժ
 ստացուածք որքոց ՚ի լինիլ նոց ՚ի հասակի որքու
 թե , ոչ կարեն երկարութն այնոցիկ ժամանակի
 տիրապետիլ . ոտ և ոչ եկեղեցական իրք , որք
 ստարին լինիլ արդելեալ են . կամ միայն ՚ի պետոս
 սրբազանիցն են սահմանեալ :

Գիտելի է և ևս , զի ոչ յամուրեք զնոյն ունին
 զօրէնս վն տիրապետութե ստացուածոց ինչ շուրջ
 զժամանակին երկարամբ . վն իւրաքանչիւր որ
 նկատել պարտէ ՚ի յօրինաւոր սովորութի և յա
 տուկ յօրէնս թաղաւորութեն , և տեղւոյն վն
 այսորիկ իրի :

Հ Ա Տ ՈՒ Ա Ճ Վ Ե Յ Ե Ր ՈՐ Դ :

Յաղագս դաշնադրութե ՚ի հասարակի :

Ամ. **Մ**աշնադրութին է միաքանութի ինչ ՚ի մ. ջ
 երկրցունց . ուստի ՚ի յերկաքանչիւրն ,
 կամ զոնէ ՚ի մին ՚ի նոցունց ծնանի պարտաւո
 րութի ինչ : Արդ՝ դաշնադրութե երկու են տե
 րակք , այս է . Անուանել , և ոչ Անուանեալ :
 Անուանեալ դաշնադրութեն են , որք յատուկան
 սէամբ ՚ի մ. ջ ինքեանց զանազանին . ոտ գնելն .
 վճարելն , վարձու կալնուն և'' : իսկ ոչ անուանել
 դաշնադրութին է , որով ոչինչ յատուկ անուն
 ցուցանի . և բաժանի ըստ իրաւագիտացն ՚ի
 չորիս տեսակս . որք այսու բանիւս ցուցանին .
 Տամ . զի տնայես . Տամ . զի արասցես . Առնեմ''

զի տաղես . Առնեմ՝ զի արտաղես :

Գիտացեալ Քր զայս , Առնեմ նախ , թէ ամ կամաւ և ազատութիւն կողեալ դաշնադրութիւն թէ և ոչ պահեսցին ՚ի նմին յատկութիւն իրաւանց , պարտաւորի ՚ի խղճմտանս , մինչ զի առանց կամաց երկոցունցն ՚ի միասին ոչ կարէ ոչնչանալ . եթէ չեցէ դրական ինչ իրաւամբ ոչ ինչ . կամ կարացէ ոչնչանալ : և պատճառն է , զի բնական իրաւամբ պարտաւորի ի բարբանջիւրոց պահել զխոտառումն իւր , որում հաւանեցաւ և միանն : ուղ ՚ի ներքոյ ասացելոցս բարւոք երևեսցի :

Բ. Առնեմ . Բ. Դաշնադրութիւն այն , յորում պատահի սխալումն շուրջ զէութիւն իրին , բնական իրաւամբ անբռնակ և ոչինչէ : զի ուղ ասի յիրաւունս : || Յայնմիկ , որ սխալին , ոչ է հաւանութիւն , իսկ առանց հաւանութեան ոչինչ է և դաշնադրութիւն : Չոր օրինակ , եթէ որ դպատուական ակն վաճառեցէ , կարծելով զայն աղակի , գնօղն զկնի ճանաչելոյ զայն ակն պատուական պարտի հատուցանել զայն ան իւրում . կամ զարդար դին նր վաճառողին տալ : իսկ եթէ սխալումն լիցի շուրջ զորպիսութիւն իրին . ուղ եթէ ծածկեցէ զայն որ ակն պատուական . ոչ գիտելով զդին նր , անարդ գնով վաճառեցէ զայն . և այլն . յայնժամ իսկապէս է դաշնադրութիւն , բայց պարտական է որ գնեացն զայն , զկնի իմանալոյ զդինն , լցուցանել զպահատութիւն արդար գնոյն ական . ուղ ուսուցանեն վարդապետք :

Առնեմ Գ. դաշնադրութիւն այն , որում մինն յերկաքանչիւրոց դաւաճանաց . ոչ է ըստ ամբ բնական իրաւամբ ոչ ինչ . այլ միայն ըստ կամաց դաւաճանելոյն , եթէ դաշն իցէ լուծանելի , կարէ ոչնչանալ : Եւ թէ ոչ է ոչ ինչ՝ երևի անտուտ , զի եթէ նա որ պատրեցաւն կամեցի հաստատուն պահել զդաշնադրութիւն , ոչ կարէ պատրօղն ընդդէմ կալ զայլն . || Զի մի շահ

դաւաճանութե իւրոյ վերտօին դարձցի : ո՞ր
 ասեն իրաւունքն : իսկ թէ կարէ ոչնչանալ ըստ
 կամաց պատրելոյն հաստատի անուուստ , զի որ
 պատրանօք է աճ զոմն ՚ի դաշնադրուինն , ան
 իրաւեցաւ նմա . և վնջ պարտաւոր է կացուցա
 նել զայն յառաջինն կացուի , և ևս հատուցանել
 զամ' ինասն , և թէ պատրեալն կամեսցի :

Դ. Ասեմ Դ. թէ ամ դաշնադրուին վն ծանր
 ինչ երկիր զի անիրաւութե արարեալ ոչ է ՚ի բնու
 թէ իւրմէ ոչ ինչ . այլ կարէ ոչնչանալ , և յառա
 ջին կացուի դնել ՚ի խղճմտանս ըստ կամաց այնս
 բիկ , որ կրեացն զայնսլիսի երկիր զ . ո՞ր ասեն
 ստիժս և սյրք . Եւ այս երևի նախ ՚ի բանիցն
 իրաւանց . թէ ॥ Որք երկիր զի և բռնութե լի
 նին , պարտին ոչնչանալ : Եւ սորա զի ըստ
 սէյն թօմայի , ॥ Նա որ բռնաբարեացն , այնմ
 արժանանայ , զի խոստումն առ նա եղեալ ոչ պա
 հեացի : Եւ և նոյն պատճառ , որ ՚ի վերոյ վն
 դաւաճանութե դաշնադրուե ասացաւ կասէ իմա
 ցեալ լինիլ և վն անարդար երկիր զի : Զի որ ան
 իրաւաբար անացոյցն զք , անիրաւեցաւ նմա ,
 ուստի պարտական է զնա յառաջին կացուե թո
 ղուլ , և նա՝ որ կրեացն զանիրաւութե ունի զիրա
 ւանս խնդրելոյ զհատուցումնս զայս . իսկ ՚ի ձեռն
 ծանր երկիր իմանամք զայն , որ է վն չարի
 ինչ . որ և կարէ անացուցանել զքաջասիրտ ք .
 և զնա ըստ արժանւոյն չարժել . որսլիսի է եր
 կիր զն մահու . արսորանաց , բանտի , վատահամ
 բաւուե . կորուսան սաացուածոց . և՛ . Նաև
 ծանր երկիր համարի ասէ լիզիտս , և երկիր զի
 յարգման . որով երկինն որդին ծանրաղէ ս վնաս
 ցուցանել զձնօզնն . հարտակեալն՝ զի չխանն ,
 կինն՝ զայրն , և՛ . Որև բարւոք իսկ յաւել . թէ
 ծանր երկիր ևս համարիլ կարէ ս , հն , որ նկատ
 մամք տու անձինս միայն է այն պիսի . ո՞ր և թէ
 իցի երկիր զն վն չարի ինչ , որ թէ պէտ զայր
 քաջասիրտ ոչ կարէ ստի այն զկանայտ , զման

Յաղագս տասնաբանեայ
կունս, և զճերս, և'' կարէ անացուցանել ըստ
արժանւոյն:

Հ Ա Տ ՈՒ Ա Ճ Ե Օ Թ Ն Ե Ր Ո Ր Դ,

Յաղագս խոստմանց, պարզեաց, և
կտակաց:

Թ. **Խ**ոստումն զորմ: այժմ վարդապետես-
ցուք, ոչ է խոստումն այն՝ որ լինի ինիք
ծանրութի կամ թէութի. որ և այսու կարէ ընդ
արձակիլ առ ամ առևտրութիս, և դաշնադրու-
թիս, յորս իջր ՚ի բազումն է և հակադարձ
խոստումն, այլ է պարզ և ճրի խոստումն, որ
վստակ առատաձեռնուն կամ երախտագիտու-
թե խոստացեալ լինի ումք:

Չորմ: ասեմ Թ. թէ խոստումն ամ, յառաջ
քան զընդունելի լինիլնն ոչ ճնանի զքնական կմ
զքաղաքական պարտաւորութի ինչ. զոր նմանա-
պէս ասեմք վստակութի: Ուստի հետևի, թէ
յառաջքան զընդունիլ երկոցունցն, կարէ ըստ
օրինաց խափանիլ. ո՞չ ասեն սթոս. լէ զիս, և
այլք ՚ի հասարակի Ե- պատճառն է, զի ամ խոս-
տումն, և պարզե. ըստ բնութի իւրում է առ ըն-
չական. և ապա պարտաւորութի նր ՚ի հաւանու-
թէ միւսոյն կախեալ կայ:

Սակայն ոմանք վարդապետք համարին, թէ
խոստմունքն և պարզեք՝ որք լինին եկեղեցւոյ,
հիւրանոցաց, վանուց. և այլ սք տեղեաց յա-
ռաջքան զընդունելի լինիլն իւրեանց պարտա-
ւորեն: Իսկ այլ ամսաբանք ոչ ընդունին զտար-
բերութիս զայս, և ասեն թէ ամ խոստումն ոչ
ընդունելի լեալ, ոչ երբէք պարտաւորէ: և ըզ-
վճռու զայս հաւանական և ՚ի կիրառութենն ա-
պահով համարին լայիման, սթոս, և այլ ամսա-
բանք:

Թ. Ասեմ Թ. խոստումն կամաւ և յօժարութի,
և

և աղատութիւն մտօք ճշմարտիւ խոստանալոյ , և զինքն ու մեք պարտաւորելոյ , զօրութիւն հաւատոյ . կամ հաւատարմութեան ի յընդունելի լինելուր , պարտաւորել ի ներքոյ մահացու մեղաց , եթէ խոստացեալ իրն , է փոքրագին : Եւ պատճառն է , զի ամ խոստումն տայ զիրաւունս առ իրն խոստացեալ . որ և սա ժառանգս խոստացելոյն անցանի : Եւ եթէ լիցի ի չիք դաշնագրութիւն , ունի զի յսանութիւնս , որում խոստացեալ եղև , խնդրել յարտաքին ատենի , և կարէ դատաւորն օտիպել զխոստացողն ի կատարումն խոստման , ուստի հեռևի , թէ խոստումն ունի ընդ իւր զանձկադոյն ինչ պարտաւորութիւն : որ և պարտաւորել ի ներքոյ մահացու մեղաց : Իսկ եթէ ոք առ ի ցոյցս և եթէ , և առանց դիտաւորութեան և միայն առ ի նշանակել զյառաջագործի իւր , կամ առ ի հաստատութիւն ստուգել , զի հաւատասցի նմա խոստասցի , յայնժամ որպէս ասել լէզիսս , ոչ համարի պարտաւոր ի ներքոյ մահացու մեղաց առ ի կատարել զայսպիսի խոստումն իւր . եթէ ի կեղծ խոստմանէ անտի ոչ ծնցի մեծ իմն վնաս ընկերին խոստացելոյ : Եւ այսու իմացմամբ ասել իմանալ պարտ է զխոստմանս բազմաց , որք խոստանան առնել զքաղութիւն . և սակայն ոչ դիտեն ի ներքուստ պարտաւորել առ այս , կամ այլոց տալ զիրաւունս առ ի պահանջել զխոստումն զայն . այլ միայն հստութիւն ասել զքանս իւրեանց :

Խնդրեցես , թէ որքան գնոյ պարտ է լինել իրն խոստացել , զի ի ոչ կատարել խոստմանն համարեցի մեղք մահացու : Պսէ նաւարոս , թէ բաւականանայ գինն իրին խոստացելոյ լինել այնքան , որքան ի գողութեան համարի մեղք մահացու : Իսկ հաւանկադոյնս և սուսուցանել լէզիսս , թէ առ ի լինել նիւթ խոստմանն մահացու առ ի ներքոյն պիտոյ է քան զնիւթն գողութեան . և զոր գժուարինս է բացորոշել . այլ թողուլ պարտ

որտեղ Կատողուն խոհեմ առն զի Ե որպիսուն
անձին և ստացուն ամսն զայն բացորոշեացէ : Բ
զի արդարեւ ըստ հասարակ վարկման մարդկանց
մեծազոյն անիրաւութի համարի , ոչ տալն զոսկի
մի ազնուութի խոստացեալ , քան զայն , որ ազա
տութի խոստանայ զչորս կամ զհինգ ոսկիս և ոչ
տայ :

Բ. Ասեմ Բ. Թէ խոստումն առ մի որ և ՚ի
նմանէ ընդ ունեալ պարտաւորի ՚ի խախտումն ,
եթէ խոստացեալ իրն է անօրում , կամ ապօրի
նաւոր , կամ անկարեւի : Եւ ևս եթէ Թէ ուրիշ
անձանց , կամ իրաց այնպէս փոփոխեացին , մինչ
զի ըստ դատողութի խոհեմ առն , ոչ երևեացի ,
Թէ որ խոստացան զայն ինչ , կամէր պարտա
ւորել զինքն ևս յայնմիկ ժամանակի և հանդիպ
ման . որ և կարէ ճանաչիլ ՚ի յատկութի խոստա
ցեալ իրին կամ խոստմանն , և կամ այնորիկ ,
որում խոստացեալ եղև , և ևս յայլ պարտ
դայից : Եւ պատճառն է , զի խոստումն ոչ եր
ևի ունիլ զզօրութի իւր եթէ ոչ ՚ի կամաց և ՚ի
դիտաւորութի , զոր խոստացողն , որոշակի և
անորոշարար ունի . մինչ խոստանայ . ուստի
հեռակ . Թէ անոր քան զբացորոշ , կամ խոհե
մաբար մեկնեալ դիտաւորութի նք ոչ կարէ պար
տաւորել :

Բ. Ասեմ Բ. Թէ պարզեան այն , որ ասի ՚ի
միջ կենդանեաց , (այս է , յորժամ որ պարզ
ազատութն իւրով այնն պարզեւէ , մինչ զի ևս
՚ի լինիլ իւր կենդանի կամի զի պարզեւեալն այն
ըցի այնորիկ , որում պարզեւեցաւ .) պարզեւել
յայնմանէ , որ պարզեւել կարէ , այս է , որ ըզ
նրութի և զմտաակարարումն իրին ունի , զոր պար
զեւէ , ի յիմանութի օտարացուցանելոյ զայն . կա
րէ ևս զինի ընդ ունելոյ այնորիկ որում պարզ
եւի յետս կալիլ զս . մանց պատճառաց , որք
յօրինաց անտի են սահմանեալ : Արոց առ աջինն
է ապերախտութին այնրիկ , որում պարզեւեցաւ ,
այն :

ծոյ էթէ : պարդեւընկալն սաստկացն անիրաւեալ
 ցի առ պարզեատուն . կամ բունութի հարցէ զնա .
 կամ յատուկ շարութի զմեծարդոյն ինաս ստացունս
 ծոյ նք հաստուցէ . կամ ՚ի մեծարդոյն կարօտութի
 և ՚ի չքաւորութի անկեալ նք , ոչ կամեացի դար-
 մանել զնա : և . Ստեփանոս պարզեւընկալն յառաջ
 քան զԼԸ ին զատաւորի ոչ պարտաւորի ՚ի հա-
 տուցումն , զի է պատիժ , որ խնդրէ զամբաս-
 տանութի պարզեատուն . և զհաստատութի ապե-
 րախտութեայնորիկ , որ ընկալան զպարզեւն :
 Ե . Ասեմ եւ . պարզեւն որ լինի վս զկնի մա-
 հունան . այս է , մինչ որ պարզեւէ զինն ինչ ու-
 մեք զխտելով միայն զկնի մահունն իւրոյ օտա-
 րացուցանելոյ զայն , որպիսի է պարզեւն այնո-
 րիկ , որ կտակաւ , կամ թղթով ինչ պարզեւէ
 զինն ումեք , կարէ յետս կոչիլ և իտախանիլ ըստ
 կամոց կտակադրին . ուն ասեն վարդապետք ՚ի
 հասարակի , ուստի ասէ առաքեալն եբր . 7 . ||
 Քանզի ուր կտակէ , հարկէ զմահ ՚ի մեջ բերել
 զկտակդիրն , զի կտակ յետ մահուն հաստատուն
 է , ապա թէ ոչ , զի արդ իցէ հաստատուն , մինչ
 կտակադիրն կենդանի է : Այլ և օրինադէտք
 միահաղոյն ասեն . թէ || Վրոփոխական է կամք
 կտակադրին մինչև ՚ի վերջն կենաց իւրոց : Սա
 կայն ոչ միաբանին առ այս անաբանք , մի թէ
 կտակն իցէ հաստատուն ՚ի խղճմտանս ՚ի պակա-
 սիլ նք ՚ի հռչակաւոր սահմանադրութեցն քաղա-
 քական օրինաց : ՚ի բաց թողեալ մեր զբաղման
 կարծիս վարդապետացն , ասեմ թէ հաւանական
 և ՚ի կիրառութե ապահով երեւի բան նք , որք
 ասեն , թէ այսպիսի կտակն ՚ի յատենի խղճմտա-
 նաց հաստատուն է , և կարէ ըստ օրինաց ստա-
 ցեալ լինիլ իրն , որ այսպիսի կտակաւ թողեալ .
 թէ անունանկոչութե առանդուն , և թէ պար-
 զեւման : Եւ պատճառն է , զի ուն ասի յիրա-
 ւունս . || Ոչ իմն է այնքան վայելուչ բնական հա-
 ւասարութե , որքան կատարել զկամս մն , որ կա
 մի

մի զինչս իւր ի յայլ անուցանել : Եւս զի հաչա
 կաւոր սահմանագրու թիք օրինաց վս այն միայն
 սահմանեալ են : Ըի մի՛ խարէ ու ի ինչ կարասցե
 մուծանիլ ի կտակս . ոսլ ասի յիրաւունս : Վս
 ի հաստատ նրելի վերջին կամաց կտակագրին
 կարէ որ զիրն կտակաւ նր թողեալ ինքեան՝ ապա
 հով և աներկեան խղճիւ առ ինքն ունիլ . և
 վայելէլ :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ճ Ո Ւ Թ Ն Ե Ր Ո Ր Դ :

Յաղագս գնեցոյ և վաճառեցոյ :

մ. **Ե**րկու են յատկուիք ի յսմ գնել և վաճա
 աւել . ըստ սքն թօմայի : Առաջինն է , զի
 մի վիցի ան նեին նենգութի և խարէ ու ի ի կող
 մանէ վաճառողին , կամ գնողին : Ուստի հետեւի ,
 թէ առնէ ընդդէմ արդարութե , եթէ որ վա
 ճառէ զինս . որ ունի զարատ ինչ կմ պակասուն
 ի քանակութե , կամ ի որակուե . այնու գնով ,
 որով վաճառի անարատն և անպակասաւորն : և
 վս որոյ մեղանչեն որք վարին ապօրինաւ որչա
 փու , կմ խարէական կշաք . ըստ այնմ . առակ
 11 : ॥ Կչիս նենգութե պիղծ է առաջի մն . Աս
 և որք խառնելով ի նիւթ ինչ ապականեն զայն ,
 ոսլ գինէ վաճառք , որք խառնեն զուր ի գինի .
 կմ ցորենավաճառք , որք ի ցորեանն խառնեն և
 զայլ վատացոյն սերմն . ոսլ ասէին այնորիկ , ա
 մովայ . 8 : ॥ Զանտիս ցորենոյ վաճառեցոք :
 Ուստի ասէ նոյն սքն թօմաս , թէ վաճառե
 լի իրին զպաղանի պակասուիս՝ զոր դեողն ոչ կա
 լէ իմանալ . որ և զգին նր յոյժ նօւաղէ , կամ
 զայն անյարմար և անօրուս գնողին կացուցանէ
 պարտէ վաճառողն յայանել : Եւ զոր իսկ ուսոյց
 սքն ամբրոսիոս , ॥ ի դաշնագրու իս ասելով ,
 զպակասութիս վաճառելոյն յայտնել պարտէ .
 ևնչ զի եթէ ոչ ծանուցանէ ևս զինի ընդ ինչա
 նու

նու թ ք լինելոյ գնողին վաճառեալն , նենդուքն
պարտաւորի հասուցանել վաճառողն :

Եւ զոր ասացաքն զն վաճառողին . զնոյնն ի
մանալ պարտ է և զն գնողին զի ամեննին մի
լիցի նենդու թ ք և ՚ի գնողն , և զն որոյ ընդդէմ
արդարութե առնէ , որ զպատուական ինչ յա
նարդ գին դնէ . այս է , զակն պատուական ՚ի տե
զի աղակաւոյ դնէ յայնմանէ : . Բր զգին նր ոչ ճա
նաչէ : Բայց ոչ այսմ է թ է ՚ի քաղաքի ու մեք ինն
ինչ փոքրացին լեալ , յայլ ուրիք անագին լիցի .
զոր օրինակ , մարդարիտք և ակունք պատուա
կանք , և այլ նմանք . որք իբրու բազումս , ՚ի ինն
գինս և յայլ օտար երկիրս , փոքր ինչ արժեն ,
կարեն փոխանակիլ ընդ անարդ և սակաւագին
իրօք :

Թ : Երկրորդ յատկութիւն . որ է հարկաւոր տա ար
դարութի վաճառողին և գնողին ըստ մտաց սք յն
թ օմայի է , զի իրն մի անագին յոյժ վաճառեա
լի . և մի և սակաւագին յոյժ գնեցի . քան զար
դար և զհասարակ գինն որս .

Եւ ՚ի բարեոք իմացումն գիտելի է . զի կրին
է արդար գին իրի ուրուք . Առ ամենն է , որ
իշխանութ քղքն օրինաց է սահմանեալ . զոր և
վարդապետք օրինաց կոչեն , օրինաւոր գին , և
զայն ոչ է օրէն ՚ի վաճառելն առաւելու . կամ
՚ի գնելն նռնազել : Երկրորդն է այն , որ հասարակ
մարդկան վարկաման սահմանեալ է . մինչ ՚ի դո
տաւորէ քաղաքին չէ վճուեալ և անուանի գին
հասա ակ , և ունի զընդարձակութ ինչ : Բան
զի մինչ ՚ի վարկմանէ բազմաց կախի , որք մի և
նայն կերպիւ ոչ վարկանեն . աստուսա է , զի
ոմանք զինն ինչ տասն դահեկանի արժեւ վարկա
նին . այլք մետասան . և այլք միայն ինն : Աս
տի վարդապետք զոյն հասարակ գինս յերկս
բաժանեն . այս է , ՚ի վայրագոյն . ՚ի միջին ,
և ՚ի ճայրագոյն . զոր և խստագոյն անուանեն .
Եւ թ էպէտ յարտաքին ատենն ոչ ունի զիրա
ւուն

Լուսնն որ 'ի դնելն թանկացին , և 'ի վաճառելն նո՛ւաղագին , ոչ է նենդեալ առաւելքան զկէսն արդար դնոյն , սակայն 'ի յատենի խղճի մտաց ամ վաճառ , որ անցանէ զընդարձակմամբ արդար դնոյն . և ամ դնուին , որ զքանակութի արդար դնոյն ոչ պարունակէ , է անիրաւ . և ամօրին օրինացն հակառակ : սոյ ասէ սքն թօմաս , ըստ յայտնի վարդապետուէ սքն օգոստինոսի 'ի Ժգ դիրն . երդուէ . դլ' 3 :

Գ. Սակայն են երկու պատճառք , որոց վան օրինաւ որ է զիրն երբեմն վաճառել մեծացին դնով : Առաջինն է 'ի պատճառս վաճառականութե . զի վաճառականք զինչս խրեանց սակաւնչ աւելի դնով կարեն վաճառել ըստ օրինաց . քան զայնոսիկ . որք ոչ 'ի սպաշտօնէ խրեանց , այլ սրտոտհմամբ ինչ վաճառ են : Էլ պատճառն է , զի վաճառականն զամ հոգ , զջան , զխորհուրդ . և զժամանակ իւր , որք արժեն իմն ինչ , ծախէ առ 'ի որոնել , պահել , ստանալ , և բաժանել զինչն զոյնոսիկ . Երկրորդն է , 'ի պատճառս վնասուն , որ կարէ պատահիլ . կամ վն շահու դադարմանն . սոյ մինչ սք վաճառէ միայն վս զի խնդրէ որ դնէն . և որ է վաճառողին իբրու օգտակար , պիտանի , և հարկաւ որ : Արդ յայս միկ պատահման սոյ ասէ սքն թօմաս . || Արդար զին համարի , ոչ միայն նկատելն 'ի յիրն . որ վաճառի , այլ և ս 'ի վնասն , զոր վաճառողն վն վաճառելոյն կրէ . և այսպէս ըստ օրինաց կարէ իմն ինչ վաճառիլ առաւելքան զարժան իրին . և զոր դատողութի խոհեմ առն ենթադատել պարտ է : Իսկ եթէ իրն որ վաճառի , իցէ յոյժ պիտանի դնողին . և որ վաճառէ ոչ կրեսցէ զվնաս ինչ 'ի վաճառել իւր զայն . կմ չիցէ պիտանի նմա . Յայնժամ սոյ ասէ սքն թօմաս , || Ոչ պարտի զայն վաճառել մեծացին . զի օգուան որ ունի գնողն , ոչ է 'ի վաճառողէն , այլ 'ի թէութէ դնողին , ուստի ոչ որ պարտի այլոյ վաճառել զայն .

զայն , որ ոչ է իւրում :

Ք. Են և այլ երկու գիտնւածք , յորում ըստ օրինաց կարէ որ զինն ինչ փոքրագին գնել քան զյատուկ գիննն : Առաջինն է , զի եթէ ինն ինչ անպիտան իցէ գնողին . և զայն գնեցէ Ֆայն 'ի համոյս վաճառողին . զի յայնժամ գիննն ըստ հասարակ լրկման մ'գիտն համարի նուազանալ . որպէս ուսուցանէ լէզիոս . Սակայն և յայսմիկ պարտէ զգուշանալ , զի մի' յողջատաց , և յայլոց , զորս ստիպէ շքաւորութիւն առ 'ի վաճառել ևս զկահս և զկարասիս տանն պիտոյից . ինն ինչ խտան գնով , քան զարդարն գնելով . ընդդէմ արդարուն , և սիրոյ ընկերին գործեցցի : Երկրորդ պատճառն ծնանի վն կերպի վաճառման . սոյ պատահի 'ի հրապարակական վաճառս . (այս է , մէզաթն) յորում սոյ երբեմն հասարակ գին իրացն վն գնողացն առաւելման յաւելանայ . այսպէս ևս երբեմն վն պակասուն գնողաց նուազանայ . ասէ նաւարոս :

Ինքրեցեա , թէ զինչ ասել պարտ է վն իրաց ոմանց որք ոչ ունին զյատուկ ինչ գին , որպիսի են ակունք ինչ հաղուադիւտք . հնադոյն պատկերք և'' . և մի' թէ օրէն իցէ վաճառել այնքան գնով . որքան կարէ պատահել : Եւ թէպէտ ստթոս և այլ ոմանք անարանք համարձակին ասել թէ այո : Սակայն յոյժ հաւանական և 'ի խղճմտանս անկատկած է , զայնպիսի իրս , որ ունին ոչ , վաճառել ըստ համոյից իւրոց . այլ ըստ վարկման հմուտ անձանց , կմ' ևս իւրոյ քննեալ միամտութիւն գնմ' պարագայս , որք գիտնն 'ի գին իրին . այնպէս վաճառել :

Հ Ա Տ ՈՒ Ա Տ Ի Ն Ն Ե Ր ՈՐ Դ :

Յաղագս փոխատուութեան , յանօթառնչոյ .
առանդոյ և ՚ի վարձու տալոյ ,

ա. Այսոցիկ չորից դաշնադրուեց՝ որք կարեն պատահիլ , և առ որս և այլ բիւք կերպիւն անին՝ զհասարակ ծանօթութիւնն աստ յառջիւստցուք . զի դիւրաւ ձանաչեցցի . թէ հրք արդեօք ՚ի պատճառս այսոցիկ չորից ընդդէմ եօթնից պատուիրանիս մեզանչեմք : և ևս թէ զի անդ ՚ի պատճառս այսոցիկ երբեմն ծնանի և գաղտնի տոկոսառուի , զորմէ զկնի վարդայեանեցուք :

Արդ՝ փոխատուութեան , տալ ումք զիմն ինչ ՚ի փխ թուով , կշռով , և չափու՝ այնու դիտաւորութիւն , զի լիցի այնորիկ՝ որ առնուեն . սակայն այնու պարտաւորութիւն , զի զնմանն այնորիկ տեսակաւն և բարութիւն հատուցի :

Ծանօթ առնուին է առնուլ յումեքէ զիմն ինչ ձրի միայն առ ՚ի կիր արկանել զայն , պարտաւորեալ ՚ի հատուցումն այնորիկ նովիմք թուով :

Առանդն է տալ ումք զիմն ՚ի պահպանութիւն միայն , պարտաւորելով զնոյն ամբողջ հատուցանելոյ :

Իսկ ՚ի վարձու տալն է տալ ումք զիմն ինչ քա ՚ի դորձ արկանել պարտաւորելով , զի հատուցե զվարձ ինչ , ըստ սակարկուեն :

Արդ՝ տարբերին այսոցիկ դաշնադրութեան ՚ի մեջ իւրեանց : Նախ , զի փոխատուին լինի միայն շարժական իրաց , իսկ այլ երեքինն ևս անշարժ իրաց՝ կարեն լինիլ , ո՞րչոյցանէ լեզուս ՚ի բազում իրաւանց :

Բ. Տարբերին երկր այնու , զի փոխ տալով անցանի տէրուի իրին ՚ի փոխառուեն , և բաւական է , զիցնմանն տեսակաւ հատուցե : իսկ ՚ի
ձեռն

ձեռն այլ երից դաշնագրուց ոչ անդանի արուի
 իրին 'ի յայլ . այլ նոյն թուով պարտին համընելը
 Տարբերին երբոք , զի փոխառուն զփոխառել
 իրն ըստ համայնից իւրոց կարէ ծախել : Իսկ որ
 յանօթ առնու կամ որ 'ի վարձու կալնու , միայն
 կարէ 'ի կիրարկանել , կամ զպտուղնն վայելել :
 Իսկ աւանդ ապահան ոչ 'ի կիրարկանել , և ոչ ըզ
 պտուղսն կիրառուքն իւրով ըստ օրինաց կա
 րէ վայելել :

Դ. Տարբերին չքոք այնու , զի փոխառեալ
 իրն եթէ կորիցէ , միայն 'ի վստա փոխառուին
 կորնչի , որովհետև 'ի տերունի նր անցեալ է :
 Իսկ որքան առ այլ դաշնագրուիս , յորս տերու
 թին ոչ անցանի' եթէ իրն այլոց' առ աւանդա
 պահն , կամ առ այնորիկ , որ յանօթ առնու
 միայն և կմ' առ որ 'ի վարձու կալնու պատահ
 մամբ . և աւանդ յանցանաց նր կորնչի , մն իւ
 ըռւմ կորնչի . և ոչ պարտաւորին նորս 'ի հա
 տուցումն , եթէ չիցեն այլ կերպիւ զաւանդ
 բեալ , կամ չիցէ պատճառ ինչ պարտաւորելոյ
 դնն . ուր հաստատէ լեզիսս 'ի հասարակ սովոր
 ութէ օրինաց , և 'ի հաւանութէ անձաբանից :
 Իսկ եթէ իրն այն յանցանօք այնորիկ , որ յանօթ
 էառ միայն , 'ի յօդուա և 'ի շնորհս որոյ միայն
 իրն ձրի շնորհել է , կորիցէ պարտէ զայն համու
 ցանել : Թէ և թեթեալոյն ինչ յանցանօք նր
 կորիցէ , իսկ վարձառուն , որ 'ի վարձու կա
 լաւ զինչս այլոց , միայն վն թեթեալ յանցանաց
 իւրոց պարտէ հատուցանել : Բայց աւանդա
 պահն , որ զիրս այլոց ձրի պահպանէ , միայն 'ի
 մեծադոյն յանցանօք իւրովք կորնչիլն պարտէ
 հատուցանել . զի 'ի վարձու կալեալն դիտէ 'ի
 յօդուա այնորիկ , որ 'ի վարձու կալնու և 'ի յօ
 դուա մն իրին , իսկ աւանդն միայն դիտէ 'ի
 յօդուա մն :

Տարբերին և և ս այնու , զի 'ի պատճառս փո
 յատուութե , ըստ որում պարզ փոխառուութի ,

456 Զաղարդս տասնաբանեայ
 ոչ կարէ ըստ օրինաց ստահանջել 'ի փոխառուէն,
 առաւելքան զնմանն կամ զգին նր' : իսկ որ 'ի
 փարձու տայ ըստ օրինաց կարէ ստահանջել զինն .
 ոչ յասացելոց 'ի վերոյ . և զինի բարւոք իսկ
 իմացի :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ճ Տ Ա Ս Ն Ե Ր Ո Ր Դ .

Զաղարդս թէ զինչ արդելու մեղ եօթն
 երորդ պատուիրանս :

10. **Ե**թներորդ պատուիրանս այս արդելու՝
 ոչ միայն զերաբքանչիւր անիրաւարբար
 առնուլ , և ունիլ զինչս այլոց , զոր անուն գողոյ
 նշանակէ : այլ ևս ըստ սքն զգոստինոսի . զամ
 անիրաւ զիրացն այլոց զճտխումն , և զնկաս . և
 հետեւսպէս և զազատ կամս անիրաւութ՛ յսիշ
 տակելոյ , ունելոյ , և վնասելոյ զինչս այլոց . վն
 զի ոչ ասէ սքն թօմաս մեղքն կամաց և գործոց
 են մի ևնոյն , սակայն այսու և եթ տարբերին , զի
 մեղքն գործոց ըդէմ եօթնրդ պատուիրանիս 'ի հա
 տուցումն պարտաւ օրէ , իսկ կամացն միայն՝ ոչ :

Արդ՝ զխտելի է , զի միայն անիրաւարբար յափ
 շտակումն , և ունիլն առ ինքն զինչս այլոց ընդ
 դէմ կամաց նն , այսու պատուիրանաւս արդել
 եալ լինի . զի ոչ ասէ թողեթոս ըստ հասարակ
 սոճաբանիցն վրդադուէ . բազում անգամ ունիլ
 զինչս այլոց առանց կամաց նն կարէ լինիլ առնց
 անիրաւութ՛ ինչ : ոչ եթէ առնուցու որ օրի
 նաւոր իշխանութ՛ մեծաւորին , որ վն օրինաւոր
 և արդար պատճառի զտուցուած միոյն ստ այլ
 քք անցուցանէ : Եւ վն այսօրիկ իլցիքն ոչ
 մեղան 'ի մերկացուցանել զեդիպտացիսն հրամա
 նաւ նն : կամ եթէ առնուցու որ 'ի յօշուա
 նն . ոչ առնուլ զտուր զայրացելոյ , զի մի՛ հար
 յէ զքք . բայց զգին սրայն այնորիկ 'ի յօշուա
 նն գարձուցանել պարտէ : Այսպէս ևս ասէ
 ըստ
 նայն

նոյն հեղինակն , ոչ է գող կինն . որ 'ի Տաճուկ
առնու զգրամս առն իւրում , զի մի' (զոր փոր-
ձուն գիտէ) 'ի խաղս և 'ի զեղխուիս զայն վատ
նեցէ : սակայն և նա զնոյնսն պարտէ Տախել
'ի պիտոյս ընտանեացն : Այլ և ոչ նա , որ ըզ
գինի այլում հեղու զի մի' արբեցի . կամ որ
զթուղթս պատառէ 'ի Տոշէնս զի մի' 'ի խաղալն
հայհոյեցէ , կամ զայլ ինչ մեղս գործեցէ :

Թ . Ասուցանէ և ևս նոյնն , թէ նա ոչ գո
ղանայ որ 'ի Տաճուկ առնու վիմն յումբէ : զոր
պարտական է ինքեան . մինչ ստուգիչ զիտէ
թէ պարտական է , և ոչ կարէ պահանջել զայն
դատաստանաւ , վն բանութե պարտասպանին .
կամ պակասուէ վկայից , և կմ' երկիր զի վնասու
խրոյ : Իսկ եթէ դատաստանաւ կարացէ պա-
հանջել և առնուլ . մեղանչէ յառնուլն 'ի Տա-
ճուկ . թէ և 'ի հատուցումն ոչ պարտաւորեցի .
Սակայն պարտէ զգուշանալ , զի մի' վն 'ի Տա-
ճուկ առնուլն իւրոյ . որ թէ և արդար իսկ իցէ .
վնաս ինչ պարտականին , կամ դայթ աղղութի
այլոց հետեւեցի . այս է , զի մի այլք 'ի կարծիս
գողուէ անկցին . կամ նա' յորմէ էառն , կրկին
հատուցէ զպարտս իւր : Այլ ևս զի մի' ինչ
առաւել քան զայն' զոր խնդրէ , առնուցու :
Չոր օրինակ , եթէ սակ արկեալ ան ընդ վարձ
կանին 'ի վարձու կարչէ զնա հաւանութե նր' ,
ոչ կարէ վարձկանն պահանջել և առնուլ ա-
ռաւել քան զայն , զոր սակ էարկ : Իսկ եթէ որ
'ի վարձու կարաւն Տանրացուցէ զնա այլ ինչ
տշխատանօք , որ ոչ էր 'ի սակարկութե պար-
տական է հատուցանել և զայն , իսկ 'ի չկամիլ
հատուցանել նր' , վարձկանն կարէ 'ի Տաճուկ
լստ արդար վարձուց իւրոց առնուլ 'ի նմանէ
և ունիլ առ ինքն :

Արդ' երիտ էն տեսակք անիրաւութե բասնա-
րոյ զինչս այլոց . այս է , գողութի , որով ոք 'ի
Տաճուկ բառնայ զինն յայրմէ անիրաւաբար : և

Յախշատիութի, որով որ յայտնապէս և բանու
ի՞ք բառնայ, զինչս այլոց: Այն ուն ասէ սքն
թօմաս, մեղքն յախշատիութե, ոչ միայն տեսա
կան իւրով տարբերի ՚ի դողութե, այլև ծան
բագոյն է քան զայն. զի բաց ՚ի յանիրաւ բարձ
ման է ընկնցն այլոց՝ զտանի ՚ի նմա ևս և անիրա
ւունին բանաբարութե. և մայ զղարագայս զայս
պարտ է ՚ի խոստովանուն յայտնել:

Գ. Եւ թէպէտ ամ անիրաւութե բարձունս և
անիրն ընկնցն այլոց՝ է ըստ սեռի իւրում մեղք
մահացու. ուն ասէ սքն թօմաս, եթէ փոքրու
թի դողացեալ նիւթոյն անբասիր ոչ արացէ:
Սակայն ոչ միաբանին անճաբանք ՚ի մեջ իւրեանց,
թէ քանիօն պարտ իցէ քանակութիւն. կամ զին
դողացեալ իրին, որ համարեսցի մեղք մահացու.
Արդ՝ քանզի բնմ են բանք անճաբանիցն, զինս
վարսս համարի մեղք մահացու դողանալ զկէս
դահեկանս (որ ՚ի թմկս նր արժէր, զհինգ լումայս
(այս է ստակս) թողնթոս, զմի կ զերկու դահե
կանս նկատմամբ առ հարուստս. իսկ սոթոս զմի
կամ զերկու ոսկի: և' '. Մեք զնոցայն միայն
համարինք զքանս հաւանականագոյնս, որք ըզ
քանակութիս զայս դողութե, յանձնեն դատողութե
բարեպաշտ և խոհեմ առն. որ ոչ միայն նկատէ
՚ի զին և ՚ի քանակութի դողացեալ իրին. այլև ՚ի
պարագայն անձին յորմէ դողացան, վնասուն,
որ անիրաւաբար եհաս նմա. և ևս ՚ի շար և
՚ի վատթար սովորութի և յիզձ այնորիկ, որ դո
ղացուն զինչս այլոց: Այն երբեմն ինի մեղք մա
հացու ևս զսակաւիկս դողանալն. որպէս եթէ
անձն, յորմէ դողացաւ, իցէ ազբատ. ուն եթէ
որ զերկուս զայն լումայս աւետարանկն այլոյն՝
զորս էարկ ՚ի դանձանակն, և զոր գովեսց քս
տրն, դողացի, զամ կեանս նր (ըստ բանի տն
մրկս: 12.) բառնայ. Նաև եթէ որ զսակաւիկս
դողացեալ մեծ իմն վնաս տն հետեւեսցի, ուն դո
ղանալ զասեղն դերձակի՝ զհերուն կօշկակարի,
և

և զգրինն գրչի որք և զայսպիսի գործիս առ սխ
տոյս իւրեանց 'ի բնմ առուրս ոչ կարացես գտա
նել : Այլ և եթէ որք զսակաւս գողացեալ ունի
ցի զգիտաւորութի և զիղձս զբազումս գողանա
լոյ . առանց կարծեաց յայսպիսի և 'ի յայլ ստ
տահմունս սակաւութի իրին . և փոքրութի դնոյն
ոչ թէ թեւացուցանէ : այլ է մեղք մահացու .
Դրձլ հաղիւ երբէք գտանի երկիւղած որ յայ ,
որ 'ի գողանալն զկէս , կամ զերբոք մասն սոկոյ
յուամի և իցէ , ոչ համարեացի գործել մեղք մա
հացու : Աստի առաւել օգտակար երևի , զի
խոհեմ խոստովանահայրն , 'ի երկթ գողուն ,
թէ առ 'ի հատուցումս սարտաւորել . և թէ առ
'ի հրաժարել զաղաչխարողն յայսպիսի անարդ
մեղաց ընդ գրկեացէ զխոտադոյնն՝ քան զընդար
ձակադոյնն վճիռ , որոյ իմաստութի ուսուցա
նէ լեզիոս :

Գ. Խնդրեացես , թէ զինչ ասել սարտ է վս
այնորիկ , որ բարձրիցս զսակաւս գողանայ :
Պիմ բաժանմամբ , վս զի եթէ սակաւ գողու
թէն այնու գիտէ ստանալ զբազում քանակու
թիս , մեղանչէ մահուչափ , վս վատթար զի
տաւորութեն այնորիկ , և ևս վս ամ արտաքին
գողունն . թէ և իցէ սակաւ յոյժ , զոր գողա
նայ գիտաւորութի այնու : Իսկ եթէ առանց
այսպիսի գիտաւորութե զսակաւ ինչ բազում ան
գամ գողացի որք , թէ սկէտ ոչ մեղանչէ մահու
չափ , այլ միայն ներելի յամանդամի . վս թէ թեւ
ութե նիւթոյն . սակայն 'ի կացուցանել գողա
ցեալ իրացն 'ի միտսին զքանակութի մահացու մե
ղացն , յայնժամ եթէ ծանուցեալ նա՝ որ գողա
ցան , կամեցի զայնոսիկ առ ինքն ունիլ . կամ
զայլ սակաւս , որ զքանակութի մահացու մեղացն
լցուցէ գողացցի , մեղանչէ մահուչափ , ույ
սանն վարդապետք 'ի հասարակի առ լեզիոսն .
Ար և ասէ , թէ բարոյականապէս խօսելով մե
ծագոյն քանակութի սխտոյ է 'ի լինիլ մեղք մահա
ցու

Յաղագս տասնաբանեայ
 զու, մինչ որ յոյժ միջահատ թմիւ զինն ինչ գողա
 նայ, քան զայն՝ որ կարճ թմիւ. կամ միանգա
 մայն գողացել: Այլև սակ Մեծադոյն ևս քա
 նակուի խնդրի ՚ի նմա, որ բազմիցս ՚ի բազմաց
 զսակաւս գողանայ քան զայն, որ ՚ի միոյ դոյն ինչ
 գողանայ. քան զի, փոքր վնաս հանդիպի իւրս
 քան զիւրոցն, քան զայն, եթէ մինն միայն կրէր
 զվնասն զայն:

Հ Ա Տ Ո Ւ Ա Ճ Մ Ե Տ Ա Ս Ա Ն Ե Ր Ո Ր Դ .

Յաղագս թէ քանի կերպիւն մեղանչել
 կարէ ընդդէմ եօթնեքոյ պատու
 իրանիս տասնքնեայ օրինաց:

Ա. **Յ**անցել հատուածոցն բարւոք խել երևի,
 թէ որք բաղում և զանազան կերպիւն
 կարէ մեղանչել ըդդէմ անային պատու իրանիս:
 Եւ նախ մեղանչեն ընդդէմ սմա, որք զինչս
 այլոց գողանան. կամ անիրաւաբար առ ինքեանս
 ունին, կամ գողանալ և անիրաւաբար պահել
 առ ինքեանս կամին: Այլև որք ոչ հատուցանեն
 զսարսու իւրեանց. կամ երկարեն յոյժ ՚ի հա
 տուցումն մինչ կարեն, մանաւանդ եթէ պարտ
 ստերն վս երկարմանն այնորիկ. վշտացի. կմ
 զնեղուի և զվնաս ինչ կրեսցի: Նաև որք բունու
 թթ զինչս այլոց յափշտակեն. Եւ ևս որք ան
 իրաւ երկիւղեն. կամ նենդուի ինչ համոզեն
 զոք զի ծանրաբեռն և վնասակար սակարկութե
 ինչ և դաշնադրուէ հաճեացի:

Որք զինչս իւրեանց, կամ որ պարտինց, ՚ի
 լինել առ ընթեր այլոց գողանան մինչ կարեն զայն
 այլով կերպիւն խնդրել մանաւանդ մինչ անտուտ
 հեռուի դայթակողուի ինչ, կամ վնաս ընկերին.
 վս համարելոյ զգողուին զայն նմա, որ է անմեղ:
 Բ. Որք կամաւ վնասեն ընկերին, կամ ջանան
 ՚ի վնաս նր միւսն այսոցիկ ինչ տեսակաց: այս է,
 Հրա

Հրամանաւ , խրատաւ , Հաւանութեւ , Հողո-
բորթութեւ , Ապաստանութեւ , Մասնակցութեւ ,
Լաւելով , Անընդդիմամարտ ելով , և ոչ ծա-
նուցանելով :

ա. Հրամայելն է՝ զորդիս կամ զծառայս կամ
զայլ հպատակեալս ինքեան զանձինս ստիպել ՚ի
դողութի . կամ ՚ի մեծա ընկերին . կամ ընդ դո-
ղուի և ընդ մեասել նոյն հաւանիլ . բ. խրատելն
կամ խորհրդատու լինիլն է , յորդորել զբք ,
կամ խոսամամբ և աղաչանօք զնա դրդուել :
գ. Հաւանութիւն է անիրաւ ինչ դործոց հաճիլ :
դ. Հողոբորթութեան կամ համոզութեան է պատիր և
նենդաւոր դովութեւն զընկերն ամել առ դործ ինչ
ընդդէմ արդարուէ : ե. Ապաստանութիւն է ,
տալ և ցուցանել զասպարհնութի փախստեան , այ
նոցիկ , որք անիրաւ օքար մեասեցինն այլոց .
կամ զդէնս և զպողոնս նոյն թաղուցանել . և այս
պէս օգնել մեղաց նոյն : զ. Մասնակցութիւն է բա-
ժանորդ լինիլ կամ ՚ի դողութիւն և ՚ի յախշտակու-
թիւն և՛ . կամ ՚ի դողացեալ իրն և յօգուտ նոյն :
է. Լաւելն է զանց առնել (եթէ մեծաւոր իցէ)
զհարկաւոր հանդիմանութեւ առ ՚ի արդելուլ
զդողութիւն կամ զմեասն ընկերին : եթէ խրատա-
տու իցէ , Այտալ զուղիղ և զբարի խրատա իսկ
եթէ պահապան իցէ , Այ հսկել և պահպանել
բարւոք : և՛ : Ն. Անընդդիմամարտ լինիլն է ,
ոչ կալ հակառակ դործոյն , որով ընկերն անիրա-
ւաբար մեասի . մանաւանդ եթէ ըստ պաշտօնի
իւրոյ առ այս պարտաւորեցի որք : թ. Այ ծա-
նուցանելն , է ոչ յայտնել զչարագործն ՚ի պար-
տաւորի իւր առ այս ըստ պաշտօնի իւրոյ . կամ
զի մեասն այնու արդելցի յառաջ քան զհասանիլ
նոյն ընկերին . կամ զի հատուցի մեասն զկնի հա-
սանելոյ նորա :

դ. Մեղանշն և ևս ընդդէմ պատուիրանիս
որք զդողացեալ ինչս կարծեօք կամ գիտութեւ
զնեն , առ ինքեանս ունիլ . իսկ եթէ առ ՚ի ճշմ

Արք զգտեալ ինչս մինչ կարեն յատուկ Թն իւ
 բում ոչ հատուցանեն : կամ բաւական զգուշու
 թք և ջանիւ ոչ որոնեն առ 'ի գտանել զոք նր' :

Արք 'ի գնելն կամ 'ի վաճառելն , նենդուք և
 խաբէութի վարին Արք զինն ինչ փոքրագոյն յոյժ
 գնով գնեն . կմ մեծագոյն յոյժ գնով վաճառեն .
 ք զհասարակ գին նր' : Արք զարատաւորն փոխա
 նակ անարատի վաճառեն , ոչ ծանուցեալ զծա
 ծուկ պահատութի նր' գնողին : Արք նենդուն 'ի
 կիւս , 'ի չափս և կամ 'ի թիւն 'ի վաճառելն :
 Արք անիրաւաբար միաբանին առ 'ի գնել : զի լը
 հաճոյից իւրենց անիրաւաբար գնեալ , ապա վա
 ճառեսցեն զայն ուղ և կամին . առաւել քան զար
 դար գին նորա ,

Արք զվարձկանացն և զծառայիցն ոչ հատու
 ցանեն , կմ առ ինքեանս ունին զվարձս առանց
 արդար պատճառի երկարեալ : Եւ մեղքս այս
 այնքան ծանրագոյն է , որքան մեծագոյն վնաս
 երկարամամբն այնուիկ հատուցմանն վարձուց
 հանգիպի նց : Սեղանչեն և ևս որք առ 'ի շա
 հիլ վարին նենդութք և խաբէութի խաղս :
 և 'ի խոտմուսնս . Այլև որք գնեն յորդայթ
 'ի խաղս և 'ի վիճակս զինչս այլոց , կամ զիւրնց ,
 որ հարկաւոր է ընտանեացն իւրեանց . Նաև
 որք զայլս նենդութք , յորդորմամբ , դաւու ,
 և' աճեն ի խաղս . Եւ ևս որք 'ի խաղս 'ի վի
 ճակարկութիս քաղաքական օրինօք արդելեալս
 զբաղում գրամս ծախեն . Եւ ապա մեղանչեն
 ընդդէմ պատուիրանիս , որք 'ի փոխատուէ
 պահանջեն զտկոսս , Եւ զի բաղում յոյժ ար
 հեատիւք և պատրուակաւ կեղծեն զայս , վոյ և
 սակաւիկ մի լայնատարած վարդապետեսցուք
 զվանէ 'ի հետեւեալ հատուճած :

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ :

Յողադս թէ քանի կերպիչ մեղանչեն
ընդդէմ պարտուիրանիս տոկոսա
ռութեամբ :

Թ. Ա աշխն կամ տոկոսն ըստ հարկ և ոտվոր
ական նշանակուեն , առնանի կմ 'ի
տեղի տոկոսական շահու , որ 'ի փոխատուութե
յառաջադայի . կամ փոխանակ դործոյն , որով
անիրաւ վաշխն ստացեալ լինի . կամ վս սակար
կուեն , որով ոք փոխ տայ ումեք յայանի կմ լուելե
այն դաշամբ , կամ միայն կամաւ առ 'ի ընդունիլ
'ի փոխառուէն առաւել քան զփոխատրեալն
զինն ինչ , իբր թէ պարտաւորեալ իցէ հատուցա
նել վս փոխառուէն . ք զի ասէ սքն օգոստիննա : ||
Վ աշխատուես , և թէ զարծաթ քո 'ի փոխ տուել
սպասես 'ի փոխառուէն , առաւել ք զոր ետուրն
առնուլ . Ուստի երեւի թէ վաշխն լը երկց լինի .
կամ պարզ կամաւ և գիտաւ որոք , կամ յայանի
և կամ լուելեան դաշամբ : վս և բաժանի 'ի
մտաւորականն , 'ի տեսակաւորն , և 'ի պատ
րուակեալն :

Թ. Արդ՝ գիտե լի է , զի ամ վաշխ , լը ամ կերպի
է ապօրինաւոր , և արգելել . Եւ այս երեւի նախ
'ի սք դրոց . սղմս . 12 . Ուր զկնի տակոյ մարդա
րեին դաւթի , || Տք ով կացցէ 'ի խորանի քում ,
Պսէ : || Որ զարծաթ իւր ոչ տայ 'ի վարձու :
Եղկ . 18 . ուր մրդէն 'ի ցուցանել թէ ս արգեք
ճշմարտութիւնն անուանեցի արդար , դնէ և ըզ
յատկուիս զայս ասելով : || Եւ զարծաթ իւր 'ի
վարձու ոչ տացցէ , և տոկոսեք անդրէն ոչ պա
հանմիցէ : և զկս' . 6 . ուր քս նրն մեր յայտնա
պէս ասէ : || Եւ տուք փոխ , ուստի ոչ ակն ու
նիցիք առնուլ : և բանքս սյսոքիկ քսի ան մերոյ՝
ոչ միայն պարտանակեն զիրատ , այս է , փոխ

տալ ընկերին վն պարզ սիրոյ , և անդրէն ոչ ինչ
ակնունիչ երախտադատուէ նր . այլ ևս զարգել
ական հրաման , զի մի՛ ոք ՚ի պատճառս փոխա
տաւու թէ պահանջեսցէ զինն իբր թէ պարտաւս
րեալ իցէ արդարութ :

Ուստի այսու խնայմամբ խնանոյ զքանս քի
ան մերոյ երարդ ուրպանոս պատն , Որ զկնի յա
ռաջադրելոյ զինդ իբրս զայս , զոր հարցեալ էին
նմա . ॥ Մի թէ ՚ի դատաստանի հողւոյ դատի
նա իբրև զտոկոսապահանջ , որ ոչ վն փոխ տա
լոյ հաւատոյ զարծաթ իւր ընկերի իւրում . եթէ
ոչ զի ևս առանց ինչ պայմանի առաւել քան ըզ
փոխատրեալն տանու : և այլն . Եւ զբձլ Մի
թէ վաճառականն դատապարտեսցի նման պատ
ժօք , որ զինչս իւր մեծագոյն յոյժ դնալ վա
ճառէ վն երկարման ժամանակին հատուցանե
լոյ զզինն . առաւել քան զայն , որ առաջակայ
հատուցանէ զզին նր : Պիսէ . Այս , Եւ թէ
զինչ առնել պարտ է յայսպիսի պատահման , ու
սուցանէ մեզ քն նրն յաւետարանն զուկասու .
Եւ տուք փոխ ուստի ոչ ակնունիցիք առնուլ .
վն այսպիսիք որք վն դիտաւորուէն շահու զոր
ունին , (մինչ ամատկոս , և վաշխ , արգելեալ
է յօրէնս) իբրև զչարագործ դատին . Եւ այս
հաստատի և ևս ՚ի կանոնական իրաւանց , որ ար
դելու . զի մի՛ հրատարակին տոկոսապահանջքն
՚ի հաղորդութի սեղանոյ ընկալցին . այլ և մի թա
ղեսցին ՚ի մեռանիլ նց ՚ի նոյն մեղս եկեղեզական
թաղմամբ , և ՚ի քրիստոնէից դամբարանս : Իսկ
՚ի ժողովն վեանայ սահմանեցաւ , թէ իբրև ըզ
հրեալիոս պարտ է պատժել զայն , որ յանդդ
նութ համարձակի հաստատել , թէ տոկոսառու
թինն ոչ է մեղք :

Եւ զայս այսու պատճառաւ ևս հաստատե
լքն թօմաս , զի ապօրինաւ որ , և անիրաւ է վն
նոյնոյ իրի զկրկինս պահանջել զզինս , կամ վա
ճառել զայն , որ ոչ է վաճառողին . Իսկ նա ,

ար պահանջէ զտոկոս , զկրկին զին նոյնոյ իբի
 պահանջէ . կամ վաճառէ զայն , որ ոչ է իւր ,
 զի կամ առնու զտոկոս վս արժաթոյ զոր ետ
 փոխ . կամ վս կիրառութէ արժաթոյն այնո-
 բիկ . վս զի եթէ վս առաջնոյն , զկրկին զին նոյ
 նոյ իբի առնու , այս է , զհաւասարն ոյնորիկ ,
 զոր ետ փոխ , և ապա զվաշխ նր . իսկ եթէ վս
 երկրորդին . վաճառէ , զոր ոչ է իւր . քանզի
 ստալով ՚ի փոխ տէրուի իբին անգանի ՚ի փոխառ
 ուն . և հետեւաբար կիրառութին է նորա , և
 ոչ փոխատուին . Յասացելոցս հետեւի , թէ
 միչս է մեղք տոկոսառուէ մինչ այսօրիկ երկո
 քին լինին ՚ի միասին , այս է , ճշմարիտ փոխա-
 տուի . և պոյման ինչ , կամ յառաջադրուի
 և կամ գիտաւորուի սանչոյ զմն ինչ որ ՚ի զին
 վարկանի : առաւել քան զփոխաարեալն , իբր
 թէ պարտաւոր իցէ փոխառուէ վս փոխառուէ
 իւրոյ . Եւ այսու կանոնիւս կարեմք ճանաչել
 զբազմազան պատահմունս . թէ երբ արդեօք
 անկանիլ լինի ՚ի մեղս վաշխառուէ , և երբ ոչ :
 Դր . Եւ նախ երևի ՚ի վերոյ կանոնէ , թէ ոչ
 է մեղք վաշխառուէ ՚ի եկամուտս . (այսինքն ,
 սալ ումք զայսքան դրամս , ՚ի վր միոյ տան կամ
 այլ անչարժ ստացունածոյ . զի տացէ զպտուղս
 նր փոխանակ դրամոյն զոր ետ լը սակարկուեն .)
 մինչ ՚ի նս ոչ է ճշմարիտ փոխատուի : այլ ան-
 սակ ինչ վաճառման . ուր մեկնէ լէզիոս . որ և
 բազմօք ուսուցեալ հաստատէ , թէ ոչ միայն
 իրական եկամուտն , այլ և անձնականն է օրի-
 նաւոր . (Անձնական ասեմք , մինչ օք տայ ումք
 զդրամս ՚ի վր կենաց իւրոց , զի մինչև ՚ի մահ
 իւր տացէ որ է առն զայսքան դրամս յամ լը ամի
 զինի մահունան տունողին : լիցի այնմիկ , որ
 է առն զայն որ և այսօր է ՚ի սովորուէ աստ ՚ի
 յեկրոսիայ :) Եւ ոչ անունի վաշխառուի և
 ոչ ևս է . եթէ լինի առանց նենդութե , և իս-
 բէուէ . զի ՚ի յայսպիսիս վաճառեն կամ գնեն ,

ոչ զկիրառութի դրամոց , այլ զկիրառես պահանջելոյ ՚ի տարիս տարիս , զքանակութի ինչ դրամոց , և զարդար զին նր դասել պարտ է թ օրինաց իշխանին քաղաքի , և կմ թ բնկն հաւասարուն :

Երևի երկրորդ , թէ ՚ի փոխարկումն դրամոց ոչ դասնի վաշխատութի . և թէ լինի հաւատարմութ և առանց ամ նենդուն , զի ՚ի ճշմարիտ և յօրինաւոր փոխարկումն դրամոց ոչ դասնի ճշմարիտ փոխատուութի , այլ փոխարկումն դրամոց , և այս կամ ճշմարտ առաքմամբ դրամոց և կամ միայն թ զթոյ . սոյ մինչ որ տայ զգրամս այլում ՚ի կոտանդնու պոխս , զի առնուցու ՚ի հոօմ զհոօմ այեցւոցն զդրամս . Եւ կամ միայն պարզ փոխարկմամբ դրամոց . սոյ ՚ի տայ ուրուք զոսկիս իսկոյն կամեցի զարծաթիս , կմ զգրամս քաղաքիս ՚ի տալ , կամեցի զայլոցն ու նիլ զաղգացն . քանզի յայսոյն փոխարկութիս թէ ՚ի պատճառս փոխարկուն տեղւոյ . և անքոյթ առնելոյ զգրամս , և թէ ՚ի պատճառս պաշտօնին փոխակէ և հատալ ճառէ թ դրկն կմ հրա պարակական իշխանութ սահմանեալ , որպիսի են պարզ փոխարկութ . և թէ վս այլ օրինաւոր պատճառի , որք ՚ի փոխարկութէ պատահին , կարէ շախաւոր ինչ շահ պահանջիլ . զոր մինչ ոչ առնու որ վս փոխատուուն , ոչ երբէք ևս պատկանիլ երևի առ տոկոսառութն . իսկ եթէ որ վս պարզ երկարման ժամանակի հատուցման զինն ինչ պահանջէ , փոխարկութին այն , է տոկոսա պահանջ . և յայնժմ համարի , թէ առեալ լինի շահն այն վս պարզ երկարմանն ժամանակի . մինչ հատուցանի դրամս շահու հանդերձ ՚ի նոյն տեղւոյ . յորում առեալ եղև վս նենդաւոր և պարտիք ՚ի յայլ երկիր փոխարկելոյ զայն :

Երևի երկրորդ , թէ և ոչ և ք ՚ի փոխատուութին է վաշխատութի . և թէ որ առնու , ոչ վս փոխատուուն , այլ վս այլ ինչ պատճառի ըզ շահ ինչ բաց յայնմանէ զոր կան : Եւ այս ըստ ամ

անճարանից կարէ լինիլ մանաւանդ զն էրկուց
 պատճառաց . Առաջինն է , 'ի պաճառս մեծառ
 պատահման . ուր ասէ սքն թմաս , զն զի եթէ
 փոխատուն զմեաս ինչ կամ զնեղուի 'ի յինչս իւր
 կրեացէ զն փոխառուեն , կարէ ըստ օրինաց
 հատուցուին ինչ 'ի փոխառուէն անուշ : Եւ
 կրորդն է 'ի պաճառս դադարման շահու : Եւ
 թէ պէտ ոմանք վարդապետք ոչ ընդունին զայս
 սակայն մեծն Յօշաննէս , մե տինայ , դայեթան ,
 լէզիս , և այլք բազումք , զորս 'ի վկայ կոչէ .
 և որոց հետեւի լայնմանն ուսուցանեն , թէ ը
 օրինաց կարէ լինիլ . միայն թէ ոչ դացի 'ի նմա
 (ուր ասէ նաւարոս) ան նենդուի , դաւ , և
 խարէութի կամ գաղտնի տոկոսառուի : Արդ՝
 ըստ լէզիսի , առ 'ի ըստ օրինաց լինիլ գաշնադ
 բուենս այսորիկ պիտայ է , զի փոխառուին լիցի
 ճշմարիտ պաճառս դադարմանն շահու , ուր 'ի
 տալ փոխ ուրուք զգրաման , որովք դնելոց իցէ
 յայտինչ թմիկի զինն ինչ , որ պաճառէ նմ զողուտս
 բայց զի փխրէն հասուցուին շահու դադարմանն
 այնրիկ մի՛ լիցի՝ բուրովին : այլ յանձնել պարտ է
 բնորչաւ և խոհեմ , և հմուտ առն դատողուէ . որ
 նկատե՛լ յախմանս : 'ի ծախս և 'ի յորդայթս փո
 խատուին , որ 'ի շահին կրել կարէր , գառեացէ :
 Ե . Յաւելուն ոմանք և զերրորդ պաճառն ,
 որոյ զն 'ի փոխատուութե կարացէ ըք առաւել
 բան զոր ետ , անուշ զինն , այս է , 'ի պաճառս
 որողայթի , յորում երբեմն փոխառեալ դրամն
 կարէ անկանիլ . ուր եթէ տացէ ըք 'ի փոխ վաստ
 նօղ և մխոզ անձին , կամ այնմ . յորմէ դժու
 արաւ , կամ գուցէ ևս մեծաւ ծախու կարէ առ
 նուշ զգրամն , զոր ետ , և զնյ որողայթն այն , և
 ծախն , և դժուարուեցն երկիւղ կարեն համա
 բիլ լինն ինչ արժօղ դնոյ : ուր ասեն սեղբեսարոս ,
 մե տինայ . և այլք բազումք , զորս 'ի վկայ կոչէ .
 և որոց հետեւի լէզիս : բայց թէ պէտ բան սոցա
 հաւանական երեւի : սակայն հակառակն իմաց
 ունա՛ծ

Յաղագս տանաքանեայ
 ունի թէ այսոյխի շահս է աղօրինաւոր ըստ
 նաւարոսի , որ սուէ , թէ մամ անարանիցն և
 կանոնականացն է իմացուածս , հաւանականա
 գոյնս ևս երևի , և 'ի կիրառուեն ապահովա
 գոյն . վն զի թէպէտ առաջինն իմացուած ըստ
 լեզիսի , բաղում պատճառօք հաստաստի , սա
 կայն 'ի կիրառութե (զորմէ յոյժ զգուշանալ
 պարտին խոստովանահարք .) է յոյժ սրողայթ
 աւոր , որ զիւրաւ կարէ արկանել 'ի տոկոսա
 ռուի : Չի ս արդէօք 'ի յամ փոխատուութիս ոչ
 կարէ պատճառել զբաղմազան պատճառանս եր
 կիւղի . թէ մի' փոխատրեալն գրամ կորիցէ -
 և կամ թէ մի' 'ի փոխարէն առնուլն կրեսցէ ըզ
 դժուարութիս ինչ , կամ զծախս . ոսյ զի պատ
 ճառեալ զպատճառանս ինչ շահու պահանջեսցէ
 զինն ինչ առաւել քան զոր էան :

'Ի կանոնէ աստի երևի իսկ , թէ հակադարձա
 բար բաղում յոյժ սակարկութիւն տոկոսական ,
 որք և առ երևոյթս ոչ երևին , Որոյխի են
 այնքիկ , յորում 'ի պատճառս փոխատրութե
 ոք պահանջէ 'ի փոխատուէն առաւել քան զոր
 էան , ոչ զգրամս , այլ զայլ ինն , որ արժէ 'ի
 դին , զինչ և իցէ . զոր օրինակ , եթէ ոք փոխ
 տացէ ումք զգրամս , զի զտուն իւր 'ի վարձու
 տացէ նմա սակաւու դնով . կամ զի զօգնութի
 ինչ լեզուի , կամ ձեռաց արասցէ նմա առաջի
 ումք . կամ շնորհեսցէ նմա զպարտաւորութիւն
 հատուցման արդարութիւն պարտաւորեալ 'ի պատ
 ճառս զրոպարտութեն և այլն : Այսոքիկ և այլ
 նմանքս արժեն 'ի դին . և վն 'ի պատճառս փո
 խատրութե առնուլ կամ միայն խորհիլ ոչ կարէ
 լինիլ առանց արասոյ տոկոսաւորութե . Աստի
 զգուշութիւն նկատել պարտէ մինչ 'ի փոխատուէն
 և դեալ լինի թէ ուրի ինչ ծանրութե փոխատուի ,
 մի' թէ իցէ 'ի դին արժօղ . և կամ թէ արդեօք
 դնի 'ի պատճառս փոխատուէն . զի յայսոյխի
 ծանրութե թէ ուրի է և տոկոսաւորի :

ՀԱՏՈՒ ԱԾ ԵՐԵՒՏԱՍԱՆԵՐ ՈՐԴ :

Մեկնեացուք սատ և զկարծիս ինչ շուրջ
 զնիւթով տոկոսառուէ , որք յաճախ
 պատահին :

Առաջինն է , մի թէ օրէն իցէ տալ ունք
 փոխ այնու թէ ուրբ , զի եթէ որ փոխ
յորպիսաւթ է արատաւորունն , որ ՚ի ձեռն բամ
բասանոց հասանի անաւան ընկերին . և կամ ՚ի
յատկութէ անձին . որոյ տեսնն արատաւորի .
Քանզի կարէ լինիլ , ուր տէ թուլթուս , զի յայտ
նէն զմեղս ուրուք նկատմամբ առ մի անձն հա
մարեացի թեթեւ արատաւորութի , մանաւանդ
և երբեմն ոչ և ս է արատաւորութի , որ նկատ
մամբ առ այս է մեծ իմն վատահամբաւութի . կմ

կատաճառ գայթակղութե , զոր օրինակ . Եթէ
 ոք ասացէ զօրինուորէն . Թէ 'ի մենամարտութի
 հրապուրեալ սպան զթշնամին . կամ զազատ ե
 թիտասարդէն , Թէ անպատկան սիրով ինչ սի
 բահարի . զթեթե , կամ մանաւանդ զոչ իմ
 արաս անուան նց հասուցանէ , որովհետեւ բա
 զում անգամ զայսու իսկ ինքեանք պարծին :
 Իսկ որ ասացէ Նղայտլիսի ինչ վասն Եպիսկո
 պոսի , կմ վասն եկեղեցական ինչ անձին , կամ
 կրօնաւորի , առանց կարծեաց ծանրապէս վնասէ
 անուաննց , և ասց զմեծադոյն գայթակղութի .
 Աստուսու և երեւի . ոյց ասէ Թողթոս , Թէ
 բազում անգամ միայն ներքին մեղանչէն նքա .
 որք զբնական և զգաղանի պակասութիս այլոց
 հոգւոյ կամ մարմնոյ յայանեն . ոյց ասել զու
 մեքէ , Թէ է կուղն . կամ տգէտ . կամ առանց
 խոհեմութե , և այլն . բայց եթէ չհետեւեայի
 անտուս մեծ իմն վնաս նմա . կամ ատելութի
 'ի սիրաս լսողաց զնմանէ , և կամ գայթակղու
 թի ինչ :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ճ Ո Ւ Թ Ն Ե Ր Ո Ր Գ :

Մեկնեացուք զստարկութիս ինչ վասն բանքա
 սանացն մեղաց :

19 Առաջինն է , մի Թէ մեղանչէ նա մահու
 չափ , որ զմեղս այլոց լուեալ , պատ
 մէ զայն առաջի այլոց , առանց հաստատելոյ
 զայն : Պատասխանեմ , զի Թէ պէտ լը ինքեան
 չէ մեղք մահուչափ , մինչ ոչ ծնանի անտուս
 վատահամբաւութի ինչ զընկերէն , և կամ առ ա
 ջի խոհեմ արանց այսու կերպիւնս խոսակցուէ .
 որում ոչ հաւատան : ոչ արատաւորի յոյժ անուն
 ընկերին , բայց եթէ ըստ լեզուսի , յանցանքն
 այն է յոյժ ծանր , որ 'ի սիրտ լսողաց զչարկաբ
 ծիս ինչ կարէ ծնանի . յայնմ ամ մեղանչէ մա
 հու .

հուշարի . որ զայսպիսի յանցանս ընկերին պատ
մէ . մանաւանդ եթէ անձն, զորմէ պատմէ զայն
պիսի յանցանս , իցէ պարկեշտ որ , առ որ նկա
տեալ կարծիրն այն՝ համարի վնաս մեծ . սոյնոյ
ասել պարտ է վասն առն , որ լռէլ զմեզս այ
լոց պատմէ առաջի այնոցիկ . որք վասն թեթեւ ու
թե խրեանց հաւանականաբար հաւատան .

Երկրորդն է . մի թէ մեղանչէ նա մահու
շարի . որ զգաղանի մեղս ընկերին , միոյ կամ եր
կուց , միայն յայտնէ : Պատասխանեմ զի թէ
պէտ նաւարոս համարի զայս միայն մեղք ներե
լի . եթէ չիցէ որոգայթ հրապարկեալ լինե
լոյ , կամ վնասու ընկերին . Սակայն , ես հաւա
նական եւ իկիրաւութեն ասահովադոյն բան
նոյ , որք ասնն , թէ այս իբր ՚ի բաղումս է մեղք
մահացու , որովհետեւ կարէ լինիլ , թ լեզբոսի ,
զի որ առաւել կամեցի յայտնիլ մեղոց իւրոց բազ
մաց օտար կամ քաղաքիկն անձանց՝ քան թէ մե
ծաւորին , կամ մեծայարդ ումք . ընդ որում
միշտ կենցաղավարի , կամ ՚ի նմանե պաշտպանի :

Բ . Բայց եթէ որ զզրպարտութիւն զանիրա
ւութի կրեալ յընկերէն յայտնեացի բարեկա
մին իւրոյ ոչ վասն բամբասելոյ կամ վնասելոյ
ընկերին , այլ զի զխորհուրդ ինչ կամ զմիտեմա
րութի ընկալցի , յայնժամ ոչ է մեղք . դոնէ
մահացու ոյն ասէ նոյն լեզբոս :

Երրդն է . մի թէ օրէն իցէ առն զվաճմբւեալն ՚ի
քաղաք ինչ , կրկին վառհմբաւել , կմ պատմել
զյանցանս նր յայլ ինչ քաղաքի , կամ առաջի
անձանց , որք ոչ գիտեն զայն : Պատասխանեմ
լատ թորթութի . առնել զայս դասն վնասելոյ
ընկերին է մեղք մահացու . եթէ ծանր իցէ վա
ռահամբու թին : Բայց առանց այսպիսի շար
գիտաւորութե , ոչ է մեղք մահացու , եթէ
ք զյանցանս ուրուք , որ հրապարակեալն է
վճաք դատաւորին , կամ յայտնի ամենեցուն .
ի նոյն քաղաքի յայտնէ այլոց , որք ոչ գիտենն
իս :

զայն .

զայն . եթէ վս կրկարուծե՞ ժամանակի չիցէ մտադեալ յանցնքն նր . կամ կենացն ուղղուծք զբարի ինչ անուն կրկին ստացեալ : Իսկ ՚ի յայլ տեղիս յայտնել զայս , ուր կարծէ որ հասանիլ վատահամբաւութեն ՚ի սուղ ժամանակի , ըստ Եղեթոսի , ոչ է ընդգէմ սիրոյ կամ արդարութե : Ապա թէ հաւանականաբար կարծեցոցէ որ ոչ հասանիլ ՚ի նոյն քաղաքի վատահամբաւունն այնորիկ , կամ զինի բաղում յոյժ ժամանակաց . և այսու ամիւ պատճեացէ զմեզս նր ՚ի նոյն քաղաքի , ըստ լեզիոսի , մեղանչէ մահուչափ , մանաւանդ եթէ նա , որ զյանցանսն գործեաց . և որոյ վս վատահամբաւ եղև իսկ . զանուն բարի ՚ի նոյն քաղաքի ստացեալ ունիցի , կմ եթէ զվնաս կամ զնեղութի ինչ կրեսցէ ՚ի պատճառս նր . կամ ազգականաց նր հասցի նեղութի ինչ կամ վնաս : Սակայն եթէ նա , որ վատահամբաւեան է . անխոյժ լիցի , վս յայլ ուրեք արատաւորման անուն իւրոյ , որ փշո ստուր է յինիլ . և մանաւանդ մինչ յոյժ հեռակացն է , կամ եթէ շք վս ծանր ինչ յանցանաց հրատարակաւ պատժեցի , յայնժամ քաղում անգամ օգուտ իսկ է զայս յայտնել ՚ի խրատ ոյլոյ :

Գ. Չորրորդն է , մի թէ օրէն իցէ երբեմն , վս ոմանց պատճառաց յայտնել ումք զչաղանի յանգանս ընկերին : Պատասխանեմ թէ է օրինաւոր , մինչ հարկաւոր է առ ՚ի արգելուլ զնշաճաւոր ինչ վնասն ընկերին հոգւոյ կամ մարմնոյ , յորժամ այլ կերպիւ ոչ կարեմք արգելուլ զայն : ուր ասեն սոթոս , նաւարոս , լեզիոս , և այլք : որդոն , Գիտացեալ քոյ զգողութե ծառայ լինի ուրումն , և քր ՚ի նոյնն բաղում անգամ ըմբռնեալ , կարես ազգ առնել այնոցիկ , ընդ որս բնակի . զի զգուչացին . և այն : Նոյնպէս ՚ի ծանօթանալ քոյ ստուգիւ վս առն . որ կերպաւորեալ զինքն ի բժիշկ , անհմուտ է յոյժ արհեստին . կարես ծանուցանել այնոցիկ . որոց կարե

Քնտել անհմտութիւն իւրով . և մանաւանդ երբեմն ոչ միայն կարես , այլ և պարտաւորիս խակ 'ի սիրոյ անտի զշաղանի յանցանս ընկերին յայտնել . եթէ անտուտ մեծ իմն Քաս հասարակութե , կամ մասնաւորի ուրուք պատճառիլ երևեսցի : որ և առաւել մեծ համարեսցի քան ըզ Քաս անտան և պատուոյ նք' որ զայսպիսի յանցանս գործեաց : Ապա թէ երկրայ մասացիս , թէ արդեօք առաւել իցէ Քասն այն , քան զվատահամբաւութի նք , մանաւանդ պարտ է ունիլ զօգուտ անմեղին : որդոն , եթէ ոք ունիցի ըզ զաղտնի հերեափկոտութի ինչ , և իցէ երկիւղ զայլս մոլորելոյ , յայնժամ զփրկութի այլոց զերազանցել պարտ է անտան և պատուոյ նք :

Դ. Հինգերորդն է մի թէ իցէ մեղք մահացու վատահամբաւել զիւր ինքն . Պատասխանեմ , թէ պէտ ըստ ինչեան վատահամբաւել զիւր ինքն ոչ է մեղք մահացու , զի ըստ լէզիոսի , ոչ է ընդդէմ արդարութե , որովհետեւ արեւայր , անտան իւրոյ , և 'ի վտանել զայն սպ և զայլ ստացուածս իւր , ոչ ումք անիրաւի , և ոչ ևս է ընդդէմ սիրոյ , որ ոչ պարաւանդէ առ 'ի ստանալ և պահել զարտօքին բարիս . եթէ ոչ միայն՝ ըստ որում են հարկաւոր հողե որ բարւոյ , մերոյ կամ ընկերին . Ապա եթէ 'ի վատահամբաւութե անտի իւրոյ անձին , ծնանիցի դայթակղութի ինչ կամ Քաս այլոց , թող կարէ լինիլ 'ի յանձնս որոց համբաւ բարի 'ի փրկութի այլոց է հարկաւոր , որպիսի են եպիսկոպոսունք , հոգաբարձուք . և այլն . յայնժամ վատահամբաւութին այն , է մեղք մահացու :

Վեցերորդն է , արդեօք , և որ ունկնդ իր լինի բամբասանաց մեղանչէ : Պատասխանեմ ըստ մբտաց սքյ վիճակն . թէ մեղանչէ մինչ հաւանի բամբասանոց . ըստ այնմ հասմայ . : ॥ Որք զայոյի սիսս գործեն արժանի են մահու , և ոչ միայն՝ որք զայս առնեն . այլ և որք կամակիցն լինին

Գործելեացն :

Արդ՝ կրկին կերպիւն կարե ոք կամակից լինել բամբասանացն , ուն ասէ թոյլեթոս , այս է , ուղղակի . կամ անուղղակի . Աւղղակի կամակից լինի նա , որ կամ զոյլս գրդէ 'ի բամբասանս , կամ բամբասանօք նր բերկրի . և սա զնոյն մեղանչէ ընդ բամբասողին զմեզս և զսրմէ իսկ իմանալ պարտ է դբանս սրբոյն բեռնարտասի , որ ասէ . թէ || Արդեօք բամբասելն . թէ ունին դիր լինիլն բամբասանաց անարգագոյն իցէ , ոչ կարեմ գիւրաւ տարբերել : Անուղղակի կամակից լինի ոք բամբասանաց , որ թէպէտ ոչ գրդէ զոք 'ի բամբասանս , և ոչ բերկրինօքօք , սակայն և ոչ արդելու զայն . կամ ընդ զիմանայ բամբասանացն 'ի կարել իւր . և 'ի պարտաւորիլ : և եթէ բամբասանքն իցէ վն նշանաւոր իրի . և 'ի ծանր նիւթս , և զոր գիւրաւ կարասցէ , մահաւ չափ մեղանչէ , մինչ սէրն պահանջէ 'ի մէնջ , զի զմեծագոյն վնաս ընկերին մերոյ 'ի կարել մե' գիւրաւ արդելու արդելուցումք . Բայց ներելի'ր . եթէ բամբասանքն իցէ վն թեթեւ նիւթոյ , կամ վասն մեծի ամօթոյն իւրոյ , կամ երկչոտութեան ձին ընդդէմ կալ բամբասողին շհամարձակեացի . Սակայն եթէ բամբասանքն իցէ վն ծանր ինչ նիւթոյ , կամ մեծագոյն ինչ վնաս պատճառէ , յայնժամ պարտ է զինքն իւր ստիպել , և 'ի բաց ընկեցեալ զամօթխածութիւն պարկեշտաբար ընդդէմ կալ բամբասողին : Արդ՝ ոչ երբէք մեղանչէ նա , որ զբամբասողն՝ ոչ յանդիմանէ . վն աս ոչինչ զօրելոյ յանդիմանուե իւրոյ , զոր կարծէ հաւանականաբար , և թէ զի մի' բամբասողն առցէ զստիթ առաւել ևս բամբասելոյ : Գարձեալ ոչ մեղանչէ և նա որ վն օրինաւոր ինչ պատկառանաց արդելեալ լինի , ուն եթէ ծառայն՝ ան , և որդին հօրն՝ որ բամբասէն՝ ոչ ընդդիմացի . մինչ երևի ինքեսան առ ոչինչ զօրել այնու ընդդէմ կալով :

երկմտի , և առ ոչինչ կողմն հակի . Երկրորդն է , մինչ կարծէ : Թէ է չար ինչ . և ակար ինչ հաւանութի համարի : Թէ է այնպէս . սակայն երկեղին ներհակի նր . Երրորդն է , մինչ որ կատարեալ հաւանութի և հաստատ մտացն զճ ուղիք դատէ : Թէ է այսպէս :

Եւ ՚ի դիտել մեր զայս , Ասեմ նախ , Թէ ճշմարիտ է , զի երկբայիլ , կարծել . կամ դատել զընկերէն է իմն ինչ անզանազան ըստ բարուց . և բարի և չար կարէ լինիլ : և է բարի , եթէ լինի ըստ կանոնի ուղիղ բանի , և է չար , եթէ ՚ի կանոնէ մոլորի ուղիղ բանի . Ուստի ասէք սփարն մեր , յօհաննու . 7 . || Մի ըստ այս դատէք , այլ ուղիղ դատաստան արարէք :

Երկրորդ . երկբայիլ , կարծել , կամ դատել զչար ինչ զընկերէն յերեւիլ բաւական պատճառաց առ այս , ոչ է ապօրինաւոր , ուր ուսուցանեն վարդապետք ՚ի հասարակի . և ըստ լայիմանի . մեծադոյն պատճառք և յայտնի նշանք խնդրին ՚ի կարծիլ , քան յերկբայիլն . սոյնպէս և ասա ՚ի դատել . քան Թէ ՚ի կարծել :

Թ . Ինչրեացես , Թէ որպիսի պատճառք , և քանք առ ՚ի ուղղութի երկբայիլ . կարծել . կմ դատել զչար ինչ զընկերէն բաւական համարի : Պատասխանեմ , Թէ ոչ կարէ տալ ստոյգ ինչ կանոն . ուր ասէ սոթոս այլ դատողութի խոհեմ , և բարեպաշտոն տան բացորոշել պարտէ , նկատեալ ՚ի յատկութի իրին . յորպիսութի անձին , և յայլ պարագայս : վս որոյ ՚ի լինիլ այսոցիկ ամից երբեմն յոյժ դաղանի և շիտեալ . ուր ասէ Թոլեթոս , կարէ պատահիլ բազում անգամ , զի որ խաբեացի համարելով ունիլ զբաւական պատճառս երկբայելոյ , կարծելոյ , կամ դատելոյ . մինչ իրաւի ոչ ունի , զբաւական պատճառս . մանաւանդ յորժամ յարտաքին գործոց անտի դատեսցէ զդիտաւորուէ , և զայլ ներքին ներգործութեց գործողին . Ուստի բարեք խկէ

յոյժ զանձինս մեր ի բաց ունիլ յայսպիսի դա
տողութիւն . և թողուլ նոյ միայնոյ ՚ի դատել . և
թէ հարկւորութիւնը կամ օգտկրութիւն ձեռն մերոյ,
կամ ընկերին առ այս չպարտաւորեացէ զմեզ . և
յայնժամ զքանն և զնահեմութիւն պարտ է ՚ի
դործ ունիլ . և ընդարձակել առ այնքան որքան
ունին զսատղութիւն արտաքին երևոյթք , և ար
գելուլ զանձն , զի մի՛ անցցէ զչափու արդարու
թե և սիրոյ :

Գ. Երրորդ յանդուգն գատողութիւն , կամ դա
տողութիւն այն , որով ոք ազատաբար , և զգու
շութիւն բանին դատէ զընկերէն վն չարի ինչ
թեթե և անբաւական պատճառօք կամ նշանօք ,
է մեղք մհցու . և թէ չարն այն է ծանր , և արա
տաւորէ յոյժ զանուն գատելոյն . ուն ասէ սքն
թօմաս , Էւ այս է գատողութիւն , զոր արգելքն
նրն ճր , ասելով . || Մի՛ դատիք . զի մի դատիցիք .
մատ . 7 . և զուկ . 6 . ուն իսկ մեկնն սքն օգոսա .
ի բանս նն ՚ի լեռն , և սքն բարսեղ . Ապա ե
թէ չարն է թեթե , և ոչ արատաւորէ յոյժ զա
նուն ընկերին . միայն է մեղք ներելի :

Է . Ի լինիլ ճշմարիտ այսոցիկ երկոց , և հա
մաձայն նմ նմաբանիցն բանից , առ մի ինչ ոչ
միաբանին թծաբանք , այս է , թէ որպիսի մեղք
իցէ թեթեալոյն պատճառօք և նշանօք կար
ծել զուսեքէ զչար ինչ , ուն սովոր է պատահիլ
բազում անգամ : Արդ՝ երեք են բանք նմաբա
բանիցն վասն խնդրոյս . Առաջինն է , թէ նմ
յանդուգն կարծիք վն ծանր ինչ չարի ընկերին
է մեղք մահացու . Երկրորդն է , թէ կարծիքն
այն , որ յղացեալ լինի տկար ինչ հաւանութիւն
և երկիւղիւ ներհակին , ոչ երբեք է մեղք մա
հացու . ուն ասեն սքն թօմաս , և սքն օգոստի
նու . որ և ՚ի մեկնութիւն սրբոյն յօհաննու , ասէ
|| Այսպիսի կարծիքս առ մարդկային փորձութի
պատկանի , առանց որոյ ոչ կարեմք անցուցա
նել զկեանս զոյս , ապա եթէ ոչ կարեմք փախ
ել

չիլ 'ի կարծեաց , զի եմք մարդիկ , զգուշացուք
 գոնէ ի դատողութէ . այս է . 'ի սահմանական
 և 'ի հաստատ վճար : Իսկ երրորդն որ հաւանա
 կանադոյնն քան զամ . է . թէ յանդուզն կար
 ծիք բազում անգամ է միայն մեղք ներելի , և
 կարէ երբեմն լինիլ մեղք մահացու 'ի պատճառ
 ծանրութե ՚իւթոյն , նկատմամբ առ ոմանս ան
 ձինս . ուր եթէ ամ զեպիակոսոս ոք զզարդա
 բեան իմաստութի և բարեպաշտութի 'ի թե
 թեւագոյն ինչ նշանց կարծեաց հերետիկոս , կմ
 թէ գործեալ իցէ զեղեանային , և զգայթակ
 զեցուցիչ մեղս ինչ . ուր ասեն սոթոս և լէզիոս ,
 որ և զվճիոս պոյս բազմօք հաստատէ , սակայն
 զանազանէ ևս զկարծիան զայնօսիկ , որք յառա
 ջանան 'ի մոլորութէ ինչ մտացն և զայնօսիկ ,
 որք 'ի վատթար ըզձիցն կամաց . քանզի կար
 ծիքն այն է միայն մեղք ներելի , որ յառաջա
 նայ 'ի մոլորութէ ինչ մտացն . որով ոք ըմբռնէ
 զնշանս իբրև զբուականս , առ 'ի կարծել զընկե
 րէն զլար ինչ . և անհո լինի առ 'ի բննել և
 որոնել , թէ արդեօք բաւական իցեն այնքիկ .
 և է ևս պատրաստ առ 'ի բոց ընկենու զկար
 ծիան 'ի ճանաչել իւր . թէ պատճառն այն չի
 բակն առ 'ի կարծել զընկերէն զլար ինչ . իսկ կար
 ծիքն այն է մեղք մահացու , որ յառաջագայի ,
 'ի վատթար ինչ ըզձիցն կամաց , և չարակամու
 թե սո ընկերն , որ լինի , զի ևս զկնի ճանաչե
 լոյ , թէ նշանքն այնքիկ չեն բաւական պատ
 ճառք , այսու ամիւ կամի տակաւին մնալ և սե
 եաիլ 'ի կարծիս իւր , որ է վս ծանր ինչ շարի ըն
 կերին . որ և 'ի մեծագոյն վատահամբաւութի
 նր զիտէ :

Իմաստութի իսկ սքն օգոստինոս 'ի բանս Են
 'ի լեառն || Երկու են ասէ ազգք , յորում զգու
 շանալ պարտիկ յանդուզն դատողութէ , Աս
 ժինն է , մինչ անդիտանամք ստուգիւ . թէ ո
 բով հողւով այս ինչ եղև Երկրորդ մինչ սչ
 Մյ 4 ԹԷԼ

դիտեմք հաւատեալ, թէ որպիսի լինելոց է, որ սյժմ բարի, կամ չար երևի, վասն զի եթէ որքն տկարութի ստամբին ոչ կամեցի պահել, և դու չհաւատացեալ ընդ այս, որ կորստութեն անտիւն տատանիլ համարեցիս զնա, յանդր նութք դատեցար. Այլ և եթէ զյայտնի որ կորստութի, կմ զարբեցութի ծանուցեալ քոյ, ընկերին դիցես'ի սրաի, թէ ոչ երբէք կարէ ուղղիլ և 'ի բարեգոյնս դառնալ. և ևս յանդր նութք դատեցար. Արդ' մի' լիցի մեզ յանդիմանել զայն, զոր ոչ դիտեմք, որով հոգւով լինին, և մի ևս յանդիմանել զոր դիտեմքն, իբր յուսահատ ուղղուեն, զգոյշ լիցուք 'ի դատելոյ, զորմէ սյժմ ասէ, մի' դատեք, զի մի' դատեացեն զձէնձ:

Դ. Խնդրեցես, մի' թէ զայնոսիկ, զորմէ երկբայիմք, թէ որով դիտաւ որութք լինին. սկար տիմք 'ի բարեգոյն կողմն մեկնել. Վասասխանեմ, 'ի լինիլ հաւասար նշանացն յերկուց կողմանց, եթէ կամեցուք դատել զընկերն, յայնժամ պարտ է մեզ 'ի բարեգոյն և 'ի հաճոյաբարն դատել 'ի կողմն, զի ըստ սրբոյն թօմայի, բարեդ յն է յերկբայուն բազմիցս սխալիլ բարւոք կարծեցեալ զընկերէն, քան թէ միանդամ և եթ չարեօք կարծեցեալ զընկերէն՝ պատրիլ:

Սակայն ըստ լեզուոսի, առ 'ի զգուշանալ 'ի վնասու ինչ կամ առ 'ի խրատել և ուղղել զոք սպասակարոյն է զկարծիան մեկնել 'ի վնասակարագոյն կողմն, և ոչ թէ համարելով զընկերն դող. կամ ամբարիշտ, այլ ենթադատելով թէ այնպէս զգուշանալ պարտ է ըստ արասքնոյն 'ի յօգուտ իւր և այլոց. ուն թէ 'ի տարակուսի իցէ բարութի նոյնոյ անձին, զոր և ասէ սրն թօմօս. վն այսորիկ յընդունիլ մեր զանձանօթ որ 'ի տուն, կարեմք ըստ օրինաց զգոյշ լինիլ ընչից մերոց այնպէս, ուն թէ 'ի կարծիս իցէ բարութնք. թէ պէտ ոչ դատեմք զայն ամբարիշտ, կմ

գող և այլն . Այսպէս ևս մեծաւորքն թէպէտ լը ներքնոյն զերկրայելի գործս ընդ իշխանութեղելոյն ՚ի բարեղոյննպրտին մեկնել կողմն, բայց առ ՚ի զգուշացուցանել զնս ՚ի շարէ , և առ ՚ի իրատեղ զնս , կարեն այնպէս վարիլ զնորք , ուղ թէ զբարութէ նց երկրայեսցին :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ճ Տ Ա Ս Ն Ե Ր Ո Ր Դ .

Յօդադս թէ քանի կերպիւ մեղանչել կարէ ընդդէմ ութներորդ պատուիրանի տաս նարանեայ օրինաց :

III. **Մ**եղանչեն նախ ընդդէմ հրամանիս, որք պատուութիւն ստեն զսուտինչ, որ է մեզք մահացու ՚ի լինիլ մեասակար պատուոյն նց և բարւոյ մեծաւորին : Մեղանչեն և նորա , որք կեղծաւորին սրբութիւ վարուց . Եւ որ այնքան ծանրագոյն է , որքան առաւել դիտէ ՚ի մեաս ընկերին , ուղ և թէ ըք կեղծաւորեսցի առ ՚ի սեր մանել զաղնդս ինչ : այլև արք՝ որք զգետուք և հանդերձիք ծպնին ՚ի տեսակ իդի , կամ կանայք ՚ի տեսակ առն . և այս ՚ի լինիլ վս շար ինչ վախ ճանի , կամ ՚ի պատճառել զմեղս ինչ և զգայ թաղկութի :

Մեղանչեն և նորա , որք առանց օրինաւոր իշխանութե , մատուցանեն զինքեանս ՚ի դատաւոր , կամ նմին ցանկան առանց դիտութե օրինաց և իրաւանց : Եւս դատաւորք, որք զճանս թութին օրինաց և իրաւանց ծուլանան պահել , և որք զվէճս , որ ոչ պատկանի նց կամեցեալ լը սել իբր դատաւոր , յանդգնին դատել զայն . այլ և որք ընդդէմ հաստատելոյն կամ ընդդէմ օրինաց և իրաւանց դատեն , որք զկերպ օրինացն ՚ի դատելն ոչ պահեն . Եւ ևս որք առանց յառաջագոյն վատահամբաւելոյ ուրուք , կամ ունելոյ զբաւական նշանս վս դողունի յանցանաց

նաց ուրուք սիսին առնել զքննութի զյանցաւորն անպատեհարար հարցանեն . և ՚ի պատասխանին ստիպեն . որք մարդահաճութք , կաշառօք կամ այլ շար ինչ ախարաք մուրրին յողիղ ճանապարհէ արդարուն . ՚ի դատելն . կամ ՚ի տալ զանիրաւ վճիռս ընդդէմ արդարութե , կամ ընդ ե , կարել զդատ վիճիցն . կամ ընդ առնել զայլ ինչ ընդդէմ արդարութե , կամ ՚ի թոյլ տալ առնել . նաև որք վասն դատելոյ , կամ վնայլ դատաստանական զործոց պահանջին առաւել . քան զոր օրէնքն և օրինաւոր սովորութիւն վնարդար վարձուցնց սահմանեալ են :

Բ. Մեղանչեն և ևս . որք զյանցանս ուրուք , որ բարւոյն հասարակութեն է շեասակար , շճա նուցանեն յորժամ պատշաճաբար կարեն . կամ որք ընդդէմ ը կերին յարուցանեն զկտիւ և ըզվէճ վնատելութե , զրէժխնդրութե կամ վնայլ ինչ շար վախճանի : կամ որք նենդութք և պատիր ինչ թղթով վարին ՚ի դատաստանի :

Մեղանչեն իսկ , որք կուէալ ՚ի վկայ , և ըստ օրինացն կանոնի հարցեալ ՚ի յօրինաւոր դատաւորէն . զիմն ինչ սուտ , կամ հոմանունութք , և ընդդէմ մտաց իսկ դատաւորին պատասխանեն . սոյնպէս ևս իմանալ պարտ է վասն յանցաւորացն . որք և ևս մեղանչեն յորժամ ընդդէմ կան օրինաւոր դատաւորին վճաոյ , կամ պաշտօնէից նք ՚ի կատարել զհրաման դատաւորին . կամ բռնաբարեն զնս :

Մեղանչեն ևս ընդդէմ պատուիրանիս , որք զդատիւ ընկերին անարդ բանիւք սրտաւորեն . զնախատինս և զարհամարհանս նմա հասուցանեն . և զգաղանի յանցանս նք առաջի բաղ մազյանդիմանեն , կամ զայլ իւրաքանչիւր յանցանս նք ՚ի ծաղր և ՚ի նախատինս նք , առաջի սրկանեն :

Գ. Մեղանչեն և ևս , որք զանուն ընկերին ՚ի ծածուկ բամբասեն , և զնեն ՚ի վնքն զուտ ինչ

ինչ յանցանս, կամ զայնսկ բանիւք. մեծցւցնեն. կամ զդադանի յանցանս նր յայտնեն, կամ զուղիղ գործս նր շարեօք մեկնեն, կամ ծածկել և նը սէաղէցուցանել ջանան. կամ լռեն զնոցանէ. կամ զնոյնս գաղթուք և կեղծաւորութիւնս ԿՅ. մինչ. մինչ ՚ի լռութիւն անտի և ՚ի գաղթութիւն հետեւի վնաս ինչ անուան ընկերին :

Այլ և որք գրդեն զայլս ՚ի բամբասանս, կամ բերկրին բամբասանօքն այլոց. կամ ՚ի կարել լարեանց և ՚ի պարտաւորիլ ոչ արգելուն զբամբասանս և նաև որք շողմոգութիւն յարուցանեն զլուին և զխառովութիւն ՚ի մէջ երկուց : Եւ ևս որք շարագրեն զգրեանս ՚ի նախատինս և ՚ի վատահամբաւութիւն այլոց. կամ տարածեն առ այլս. կամ զայնտօսիկ շար հոգւով ընթեռնուն. պահեն. կամ այլոց տան յընթեռնուլ :

Եւ ապա մեղանչին, որք անձնի շտանութիւն և յանդդնարար կարծեն. կամ դատեն զչարինչ զընկերին կամ զբարի և զանդանազան գործս ընկերին շարեօք մեկնեն :

ՀԱՏՈՒԱԾ ՄԵ ՏԱՍԱՆԵՐ ՈՐ Դ

Յաղաքս հատուցման վս յանցանելոյ զեօթն, երորդ պատուիրանաւս :

Արկուց կարեմք պարտաւորիլ հատուցմանց վս անցանելոյ զպատուիրանաւս. վս երկուց վնասուց, անուան կամ պատուոյ. և ընչից, որ ՚ի նմանէ կարէ ծնանիլ : և զերկաբանչիւրոցն կարձ ՚ի կարձոյ սասացուք :

Եւ նախ որքան առ հատուցումն ընչից, ճըլմարիտ իսկ է վասն սասցելոցս յանցեալ հատուած, զի ՚ի պատճառս ստութեան, անարդելոյ և բամբասանաց ծնանի պարտաւորութիւնն հատուցման. քանիցս ստութիւն, անարդելութիւն, կամ բամբասանելիւն անիբաւ վնաս ինչ հասանի

ուսեք, ըստ կերպիցն զորս ցուցաք յանցեալ
պրակն. հմծ. 11. համար. Է:

Երևի և ևս, թէ դատաւորն, որ կամ ի գա
տելն. կմ յայլ դատասանական դործս աւնէ զս
նիրաւութի ինչ, որ լինի պատճառ վեստու ան
մեղին, ի հատուցումն նր՝ պարտաւորի. Նոյնն
և նա, որ ստու թք ամբաստանէ զքք, կմ տայ
զվկայութի սուտ ի դմասանի. պարտաւորի ի
հատուցումն վեստուն պատճառելոյ:

Եւ որքան առ հատուցումն անուան և պատ
ւոյ, գիտելի է ըստ հասարակ բանիցն իմարա
նից. զի պարտէ հատուցանել զհամբաւն և ըզ
պատինն բարձեալ յընկերէն ի լինիլ երկց յատ
կութեցս: Առաջինն է, եթէ ստուգիւ բար
ձեալ իցէ համբաւն. և արաւաւորե շանունն.
Երկրորդ է թէ անիրաւութք իցէ բարձեալ.
Երրորդ է թէ լիցէ վերստին նորոգեալ ա
նուն նր: Արդ՝ գիտացեալ մեր զերիս յասկա
թիս զայստիկ.

Է. Ասեմ նախ. թէ նա, որ վատահամբա
ւեայ զանուն ընկերին դնելով ի վր նր զսուտ
ինչ, պարտաւորի ի հատուցումն համբաւոյ ցու
ցանելով զստութի իւր. սոյլ հաստատեն սքն
թօմաս, սթոս, նաւարոս. և այլք. որք և հա
մարին, թէ առ այս յայնժամ պարտաւորի որ,
մինչ այլ կերպիւ նորոգել բաւական զհամբաւ
և զանուն ընկերին զոր անիրաւարար եբարձ,
ոչ կարացի:

Ասեմ երկրորդ. թէ նա, որ վնհամբաւ արար
զընկեր իւր զգաղունի յանցանս նր յայտնելով,
ի հատուցումն համբաւոյն պրմւորի, և ոչ թէ
ասեւով, թէ զրոպարակ իցէ զընկեր իւր ստուք
զի այս է յայանի ստուի. (սոյլ ի վերոյ ասացելոցս
երևիւ) այլ այլ ինչ կերպիւ, այսինքն ասեւով,
թէ շարեօք և անղգուշութք խտակեալ իցէ.
սոյլ ուսուցանէ սքն թօմաս. կամ թէ ասել. թէ
պէտ զայն ինչ զոր սասցի ճշմարիտ կարծէի,
ասլս

սոցա ծանեայ զանզոու շուրի իմ և զողխոու թի .
 ույ ասէ մեծն յահաննէս : Բայց եթէ իցէ եր-
 կիւզ զի մի առաջի խոհեմ և իմաստուն և ու-
 շիմ արանց , կերպ խօսակցութեա լիցի առաւել
 ՚ի հաստատութի յանցանաց ընկերին , քան թէ
 ՚ի յուզուրի անուան նք . Սոթոս և այլք բար-
 ւոք և ս համարին . յուելն յայնժամ , և յայլ ինչ
 պատահման միշտ դովել զընկերն վատահամբու-
 ւեալ , վն այլ ինչ իրաց առաջի նոյնաց չ զի այ-
 սու լիցի հատուցումն ինչ վատահամբաւման իւ-
 բոյ : Զաւել Վալենտինեանն , թէ նա , որ այ-
 սու վատահամբաւեաց զընկերն , կարէ այլ ինչ
 հոմանունութք , կամ մտացն այլայլութք վա-
 ըիլ ՚ի շնուան անուան ընկերին . և ՚ի ջնջումն
 սաացելոցն ՚ի մտաց ունկնդրաց . Եւ զայս վեր-
 ջինս հնար միայն ՚ի տակասիլ այլոց կերպից , և ՚ի
 մեծագոյն հարկաւորուն ՚ի կիր արկանել սարտ
 է ՚ի շնուան անուան ընկերին մեծաւ զգուշու-
 թեամբ :

Դ. Ասեմ երբորդ , թէ նա ևս , որ զգազունի
 յանցանա ընկերին լուեալ , յայլմէ ասէ այլում ,
 պրտուրի ՚ի հատուցումն անուան ՚ի ճանաչել ,
 (ույ բազմիցս լինի) թէ այնու սերմանեալ իցէ
 ՚ի լսողս կարծիք չար զընկերէն , և զայս կարէ
 առնել կմ բառ վերոյ սաացել կերպի , և կմ ցու-
 ցանելով նք , և որքան կարէ համոզելով նք ,
 թէ որքան անհաւաստի իցէ , և բազում ան-
 դամ սուտ՝ զոր լուեալ յու մեքէ պատմեն այլոց :

Եւ պատճառն է , զի յանիրաւարթօր վնասել
 անուանն ընկերին . Տնանի պարտաւորութի հա-
 տուցման . իսկ այսու , ույ ենթադրեմք , վա-
 տահամբաւի ընկերն . ուրեմն և սարտ է հա-
 տուցանել :

Բայց են ոմանք պատճառք որք ՚ի հասարակի
 անսկզադ իր առնեն յոչ հատուցանելն մնասու-
 գոյն , որ զընկերն վատահամբաւեաց : Առա-
 ջինն է , եթէ վատահամբաւեալն շնորհեացէ վա-
 սա

տահմաբաւոյն զհատուցումն . և այս՝ եթէ չիցէ
այնտիպի անձն , որ ոչ կորսողէ շնորհել , որ
պիսի են անձինքն այնորիկ , որոց բարի անուն
հարկաւոր է բարւոյ հասարակութե . և ապա
ոչ դարտին անհող լինիլ , և զիւրաւ շնորհել
վատահամբաւոյն զհատուցումն շինութե ան
ուան : Երկրորդ , եթէ վատահամբաւոյն խո
հեմաբար կարծեսցէ , թէ նա առաջի որոյ զըն
կերն վատահամբաւեաց , մտազեալ իցէ զբանս
իւր : Երրորդ եթէ ի բանից իւրոց չիցէ վա
տահամբաւեալ ընկերն , ց , նա , որոյ առաջի
յայտնեցան յանցանք ընկերին . արդէն ծանու
ցեալ իցէ նց . կամ ոչ երբէք հաւատացի բա
նից նր : Չորրորդ եթէ համբաւն բարձեալ ,
այլ ինչ ճանապարհաւ վերտին նարդեալ իցէ .
Հինգերորդ եթէ հատուցումն համբաւոյն բա
րոյականաբար իցէ անկարեկի : Վեցերորդ , ե
թէ չիցէ հնար հատուցանելոյ առանց վատա
համբաւութե անձին իւրոյ . որ է մեծադոյն յոյժ
քան զայն , ոպ եթէ եպս կմ նշնար որ վատահամ
բաւեալ իցէ զգուհիկ սին , ոչ է պարտական մե
ծաւ մնասու պատշոյն իւրոյ հատուցանել ան
ուան գուհիկին . այլ բաւական է որքան կարե
առանց իւրոյ անձին պատուոյ մնասու հատուցա
նել . այս է գովել զնա այնու առաքինութի , որոյ
ներհակաւն վատահամբաւեաց . կմ այլ ինչ կիր
պիւ , որ բարեդոյն և վայելուչ իսկ երևի ըստ
դատողութե առն խոհեմի :

Գ . Խնդրեցես , մի՛ թէ յոչ կարել հատու
ցանել համբաւոյն պարտ է վճարել արծա
թովք . Պատասխանեմ թէպէտ հաւանական
իսկ երևի բան վարդապետացն , որք ասեն , թէ
այս կարե լինիլ . և ապա դարտ է առնել . Սա
կայն հաւանականագոյն է բան նց , որք ասեն ,
թէ ոչինչ արծաթովք ըստ պարտին կարե հա
տուցանիլ համբաւն : ըստ ոյնմ առկց . || Լաւ է
անուն բարի , քան զգանձս բաղում . և մինչ

անունն է մեծագոյն բարի , սպա և ոչ ոք պարտաւորի 'ի հատուցումն այնորիկ փողովքի :

Առդ՝ զոր ասացաքն զս' անունն շինութիւն ըզնոյն իմանալ պարտ է և պատուոյն հատուցման . զի անարգել ուրուք զընկերին պատիւ , և յարհամարհել զայն անիրաւարար , պարտաւորի 'ի վերստին նորոգումն . և 'ի հաճել զանձն անարգեալ . կամ խնդրելով զթողութիւն 'ի նմանէ , կամ զայլ ինչ աւանելով , որ կարացէ համարիլ բաւական 'ի հատուցումն պատուոյ ըստ գատողութիւն խոհեմ առն :

Պ Ր Ա Կ . Ի Ն Ն Ե Ր Ո Ր Դ .

Մեկնեացուք զիններորդ և զտասներորդ պատուիրանն տասնաբանեայ օրինաց :

Մի՛ ցանկանար կնոջ ընկերի քո .

Մի՛ տան , մի անդաստանի , և այլն .

Եւ մի՛ ամ ընչից նր' :

Ա ՍԵ թէպէտ , որք այտբիւք երկրորումք պատուիրանեքս տասնաբանեայ օրինաց արդէլեալ լինին . երևին իսկ արդելեալ 'ի վեց երրորդն և 'ի յեօթներորդն , որք ուր և այլձն . ոչ միայն հրաժարեն զնոյն յարտաքին գործոց , որք ընդդիմանան ամսային օրինաց . այլ և 'ի ներքնոցն . սակայն (ուր ասէ սքն Թօմաս) ոչ առանց մեծի պատճառի զայսոսիկ երկու վերջին պատուիրանս յաւել ամ վերնոցն . Նախ առ 'ի ցուցանել զկատարելութի օրինաց իւրոց , և զզանազանութի նր' յօրինացն մարդկանց . || Զի մի կային օրէնք (ըստ հաօմ . ուսուցարանին) պարունակեն միայն զարտաքին գործս . իսկ ամսայինն , զմաքրութի և զսրբութի հողւոյն այլև զամբողջութի նր' խնդրեն : Երկրորդ առ 'ի բա

զորոչ խրատել զմեզ, թէ զխարդ զգոյշ, և փոյթ պարտ է իննել առ 'ի փախելի 'ի մեղացն, որք միայն խորհրդով և հոգւոյն նկատամար գործին, մինչ ըստ ժողովոյն թրխանն թինոյ. || Բազում ան՝ ամ ծանրագոյնս վերաւորեն զհոգին. և որո գայթաւոր յոյժ են՝ բան զայնոսիկ, որք յայտ նի գործին:

Արդ՝ ուսուցանէ հո.ձ. ուսուցարանն. թէ կրկին պատուիրանս այս ոչ արդելու մեզ զնոյն զօրութին ցանկալոյ, զոր պարզեաց մեզ ամ տրարին բնութե, այլ զար կիրառուին նր. և զանգիստ ցանկութին զայն, որ անցանէ ըզ վախճանաւն, որ կացուցեալ է յուղիզ բանէ. կամ բողձալով չարաց, այս է. շնութե, ար բեցուն և՛. և կմ' ցանկալով բարեաց անիրաւա բար և անկարգօրեն: Եւ որովհետև այսօրիկ բարեգրիակ երևին յասացելոցս յանցել պրակս, աստ միայն կարձ՝ 'ի կարձոյ յաւելցուք զկերպս ինչ, որովք ըստ հո.ձ. ուսուցարանին. կարեմք մեղանչել ընդդէմ պատուիրանացս այսօրիկ:

Բ. Եւ նախ մեղանչէ ընդդէմ իններորդ պատուիրանիս, ոչ միայն նա, որ կեռջ ընկերին շուէն աստիճ ցանկայ՝ այլև որ զայն ամեւել 'ի կին յառաջք զպսակիլ նր ցանկայ. անկարդ փախա բանօք և այս նախ 'ի պտճոս վտճրուէ ցանկութեն այնորիկ. և սուտ վտանգին, զի մի՛ այնու ցանկացի մահու առն նր. կամ սպօրինաբար փարելոյ զնովա: Եւ զայս իմանալ պարտ է ոչ միայն վն ամուսնացեալ կանանց. այլ և վն խօսեցեալ աղչկան. Արդ՝ ցանկալ այսօրիկ ոչ երբէք է օրեն. ուր և ոչ լուծանել զխօսեցեալսն. կամ զխոսամուճն նր ապականել:

Եւ որքան առ տառներորդն գիտելի է, զի ըստ հո.ձ. ուսուցարանին մեղանչեն մանաւանդ ընդդէմ պատուիրանիս, որք ադահութի մեծաւ փափաջին հարստութեց. այլոցն գոյից հառա շեն. և չոր և սպօրինաւոր արհեստիք զինչս
 Ի՞նչ
 Իւ

խրեանց առատացուցանել փափաքին . և կամ
առ'ի շահիլ յոյժ-դինս արնլին և զքաղին 'ի խաղա-
ք . Մեղանչեն և վաճառականքն , որք սովու
և չքաւորութե տարւոյն ցանկան , կամ որք խո
ժուին 'ի ինիլ այլոց , բաց 'ի յինքեանց , որք վա
ճառեն կամ գնեն . զի ինքեանք կարասցեն վա
ճառել և գնել ըստ հաճոյից խրեանց , կամ
որք ցանկան չքաւորելոյ այլոց , զի 'ի վաճա
րելն կմ 'ի գնելն ունիցին զմեծադոյն օգուտս :
Նոյնպէս և զինտէրք , որք ցանկան պատերազ
մի , զի առանց պատժելոյ կողոպտեսցեն ,

Այլ և բժիշկք , որք ցանկան հիւանդութե
այլոց : փաստաբանք , փոխանորդք . և գատա
ւորք , որք փափաքին վիճիցն և կադողաց առա
տութե , և երկարութե : Նաև արհեստաւորք ,
որք ծարաւեալ շահու ցանկան սովու և չքաւո
րութե իրացն այնոցիկ , որք պատկանին 'ի պահ
պանումն և 'ի պիտոյս կենաց , զի 'ի վաճառելն մե
ծառնս շահեսցին : Եւ թէ զիարդ վասակար և
չար է վատթար և ասելի ցանկութիս այս 'ի յա
ռաջագայիլ ազատ կամօք , ցուցանէ առաքեալն .
Բ. Տիմ. 6. ասելով . || Զի ոչինչ բերաք յաշխարհ
և ոչ տանիլ ինչ կարասցուք . այլ ունիմք զկե
րակուր և հանդերձս և այնու շատասցուք . իսկ
որք կամին մեծանալ , անկանին 'ի փորձուիս ,
և յարողայթս քատանալի . և 'ի բազում ցան
կութիս անմիտս և վասակարս . որք ընկղմեն ըզ
մարդիկ 'ի սահումն և 'ի կորուստ . Զի արմատ
ամ շարաց արծաթ սիրութիս է :

Եւ մինչև ցայժմ զամձային ոլատուիրանաց
տասնաբանեայ օրինաց , յամենամեծ յամենակա
տար և յամենայարդ օրինադրին՝ պատիւն և 'ի
փառս :



Գ Լ Ո Ւ Խ Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ :

Յաղագս պատուիրանաց եկեղեցւոյ :

Պատուիրանք եկեղեցւոյ 'ի հասարակի են
հինգ . որոց Առաջինն և Երկրորդն են վս
սք առնելոյ զառուրս տօնից . և լսելոյ զսք
օրատօրացն 'ի նոյն առուրս : Երրորդն է վս պահե
լոյ զառուրս ինչ . իսկ Չորրորդն և Հինգերորդն
է . խոստովանել խորհրդաբար դոնէ միանգամ
'ի տարւոջ . և հաղորդիլ դոնեայ 'ի դասի :
Արդ՝ զառաջնոյ և զերկրորդէն վարդապետեալ
մեր 'ի վերոյ 'ի մեկնութի տասնաբանեայ օրի
նացն պարզաբանեցաք . զչորրորդն և զհինգե
րորդն ևս 'ի մեկնութի խորհրդոցն 'ի տեղեա իւր
յուցաք : Ուստի աստ միայն զերրորդէն, այս է
զլահոց , վարդապետեացուք :

Պ Ր Ա Կ Մ Ի Ա Կ :

Մեկնեացուք զերրորդ պատուիրանն եկեղեց
ւոյ վասն պահոց :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ճ Ա Ռ Ա Ջ Ի Ն :

Յաղագս թէ զինչ խնդրի առ պատկանաւորն
պահպանուան պահոց :

iii. Առաջինն պահոց , զերխ ինչ նշանակի .
նախ 'ի բաց կալ 'ի մուտութեանց . և
'ի մեղաց . ըստ այնմ սրբոյն օրոստ . || Մեծ և
ընդհանուր պահքն է ժուժկալել յանօրէնուեց
և յանիրաւ ըղձից աշխարհիս , որ և է պահք
կա

կատարեալ : Երկրորդն վնճ ժուժկալուէ յմծ կերակրոց . և ըմպելեաց . որ և անուանի պահք բնական և այս խնդրի ըստ պատուիրանի եկեղեցւոյ առ 'ի հազարդիլ . ոմ պատգաք 'ի վերոյ 'ի յնձեռուած խորհրդոց . գլ' . 32 Երրորդն վնճ ժուժկալութեն ինչ , և հրաժարման 'ի կերակրոց ըստ սահմանելոյ եկեղեցւոյ , և անուանի եկեղեցական պահք . և զորմէ պարտ է իմացել լինիլ յառջգրեալ խնդիրս Եւ 'ի մեկնուի որոյ :

Ասեմ նախ , թէ երեք ինչ խնդրին առ պարտաւորն պահպանուան եկեղեցական պահոց : Առաջինն է բնարութի կերակրոց , կամ հրաժարումն 'ի մտոյ . ոմ ուսուցանէ սքն թօմաս . և հաստատի մշանջնական սովորութեամբն և աւանդութիւն եկեղեցւոյ , որոյ և վկայքն են սքն բարսեղ . սքն օգոստինոս , և այլ բազումք , Եւ թէպէտ ոչ միայն 'ի մտոյ . այլ յայնոցիկ , որք 'ի կենդանեացն յառաջագային . սոք զձու . և զկաթն . և այլն . յաւուրս պահոց պարտ էր ժուժկալել . ոմ երևի 'ի բանիցն սքն դրի դորի պատկն առ օգոստինոս կնքն ընկողաց , այլ և 'ի հաշակաւոր պահան վեցաւորոց մեծի շարժումն , միայն չորեղինօք , այս է . հացիւ և ջրով և բանջարօք պարտ էր կերակրիլ , ոմ սուէ սքն կղէմէս . և սքն եպիսկան . Սակայն եկեղեցին վնճ օրինաւոր ինչ պատճառի զառաջ նապահ խտտելն զայն սակաւ ինչ թուլացոյց . և զնոյն զանձկագոյն զժուժկալութիւն եթող կամելեացն ջերմեռանդութիւն . իսկ 'ի բառասնորդական պահս ամբողջ հրաժարիլ 'ի մտոյ և 'ի ձուեղինաց անտի սահմանեաց , և 'ի բազում տեղիս իսկ շնորհեաց կերակրիլ և ձուեղինօք : Բայց 'ի յայլ աւուրս պահոց տարւոյն . և ս զկերակրիլն ձուեղինօք թոյլ ետ : Սակայն իւրաքանչիւրք պարտ է պահել զօրինաւոր սովորութիւ տեղւոյն որ դատի , որ իսկէ բարեգոյն թարգման եկեղեցական օրինացն :

Երկրորդն միանգամ ուտել յաւուրն, ուն ա-
րէ սքն թօմաս . և ընդ նմա վարդապետք 'ի
հասարակի : և որ բարեգոյնս հաստատի միայն
մշտնջենական և ընդհանուր սովորութքն եկե-
ղեցւոյ, որովհետև ոչ տեսանեմք զվճիռ և զսահ-
մանագրութի այսորիկ վս :

Երրորդն է յատուկ ժամանակ ինչ ուտելոյ .
զի խուտելն այն , ոչ 'ի տեղի ճաշու . այլ ընթ-
րեացն լիցի . ուն ասէ սքն թօմաս . և երևի 'ի
բանց սրբոյն ամբարսիսի . և սրբոյն գրիգորի .
Եւ երբեմն 'ի յայլ աւուրս պահոց հասրկ
ժամանակ լուծանելոյ զպահս էր ժամն իննե-
րորդ . (որ է երրորդ ժամն զինի հասարակ ա-
ւուր) , իսկ 'ի քառասնորդական պահս երկա-
րէր մինչև յերեկոյեան ժամն . ուն վկայէ սքն
բեռնարտոտ յերրորդ բանս քառասնորդական
պահոց . || Մինչև ցայժմ ասէ , մինչ 'ի յիննե-
րորդն ժամ պահեցաք միայն . իսկ այժմ 'ի ժա-
մանակս քառասնորդական պահոց , մինչև յե-
րեկոյն պահեսցեն թաղաւորք և իշխանք , կը-
ղերիկոսք և ուխտ ժողովոցեան , ազնուա-
զարմք . և զուհիկք . հարուստք , ասեմք և աղ-
ճ րատք :

Բայց եկեղեցին 'ի վերջին ժամանակս կամ վս
ակարութե մարմնոց որք 'ի ծերանալ աշխարհի
ոսկաւ զուժ և զօրութի կարեն ունիլ և կմ վս
այլինչ օրինաւոր պատճառի լուծանն հուանու-
թք թոյլ ետ . զի կարասցեն կանխել երեկոյեան
ժամուն այնմիկ . և 'ի քառասնորդական . և 'ի յայլ
ոահմանեալ պահս , կարասցեն լուծանել զպահս
չուրջ զհասրկ աւուրք , և ևս , զի բաց 'ի կերակրոյ
անաթի հսրկ աւուր . կարասցեն աւանդ զսկաւ կե-
րակուր ինչ 'ի տեղի ընթրեաց . ուն ասէ նաւա-
բոս , թուլեթոս , և այլ քառ պօնակիմայ . Ասա-
ցաք սակաւ ինչ կերակուր . զի որ նշանաւորա-
բար անցանէ զսաթ' աւանց կարճեաց բեկանէ
զպահս :

Ի Եւ թէ զորքան տարտ է ուտել 'ի յերեկոյն 'ի տեղի ընթրեաց յառաքս սյահոց, դժուարին իսկէ բացորոշել : զի ոմանք առ պօնակինայ համարին թէ զերեսուն, կամ զքառասուն տրամն հացի, և պաղոց կարի : սք ըստ օրինաց ուտել : Այլք ասեն, թէ չէ օրէն անցանել զչափու չորորդ մասին ընթրեացն իւրաքանչիւր ուրաք, որ սովոր էր բաւականաւ : Իսկ թոյլ թոս բարեկոյն ևս քան զայլս ուսուցանէ, թէ տարտ է նկատել զս առ այս 'ի սովորութի տեղւոյն, զոր պահեն բարեկալստ և երկիւղած օն : ձինք, և իւրաքանչիւրք ապահով խղճին կարի պահել և վարիլ ըստ չափու նյ :

Սակայն ըստ լեզեոսի . զգուշու թիւ պարտ է իմանալ զքնննս պայեթան վարդապետին, թէ ոչ մնատե ուտել ուրաք 'ի նոյն ընթրիսն պահոց զինչ և կամիցի 'ի չանցանելն զչափու, քանզի սո չորութիւն եկեղեցւոյ 'ի բարեկալստ և յերկիւղած անձանցն պահպանեալ է : ոչ միայն 'ի քա նակութի կերակրոցն 'ի յընթրիս' պահոց հրաժարիլ, այլ և յորպիսութի և 'ի հաճոյարարէն . և այսպէս միայն ընդ հացի առնուլ և զպտուղս ինչ, կամ զսակաւ ձիթապտուղս, և բարւոք ոչ առնեն ոմանք . որք մեծաւ համարձակութի զնեն 'ի սեղան զկարկանդակս, և զայլ նմանս տապակեալս իւղով : Սակայն զարդանակս եփելոց կարեն զս հարկաւորութի հիւանդաց սալ նոցա ուտել :

Յասացելոյս երևի, նախ թէ յաճախ արքունի ջուրց, ոչ լուծանէ զպահս, ոպ ատե սքն թօմաս . բայց յանգանել ուրաք զչափու բարեխառնութի 'ի յընդելն առանց կարծեաց մեղանչէ ծանրապէս կամ թեթեւաբար, ըստ անցանելոց զչափու ծանրապէս թեթեւաբար : Երևի երկրորդ թէ ոչ ևս լուծանին պահք, առնուլ ուրաք զին ինչ իրր 'ի գեղ, և այս լը

Յաղաքս պատահիրանաց
սրբոյն թորայի, մի՛ լիցի նենդու թի՛ առնու
ղայնայիս ինչ՝ ՚ի մեծադոյն քանակու թի՛ :

Երևի երրորդ . թէ ուսուցիչք, և պաշտօ
նեայք սեղանոյ ՚ի վանօրայս, և ՚ի յայլ հասա
րակու թի՛ա, առնուլ զինն ինչ ոչ մեղանչեն . և
վնորոյ ոչ լուծանեն զպահս . ուն ուսուցանեն
նաւարոս և այլք . զի զոյս առնել նոցա, իբր
սկասնին զճաշն . ուն և ոչ այնքիկ լուծանեն ըզ
պահս, որք վն պիտոյից ինչ ելանեն ՚ի սեղանոյ, և
զսկսեալ ճաշն կամ ընթրիան միջահատեն . և ըզ
կնի կատարելոյ զպիտոյս իւրեանց և զզործս .
դառնան ՚ի սեղան ՚ի կատարել զճաշն, կամ
զընթրիան պահոց :

Խնդրեսցես, մի թէ մահուչափ մեղանչէ նա,
որ յոյժ կանխէ զժամու ճաշու յաւարս պա
հոց . Պատասխանեմ, թէ նաւարոս, և այլք
համարին թէ մեղանչէ մահուչափ . իսկ թուլ
թոս, և այլք բազումք ընդ լեզուսի, համարին,
թէ միայն ներելաբար մեղանչէ, այլ և ասեն,
թէ ոչ ևս մեղանչէ ՚ի լինիլ օրինաւոր և արդար
ինչ պաճու ՚ի ուն և ոչ նա, որ զերեկոյեան ճաշն
առնու Շապտօան, կմ ՚ի հատարակ աւուր, վն
հարկաւորութե ինչ և յերեկոյին ճաշէ :

Հ Ա Տ Ո Ւ Ա Տ Ե Ր Կ Ր Ո Ր Դ .

Յաղաքս պարտաւորութե՛ պահոց :

ն. **Լ** և ամ ողղափառ հաւատացեալս ճշմո
խակ և յայանի է, թէ պարտաւորութե
պիտուիրանի եկեղեցւոյ վն պահոց պարտանդէ
՚ի ներքոյ մոցու մեղաց . ուն յամ յամբանիցն վճ
ուոց ուսուցանէ լեզուս : Եւ հաստատի ՚ի 66 .
կանոնէ աւաքելոյն ՚ի 36 . կանոնէ վեցերորդ
ընդ հանրական ժողովոյն . ՚ի 19 . կանոնէ ժողո
վոյն դանդաւոյ . և յայլոց բազմաց . ուր բանա
դրանօք նշումին՝ որք լուծանեն զպահս . սակայն
այժմ

այժմ եկեղեցին միայն վս մեծի ծանր ինչ մահած
ցու մեղաց բանադրէ : ուր ՚ի ներքոյ ՚ի անդուջ
լուրում ասացից . ուստի հետեւի , թէ նա մեղան
չէ մահուչափ . որ անանց օրինաւոր ինչ պատ
ճառի լուծանէ : Եկեղեցւոյ անտի զսահմա
նեալ պահոյ :

Բայց տարակուսութիւն կարէ լինիլ , թէ զո՞ւր
դեօք , և կամ ե՞րբ պատուիրանս այս պարտա
ւորէ : Եւ որքան առ անձն՝ ըստ սրբոյն թօմայի ,
գիտելի է , զի ամ քրիստոնեայ ամ արժանատւ
տուութիւն , և կատարելութիւն , պարտաւորի պա
տուիրանաւս պահոց . ՚ի չլինիլն անմեղադիր վս
օրինաւոր և արդար ինչ պատճառի : ուստի ՚ի
ժողովն վենայ , զինի այլոց աղանդոցն պեկվար
տեանց , և պեկվինեանց ՚ի բաց հերքելոյ , և
այն իսկ դատասարտեցաւ . զոր ասէին , թէ
միացն անկատարքն պարտաւորին պահոց . իսկ
կատարեալ քն ազատ են ՚ի պահոց :

Ասացաք ՚ի չլինիլ անմեղադիր վս օրինաւոր
և արդար ինչ պատճառի . վասն զի են պատ
ճառք ինչ . որք կարեն անմեղադիր առնել .
և ազատ կացուցանել զորք ՚ի պարտաւորութե
պահոց , և որք ՚ի հասարակի կարեն ածիլ առ
երկս , այս է . անկարութիւն , աշխատանքն և բա
րեպաշտութիւն .

Արդ՝ վասն անկարութե անմեղադիր լինին այ
նորիկ , որք առանց մեծի նեղութե կամ նշանա
ւոր վնասու ծոմապահել ոչ կարեն . ուր հիւ
անդքն , տկարքն , և այլն . սակայն և այսորիկ
բժշկացն հրամանաւ պարտին վարիլ . Այլև յի
կանայքն . և գիեցիկք . որք ոչ ունին , որով
յադեալ կարասցեն գիւրութիւն կեալ միով ճա
շակմամբ . Սոյնպէս և մանկունք , և պատու
նեակք , մինչև ՚ի կատարումն քսան և մի երոր
դիամի հասակի նոցա . ուր ասէ սքն թօմաս և
այլք բազումք . Կաև անմեղադիր լինին և ծերք
մանաւանդ , որք լոկալ իգեն զվաթաներորդն
ամ

նմ հասակի իւրեանց : Բայց եթէ սրբոս զճրեղ և և առողջ իցեն մարմնով ըստ պօնակինաց , և ոչ կրեացեն զլեաա ինչ 'ի զօրութի մարմնոյ , ոչ կարեն ազատ լինիլ 'ի պահոց . իսկ և հակադարձաբար , ըստ լեզիոսի և այլոց , յառաջ բան զսոյն իսկ հասակ կարեն ազատ լինիլ 'ի պահոց , և այնքիկ , յորոց սխեալ է նշնբքի պահասիլ բնական ջերմութի և զօրութիւն . Սակայն եթէ իցի երկբայութի ինչ . թէ արդեօք այսպիսի ծերքն ունիցին զբաւական զօրութի առ 'ի տանիլ նեղութեն պահոց , յայնժամ ոչ երբեք պարտաւորին 'ի պահպանսւմն պահոց , մանանդ մինչ հասեալ են 'ի վերոյ ասացեալ հասակ վաթմնամենից . ոսկ ատէ նոյն լեզիոսն :

Ի. Աս պիտտանաց անմեղադիր լինին այնքիկ , որք այնպիսի աշխատանօք շահին զսպրուստ իւրեանց : որք և այնու աշխատանօք ըստ դատողութե խօհեմ ասն , ոչ կարեն պահել որպիսի են երկրադործք , դարբինք , հիւան . և այլ նման արհեստաւորք , որք թէ աղքատ և թէ հարուստ իցեն . ոսկ 'ի մեկնութե չորորդ Եւկենիոս պատին առուցանէ լեղևոս : Այլ ըստ ոմանց սյսպիսի արհեստաւորք , ազատ են 'ի պահելոյ ոչ միայն 'ի գործելն , այլ ևս 'ի նոյնում աւուր յորում միջահաստեն զգործս իւրեանց : մինչ 'ի հետևեալ աւուրն վասն ստիկելոյ յանցեալ աւուրն ոչ կարացեն գործել առանց մեծի նեղութե և լեաառ : Սոյնպէս և անմեղադիր լինին և ճարհորդք , և մանանդ հետևակք , մինչ վասն պիտոյից ինչ դիւրութի ոչ կարացեն թողուլ զճարհն , բանդի զաշխատանս ճարհին ընդ պահոցն նեղութե առանց մեծի դժուարութե ոչ կարեն տանիլ :

Բայց որք միայն զն զբօսանաց , այսէ , զն էլանելոյ յորս , կամ բերկրելոյ ընդ երկար ինչ ճարհ կամեացին գնալ , ոչ կարեն անմեղադիր լինիլ յոչ ծոմազահելն , որովհետև կարեն առնել

նէլ զայն յայլինչ աւուր . սոյ և ոչ արհեստաւ
 ւորքն այնոքիկ : որոց աշխատանքն թէթեւ իմն
 է , և դիւրութի կարեն տանիլ պահոց որպիս
 սի են սասիրք : դերձակք , պատկերահանք .
 և այլն :

Իսկ վս բարեպաշտութե . անմեղադիր լինին
 այնոքիկ , որք սխտանի հրկուոր և մեծի համար
 ման գործոց բարեաց պարապին . և զսր պահոք
 առանց մեծի նեղութե և սնձկութե ոչ կարեն
 կորել : որպիսի են հողեւոր և մարմնաւոր գործն
 ողորմութե . այլ և որք գործոց կրօնի պարա
 պին . որպիսի են քարօղիչք , ուսուցիչք , մա
 տակարարք խորհրդոց , զարգարիչք տճրոց :

Դ . Գարձեալ մինչ ասելք , թէ այս կամ այն
 ոք անմեղադիր կամ ազատ լինի ՚ի պահոցն պատ
 ուիրանէ , իմանալ սրտու է , ըստ որում այնու
 տատուիրանաւ հրամայի միանգամ յաւուրն ճա
 շակել . բայց ոչ ըստ որում արդելու զմիս , կճ
 զայլ նմանս ուտելոյ . զի այս հաղիւ երբեք շնոր
 հիլ կարէ , և այն ՚ի պատճառս մեծի հարկաւ
 բութե . որոյ ՚ի լինիլ սաստիկ կարէ ոք կերա
 կիլ ըստ օրինաց մտով և այլ սոյնպիսեօք , և ս
 առանց ինչ հրամանի , յորժամ դիւրաւ ոչ կա
 բէ դիմելն առ մեծաւորս , բայց եթէ հարկաւ
 բութին ոչ ստիպէ , պարտ է ունիլ զանօրի
 նուսն մեծաւորին , սոյ ասէ լեզիսս , որ և յա
 ւել , թէ այնոքիկ , որոց շնորհեալ է ուտել ըզ
 միս յաւուրս պահոց , կարեն ուտել , երիցս յա
 ւուրն . Սակայն չափաւորէ և զսոյն ասելով ,
 եթէ վս տկարութե և հիւանդութե մարմնոյ ՚ի
 դէ թոյլատրեալ ուտել զմիս : բայց ոչ այսոյ ,
 եթէ թոյլատրեալ իցէ միայն ումք , վս զի
 ոչ կարէ ուտել դձուկն , կճ վնասակար է բնու
 թե նր . զի յայնժամ ոչ կարէ ուտել երկիցս յա
 ւուրս պահոց : այլ պարտական է միով ճաշակ
 մամք շատանալ :

Իսկ որքան առ ժամանակս պահոց դիտելի է ,
 դի

զի յեկեղեցւոյ անտի սահմանեալ, և ՚ի վաղբաջ
 թմկաց անտի առ մեզ հասեալ, ՚ի սբ հարցն իսկ
 վկայեալ և դովեալ եղև միշտ պահքն քառան-
 սրդաց. և որ ըստ վկայութե սրբոյն իդնատիտ-
 սի ՚ի թուղթն առ վիլրուպեցիս. և սրբոյն հե-
 բանմասի, ՚ի 74. թուղթն առ մարկեղոս, և սր-
 բոյն լեօնի ՚ի 9. բանս քառանդկն պահոց. յառա-
 քելոց անտի սահմանեցաւ, յօրինակ քն ան մե-
 բոյ. Արդ՝ զժոմատահութիս զայս պարտ է պա-
 հել ՚ի չորեքշաբաթու օրէ մօխբոցն մինչև ցօրն
 մեծի շաբաթուն ներփակաբար. բաց ՚ի կիրա-
 կէից. զի ՚ի կիրակէս միայն ՚ի մսոց պարտ է
 թուփկապել. Ուստի մահուչափ մեղանչեն, որք
 ՚ի մեծի հինգ շաբաթու լուծանեն զպահս, զի ա-
 պօրինաւոր սովորութիս այս ՚ի թողալէ յաւտի-
 կեայ ըստ ամի յանդիմանի, ասելով. Չէ օրէն
 ՚ի մեծի հինգ շաբաթու քառանորդական պահոց
 լուծեալ զպահս. անպատիւ ասնել և զամ քա-
 ռանորդական պահս :

Ն. Արդ՝ բաց ՚ի քառանդկն պահոց բարեպաշ-
 տութեք պահպանեցաւ ՚ի ընդհանուր եկեղեցիս
 և պահքն չորեք եղանկոց. որ կմ ՚ի թմկա առաքե-
 լոց, և կամ սակաւ զկնի թմկն առաքելոց սահ-
 մանեցաւ, ոպ ցուցանել և հաստատել լոյխման
 վկայութե սբ հարցն : Եւ այլ պահք յաւելան
 յեկեղեցւոջ ան ՚ի հսկմունս ասնախմբութեցն քն
 ան մեբոյ. Աճածնի կուսին, Առաքելոցն. և
 այլոց ոմանց սբոց. որոց վն ունիլ պարտ է զքա-
 բեպաշտ սովորութի և զօրէնս անդեացն և դա-
 ւառաց. և զնոյն պահել. իսկ եթէ հսկունս ու-
 մանց սրբոց հանդիպեացի յաւուրս կիրակէից,
 կանխեալ յաւուր շաբաթու պարտ է կատա-
 բել զայն. որպէս երևի ՚ի հասարակ սովորուէ
 եկեղեցոյ :

Այլև յամ եօթներեկի բոլոր սարւոյն յա-
 ւուրս ուրբաթու և շաբաթու հրաժարիլ պարտ
 է ՚ի մսոց, ոպ երևի ՚ի հասարակ սովորուէ եկե-
 ղեց

ղեցւոյ քայքայեթէ ճնունդ նն յաւուրս յայստիկ
 պատահեցի , յայնժամ ॥ Որք ոչ են պարա-
 ւանդեալ սևտիւ ջերմեռանդութե կամ կրօ-
 նի ինչ պահպանութե , ուն ասէ երրորդ ինով
 կենտիս պատն , կարեն ուտել զփս , վասն
 դերազանցութե տօնախմբութեն . ըստ սովո-
 բութե ընդհանուր եկեղեցւոյ . Սակայն չէ օ-
 բեն յանդիմանել զայնտիկ , որք վն ջերմեռան
 դութե կամին և ի նոյնում աւուր ժուժկալել .
 իսկ ի անզիս ինչ Քանցայու , շնորհեալ է ու-
 տել զփս ևս յաւուրս շարաթու ի ճննդենէ նն
 մինչև զնն ընդ յառաջն :

Ի մտոյ հրաժարիմք ևս ի ստնի սքն մարիս-
 սի և յերթա աւուրս պաղատանայ . որ և իսկ ի
 սովորութե եղև յեկեղեցին հասմայ .

Հ Ա Տ Ո Ւ Ա Ճ Ե Ր Ր Ո Ր Դ .

Թէ քանի կերպիւ մ զանչել կարէ ընդդէմ պատ
 ու իրանիս եկեղեցւոյ .

Թ. Սեղանչեն նախ , որք առանց արդար պատ
 ճառի . կամ օրինաւոր տնօրինման յե-
 կեղեցւոյ սահմանեալ յաւուրս պահոց , ոչ ճումս
 պահեն . կամ զսկսեալ ճումսպահն լուծանեն ,
 և կմ զժուժկալութին ապականեն , զփսս կամ
 զայլ արդելեալ կերակուրս ուտեն : Սակայն այ
 սու զանազանութք , զի քանիցս ոք ուտէ զար-
 դելի չ կերակուրս յաւուրս պահոց . այնքան ան
 դամ մեղանչէ մահուչափ , իսկ որ լուծանէ զճո
 մսպահն երկուս ուտելով յաւուրն կրկին ոչ մե-
 ղանչէ դոնէ մահուչափ , եթէ զկնի բազմիցս ճա-
 շակեացէ . ուն ի բանից անարանից ուտուցանէ
 լայիման :

Սեղանչեն և ևս մահուչափ , որք յաւուրս
 ճումսպահից բազում տնդամ ուտնն զսակաւ ինչ ,
 և թէպէտ ըստ լիզիտի միանգամ կամ երկիցս
 ուտն

ուտելով որ զտակուիկ ինչ արտաքոյ ժամու ճաշու միայն ներկարար մեղանչէ, բայց եթէ վեց անգամ, կմ եօթն անգամ արտաքէ որ զայս, մահուչտի մեղանչէ, քանզի բազում անգամ ուտելն այն, համարի փոխանակ երկիցս յադ ուտելոյ :

Այլև մեղանչեն, որք յրնթրիսին պահոց ուտեն առաւել քան զոր պահանջէ: քան ծոմապահութե, և զոր պահեն բարեպաշտ և երկիւղած անձինք :

Բ. Մեղանչեն և ևս, որք զայս ամեն լուծանել զպահս, յարդ որմամբ, ծաղր առնելով, և այլ ամ կերպին, **Ա**յլև պանդոկապետք, որք զնեն զսկզան և զկերակուրս առաջի այնոցիկ, զորս ճանաչեն. թէ պարտաւորեալ են ՚ի ծոմապահութի. Սակայն զայս խմանալ պարտ է. թլեղիտի, մինչ առանց մեծի վեստու և նեղուե իւրեանց կարեն ոչ տալ նց զկերակուրս. և ևս մինչ ոչ ճնանիցի անտաւտ դայթակղութիւն: ապա թէ երկիցէ, զի մի այնոցիկ, որոց ոչ տայ զկերակուրս, ծանրադոյնս ևս վտացուցեն զամ, հայհոյութք և այլ նախատական բանիւք և այլն. յայնժամ կարէ տալ նց զկերակուրս: Արոյ վս ըստ լեզիտի երբեմն կարեն: անմեղադիր լինիլ ևս և ծնողքն, և տանուտեարք, ՚ի տալ նց զկերակուրս ընտանեացն իւրեանց, առքս պահոց. զի մի ՚ի չտալն առաւել ևս զայրացուսցեն զամ. ապա եթէ չիցէ այս պիտի որոգայթ ինչ. ոչ պարտի տալ նց. զի մի զործակից լիցին մեղաց նց :

Առ այս սրատալիրանս ամի ևս մեղք նց, որք անցանեն զչափու բարեխառնութե և պարկեշտուե ՚ի կերակուրս և յրմպելիս, ևս յառքս յայնոսիկ, յորում չէ ինչ պարտաւորութի պահոց, և այնոցիկ, որ այնպէս խճողեն զորս վայնս իւրեանց կերակրօք և ըմպելեօք. մինչ զի սրատալուեն նոքօք մեծադոյն վեստ առ ողջութե և

և զպաշտօնսն . Այլ որք վն անշափ ընպէ-
լոյ արբէնն և կորուսանեն զբանախանութիւն վն
արբեցութե . Նաև որք ասն այլոց ընպէլ միայն
գարբեցումն և մեղք արբեցութե ծանօթոյն է .
և թէ անտուտ հեռակեցին և այլ մեղք . այս է
հայհոյութե , աղտեղութե . և այլոց նմանեաց :



Գ Լ Ո Ւ Խ Վ Ե Յ Ե Ր Ո Ր Դ .

Յաղագս եկեղեցական նշովից և անկա-
նանութե :

Նշովքն յեկեղեցւոյ 'ի կիր արկտ սու 'ի նշա-
նակել զհոգևոր պատիժս 'ի ձևոն , որոյ մը
կրտեալ որ մեղապարտ և կամակոր ի խանհութե
եկեղեցւոյ զրկի 'ի կիրառուէ հոգևոր ինչ բա-
րևաց . ո՞նչ ուսուցանէ սուարեղ . և բարւոք իսկ
երևեսցի յասացելոցս 'ի ներքոյ :

Պ Ր Ա Կ . Ա Ռ Ա Ջ Ի Ն .

Յաղագս նշովից 'ի հասարակի :

Որք՝ բան զի զբաղումս յոյժ ասեն և վիճին
անժաբանք վն նշովից 'ի հասարակի , մեք
վն խոստման մերոյ ընտրեցաք զայնասիկ , որք
հարկաւորք յոյժ 'ի ծանօթութի . և օգտակար
իսկ երևեսցան . և զորս 'ի հեռակեալ հաստեւածս
կարճ 'ի կարճոյ մեկնեսցուք :



Հ Ա Տ ՈՒ Ա Ճ Ա Ռ Ա Ջ Ի Ն :

Յաղագս թէ ս արդեօք ունի զիշխանութիւն նշովելոյ :

Ա. Ասեմ նախ , թէ զհասարակ իշխանութիւն նշովելոյ ունին նախադահքն եկեղեցւոյ , որք տակաւին ունին զկրտուսնս և զիշխանութի յարտաքին ասենի ՚ի թէ՛մս ինչ . և ապա և ծայրայրոյն քահանայապետն նկատմամբ առնմ հաւատացեալս . և ևս և եպիսկոպոսոսնք , Արհիւեպիսկոպոսոսնք՝ պատրիարքք , նկատմամբ առ հպատակեալս իւրեանց , սոյ ասէ սքն թօշմաս . և բարւոք իսկ երևի ՚ի մշտակայս ուրբոս թէ եկեղեցւոյ :

Չնոյն ունին և զիշխանութի դեսպանք և նովի բակք պապին . և փոխանորդք նր . և եպիսկոպոսոսնք . սոյ ուսուցանեն վարդապետք ՚ի հասարակի . այլ և ժողովն սք ՚ի թափուր լինիլ աթոռոյ , և փոխանորդ նր . Նաև արքայք , գաւառահայրք , և այլ մեծաւորք կրօնաւարաց , որք ունին զիշխանութի յարտաքին ասենի ՚ի վերայ հպատակելոյ իւրեանց .

Բ. Արդ՝ զիշխանութիս զայս նշովելոյ , կարէ մեծաւոր տեղոյն յանձնել ևս կղերիկոսաց , որք վայելեն զեկեղեցական պարզեւս : Ի այց ոչ կարէ յանձնիլ աշխարհականաց , ևս եթէ իցեն կրօնաւորք , սոյնպէս և ոչ ամուսնացեալ կղերիկոսաց . ևս առաւել և ոչ կանանց :



ՀԱՅՈՒ ԱԾ ԵՐԿՐՈՐԻ

Յաղագս թէ ո՞րք եղբ կարէ նշովի :

Խ. Ասեմ նախ , թէ կարէ նշովի . ամ ոք
 մկրտեալ բանի և նենդու թէ ընդու
 նակ . և որ է 'ի կենցաղս , յայնմանէ , որոյ է
 հպատակեալ :

Ասի նախ , թէ որք նշովինն , պարտին լինի
 մկրտեալ . զի եկեղեցին ոչ ունի զբաւուսս 'ի
 վր ոչ մկրտելոցն , ըստ բանի առօքելոցն . Խ.
 Կորնթ. 5 . ॥ Չի՞ կայ իմ և զարտաբնանն դա
 տելոյ :

Ասի երկրորդ . ընդունակ բանի և նենդուն ,
 վն զի նշովքն է պատիժ մեղաց . իսկ մեղքն են
 թաղրէ դմարդն ընդունակ բանի և նենդու
 թէն : Ուստի ըստ սուտարեզի և այլոց . կարեն նշ
 զովի և մանկանք ընդ դաստիարակօք , եթէ ի
 ցեն ընդունակք չարուն . Թէ և վնցէ այս 'ի սո
 վորութե յառաջքան զնուլնց զհասարակ ա
 զատ լինելոյ 'ի դաստիարակաց :

Ասի երրորդ . Եւ որ է 'ի կենցաղս , վն զի
 ոչ առէ անքն , զամ զոր կապես 'ի ներքոյ երկրի -
 այլ 'ի վր երկրի . ցուցանելով , թէ զկենդա
 նիս վն զանազան դործոցն իւրեանց կարենք ար
 ձակել կամ կապել . բայց զմեռեալսն ոչ կարեմք
 դատել . զի լն սրբոյն լէ անի պատիւն 'ի թուղթն
 70 . առ գեղջուկն . բննուի նց պահեալ է դատաս
 տանիմ այ :

Բ. Բայց եկեղեցին , կամ նախողահ ոք եկե
 ղեցակոսն . կարէ յայանել զոր զինի մեռանելոյ
 նզովեալ 'ի կենդանուն . և զնոյնն զրկել յեկեղե
 ցական թաղմանէ արդելու , զի մի՞ վն նր աղօթեա
 ցեն . կմ պատարագս մատուցեն . և հակադար
 ձարար եթէ բանադրելոր 'ի մեռանիլն զօջացել
 և նշան դարձման իւրոյ ցուցել իցի , կարէ եկե
 ղելի :

716 Յաղագս եկեղեցական նղովից
դեզին շնորհել պատժոյ բանադրանց նր, ոչ թէ
արձակել զնա, այլ թոյլ տալեալ այլոց, զի թա
ղեսցեն զնա 'ի սք տեղ. 29 . և վն նր աղօթս և
պատարագս մատուցանեն .

Ասի չորրորդ յայնմանէ, որոյ է հպատա
կեալ . զի ոնյ ոչ ոք կարէ պարտա որել ընդ օ
րինօք և հրամանօք զայն, որ ոչ է ընդ իշխանու
թիւ իւրով, այսպէս և ս և ոչ կարէ պատժօք առ
այն ստիպել . կմ յանցանէն նղովիւք տատժել :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ճ Ե Ր Ր Ո Ր Դ :

Յաղագս թէ վն այր տաաճառի կարէ նղու
վել 'ք :

Ա սեմ թէ նղովի ոք վն արտաքին մահա
լացու մեղաց, որ դորժով կատարեալ
իցէ յանդգնաբար . և կամակորուք . Ասի նախ,
|| վն մեղաց . զի առ 'ի պատժոյն արդարուք հա
սանիլ աւիք, ենթադրէ զյանցանս, որովհե
տեւ անմեղն արդարու թիւ ոչ կարէ պատժիլ . վն
որոյ ըստ հասարակ անձարանիցն, || Ուր ոչ է
մեղք, և ոչ տեղի նղովից . Ասի երկրորդ . ||
Մահացու, որ իմացեալ լինիլ պարտի, վն մե
ծադոյն նղովից, այս է, վն մեծադոյն բանապ
բանաց, արգելմանն աստիճանաց, և ընդհան
բական արգելանաց . և այլն . Եւ 'ի լինիլ այս
պիսի պատժօցս ծանրադոյն . տանահանջեն և
զճանրադոյն յանցանս . աւտի ըստ լեզեոսի, ոչ
ոք անկանի 'ի բանադրանս, յորժամ վն անդի
տու թե ինչ, կամ անդդուչութեւ, և կամ ան
կատարելութեան դորժէ զմեղս ինչ, որ ոչ է
մահացու .

Իսկ որքան առ փոքրադոյն նղովս, ոնյ զփոք
րադոյն բանադրանս, և զարգելումն թեթեւ
դոյն վն թեթեալոյն և ներքի մեղաց կարեն
արիլ . որպէս առնն ստիժս . և այլք :

Իսկ

Ասի

Ասի երրորդ արտաքին , զի վն պարզ ներքին մեղաց , ոչ կարէ ընդարձակել նզովքն , քանզի եկեղեցին զգաղանի իրաց , և զպարզ ներքնոցն ոչ դատէ ուղ սուսուցնեն սոթոս և այլք բողոմք :

Ասի չորրորդ , որ գործով կատարեալ իցէ , զի սա ՚ի անկանիլ ՚ի նզովս խնդրի կատարումն գործոյ . զոր օրինադիրն դիտէ պատճեւ նզովիւք . զոր օրինակ , եթէ որ կամեցեալ սպանանել զբահանայն ճգեացէ զնեա իւր ՚ի նա . և ոչ կարասցէ հարկանել զնա . յայնժամ թէ պէտ մեղանչէ մահուչափ . Սակայն ոչ անկանի ՚ի բանաց բանեա եղեալ վն հարկանողացն կղերիկասցի :

 կան քի նն մերոյ 'ի դասս կոչիլ . յառաջքան
 զմուտ իւրեանց 'ի սրբութի նոյն ընդ երկար խոր
 հեացին , մի թէ դտանեն զինքեանս առ ամենա
 բարձր կազուին յոյն կենաց յմծուստ կոչել .
 ըստ առաքելոյն : երբայ , 5 . ॥ Ոչ եթէ անձամբ
 որ առնու զպատիւ , այլ կոչեցեալն յոյն ուր և
 ահարօն :

Է . Եւ զի դ իւրաւ և ստուգաբոյնս նմ' սք տե
 սանել կարացէ , պարտի խորհիլ . մի' թէ յոյ
 առեալ լցէ զայնտիկ , որք խնդրին առ եկեղե
 ցական սլաշտօն առ 'ի ըստ վայելին կատարել . Չի
 և զորս կոչեաց ըստ առաքելոյն , 2 . կորնթ' .
 3 . ॥ Բաւականս արար պաշտօնեսցս նորոց կտա
 կարանաց :

Եւ նախ պարտի նկատել , մի թէ ունի զեկեղեցական նորոս ինչ , զանկանոնութի , և զայլ ինչ արդէլումն , կամ զչար և զվատթար հակումն և զխտոս ինչ , որք եկեղեցական սրբակաց վարուցն իցնն ընդդիմամարտ , կամ թէ ունիցի զքաւական զբւտումն և զգիտութի . կամ զոնեայ իցէ արդէօք ընդ ունակ առ'ի ուսանիլ , Այլև խորհեցի . զի զինչ իցէ խորհուրդ նր , միտք , և կամք յընդգրկել զեկեղեցական զկացութիւն . և կամ զինչ զխտաւորութի նր . || Զի ամ որ , (ըստ բանի սրբոյն իւրանարտոսի 'ի բանն : Անա մեք թողաք զամ) որ'ի սք աստիճանս և 'ի սք պաշտամունս խնդրէ զյատուկ փոսս իւր և զպատիւն , զհարստութիւն և զցանկութի մարմնոյն , զյետոյնն խորհի , և սչ զայն . առ որ ոչ սէրն , որ յայ , այլ հոգին օտար , և արմատն ամ չարաց աշտաթսիրութիւն ածէ .

Դ . Եւ ապա որ զվատորն է , զի մեծաւ սրին և առաջնորդին կամացն հպատակեացի . և մի' իցի նմա անվայելի աղաչանօք , կամ այլոցն բարեխօսութի զմիտս նր և զկամս այլայլել , և մի և սթապօսցէ 'ի նմանէ զամ , զոր յայանել պարտէ , այլ զինքն ամ նախախնամութե , և կամաց նր յանձնեցէ :

Գարձեալ առ 'ի հաւատաւառ ճանաչել զկոչումն զայն ամային յոյժ օգտէ , ոսկ ընթեռնուք զվարուց բազում յոյժ սք հարց , եթէ որ ցանկոյ եկեղեցական զինտնորուէն տեառն ադրիչ . սակաւ ինչ զինքն յաշխարհային շահուց և 'ի կենցաղոս , ընկերակցութէ մեկուսացուցէ , և յառանձնութե ինչ կացեալ զհամարս անցեալ կենաց և գործոց իւրոց յանձնէն խնդրեցէ . և զաղտս խղճի մտացն զգուշութի մաքրեցէ . զի սրբեալ մտացն աչոց լուսով երկնայինն շորհաց պայծառոյս տեսանել կարացէ , թէ զինչ է կամքն սյ յամենամեծ պաշտօնս յայս , առ որ և ս խորհրդով խոհեմ և բարեպաշ

ուճառն բազում յոյժ կարէ օգտիլ . քանզի և սքն պօղոս առ առաքելութիքի մն մերոյ բանիւքն կոչեցեալ և երկնային շորհօքն մինչև առ հիազումն հարեալ , միայն միջնորդութե անանիայ զխորհուրդ կոմացն ոյ ծանեալ :

Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ .

Յաղագս կղերիկոսական զգեստաց , և խուղ մանն հերաց :

մ. Ա մ այսոցիկ յառաջին ընձե" . դլ Է . 'ի մեկնել մեր զսք զաստիճանն սակաւինչ սասցաք : և զի ոչ է պարտ սակաւ ինչ համարել . վս այն լայնատարած համառօտութե իսկ աստ նորոգ ընձեռեցուք :

Եւ նախ դիտելի է . զի եկեղեցին իմաստութե իսկ կամեցաւ , թէ || Ոմ կղերիկոսք յաշխարհս կանաց զանազանիլ պարտին 'ի կենցաղավարիլ (ըստ որում ասէ Անուկեթոս պայն) այսոյ ևս 'ի հերս և յամ հանդերձս իւրեանց պարտին լինիլ չափաւորք : Արդ 'ի բանիցս յայսոցիկ քս հանայտակարին կարճ 'ի կարճոյ կարեմք իմանալ , թէ որքան հնադոյն իցէ սովորուիս այս կղերիկոսական խուղման հերաց , որոյ սկիզբն ևս եղև 'ի սրբոյն պետրոսէ ըստ վկայութե բաբանոսի , թէ սք առաքեալն || Չարարողութս զայս էառ նախ յանձն առ 'ի կրել զտեսակ և ըզ նմանութի քի 'ի դուխ իւր . որ 'ի գնալ իւր 'ի շարչարանս խաչին վս վրիպե մերոյ յամբարիշտ աղբէն հրեից սրագոյն վիշոցն պատկաւ պատկեցաւ :

Արդ առ կղերիկոսական խուղումն հերաց ըստ սահմանադրութե եկեղեցւոյ երկու ինչ խնդրին , Նախ զի կղերիկոսքն զհերս իւրեանց մի երկարեալ տածեցեն զայն . ոմ 'ի բազում փողովս բանադրանօք իսկ արդելեալ եղև և մանա

նաւանդ ՚ի ժողովն Պարկինոնեան , Հոսանայ
Մուկոնեան . Տիբերեան , և այլն :

Թ. Երկրորդ . զի բարբախաձև , և սրակակերպ
կրեայն : զխուզումն ներայ ՚ի դլուխն . սոյ հաս
տասեցաւ ՚ի բազում ժողովս . և մանաւանդ ՚ի
ժողովն Արուխակրանեան , Լաթերանս , Օրոս
նեան , և այլն ,

Նոյնոյ և լն գրեատուցն երկու ինչ սահմանե
լեղև ՚ի յոյն և ՚ի յայլ ժողովս : Նախ լն նիւթ ՚ի
դգեստուց , զբով : յերկրորդ ժողովն նիկիոյ ՚ի
վեցերորդ կանոն յանմուսանալին յիշատակ սահ
մանեցաւ . || Թէ մի լիցի եպիսկոպոսաց և կղե
րիկոսաց կերպաստիւան հանդերձիւք զգնու
թաւորիլ , և սոյժաա զգեստիւք զարդարիլ .
սոյնպէս և ս ՚ի բազում ժողովս իսկ արգելեալ
եղև , շնորհեալ միայն զգեստաւորիլ մաղեղե
նք ըստ սովորութե ընդ հանրական եկեղեցւոյ :

Գ. Երկրորդ լն ձևոյ և կերպի կղերիկոսա
կան հանդերձիգ : այսինքն . զի իցեն երկարք հա
նեալ զղանցիցն մինչև ցգարշապար ոտից . սոյ
սահմանեալ սեասնի ՚ի բազում ժողովս , և մս
նաւանդ ՚ի ժողովն Սեմոնեան , այսու բանիւք .
|| Զգեստք նոյ լիցին երկարք , մինչև առ դար
շապարն հասեալ , և մի լայն և ընդարձակ . կմ
նեղ և անձուկ յոյժ . զի կղերիկոսական աստի
ճանաչն պարկեշտութի , և համեատուի երևես
ցի ՚ի նս , և հոգարտութեն ամբարտաւանուեն
և անարտաութեն աստ անենեխն մի դացի ՚ի
նս : Եւ և ս զի կղերիկոսական հանդերձքն լն
ցին սեաւ , Եւ թեպէտ երբեմն զլենուին ու
մանք կղերիկոսք զհանդերձս մանուշակագոյնս ,
(այս է մտ) սակայն ընդ հանուր եկեղեցին այժմ
՚ի սովորութե ունի , զի եպիսկոպոսացն միայն
զգեցեալ զհանդերձ մանուշակագոյնս . կղերի
կոսքն զլենուցուն զթուխ , կամ զսեաւ հան
դերձս . սոյ երևի ՚ի բազում ժողովոյ :

Արդ՝ այսորիւք կրկնեալ սահմանադրութե

զովոցն ընդհանաբ եկեղեցւոյ յայտնապէս է
բեւի, թէ պարտաորին պահել զայս ամ էկե-
ղեցական զինւորութեն ամ տեառնադրեալք ։
Եւ թէպէտ ՚ի վերջին թմիս յայտօխկ ՚ի թուրս
նալ եկողցին կրթութեցն ոչ խատուք խակ պահանջի
՚ի նացունց, որք ունին միայն զառաջին խուզումն
հերաց . Սակայն կղերիկսքն . որք ունին զե-
կեղեցական հասոյթս և զպաշտօնս , կամ զաստի-
ճանս ինչ , մանաւանդ զսքս խատագոյնս պար-
տաւորին առ խուզումն հերաց . և առ կղերի-
կոսական զգեստս . ոմ բացայայտ բանիւք սահ-
մանեաց ժողովն թրխո՞ , թէ ॥ Ամ էկեղեցա-
կան անձինք , որք ևս իցեն յատուկ անձինք ,
որք կամ ՚ի սք աստիճանս իցեն . կմ զեկեղեցա-
կան զարժանապատուութի ինչ , զպաշտօն , և
զհասոյթս ունիցին . էթէ զկնի յեմքսն իւրեանց
ևս հրապարակական վճռովք խրատեալ առ ՚ի
զպարկեշտն զգեստս կղրկնին աստիճանաց նց և
արժանապատուութե վայելս ըստ սահմանադ-
րութե եմքսն փանիլ , ոչ հնազանդեացին հրա-
մանայն եմքսն . կախակայեալ արդեւցին յաս-
տիճանացն , ՚ի պաշտօնիցն , ՚ի հասութիցն , ՚ի պտ-
ղոցնց , յեկամաից , և յամ օգտից պաշտօնիցն
այնոցիկ . Բայց էթէ միանգամ ուղղեալ կրկին
անկցին ՚ի նոյնն , ևս կարեն և պարտին զրկե-
ղնս ՚ի պաշտօնից և ՚ի հասութիցն անտի այնպի-
սեաց ։

Եւ ՚ի բանիցս սահմանադրութե ժողովոյն հե-
տեի , թէ այժմ կղերիկսքն առանց ծանրա-
դոյն մեղաց ոչ կարեն զանց առնել կմ առ ոչինչ
համարել զկղերիկոսական խուզումն հերաց և
զգեստս , որովհետեւ պարտաւորին ՚ի ներքոյ
պատժոյ ընդհանրական արգելանաց և կախա-
կայութե ։ որ միայն վս ծանր մեղաց տուեալ լն
նի , ոմ երևի յասացելոցս ՚ի վերոյ . աւտի ըստ
նաւարոսի և այլոց , կղերիկոսն՝ որ ՚ի սք աստի-
ճանս է , կամ ունի զեկեղեցական հասոյթս ինչ

ձեզանչէ մահու շատի , ընդ երկար ժամանակ ոչ
 տանիլ զխուզումն հերաց , և զեկեղեցիին հան-
 դերձս . Եւ թէպէտ 'ի ժողովն մէտիօշանու և
 'ի յայլ ժողովս թոյլատրեալ եղև , զի կղերի-
 կոսք 'ի դնալ ընդ երկար ճանադարհ : կարաս
 ցեն տղանիլ զկարճ զգեատս , սակայն չէ օրէն
 զգենուլ զայն և 'ի քաղաքի , կամ 'ի տան . և կմ
 'ի զքօնուլն , և որ այնպիսի պարտ է լինիլ . զի
 անցանիցէ և զճունկան . զի այնու դիւրաւ կա-
 բարոցեն տարբերիլ յաշխարհականացն :

Մ Ա Ս Ն Ե Ր Ր Ո Ր Դ

Յազադս եկեղեցական հասութից :

Ս . Եկեղեցական հասութն , զոր երբեմն ան
 ունեեցաք բարերարութի , է մշտնջե-
 նական իրաւունք ինչ առ 'ի առնուլ զպտուղս
 յեկեղեցական բարեաց վս հոգևոր ինչ պաշտօ
 նի , որ իշխանութքն եկեղեցւոյ հաստատեալ
 է , ունի ասէ լէզիոս :

Բ . Արդ՝ հասութից ոմանք են կանոնաւորա
 կանք , որք միայն կանոնաւորացն պատկանին . և
 ոմանք աշխարհայինք , որք պարզ եկեղեցակա
 նացն տրին : Սոյնպէս ոմանք են կրկինք , և ո
 մանք պարզք : Կրկինք են , որք ունին ընդ իւ
 րեանս զմատակարարութիւն ինչ , կամ զգե
 րազանցութիւն 'ի յեկեղեցին , որպիսի են հո
 գաբարձութիւն աւադսարկաւազութիւն . եպիս
 կոպոսութիւն և այլն . Իսկ պարզքն են , որք ոչ
 ունին զմատակարարութի կամ զգերազանցու
 ինչ . այլ միայն կացուցեալ են առ 'ի աղօթել առ
 ամ : և զայլ ամային պաշտօնս կատարել , ունի
 են մատապետութիւն . և այլն . ունի ասէ լէզիոս :
 Եւ զայսոսիկ 'ի վերոյ 'ի միտ առեալ մեր կարճ
 'ի կարճոյ ('ի բաց թողեալ զբազմազան բանս
 ամօքամից) մեկնեսցուք զայնոսիկ , որք առա
 ւել

և նշ հարկաւոր և հասարակքն են 'ի մէջ անձն
բանից . և 'ի խնդիրս ինչ բաժանեալ պարզու
բանեցուք :

Խ Ն Դ Ի Ր Ա Ռ Ա Ջ Ի Ն

Յաղագս թէ որով կերպիւ զեկեղեցական հա
սոյթս ըստ օրինաց կարէ ոք
ստանալ :

Խ.  ինչ կերպիւ եկեղեցական հասոյթս ըստ
Օրինաց կարէ ոք ստանալ : Նախ ներ
կայացուցմամբ կամ անունակոչութե իշխո
ղին , և սահմանադրութե տուողին : Երկրորդ
ընտրութե և հաստատութե : Երրորդ ազատ
տալով : Չորրորդ հրաժարելով ուրաք , զի
տացի այս ինչ ումբ . Հինգերորդ փոխար
կելով :

Ներկայացուցուի , կամ անունակոչութին
է օրինաւոր ընծայումն 'ի ձեռն իշխողի ընդու
նակ անձին ումբ , եպիսկոպոսին կամ սլով
ինէք , առ որ տալն , և կացուցանելն պատկանի .
Իսկ սահմանադրութին է հասոյթին և պաշտօնին
այնորիկ և իրաւանցն տալն և ընծայելն : Եւ
տալս այս կամ ընծայելս ինի միայն 'ի ձեռն եւ
պիսկոպոսի , իսկ ներկայացուցանելն ևս ինի 'ի
ձեռն աշխարհականի :

Ընտրութին այնու զանազանի 'ի ներկայացու
ցմանէ , զի ընտրելն ինի 'ի քաղմաց . ուր 'ի ժո
ղովոյ ինչ , և միայն շեկեղեցականաց . և այս մա
նաւունդ 'ի հասոյթս և 'ի պաշտօնս նախադասու
թե և եպիսկոպոսութե ունի զտեղի : Իսկ ներ
կայացուցուի կարէ ինի 'ի միջ անձնէ ևս յաշ
խարհականէ . և յամ հասոյթս . Բայց հաստա
տութին է տալ զհասոյթն զայն ընտրելոյն . ուր
սահմանադրութին է նոյն տալն ներկայացելոյ
կամ անունակելոյ :

Ազատ տալն է : յորժամ հասոյթն տուէալ ինի միայն իրաւամբ մեծաւորին . և ոչ է իրաւունք ինչ իշխողին :

Հրաժարիլն է : մինչ ոք կամօք իւրովք հրաժարի 'ի հասութեն . և յանձնէ 'ի ձեռս տունդին . զի տացէ այս ինչ յատուկ սուք :

Իսկ փոխարկումն է : մինչ ոք փոխարկէ ընդ այլ հասութի զպաշտօն իւր և զհասոյթ :

Բ. Խնդրեացե՛ս մի՛ թէ զեկեղեցական հասոյթս պարտ է միշտ տալ արժանաւորողունից : Պատասխանեմ , թէպէտ նա որ յանձնէ զհասոյթ իւր սուք , սչ է պարտական որունեկ զարժանաւորողոյնն , այլ բաւական է , եթէ արժանի իցէ , որ առնու զհասոյթս : Սակայն ընտրողքն . ներկայացուցանողքն , և սուղօքն ձարտական են միշտ , որքան կարեն ջանալ , զի արժանաւորագունից տացեն զեկեղեցական հասոյթս . մանաւանդ զայնտիկ , որք ունին ընդ իւրեանս զհոգ հոգւոց . ուր հաստատէ 'ի բազում բանից անարանից և սք հարց սքն թօմաս : մինչդի մեղանչէ նա մահուչափ , որ ընտրէ , ներկայացուցանէ , կամ տայ զհասոյթս : մանաւանդ զայնտիկ որք ունին ընդ իւրեանս զհոգ հոգւոց , արժանաւորին թողեալ առանց օրինաւոր ինչ պատճառի . զայն , որ է արժանաւորագոյն : և որ բարւոքն իսկ պաշտօնին իւրոյ ծառայէ : որ և հաստատի բանիւք ժողովոյն թրիտենթինոյ . որ ասէ || Ա՛մ ոք՝ որ ունի զիշխանութի ինչ 'ի դնել զոր 'ի պաշտօն մահուչափ մեղանչէ , եթէ զարժանաւորագոյնն և զօրտակարագոյնն եկեղեցւոյ , զոր ձանաչէն , ոչ քնարէ , այլ վն սղաչանաց մարդահաճառն . կմ սնափառութէ , զայլ ոք կացուցանէ :

Ասացաք առանց օրինաւոր պատճառի , վն զի իշխողն ներկայացուցանէ զարժանաւորն , հաստատողն պարտի հաստատել ևս եթէ զայլ ոք ընդունակողոյն ծանիցէ , Ղարձեալ եթէ պարտիցէ

իցէ տալ զհասոյթս ըստ սահմանադրութե ու մեք անձին յայս ինչ ցեղէ , յայնժամ պարտ է արժանաւորագունին , որ ՚ի ցեղէն յայնմանէ , տալ , և ոչ այլոյ , որ ևս արժանաւորագոյն իցէ :

Արդ՝ ՚ի ստանալ զիւրաքանչիւր եկեղեցական հասոյթս , պարտ է զչոյչ լինիլ միշտ ՚ի մեղաց սիմոնականութե . որ կարէ տանիլ և ՚ի մէջ ան կանիլ ՚ի յամ վերոյ սասցեալ կերպս , թէ ՚ի հողմանէ տուողին և թէ ՚ի կողմանէ աւնողին . և հաստատողին , վրջ և զայսմանէ սակաւ ինչ լայնատարած վարդապետեսցուք :

Խ Ն Դ Ի Բ Ե Բ Կ Բ Ո Բ Դ .

Յաղագս թէ քանի կերպիւ կարէ որ լինի սիմոնական , ուղ ՚ի յայլ գիտուածս , սոյնպէս ևս ՚ի ստանալն զեկեղեցական ինչ հասոյթս :

ձ. **Ս**իմոնկնուեն մեղք զանուն իւր ընկալաւ ՚ի Սիմոնէ մոգէ . Չի կամէր նա նախ զպարգևս հոգւոյն սրբոյ արժաթով գնել , գործ . ք . և ուղ ասէ սքն օգոստինոս . || Կամէր գնել զհոգի սք , զի սք , զի կամէր վաճառել զհոգին սք : ուստի մեղքն այն , որով հոգւորն , կամ հոգւորացն միացեալն , կամ պատկանեալն ՚ի գնիլն կամ ՚ի վաճառիլն արժաթով կամ ՚ի գին արժող իրօք , գործի , անունի սիմոնականութե . Եւ թէ որքան մեծ իցէ մեղքս այս , երևի ՚ի սաստկագոյն անիծից սրբոյն պետրոսի աւ սիմոն մոգ , և է տե՛նեղեւն և սարսափելի մեղք , զի ըստ կանոնական իրաւանց . || Սիմոնականութեն ժանտացաւ , մեծութեամբն իւրով յաղթէ ամ սխալից հոգւոյն : և յայլուր : || **Ս**իմոնկնուեն զհոգւորացեալն կան

կոն հայհոյիչս անուան բարձրելոյն պատժել պարտ է :

Բ. Արդ՝ եռակի է սիմոնականութիւն . ուր աւսուցանէ թողութիւն , այս է , Մտաւորական , Գաշնագրական , և Իրական . Մտաւորական սիմոնականութիւն ևս ըստ երկուց կարէ լինիլ : Նախ մինչ որ ազատաբար կամի գնել կամ վաճառել զհոգևորն : Երկրորդ մինչ զինն ինչ ըստ արտաքնոյն առնէ դիտաւորութեամբ գնելոյ , կամ վաճառելոյ զհոգևորն առնց գաշնագրուել ինչ ըստ արտաքնոյն . ուր եթէ որ յարգեացէ և պատուեացէ զձեռնորն , կամ զեջիւանն , այնու դիտաւորութեամբ , զի պարգևեացէ նմա զեկեղէցական հասոյթս ինչ ՚ի վարձ յարգման և պատուոյ իւրոյ :

Գաշնագրական սիմոնականութիւն է , մինչ գաշն ինչ ՚ի մէջ անկանի , որ սակայն չև ևս է կատարեալ թէ յերկուց կողմանց , և թէ ՚ի միոյ կողմանէ :

Իսկ իրական սիմոնականութիւն է , մինչ յերկուց կողմանց գաշն կատարի :

Արդ՝ սիմոնականութիւն ըստ ամ կերպի է միշտ ծանրագոյն մեղք , սակայն ոչ լինի անկանիլ ՚ի սահմանեալ պատիժս ընդդէմ սիմոնականաց , եթէ ոչ վս իրական և գաշնագրական սիմոնականութե , որ լինի ՚ի մէջ երկուց բանիւք :

Դ. Եւ զի ըստ ունթիւ կերպից կարէ որ թրծիլ մեղքս այս , և զորս գնել աստ մի ըստ միո՞՞ն խոստման մերոյ ներհակի , վս որոյ դիցուք աստ զընդհանուր կանոնս , զորս ուսուցանեն վաղ գապեաք ՚ի հասարակի , որով կարացէ ճանաչիլ ՚ի յամ մասնաւոր պատահմունս մի՞ թէ սիմոնականութի իցէ , թէ ոչ : Իսկ առ ՚ի դիւրին իմացումն համարիմք , նախ , թէ անուամբ հոգևոր իրի , որ սիմոնականութի վաճառիլ , կամ գնիլ կարէ , իմանան անտքանք , ըստ լեզուոսի ոչ զոյն ամ , կամ միայն զոյն՝ որ է անմարմին .

այլ զայն . որ է իմն ինչ գերբնական . և այն
կամ է իրական ինչ , և կամ բարոյական միայն .
կամ ունի անբարձուր . և կամ ունակութի . ունի
են գերբնական առաքինութիցն , ճրի տարդուել
չնորհքն , կամ առնողքն ճրի . և խորհուրդքն ,
խորհրդանշիւր կիրառութի գերբնական ինչ իշ
խանութե , կամ ևս այն , որ է միաւորեալ չ
գերբնական իրաց . ունի են եկեղեցական հա
սոյթքն և այլն :

Համարիմք երկրորդ , թէ արծաթ , կամ այլ
ինչ որ ՚ի դին վարկանի , զանազան և բազում
անուամբ զն հողեւոր ինչ իրի կարէ տունեալ
լինել . այս է , կամ ունի ՚ի դին հողեւոր իրին այ
նորիկ . կամ ունի յողորմութի և յապրուստ պաշ
տօնեկցն եկեղեցոյ , կամ ունի յընծայ և ՚ի նուէր
այ առ անձն պաշտօնեկի , կամ ունի յաղատ և ՚ի ճրի
տարդե , և կամ ունի ՚ի գովելի և ՚ի ջերմեռանդ
աօխորութի ինչ եկեղեցոյ :

Համարիմք երրորդ ըստ հասարակ և ընդունելի
քանիցն անարանից , ունի ճահ է անուանել առ լե
զիսս , թէ կրկին է սխմանականութի , մինն յան
ային իրաւանց , և միւսն արդեւեալ ՚ի միկայիւն
և յեկեղեցական իրաւանց . այս է , ան վաճառ
սուսն և զնուսն հողեւոր գերբնական իրաց է
արդեւեալ յան ային իրաւանց . ունի մկայութի
թի գրոց հաստատե լեզիսս , իսկ վաճառելն կամ
գնելն Տմկաւոր ինչ իրաց . որ միացեալ աւի չ
խոր զհողեւորն , ունի վաճառելն կամ գնելն և
հեղեցական հասութից . որքան առ ժամանա
կաւորն , է սխմանականութի եկեղեցական իրա
ւամբ արդեւեալ . զի թէ պէտ իրաւունքն առ ՚ի
ընդունիլ զպտուղս հասութիցն նիւթականայ
և ըստ ինքեան յան հողեւոր և սրբազան պաշտ
նիցն համարի իմն ինչ մարմնաւոր , և որ հե
տեապէս անային օրինօքն ոչ է անվաճառելի .
սակայն եկեղեցական օրինօքն զն յարգման հո
ղեւոր իրաց , որք նմա միացեալ են արդեւեալ
լինի

լինի . զի մի՛ այսպիսի իրաւունքն վաճառեացի :
 Աւստի ունի եկեղեցին կարէ սահմանադրութիւնն
 ինչ զնիւթական տեղիս անձային պաշտմանն ինչ
 ազրեալ ազատ կացուցանել . մինչ զի որ ապա-
 կանէ զսրբութիւնն եկեղեցական սահմանադրու-
 թքն հաստատեալ մեղանչէ մահուչափ ընդդէմ
 առաքինութե կրօնի , և լինի սրբապիղծ . Այս
 պէս և ս զմարմնաւոր իրն որ միացեալ է ընդ հս
 դեորին , վն միաւորունն այնորիկ կարէ ազատ
 կացուցանել ՚ի վաճառել . մինչ զի վաճառելն և
 գնելն այն ժամանակաւոր իրօք լիցի սխմնակա
 նութի :

Դ. Չայստիկ գիտացեալ մեր . առ ՚ի ճանա-
 շել , թէ երբ անկեալ լինի յախան սխմնակա
 նութե , կամ ոչ . զայստիկ գիցուք ՚ի լինող հա-
 նուր կանոն : Զ անիցս անգամ հիշք , կմ հիշքին
 միաւորեալ իմն ինչ , այնու կերպիւ , զոր ասա
 յաք ՚ի վերոյ վաճառեալ , կամ գնեալ լինի . այս
 է . քանիցս անգամ վն այսպիսի իրի առեալ կմ
 տուեալ լինի ինն ինչ արժօղ յարժաթ իբր ՚ի
 դին նր , այնքանիցս սխմնականունն մեզք դոր
 ծի . Ի այց ոչ այսպի . եթէ այլ անուամբ տուել
 կամ առեալ լինի , և յայնժամ պարտ է քնը
 նել , թէ որով անուամբ տուեալ լինի , մի
 թէ ճշմարիտ և օրինաւոր է , թէ կեղծ և պա
 տիր , և առ ՚ի պատրուակել զսխմնականութն :

Աստուսա իմացեալ լինի , թէ ՚ի բան սխմ-
 նականութե երկու ինչ խնդրին . մինն է գինն ,
 որպիսի է արժաթն . կամ այլ ինչ արժօղ ՚ի գին-
 որպիսի է ընծայն լեզունի , կամ յարգման . ուն
 վարդապետք ՚ի հասարակի ուսուցանեն . եկգն է
 իբր վարձ . այս է , զի իմն ինչ հոգևոր կամ հո-
 գևորին միաւորեալ ՚ի դին արժէ . վասն այն
 վաճառի և գնի . Աւստի ՚ի լինիլ այսոցիկ եր-
 կուց ՚ի միասին լինի սխմնականութի , իսկ ՚ի ոչ
 լինիլ միայն , ոչ լինի սխմնականութի :

Ի վերոյ ասայն լոցս ելևի , նախ , թէ ոչ է
 սի

սիմոնականութի եթէ գին ինչ, կամ վարձ առեալ լինի վասն պաշտօնի ուսուցանելոյ զգիտութի ինչ մարդկային հնարագիտութեան պատկանեալ. վս զի այսպիսի գիտութիս, ոչ է իմն ինչ գերբնական. և ևս ոչ ուսուցանէ աղեւսիս, զի վարձն այն յատկապէս խօսելով ոչ այնքան տո՛ւեալ լինի վս ուսուցանելոյ, որքան վս աչխատանացն ուսուցանելոյ, որ արժէ ՚ի գին. վս որոյ ևս ըստ օրինաց համեստ վարձ ինչ վս ուսուցանելոյ զմտաբանական գիտութիւնս կարէ տո՛ւեալ և առեալ լինիլ ՚ի պատճառս աչխատանացն. որ ՚ի յայնպիսի գերադոյն և վեհագոյն գիտութիս ամենամեծ է ՚ի մեկնելն ուղղութե. որ զզօրութիւն մարմնոյն յոյժ գինս նշու՛նաղէ :

Ե. Հետեւի երկրորդ, թէ և ոչ ևս լինի սիմոնականութի, եթէ քահանայք առնուն զվարձ, կամ զապրուստ ինչ վասն հաշակելոյ զպատարաս : վս պաշտամանց մեռելոց. և այլ սյսոյի եկեղեցական արարողութեց, որովհետեւ ոչ առնուն կամ տան զայս օրսէս ՚ի գին : այլ ոչ զզօրութի. կամ զապրուստ, և կամ զզոպելի սովորութի, որ եկեղեցւոյ ընդունելի : ուստի առաքեալն : Թ. Կորն. 9, ասէ : ॥ Ոչ գիտէք, եթէ որք ՚ի տաճարին գործեն, ՚ի տաճարէ անտի ուտեն. և որք սեղանոյն պաշտօնեայքն են, ՚ի սեղանոյ անտի վայելեն : Եւ ՚ի կանոնական իրուսունս վասն սիմոնականութե յայտնապէս ասի, թէ թէ պէտք քահանայից և կղերիկոսաց վս այս սիսեաց և այլոց, պահանջել զգրամս և հայցել արդելիլէ. սակայն աշխարհականք զզոպելի սովորուն զայն բարեպաշան ջերմեռանդութե անեալ յեկեղեցի սք ոչ պարտին նու՛նաղել, պատճառս նօք կանոնական գթութե. այլ եպիսկոպոսօք առ այս կարեն յորդորել :

Հետեւի երրորդ, թէ ոչ լինի սիմոնականութի ևս, յարժամ յօժիտ աղջկան, որ կամին մըտա

տանել ՚ի վանս, և լինի կրօնաւոր, առնուն զիմն
 ինչ ՚ի նմանէ կամ ՚ի ճնողաց նր. իբր ՚ի յաղ-
 բուստ նր. բայց եթէ առնուն զիտղն զայն վս
 ընդունելոյ ՚ի կրօնս ինչ. լինի սիմոնականութի.
 սոյ ուսուցանէ սքն թօմաս. և այլն. Եւ որ թ
 իրաւանց երկբայի, մի թէ, մինչ վանքն է հա-
 բուստ, իցէ օրէն նմա պահանջել զիմն ինչ յաղ-
 բուստ իւր ՚ի նորընծայէն. և յայննապէս մեկ
 նէ, թէ || Մինչ առանց ծանրութե վանուց
 կարէ ընդունիլ նորընծայն ՚ի վանս, սիմոնակա
 նութի է պահանջել զիմն ինչ, որում հետեւին
 և այլ բազումք. Եւ ք. Ենովկենտիոս պատն
 ՚ի յընդհանրական ժող լաթ. բոլորովին ար-
 գել. զի մի վանականքն առնուցուն զգին ինչ
 առ ՚ի ընդունիլ ՚ի վանս յայնոցիկ, որք ցանկան
 մտանել անդ. և սյս ՚ի պատիր և ՚ի կեղծ չքա
 ւորութեն պատրուակ, և ոչ վասն ճշմարիտ
 աղքատուէ : Եւ թէ պէտ լիզիոս և այլք անա-
 բանք, ջանան անբասիր առնել զկիրառութիս
 զայն, որ ՚ի յամ վանօրայս, ևս ՚ի հարուստս
 սյթմ գտանի. որք պատրուակաւ ապրուստի
 առանց օժտի և դնոյ ոչ ընդունին զքք ՚ի վանս,
 սակայն նոյն ինքն լիզիոս խոստովանի, թէ այս է
 ճշմարիտ նշան աքահութե, և տեսակ ինչ պատ
 բուակեալ սիմոնականութե

Գ. Հետեւի չորրորդ, թէ ոչ ևս է սիմոնակա-
 նութի, մինչ սկիհք, կամ անօթք սք և զգեստք
 վաճառին. կամ դնին, զի ըստ հասարակ բա-
 նիցն անաբանից, թէ պէտ այսոքիկ և այլ նը-
 մանք սրբադարձեալ. և անօթքն պաշտամանցն
 անադրեալ են. սակայն միշտ մեան ըստ ինքեան
 արժօք ՚ի գին. և ապա վաճառելի. և օրհնու-
 թին ի նս պատահական իմն է : Բայց եթէ մեծա
 գոյն դնով վաճառեցին, վս օրհնեալ և սրբա-
 դարձեալ լինելոյ նց, յայնժամ լինի սիմոնակա
 նութիւն, ոսյ ասէ թօլեթոս, և երևի ըստ ին
 քեան :

Իսկ որքան առ սիմոնականութիւն, որ դասնի ՚ի յեկեղեցական հասոյթս, ՚ի դիւրին, և ՚ի բարւոյք իմացումն, թէ երբ արդեօք պատահի, կարճ ՚ի կարճոյ ըստ հասարակ և առաւել ընդունելի բանիցն անձաբանից վարդապետեսցուք :

Գիտելի է նախ, զի ոչ է սիմոնականութի հրաժարել, յեկեղեցական հասութից, զի տացի այսինչ ուժեք. և ոչ այլում. մինչ այսպիսի հրաժարումն լինի ՚ի ձեռն ծայրագոյն քհնյոսպետին. ունի երևի ՚ի հասարակ սովորութի :

Երկր, ոչ ևս է սիմոնականութի յանձնել զձոյն հասոյթն ՚ի ձեռն նոյնոյ քահանայապետին, պահելով զպատար վճարումն ինչ. ունի երևի ՚ի հասարակ սովորութի : Մանաւանդ որ հրաժարի ՚ի հասութիցն, զի տացի այսինչ ուժեք, և պարտաւորի զնա վճարել զիմն ինչ, կարէ ըստ օրինաց դաշնադիր լինիլ ընդ նձա զայնու, և այս քչ բացարձակաբար. այլ հաճութի քահանայապետին կարէ լինիլ. ապա թէ ոչ, լինի սիմոնականութի :

Ինչդրեօցես. մի՛ թէ նա, որ թողու այլում զհասոյթս իւր պարտաւորելով ՚ի վճարումն ինչ. կարէ ըստ օրինաց առ ՚ի անբոյթ լինիլ հասութի ման առնուլ զդրաւ ինչ կամ զերաշխաւոր ՚ի նմանէ, որում թողու զհասոյթն զայն :

Պատասխանեմ, թէ կարէ, միայն թէ լիցի կամաւ և հաճութի քահանայապետին, ապա թէ ոչ՝ ապօրինաւոր և սիմոնականութի է, ունի սակ լեզիոս, որ ևս բարւոյք ուսուցանէ. թէ ՚ի յամ թողու զհասոյթս, անձա զն մարմնաւոր ծանրութի, որ միացեալն է հոգևոր իրաց, ոչ կարէ լինիլ ըստ օրինաց առանց օրինաւոր իշխանութե մեծաւորին. որ յոյժ հարկաւորն է առ ՚ի դիտել :

Է. Երկրորդ, թողուլ, կամ առ այլում զհասոյթս իւր ակնկալուի, այս է դիտաւորութի, պարտաւորելոյ զնու, զի զկնի ժամանակաց ինչ իւր

մեր ձեռքին, կամ բարեկամին իւրոյ, կամ այլ ումք, առ որ ցանկայ տացէ զայն, որ առնուն. կամ զպատուս նր այլ ումք տացէ է սիմոնա կանուծի մտաւորական ակնկալութե: և եթէ դաշն ինչ 'ի մէջ անկցի, է սիմոնականութի իրա կան ակնկալութե, որ ածէ 'ի պատիժս օրինաց, ոպ զուցանէ լէզիոս:

Չորրորդն է, թէ հասոյթքն ոչ կարեն փոխարկիլ ըստ օրինաց առանց հրամանի մեծաւոքին. և փոխարկումս այս ոչ միայն է ապօրինաւոր, և սիմոնական, այլև անընդունակ և ոչ ինչ, ոպ սակ լէզիոս: Խնդրեացես, մի թէ 'ի փոխարկել զհասոյթս կարէ վճարիլ անհոնորին եկամտից: Պատխեմ, թէ այն, միայն թէ լիցի այս հրամանաւ և իշխանութի ծայրագոյն քահանայապետին. և այս կամ պահելով զիմն ինչ 'ի հասուծիցն, որ ունի զառատագոյն եկամուտս 'ի վճարումն, կամ տալով զիմն, զոր արդար և օրինաւոր տեսանէ նոյն քահանայապետն, և այլն. ոպ ուսուցանէ լէզիոս:

Հինգերորդն է, թէ նա, որ ունի զիրաւունս 'ի հասոյթս ինչ, կամ որում առեւալ է հասոյթն ըստ օրինաց, կարէ գնով փրկել յանիրաւ յափշտակմանէ զայն, ոպ յորժամ ոք խափանեցցէ, և արգելուցու առ 'ի վայելել զայն. և 'ի փրկելն զայն ոչ դատնի սիմոնականութի ինչ. ոպ սակ սքն թօմաս:

Խ Ն Դ Ի Ր Ե Ր Ր Ո Ր Դ .

Յաղաքս պատժոցն ընդդէմ սիմոնականաց:

Լրդ 'ի պատիժս վս դործեալ սիմոնականութե ըստ սահմանադրութե իրաւանց անկեալ ինի միայն 'ի մտանել 'ի կարգ կրօնաւորութե, յառնուլ զաստիճանս. և 'ի ստանալ զէկեղեցակոն հասոյթս ինչ:

Յազարս կրթութիւն

Եւ նախ բանադրին՝ որք առնունն և որք
նանն զինն ինչ սիմոնականութիւն վն մասնելոյ
ի կրօնս ինչ . և որք այսու կերպիւ մտեալ ի
զինն, միայն տնօրինմամբ տեղւոյն մեծաւորի կո
րենն մեալ անդ . ուն էրևի ի վճարոյ չորրորդ
ուրպանոս պատին :

Նոյնոյ նա , որ ձեռնադրէ սիմոնականութիւն
է բանադրեալ . և է ևս կախակայեալ առ ի տալ
զամ մասիճանս , և օգտաւ ի սուղուսն հերաց
և առ ի կատարել զամ պաշտօն եպիսկոպոսալ
կան . և ևս է արդէլեալ ի մտաւ եկեղեցւոյ .
նաև է կախակայեալ առ ի ընդունիլ զպատու
ամ հասութից իւրոյ . և ոչ որ կարէ զնա ար
ձակել բոց ի ծայրագոյն բահ սնայտակեան .
ևս եթէ յանցանքն իցէ զաղանիս ուն էրևի ի
վճարն հինգերորդ Սիստոսի պատին : Եւ զայս
խմանալ պարտ է վն անդեացն . ուր վճարն հրա
պարակեալ և ընկալեալ է . զի լը լէ զնոսի . վճարս
այս ի բողոմ տեղիս չէ հրապարակեալ , և ու
պա և ոչ ընկալեալ :

Արդ՝ որ զաստիճան ինչ սիմոնականութիւն առ
նու , իսկոյն անկանի ի բանադրանս . և է կա
խակայեալ առ ի կատարել զպաշտօն ընկալեալ
աստիճանացն . և զնի յամ արժանապատու
թեց , ի պաշտօնից , և ի հասութից . և լինի
անընդունակ առ ամս . և միայն ի ծայրագոյն
բահանայտակեան կարէ արձակիլ :

Եւ ևս , որ զեկեղեցական հասոյթս ինչ սի
մոնականութիւն մայ , կամ արիւ ջանայ . ընտրե
լով , ներկայացուցանելով , հաստատելով ,
յանձն առնելով և այլն . իսկոյն լինի բանադրել
ի սոյն պատիժ անկանին և նորա , ուր լինին միջ
նորոք , զի որ ստացի զհասոյթս կամ զաստի
ճան ինչ սիմոնականութիւն .

Իսկ որ զայսպիսի հասոյթս այսու սիմոնակա
նութիւն առնու , իսկոյն անկանի ի բանադրանս ,
և ստացումն և տիրութիւն այն է ոչինչ . և լինի
ան

անընդունակ առ ստացումն նր . Ի սոյն անկանին
և ՚ի բանադրանս որք դորձեն զակնկալական զսի
մանականութիւն :

Խնդրեցես, մի՛ թէ պարտ է զգին սիմոնակա
նութեն սուեալ հատուցանել ին իւրում . Պա
տասխանեմ . Թէպէտ թ նաւարասի , ոչ է պար
տաւորութի ինչ հատուցանելոյ . սակայն ազահո
վադոյն է բաննց , որք ասենն թէ պարտ է զգինն
զոյն հատուցանել , և յեսս դարձուցանել , ոչ
այնմ , որ ետ , այլ եկեղեցւոյ . կամ աղքա
տաց . ուր ՚ի բանից սրբոյն թօմայի հաստատե
լէ շիս :

Խ Ն Դ Ի Բ Չ Ո Ր Բ Ո Ր Դ

Մի՛ թէ օրէն իցե զբազում հասոյթս ՚ի միասին
ստացեալ ունիլ և վայելել :

Սեկնութի խնդրոյս ոչ կարեմք զայլ ինչ
յորմարադոյն պատասխանել . եթէ ոչ ըզ
նոյն բանս ժող . Թրիտ . որ զմիտս ընդհանուր
եկեղեցւոյ ՚ի վր խնդրոյս պարզաբանեաց այս
քիւք բանիւք . ॥ Մինչ եկեղեցին կարգ թիւ
րի , յորժամ մի որ զբազում հասոյթս ստանայ ,
սրբութի սրբազան կանոնօքն զգուշացոյց , թէ մի
իցի ումք երկուց եկեղեցեաց տնագրիլ . Բայց
բանի բազումք յանդուդն ազահու թէ աստիւք
զինքեանս և ոչ զմժ պտարեալ , զայնասիե , որք
սրբութի են սահմանեալ զանազան հնարիւք
ճաղր առնել . և զբազում հասոյթս ՚ի միասին
ունիլ ոչ պատկասին . վն որոյ սրբազան ժողովն
ցանկացեալ նորոգել զպատեհաւորն կրթութիս
՚ի կառավարել զեկեղեցիս , այսու սահմանող
րութիս , զոր ամ որ ամ սրժանապատուուհի ,
տասիմանի , պատուոյ , և ս և կարտիմուլք , պար
տին պահել . հաստատեալ կացոյց , զի այսուհե
տե զմի միայն զեկեղեցեան հասոյթս տացեն մի

ուժ ուժեք . Բայց եթէ 'ի պարկեշտ պահպանումն կենաց նր', որ առնուն զհասոյթն, ոչ չա տասցի . մարթ է և ևս զայլ պարզ հասոյթ ինչ բաւական . որ զանձնաւորական ներկայութի ոչ պահանջեսցէ տալ նմա . Եւ այսօրքիկ ոչ միայն որքան առ հասոյթս ակնարկստ եկեղեցեաց, այլ ամ աշխարհական և կանոնաւորական ևս և յանձնարարական հասոյթս դատականեսցին . և զորոյիսի անուանակոչութիս, և յատկութիս ունիցին :

'Ի բանիցս աստի ժողովոյն զհարկաւորս և զարժանաւորս առ 'ի իմանալ և դիտել կարեւոր հաւաքել .

Նախ . զի թէպէտ ունիլ զբազում հասոյթս 'ի միասին ոչ է ըստ ինքեան շար . ապա թէ ոչ ոչ երբեք էր օրէն տնօրինել ուժեք առ այս . սակայն ոչ է ևս ըստ ինքեան բոլորովին անզանազան, այլ 'ի սեռէ այնոյիկ, որք զտեղութի ինչ, և զանկարգութի տանին ընդ ինքեանս . մինչ ըստ ժողովոյն բազմութեն այնու թիւրի կարգն եկեղեցական . և ապա միայն վս պարսպայից սմանց կարէ պարկեշտ ինիլ . զոր և ուսուցանէ սքն թօմաս, և այն :

Թ . Երկրորդ, զի բազմութին այն, մանաւնդ 'ի հասոյթս, որք զհոգ հոգւոց ունին ընդ իւրեանս, է ասորինաւոր, ուղ երևի 'ի ժող' . Թրիտ և լաթ' . սոյնպէս և վս ամ հասութից, որք ունին ընդ ինքեանս, զարժանաւորութի . զպատիւ, զանձամբ ներկայ ինիլն . զպաշտօնս, և'' պահանջեն որք 'ի միասին . չ կարեն ստացել ինիլ յուժեքէ, ևս եթէ մինն 'ի նոցունց չիցէ բաւական 'ի պարկեշտ պահպանումն կենաց . ուղ բարւոք երևի 'ի բանից ժողովոյն : Ասկայն երբեմն վս բազմութն այսպիսի հասութիցն, որք զանձամբ ներկայ ինիլն ոչ պահանջեն կարէ տնօրինել ծայրագոյն բահնյոյեան . մինչ յայանի և նշնար հի կարգութի ամ օգուան եկեղեցոյ զայս ինչ պա

Իրահանջէ վոյ սբն դրիդոր անօրինեաց բազմաց
 եպիսկոպոսաց առ ՚ի իշխել նց երկուց եպիսկո-
 սոսարանաց ՚ի միասին . բայց վն հարկանարու-
 թեն այնորիկ և օգտի եկեղեցւոյ զքննութիւն մի-
 թէ անձեղաբիր առնէ առաջնայ . թէ ոչ . թող
 ցուք ծայրագոյն քահանայապետին ուղ զմարիւ-
 ք . Լէրրորդ , զի օրինաւոր իմնէ զբազում հա-
 սոյթն , որք զանձամբ ներկայ լինիլ ոչ պահան-
 ջնն . ստանալ ՚ի միասին , և թէ հարկաւոր իցէ
 ՚ի պարկեշտ պահպանունն կենաց , ուղ կրելի ՚ի
 բանից ժողովոյն : Արդ՝ ասացար ոչ պահանջել
 զանձամբ ներկայ լինիլն , զի որքան առ զանազան
 եկեղեցիս համարին այնգրիկ , որոց մինն ոչ պահան-
 ջէ զներկայութիւն անձին . իսկ որքան առ նոյն ե-
 կեղեցին : համարին այնգրիկ ոչ պահանջեն զներ-
 կայութիւն անձին . մինչ ոչ են նման հասոյթք :
 կամ պաշտօնք երկոցունցն ոչ կամարին ՚ի միա-
 սին . և սպա կարէ որ ստանալ զերկուս հասոյթն
 վն վերոյ ասացեալ հարկաւորութեն . և թէ չիցէ
 յատուկ ինչ սովորութի և սահմանադրութի ե-
 կեղեցւոյն , որ արդ կրուցու զայս , ուղ ասեն վար
 դատեալ :

Եւ թէ որչիսի իցէ պարկեշտ պահպանուն
 սն կենաց , որոց հարկաւորութիւն անձեղադ իր
 արասցէ առաջնայ զբազմութիւն զայն հասու-
 թից , թողումք քննուն խոհեմ և երկիւզած առն
 նոյ . որ հայեցեալ և նկատեալ ՚ի պարագայս կո-
 ցութեն , յատուկութեն , հասակին , անձին , և
 այլոց նմանեաց , զայս ինչ վն բարւոյ դատեացէ
 արդարարար : զի այլ է պարկեշտ պահպանունն
 նկատմամբ առ եպիսկոպոսն , և այլ առ պարզ
 քահանայ : նոյնպէս այլ է նկատմամբ առ անիւն
 և մեծազգի որ . և այլ առ զսեփիկն ծննդեամբ :
 քանզի յայս իմն է : թէ այր գիտուն և իմաս-
 տունն , և որ աշխատին վն հասարակութեն բար-
 ւոյ եկեղեցւոյ , կարօտի մեծի եկամտի , և այս ՚ի
 պահպանունն կենաց անձին , և այլ հարկաւորաւ

թեցն, և ոչ 'ի տաճունն բերկրութե, և հեշտունն նր:

Դ. Չորրորդ, զի առանց օրինաւոր և արդար պտճախ, այսէ առնց պրկեշտ պահպանուն կենաց, կամ հարկաւորութե. և կմ առանց օգտի եկեղեցւոյ (որպէս 'ի վերոյ սասայք) աղօրինաւոր է ունիլ զբազում հասոյթս 'ի միասին. և սեթէ ոչ պահանջեցեն զներկայութի անձին. և առ այս ոչ իւրիք կարէ զօրել տնօրինումն ինչ քահանայապետին. քանզի այսպիսի բազմունի հասութից է ընդդէմ բնական իրաւանց, մինչ ոչ է օրինաւոր և արդար ինչ պատճառ առ 'ի անմեղադիր առնել. որպէս ուսուցանէ սքն թօմաս և այլ բազում անճարանք. որոց կարեմք յաւելուլ զբանս կարսինալ պելարմինոսի, թէ սրբազան կանոնքն արդելուն զբազմունի հասութից ունիլ 'ի միասին, որ առէ, || Աճքանք փարիզույեա բազում վիճաբանութեց յամի ան. 123 ճ. սահմանեալ Փացուցին. թէ ոչ որ կարէ զերկու հասոյթս, եթէ մին բաւական է 'ի պահպանումն կենաց, ստանալ առանց մահացու մեղաց:

Իսկ թէ արդեօք բաց 'ի հարկաւորութե, և յօգտակարութե, եկեղեցւոյ, և 'ի կենաց պարկեշտն պահպանուէ իցէ այլ ինչ արդար և օրինաւոր պատճառ, զի որ զբազմութի հասութիցն, որք ոչ կարօտին անձին ներկայութե ըստ օրինաց և իսկապէս կարօտցէ ստանալ: Իսկ զեալ 'ի դատողութի և 'ի վիճաբանութի վարդապետաց 'ի վր խնդրոյս, զայս ինչ միայն անեմ, թէ բազմութես սյսորիկ հասութից ոչինչ ստորութի և կիրառութի բազմաց կարէ օգնել. մինչ (ըստ պելարմինոսին բանից) զստիւրուն զայն իբր չար և վատթար սք ժող. թրի 'ի բաց մերժէ:

ԽՆԴԻՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ :

Յողադս թէ զհարգ պարտին ծախել զեկամուտ
հասուծից իւրեանց , որք վայելն
զհասոյթս :

Արեք են ազգ ստացուածոցն , զորս , որք
ուենին զհասոյթս , կարեն վայելել . Հայ
բենական . զոր ժառանգութիւն , կամ հանձարե
զուք հիմ այլ կերպիւն , որով աշխարհականք սո
վոր են . ինքեանց կարեն ստանալ . իբր հայ
բենականք , որք նոյ իբր կղերիկոսաց հասանին .
վն արարողութեց ինչ եկեղեցւոյ . այս է , վն
հաշակելոյ զպատարագս . քարոզելոյ , երգելոյ
յեկեղեցին և այլն . Եւ պարզ եկեղեցիք , որք
վն եկեղեցական հասուծից ինչ . այս է . աւառ
երիցութեան աւաճնորդութիւն և այլն . ստացեալ
լինին : Արդ՝ որք ուենին զհայրենական ստաց
ուածս . ըստ սրբոյն թամայի և այլոց ՚ի հասա
րակի կարեն ազնաբար աւնել զինչ և կամին . մինչ
այսպիսի ստացուածոցն ուենին զճշմարիտ նորո
թի . որպէս և աշխարհականքն , և վն կղերիկո
սութեն կամ աստիճանացն աւելոյ ոչ կորուսա
նեն զտէրութի իրին . և ոչ ևս ՚ի տէրութի ի
րաց ժառանգազուրկ աւնեն : Անորոյ զհայրե
նական ստացուածս ըստ հաճոյնց իւրեանց կա
րեն ծախել . միայն թէ ՚ի ծախելն մի ինչ արաս
ցեն ներհակ սիրոյ և արդարութե , Չսոյն ասել
կարեմք ևս վն իբր հայրենականոյ . ըստ նաւա
րոսի և այլոց : Սոյնպէս ևս կարեմք ասել վասն
պարզ եկեղեցական հասուծից . որք աւ մասն
աւ այն . որ ՚ի յարմար պահպանուածն կենաց
իւրաքանչիւր ումք բաւական է :

Իսկ զժողովութիւն մանուսանդ է վասն այն
մասին եկեղեցական հասուծիցն , և եկամտիցն :

Երբ ՚ի պարկեշտ և ՚ի յարմար պահպանութե կենաց ոչ երբեք է հարկաւոր , և հետևապէս , այնչ . որք վայելեն զհասոյթս՝ աւելորդ . և զորմէ խնդրեմք . թէ զխորդ նորա պարտին ծախել զայնասիկ . Եւ մեկնութի խնդրոյս երևի արդարև կախիլ յայլ ինչ խնդրոյ . այս է , մի թէ նորա որք վայելեն զպարզ եկեղեցական հասոյթս ունին զճշմարիտ և զյատուկ ակրութի այնորիկ մասին պողոցն . և զեկամոխցն իւրեանց . որք ՚ի պարկեշտ և ՚ի վայելն պահպանութե կենաց իւրեանց ոչ երբեք են հարկաւոր : Եւ ՚ի վր խնդրոյս երկու են պատասխանի անուանի և հաշու կաւոր վարդապետացն .

Չի նախ ըստ նաւարտսի և այլոց . որք ասեն , թէ որք ունինն զհասոյթս . ոչ են ար աւելորդացն եկամտին . այլ միայն մատակարարիչք . և հետևապէս պարտաւորին յարդարութե ՚ի ծախել զայնասիկ ՚ի բարեպաշտութիւս : ասոյս եթէ այլազք արասցեն ոչ միայն մեղանչեն մահուչափ : այլ և պարտաւորին ՚ի հատուցումն . այս է պարտաւորին զհաւասնաբաշտին յայլ ստացունածոց իւրեանց ծախել ՚ի բարեպաշտութե դործս : Երկրորդ ըստ սթութսի և այլոց , որք ասեն . թէ ես որ ստացեալ ունի զեկեղեցական հասոյթս ինչ , է բացարձակ արարմ եկամտից նր . մինչդի թէ պէտ զաւելորդն ծախելով ՚ի յաշխարհայինս մեղանչէ մահուչափ . սակայն ոչ երբեք պարտաւորի ՚ի հատուցումն ինչ :

Եւ թէ պէտ երկորքեան վճիռքն վն մեծի հեղի նակուն նյ և պատճառացն հաւանականադոյնք են . սակայն առ ամենն է ապահովագոյն . և ՚ի կիրառութեն աներկեան , թէ պէտ չէ պարտ դատապարտել զայնասիկ , և ՚ի խորհրդոյ ապաշխարութեն մերժել . որք զլետին վճիռն կամին ունիլ . և ոչ իւրիք հրաժարին ՚ի նմանէ :

Արդ՝ որք ունին զհասոյթս , (ենթապրել մեր կամ տեարս եկամտիցն աւելորդաց . կամ միայն մատա

մատակարարիչս,) միշտ մեղանչին մահուչափ լն վկայութեն ամից, եթէ զաւելորդան զոյնստիկ ծախսեն յաշխարհայինս և յունայնս . և կմ տան ազգականացն առ 'ի փարթամացուցանել զնոսա . ոմյ յայտ իսկ երևի 'ի բանից ժող. Թրիտ', Եւ զի բոլոր կանոնն ժողովոյն 'ի վն խնդրոյս, զոր մէ ընձեռեմքն զարժանաւոր խրատս պարունակէ, և զոր ամ զք յամ արժանապատուաւ, և յաստիճանի լեալ պարտէ առաջի աչաց ունիլ միշտ, վն որոյ աստ երկարաբար դիցուք զբանս ժողովոյն : ուստի ॥ Որք ցանկանն ասէ եպիսկոպոսութեն լծոյ, պարտին ճանաչել և զմանն և զբաժին պաշտօնի իւրեանց, զի ոչ առ անձին հան դասութի, և հաճուի . կամ առ հարստութիս կոչին, այլ առ աշխատանս և առ փոյթս հոգւոց վն փոյն ամ, վն զի առանց կարճեաց 'ի տեսանել հաւամցելոցն առ նս ժողովրդոց առաջնորդս իւրեանց ոչ զանկալ և հոգալ զկենցաղոյս, այլ զերկնայնոցն . և զհոյրենւոյն և զնախանձու հոգւոց, առաւել վառին և բորբոքին 'ի սրբութի և յանմեղութի . Ուստի 'ի դիտել ժողովոյն սրբոյ 'ի կրկին նորոշումն եկեղեցական կրթուն, և բարեկարգութն, խրատէ զամ եպիսկոպոսունս, զի խորհեցեալ միշտ 'ի սիրտս իւրեանց զայս ամ, գործովք և վարուք իւրեանց իբր հաստապարգ քարոզութի զինքեանս պաշտօնի իւրեանց համաձայնս ցուցցեն . Եւ նախ այնպէս պարտէ նց զլաւս իւրեանց բարեկարգս պահել, զի այլք 'ի նոցանէ զժողովարութն, զպարկել տութն զհամեստութն և որ առաւել հաճեին և բնակարանն սունէ զմեզ ամ զխոնարհութն և զհեղութն զորինակաւնուլ կարասցեն . վասն որոյ ըստ օրինակի հարցն սքց ժողովոյն կարթագիծեայ, հրամայէ եպիսկոպոսացն ոչ միայն պարկելտ և շափաւոր կահիւք, սեղանօք, և կերակրօք շատանալ . այլև մի յամ վարս, և 'ի բնակութիս նց երևեսցի ինչ, որ այլազոյն իցէ և օտար

տար 'ի սբ սահմանադրութիւն սաստի . և որ ոչ
ցուցցէ զպարզամտութի , զնախանձիք , և զար
համարհումն ունայնութեց : Եւ ըստ ամի ար
դելեալ է նոյ , յեկամայն եկեղեցւոյ փարթա
մացուցանել զարճնակից . և զընտանիսս իւրենց :
ոնց և առաքելական կանոնքն իսկ արդելու է ոչ
պարզ և ել աղցականացն՝ յեկեղեցւոյն եկամբ
տից . զի այն են . իսկ եթէ աղքատ իցեն : նոյ
ոնց աղքատաց կարեն մատակարարել , բայց ոչ
կարեն 'ի պատճառս նոյ վատնել . և ոչնչացուցա
նել . մանաւանդ , զի ժողովն սբ խրատէ զդ
նոսա , որքան կարն է : զամենայն իղձ և զսէր
մարդկային և զհակումն առ եղբարս : առ եղ
բօր օրդիս և առ աղջկնս ամ , յորմէ կարէ պատ
ճառիլ սերունդ բազում չարեաց , բոլորովն 'ի
բաց մերժել . Եւ որ սասցաւն վն եպիսկոպո
սաց , զնոյն ոչ միայն ամքն . որք վայելեն զաշխար
հական և զկանոնաորական զհասոյթս եկեղեցւո
կան ըստ յատկութե իւրեանց պարտին պահել .
այլև կարտինալք իսկ հօտմէականն աթոռոյս . զի
մինչ խորհրդովք նոյ առաջի ծայրագոյն հօտ
մէական քահանայապետին ընդհանուր եկեղեց
ւոյ մատակարարուի կառավարի . անվայել իմն
երևի , եթէ այսոքիւք և այլ զերապանձ առա
քինութիւն և սրբութե վարուք կրթունն ոչ փայ
լեսցին առ 'ի ըստ արժանեոյն զարձուցանել առ
իւրեանս զալս ամենեցուն :

Խ Ն Դ Ի Ր Վ Ե Յ Ե Ր Ո Ր Գ

Յազազս սարտաւորութե ներկայ լինելոյ այ
նոցիկ , որք վայելեն զհասոյթս ինչ :

Տ Երկայ լինին է հանապազորդ բնակիին 'ի
տեղւոջ , ուր որ ունի զհասոյթս ինչ , առ 'ի
կատարել զօրաշատունս եկեղեցւոյ անձամբ
անձին . ուստի ըստ սեղբնատրտի , որ բնա
կեալ

կեալ ՚ի նոյն տեղւոց անձամբ անձին ոչ կատարէ զպաշտօնն իւր ՚ի կարել իւր և ՚ի պարտաւորել , ոչ համարի , բնակիլ անդ :

Արդ՝ առ ՚ի ներկայ դասնիլ պաշտամանցն անձամբ անձին պարտաւորինչ նախ ամենեքեան , որք ունին զհասոյթս ինչ , որ և ունի ընդ իւր , զհոգ հոգւոց , ուր յայտնապէս ռւսուցանէ ժողովրհա՛ : ॥ ՚ի հրամային ասէ անայնն պատուհիբանօք ամենեցուն , որոց յանձնեալնէ հոգ հոգւոց , ճանաչել զոչնարս իւրեանց . և այլն . Զայս ամ ոչ երբէք կարեն կանթրել և հոգալ , որք ոչ հսկեն հօտին իւրեանց , և ոչ պաշտպանեն , այլ ըստ վարձկանացն բարուց ՚ի բաց թողուն և այլն : Այս որոյ հրամայէ ժողովն սք ամ առաջնորդացն անթուանիստ եկեղեցեաց , պարտաւորիլ առ անձնաւորական ներկայութի ՚ի յեկեղեցիս իւրեանց և ՚ի թեմս , ուր և պարտանդին , ՚ի կատարել զպաշտօնս իւրեանց , և այլն . Եւ ապա . Զայն ըստ ամի ևս , որքան առ յանցանս , զկորուստ պողոց , և զպատիժս վն ստորնային հոգարարձուաց և վն այլ ամենեցուն , որք վայելեն զհասոյթ ինչ եկեղեցական , որ ունի ընդ իւր զհոգ և զմոյթ հոգւոց , ստիմանել կացոյց ժողովն սք . ՚ի այն խականան ժողովն սք շնորհէ կախակոյսացն յամի յամի թէ հեռեւաքար , և թէ միջատաբար ՚ի յեկեղեցեաց և ՚ի վիճակաց իւրեանց վն արդար ինչ պատճառի հեռանալ զամիսս Երկուս՝ կմ երիտ

թ . ՚ի բանից անախ և ևս ժողովոյն վարդապետք իմանան . թէ հոգարարձուք . առաջնորդք եկեղեցեաց , և այլ այսպիսիք , որք ունե լով զհոգ հոգւոց վայելեն զհասոյթս ինչ կարեն վն արդար և օրինաւոր ինչ պատճառի յամի յամի հեռանալ յեկեղեցեաց և ՚ի թեմից իւրեանց զամիսս Երկուս միայն , կամ միջատաբար և կմ հեռեւաքար , միայն թէ զընդունակւոք փոխանորդ իւրեանց կացուսցին . զի մի՛ հօտն յանձնեալ

նեալ նց, վստաներկայութե իւրեանց շնեղութե
թի ինչ կրեցին :

Եւ թէ արդեօք վստերկամեայ բացակայ լի
նէլոյն պարտ իցէ առնուլ զհրաման յեղիսկո
պոսէ, յայտնապէս ոչ սահմանէ ժողովն սք, սակայն ըստ լեզուի պարտ է առնուլ զհրաման,
իսկ ըստ նաւարտի, չէ պարտ, Բայց հաւա
նականադոյնն է բան լայնմանի, որ ասէ, թէ
ապահովադոյնն է ՚ի յայտնի պահել իւրաքան
չիւր ումեք զուստութի վիճակին, և սահմանա
դրութեց եպիսկոպոսարանին :

Արդ՝ թէ եպիսկոպոսութե, և թէ հոգաբար
ձուք բաց ՚ի վերոյ շնորհեալ յիւրաւանց ժամա
նակաց, ոչ դատանին ներկայ վիճակի իւրեանց,
մեղանչեն մահուչափ, և ս և կորուսանեն զպը
տուղս հասութեց իւրեանց ըստ ժամանակին,
յարու՛մ ոչ դատանին ներկայ, սոյ երևի ՚ի վերոյ
ասացեալ սահմանադրութե ժողովոյն, բայց ը
լայնմանի, միայն յայնժամ մինչ վստացակայութե
հոգնացն նշնարիմն լնաս եկեղեցեաց նց
հանդիպեցի :

Իսկ որքան առայլ անձինս, որք զպաշտօն
ինչ յեկեղեցւոյն, որում անադրել էն անձամբ
անձին պարտին կատարել, որպիսի են այնոքիկ,
որք ունին զարժանաւորութի, զհասս և զմասն ՚ի յաթո
ւանիստ և ՚ի ժողովարան եկեղցիս, սահմանադ
րեաց ժողովն սք. զի նոքա մի կարացին ամե
ննին վստամ սովորութե բաց չեցից ամսոց հե
ռի կալ ՚ի յեկեղցեաց անախյարում և իցէ տար
ւոջ. սպա թէ ոչ, ըստ ժամանակին բացակայ
լինելոյ զրկին ՚ի մտիցն հասութեց, և վստայտ
ցիկ ամից զօրինաւոր սովորութի իւրաքանչիւր
եկեղեցւոյ պարտէ ունիլ և պահել :

Բայց են պատճառք, որոց վստոք և ս ընդ եր
կար ժամանակ բացակայ լինելովն յիւրաքանչիւր
պաշտօնից տեղեաց, որք և ս ունիցին զհոգ հոգ

ւոց ընդ իւրեանս ըստ օրինաց, կարասցեն առ նաւ զպտուղն, որպիսիք են (լս ժողովոյն թրի տեն.) || Քրիստոնէական սէրն, ծայրագոյն հարկաւորուն. պարտաւոր հնազանդութն, և յայտնի եկեղեցւոյ կմ հաւատացելոց օգուան: Բայց ՚ի ինիլ օրինաւոր այտոցիկ պատճառաց պարտին քննել և հաստատել մեծաւորքն. և թէ բացակայ ինիլն այն ոչ պատահեսցի վս պաշտօնի ինչ և ծառայութե հասարակութե, որ իցէ վս եպիսկոպոսութե. և այլոց հասութից:

ԽՆԴԻՐ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Յօղագս թէ որպիսի պատրաստութիք խնդրին առ ՚ի համարիլ ուրուք ընդունակ եկեղեցական հասութի ինչ:

iii, **Ա**ռաջինն է, զի լիցի օրինաւոր ծնընդէրանք. զի սպօրինաւորն ծննդեամբ անընդունակ է ամ հասութից. և թէ ոչ անօրինեսցի նմա. Արդ՝ անօրինումս այս առ եպիսկոպոսութիւն, կամ առ այլ պաշտօն, որ ունիցի ընդ իւր զհոգ հոգւոց, ինի միայն ՚ի ձեռն ծայրագոյն քահանայապետին. իսկ վս այլ պարզ հասութից կարեն ևս եպիսկոպոսութե անօրինել:

Էրկրորդն է, զի պարտ է ունիլ դանեա զառաջին կղերիկոսական զխուզումն հերաց, ապա թէ ոչ անընդունակ է առ ամ հասոյթս եկեղեցւոյ. ուր ասէ ժողովն սբ, ինգրի և ևս. զի նա, որ անադրի հոգաբարձական եկեղեցւոյ, ջանասցի առնուլ զկարգ քահանայութե ՚ի մեծ տարւոյն, յորում ստանալոցն է զմուտ տէրութենն, ապա թէ ոչ, համարի զրկիլ յիրաւանցն անախ հասութիցն: իսկ որք զարժանապատուութի ինչ զանձնաւորական, զսոճիկս, զբաժինս, և զայլ այսպիսի

պիտի հասոյթս 'ի յաթոռանխտ կամ ժողովա-
րան եկեղեցիս ստանան . պարտին 'ի մէջ տար-
ւոյն այնորիկ զկարգն պատկանեալ պաշտօնի ի-
րեանց առնուլ . զոր օրինակ , եթէ որ պիտի
սոյթ ինչ ստացաւ , որով պարտաւորի ընթեա-
նուլ զաւետարանն սուրբ 'ի մէջ եկեղեցւոյ ,
պարտի ձեռնադրիլ 'ի սարկաւազ . և եթէ պար-
տաւորն պատարագել . պարտի ձեռնադրիլ 'ի
քահանայ . բայց 'ի յաթոռանխտ եկեղեցիս և 'ի դէ-
խաւոր եկեղեցիս պարտին կանոնաւորքն 'ի մէջ
տարւոյն ստանալ զքահանայութի , կամ զսար-
կաւազութի և կամ գոնէ զկիսասարկաւազու-
թի . ուր սահմանեաց ժող . թրիս . իսկ օրք զե-
պիսկոսոյնստարան ինչ ստանան . պարտին 'ի մէջ
երկց ամսոց ձեռնադրիլ եպիսկոպոս . ապաթէ
ոչ պարտաւորին հատուցանել զեկամուտս նր .
իսկ եթէ յամեցին և զայլ կրիս ամիսս զպիսն
յիրաւանցն եպիսկոպոստարանին , ուր ասէ նոյն
ժողովն օր :

Երրորդն է , զի չիցէ պարտաւորեալ ամուս-
նոյ . ուստի եթէ կղերիկոս որ ունելով և զհաս-
ոյթս ինչ , և ոչ գոյով 'ի սք աստիճանս ամուս-
նացն . իսկոյն զիրաւունս իւր կորուսանէ . ուր
յամ վարդապետացն բանից և 'ի սովորուէ եկե-
ղեցւոյ երևի :

Բ . Չորրորդն է , զի մի ամենեկն իցէ 'ի ներ-
քոյ եկեղեցական նշովից կամ անկանոնութե , զի
ոչ կարէ սուեալ ինիլ հասոյթ ինչ եկեղեցա-
կան մեծագոյն բանագրանք բանագրելոյ , կա-
խակայելոյ , արդելոյ , և անկանոնի . և ստա-
ցուին այն ևս է ոչինչ , և իսկոյն զաղարեալ :

Հինգերորդն է . զի բարի վարուք , և բաւա-
կան դիտութի ճաղկեալ իցէ :

Վեցերորդն է , զի ունիցի զբացորսզ գիտա-
ւորութի ընդդրիկելոյ զեկեղեցական կացութի .
և առելոյ զհարկաւոր կարգն պաշտօնի իւրոյ .
այլ և 'ի ընկալեալ հասոյթն պարզութի և միտ-

մտութի ծառայելոյ մյ : Ուստի մեղանչէ նա մա
հուշափ, որ մատչի ՚ի հասոյթ ինչ առանց ուղիղ .
և հաճելի մյ զխառորութե , այլ միայն զի առ
ժամանակ ինչ վայելցի զպտուղս հասութին .
զոր օրինակ , զի մինչև կորեպցի զժամանակ ուս
ման իւրոյ . կամ զոցի վայելն ամուսին , վնջ
բառ լեզուսի , որք առ այս զխոննն՝ պարտաւո
րին ՚ի հատուցումն առեալ պողոցն , և ոչ կա
րեն բառ օրինաց վայելել զհասոյթն զայն :

Մ Ա Ս Ն Չ Ո Ր Ր Ո Ր Դ ,

Յազադս ժամակարգութե .

մ. **Ժ**ամակարգութիւն է հրապարակական և
բացարձեալ պաղատանք ինչ ՚ի տունըն
ջեան և ՚ի դիշերի եկեղեցական անձանցն առ
մոծ բառ սահմանադրութե սրբազան կանոնաց .
յանուն եկեղեցւոյ և երբեմն անունի մոծային .
կամ եկեղեցական պաշտօն :

Արդ՝ զչորս ինչ վասն ժամակարգութե կա
րնմք քննել . նախ թէ ոյք պարտաւորին առ հը
րադարակական ժամակարգութե , Երկր թէ զի
արդ պարտ է սակ զնոյն ժակարգութե առ ՚ի վճա
րել պարտկանունն . Երդ յորոյխի պատիժս ան
կանին , որք ոչ սակն զնոյնն . Չորրորդ ոյք են
պատճառքն , որք անմեղադիր ատենն առ ՚ի ոչ
սակ :



ԽՆԴԻՐ ԱՌԱՋԻՆՆ

Թե ոչք պարտաւորին ասել զժամակարգութիւնն .

100. **Պ**արտաւորութիւն ասելոյ զժամակարգութիւն ծնանի յերկոց , այս է , ձեռնադրելոյ 'ի սուրբ աստիճանս 'ի ստանալոյ զհասոյթս ինչ , Եւ ուխտելոյ 'ի կրօնս ինչ . Եւ հետեւապէս երեք են ազգ մարդկանց , որք պարտաւորին ասել զժամակարգութիւնն , ձեռնադրեալքն 'ի սք աստիճանս . վայելողքն զհասոյթս ինչ եկեղեցական , և կրօնաւորք :

Եւ նախ ամ կղերիկոսք որք 'ի սք աստիճանս են պարտաւորին 'ի ներքոյ մահացու մեղաց ասել զժամակարգութիւն առանձինն . և Եթէ զոչինչ հասոյթ եկեղեցական վայեցեն . ուն ասեն վարդապետք 'ի հասարակի , և հաստատի նախ 'ի բանից ժողովոյն . և ապա 'ի ընդհանուր կիրառուէ և սովորուէ բոլոր եկեղեցւոյ . որ ըստ արժանւոյն ունի զզօրութի' օրինաց :

Նոյնպէս և ամ կղերիկոսք' որք վայելեն զեկեղեցական հասոյթս ինչ . ևս 'ի չլինիլ իւրեանց 'ի 'ի սք աստիճանի պարտաւորին ասել զժամակարգութիւն . ուն հաստատի 'ի ժողովոյն թրի' և լաթերանու . զոր ապա կրկին նորոգեալ մեկ նեաց փիոս հինդերորդ պապն :

Իսկ որքան առ կրօնաւորս , թէպէտ ոմանք վարդապետք ասեն , թէ նոքա ոչ երբէք պարտաւորին ասել զժամակարգութիւն , եթէ ոչ ունիցին զսք աստիճանս . կամ յատուկ ուխտիչ ինչ ուխտեցեն . սակայն ճշմարիտ և 'ի կիրառու են ապահով է բանն ընդ , որք ասեն , թէ ամ կրօնաւորք (բաց 'ի նորընծայից , և եղբարդ ,) որք ուխտեն 'ի կրօնս ինչ առ 'ի լինիլ բահանայ , ուն զսկսեալսն 'ի սք աստիճան պարտաւորին 'ի ներքոյ

քոյ մահացու մեղաց ասել զժամակարգութիւն .
 և առ այս զօրութիւն ընդհանուր սովորութե .
 որ ընկալեալն է ՚ի յիմ քահանայական կրօնս ,
 ոպ ասեն վարդապետք բազումք . իսկ ըստ թս
 լեթոսի , ոչ միայն կրօնաւորք . այլ և ուխտեալ
 կուսանք վանականք պարտաւորին ասել զայն
 զժամակարգութիւն , Սահայն զայս երկին բաժա
 նել պարտէ , և շարաւորել :

Առաջինն է , զի կուսանքն այնքիկ միայն սու
 այս պարտաւորին , որք ուխտեալն են ՚ի կրօնս
 վս առայս . Աւստի կուսանքն , որք ուխտեալ
 են ՚ի ծառայութի հիւանդաց , և զբոլոր օրն
 ծախեն ՚ի ծառայութի նոյ . ոչ երեւին պարտա
 ւորիլ առ այս :

Երկրորդն է , զի ըստ սահմանադրուէ և կանո
 նի կարգին ոչ ունիցին զայլ աղօթս փոխանակ
 ժամակարգութե , վս որոյ կուսանքն այնքիկ ,
 որք ըստ սահմանադրութե կարգին կանոնի եւ
 ընտնց միայն պարտաւորին ասել զի որք ժամա
 կարգութիւն ամաճնի կուսին մարիամու , ոչ
 պարաւտեղին ասել և զմեծ ժամակարգութիւն
 հասարակ :

Խ Ն Դ Ի Բ Ե Ր Կ Ր Ո Ր Դ .

Թէ զկարգ պարտ է ասել զժամակարգութիւն :

☾ Նորս ինչ մանաւանդ պարտ է պահել յա
 ճ Ծռելն զժամակարգութիւն , այս է , զոր
 պխութի նր . և զամբողջութի . և զժամանակն
 պատկան և զյարմար . այլ և զպարտաւորն
 կերպ :

Արդ՝ որք առ առաջինն , ամ որ , որ պարտա
 ւորի ասել զժամակարգութիւն պարտ է ասել զայն
 ըստ սահմանադրութե ժամադրքի հռօմեական
 եկեղեցւոյ , զոր կարգեաց փոռս հինդերորդ
 պապն : և նորոգեաց կղէմէս ութներդ պապն ,

բայ յեկեղեցեաց և վանուց, որք յառաջքան
զերկու հարիւր ամս սահմանադրուէ նր զայլ
ժամագիրքս սովոր էին ասել. որոց՝ շնորհեալ
է այնուհետև վարիլ այնու, և թէ ոչ կամեցին
եղիսկապատին, մեծաւորին. կամ ժողովոյն հո
ւանութի զհոօմէականն ընդդրկել զժամագիրքն
Ուստի ըստ յեղիստի, զկնի փոխելոյ միանգամ
զժամակարգութեն զայն. և ընդ դրկելոյ զհոօ
մէականն, ոչ կարեն այնուհետև կրկին դառնալ
յառաջին ժմկրդութիւն իւրեանց. զի հմբին թէ հը
րաժրին՝ ի նոյն թոյլատրուէ հոօմէական քահա
նայապետին վս ասելոյ զհին ժամակարգութիւն.

Եւ թէպէտ ՚ի հրապարակական ժամակար
գութիւն. զոր ասին ՚ի դասս. դարս է պահել
դատուէ սովորութի եկեղեցւոյ. և մանաւանդ
վայելն է կղերիկսացն եկեղեցւոյն այնորիկ յա
սել առանձինն զժամակարգութիւն պահել ըզ
նոյն սովորութի եկեղեցւոյն. սակայն բազում
վարդապետք հաւանականաբար կարծեն. թէ
որինաւոր իմն է իւրաքանչիւր ումեք արնապոյ
դատու յասելն զժամակարգութիւն առանձինն թս
զեալ դատուկն, ասել զհոօմէական եկեղեց
ւոյ. ուր ասեն ոօարիկակեց և այլք:

Բ. Բայց և թէ որ անդուշութիւն (ուր բա
զում անգամ կարէ պատահիլ) զժամակարգութ
եթիւն փոխափոխեցէ. այս է փոխանակ տօնելոյ ըզ
սբ ինչ, ասացէ զժամակարգութիւն լուր աւ
ուր. թէպէտ զովէլի իմն է զկնի իմանալոյ ըզ
թողեալ ժամակարգութիւն սոյա ասել. սկայն
առայս ՚ի ներքոյ մահացու մեղաց ոչ պարտաւո
րին. զի որք զեօթն կարգ ժամակարգութեն ամ
բող ասեն, զպատուիրանս եկեղեցւոյ թէ ու
թեն կատարեն. ուր ասեն վարդապետք ՚ի հա
սարակի. իսկ ըստ յեղիստի, և թէ երկուքեան
ժամակարգութիւն իցեն հաւատար, բարեոք է
յաւելուլ առ այն դատուկ աղօթման ժամակար
գութեն, զոր թողեալ է, և թէ զիւրաւ կարէ
իւրիւ.

իննիւ Բայց եթէ ժամակարգութիւն սխալմամբ
ասացեալ իցէ յոյժ համեօտութիւն զառուր պատ
շաճին . ուր փոխանակ ասերցոյ զժամակարգու
թիւն կիրակիէի , ասացէ որ զարդոյ ինչ . պիտ
է լցուցանել զպակասութիւն անկող զինն սաղ
մանն առաջին դիշերոյ կիրակիէին . զի մի նշանա
ւոր մասն ժամակարգութենն պակաս մնացէ :
Նոյնպէս եթէ որ մտացեալ կամ մտ պատճառի
ինչ յառաջ քան զճաշուն զերեկոյեան ասացէ
զժամակարգութիւն , բաւականէ ասելն զիննիւ
